

Ք. 1. 99 ափ.

# Բարձր

3 ԱՄԱՌ - 2003




Ես ինքզինքս կը  
 դառնամ յանձնառու  
 գրող, մտատրական  
 մէկը, որ բարոյական  
 պարտաւորութիւններ  
 ունի, որպէսզի  
 հայութիւնը փեւէ եւ  
 իմ գործս կարդա-  
 ցողներ ըլլան  
 առնուազն: Եթէ ես  
 չպայքարիմ, որ հա-  
 յութիւնը դիմանայ  
 աշխարհի երեսին,  
 հայերէն լեզուն  
 կորսուի 50-60 տարի  
 վերջը, ես ո՞ր  
 կ'ըլլամ:

Վ. ՕՇԱԿԱՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- 1.- Պ. ՍԻՄՈՆԵԱՆ ..... Բանաստեղծություններ
- 7.- Թ. ՓՈՍՏԱՃԵԱՆ ..... Լիոնան
- 13.- ԱՐՄԱՆՏ ..... Բանաստեղծություններ
- 16.- Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ ..... Օրագիր – Խելացնոր հայկական  
Բիզանդիոնի մէջ
- 30.- Ն. ԻՆՃԷՃԻԿԵԱՆ ..... Բանաստեղծություններ
- 36.- Ս. ԶԷՔԻՃԵԱՆ ..... Ամառնային անձրեւ
- 54.- Ս. ԱՐԵԱՆ ..... Բանաստեղծություններ
- 65.- Յ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ..... Մողեգի արիւն
- 80.- ❖❖❖ ..... Բարի վերադարձ
- 81.- Լ. ԱՍԼԱՆԵԱՆ ..... Բաց ձեռքեր
- 84.- Կ. ՍՈՒՐԷՆԵԱՆ ..... Վերաբնակուած ժառանգութիւն
- 95.- ❖❖❖ ..... Մեծ բացական
- 97.- Պ. ՄՆԱՊԵԱՆ ..... Խօսք՝ Վահէ Օշականի մասին
- 111.- Վ. ՕՇԱԿԱՆ ..... Հաստատումներ
- 114.- Հ. ԷԴՈՅԵԱՆ ..... «Ես կը մնամ ձեր յիշողությունների մէջ»
- 119.- ❖❖❖ ..... Ահարոն Տատուրեան
- 120.- Ա. ՏԱՏՈՒՐԵԱՆ ..... Բանաստեղծություններ
- 123.- Թ. ԹՈՐԱՆԵԱՆ ..... Բանաստեղծ Ահարոնի հետ
- 129.- Պ. Ս. .... Բազմեռանդ ուժք
- 131.- Ս. ՏԷՅԻՐՄԷՆՃԵԱՆ ..... Եղիշէ Եպս. Դուրեանի «Խաչը»
- 136.- ԵՂԻՇԷ ԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ ..... Խաչք
- 137.- Հ. ԱԻԵՏԻՍԵԱՆ ..... Խաչելութիւն
- 138.- ❖❖❖ ..... Նշմարներ
- 147.- ❖❖❖ ..... Մշակութային լուրեր

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ «ՀԱՄԱԶԳԱՅԻՆ»Ի ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍԻ

ԽԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 3 ԱՄԱՌ 2003 ՊԷՅՐՈՒԹ

### Պ. Սիմոնեան

## ԵՐԿՆԱՔԵՐ ԱՅԱԲԵԿՉՈՒԹԻՒՆ

Ջղջիկը գիշատիչ  
անօթի էր ու մերկ  
այդ գիշեր արևաներկ...

Գիշերուան լռութեան թառանչները մութի  
երկնահոսայ պատերուն մեջէն ակնթարթի  
բախեցան ուժգնութեամբ  
արհաւիրքին մարդու...

Աշխարհ քնացած էր  
աշխարհ քարացած էր  
ու երկնաքերները Նիւ Եորքի աներեր  
Կը սպասէին Յայտքին  
արեւին ու լոյսին...  
որոնք մինչ յղկացած

հրախաղ մութերուն  
 հմայքէն-քմայքէն  
 դեռ կը մրափէին  
 ու կը գառանցէին...  
 Անօթութեան քունէն երբ արթնցաւ յանկարծ  
 ջղջիկը բոցարծարծ  
 երեւակայութեան հորիզոններն անցաւ  
 ու յափշտակիչի ահաբեկ բնագոյով  
 ճեղքեց պատերը ու քարերը կրքոտ,  
 որ հռնդիւններով աշխարհը ողողեց...

Աշխարհը արթնցաւ...  
 աշխարհը զարմացաւ...  
 Արեան դէմ արեան ճիչ  
 կողկողագին Ձայներ կը լսուէին հեռուէն.  
 փուլ եկած, հրդեհուած  
 այն անմերձենալի սեպ երկնաքերներէն,  
 ուր ոչ թռչուններ կամ երկնուղէջ ծառեր  
 կը ճգնէին հասնիլ ու հափիլ հոսանքին...

Իսկ մեր ահաբեկուած աչքերուն մթութենէն  
 մռայլամած էին  
 առաւօտներն ամեն,  
 որ Նիւ Եորքի բանուկ փողոցներէն էին  
 անցեր ու մնացեր  
 այնտեղ՝ ամայացեր...  
 Ու առաւօտները ծնած ստուերներուն  
 երկունքէն սթափած  
 ցաւերէն սարսափած  
 մոխիրներուն շունչը կը սփռէին օդին...  
 Ու փախչող թռչունները խուճապահար մարդոց  
 հետ ալ չէին շնչեր  
 ու ալ չէին երգեր...

Կը տեսնէին սակայն  
 խեղճացած աշխարհ մը,  
 որ կքեր էր այնքան  
 վրիժառութեան ու ահաբեկչութեան  
 բարկ արիւններուն տակ  
 երկնաքերներն ի վեր...

15 Սեպտեմբեր 2001



25401-12

328 - 2010

# ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Յունէն հեռացայ  
 աչքերս մահուան ստուերով պատած  
 Ես ինձմէ խզուած  
 ու օտարացած...

Շուրջս փշաթել ու անցարգելներ կը գալարուէին ու վայրի  
 աղմուկ մը կը յօշոտեր արեանս ճիչը... որ սառցակալած քամիի  
 մը պէս կը խուժեր վրաս... հոգիս կը հեւար ծանր ու ճնշիչ  
 մամլիչներու տակ: Աստղերը աչքիս չէին երեւար, աշխարհի  
 մութը համատարած էր. լռութեան երկինք մը անդունդներն ի  
 վար անարձագանգ կը խորասուզուէր կեանքը, Քարերը,-  
 մահուան սարսուռով,- դամբանաքար կարկառեր էին, որ  
 բարձունքներէ Գոյի Աստուածը, անոր Անցեալը առեւանգուի...  
 Յողիս հոսանքէն

ու սահանքներէն  
 երկինքն ուրացայ  
 երկրին յաղթելու համար Ուժին երկրպագեցի  
 բոլոր գոհերու հոգեհանգիստին  
 ինքնակիզումով պատարագեցի...,  
 որ վերապահուած Տեղ մը տան ինձի  
 խղճի գօսացած տերեւներուն մէջ  
 կամ ժանգեր կապած շղթաներուն մէջ...

Շուրջս շղթաներ, մեռած Ոգիներ ազատութեան երգը  
 վայրափակէր Անգոյութիւնը, Անյայտութիւնը կը համազարկէն,  
 կը ջնջէն հողեր...: Ես հողիս հոգին՝ խենթ, խելացկո՞ր՝  
 սրբութիւններս կամ անոնց Յունտը հողին թաղեցի, հողին  
 խրեցի, հողին շաղեցի ու հողով ճմլուած հողին նոյնացած ու  
 միաձուլուած դէպի իմ հողիս խորքերը գացի ու ընդերքներուս  
 կաղնիներն անյայտ, դուրս գալու ճեղքեր կը խուզարկէին  
 վերածաղկումի բնագոյով շնչող՝ գլխահակ ինկան ու  
 տապալեցան...

Ես անյոյս բեկոր,  
 տարանջատուած յոյս  
 ուրացայ ամբողջ լինելութեանս, Գոյիս ուխտը խոր.  
 մոխիր ու աճիւն  
 արնաթափ ըրին ամեն Գոյութիւն.  
 Ես գոյութեանս Աստուածն մերժեցի  
 ու թշնամացայ ամեն, ամեն ինչի,  
 որ կը լկեր միտքս

ու կը խարաներ ցնորած խիղճս  
հեղձամղձելով թեւածող շունչս  
ինքնակորոյս սերս...

Մութ հորիզոններ ինքնակորուստիս ժապաւէնները  
նետեցին կրակ ու հրկիզեցին խաւարին տիղմով,  
որ ծաւալած էր ճանապարհներու բոլոր կողմերը...  
խրեցայ խանձուած... ու չգտնելով ոչ մէկ ապահով  
փրկութեան ժայռ ու լաստ, որ տաներ գիս անձկութիւններու  
շիրիմը անհող եւ ուրկէ յառնէր բոյսն տարաշխարհիկ,  
պատելու համար պատաղիճներով հոգիս պատառուն...

Պատռուած էին  
սերս, յոյսերս  
երազս, երիզս...

Սերս՝ Զէյնապս  
սիրոյ աստուածին ափերուն մէջ մոմ  
ես մոխրացուցի...

Թեւ, դրօշս  
հաւատքիս յառնող մոխիրներուն մէջ  
տարանջատելով այլակերպեցի...

Շողերը Յոյսիս ու նշոյլները հեռանկարիս  
վաղուան ծիլերուն նոր սերմերուն մէջ  
ծլարձակեցի...

Եսս ու ծիւս  
ամուլ արգանդին մէջ սաղմնաւորուող  
անձնասպանութեան գիրկը նետելով  
տարբաղադրեցի...

անեանալով ես ոչնչացայ  
եւ շատ ուրիշներ ոչնչացուցի...

24 Մարտ 2002

# ԱՂՕՐԹԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ծովի քամին ու շառաչը լոյսին  
լռեցին...

Աղաւնին անոք, որ Երկինքի  
փուլ քիւին

ընկողմանած՝ թրթռացումով  
երթերին  
կ'աղօթէր  
անքուն էր...

Աղօթքն անձայն ծիրեր էր...  
Թռչունները՝ որ թռչկոտող  
ծառերուն

շունչով ծփուն  
երերուն  
մոռցեր էին աղօթքներուն  
Բառը նոր  
աղերսեցին տերեւներուն շշուկներով  
սրտախոր...

Խաղաղութեան տանիքները թռեր էին  
ու մօտեցեր՝  
Անյայտին,

որ արիւնին պայթած ակը  
կ'որոնէր  
ու Կապոյտին մէջ  
չէր գտներ...

Հասկերն հասուն դեպի երկինք  
բաց շուրթով կը  
ծփային...

կարծես չորցած մրրիկներէն պտոյտքին  
ամայութեան հրաշքները  
կ'ողբային...

Կ'ամայանար Երազը,  
կ'այլագունէր Երկինքը,  
կ'անյայտանար Անունը  
կ'երաշտանար Ամառը:

Երկինքը բայց,- բաց պատուհան,- կը սպասէ  
որ մեր մէջը ծուարած  
կամ երկինքի քիւին ննջած  
ու հանգչած

հրեշտակը աղօթէ  
խաղաղութեան համար մեր...  
աղօթքները աղօթելով  
կեանք կ'առնեն... պատերազմին կը յաղթեն...

Ծառ աստուածը մեռեալներուն մոխիրներէն  
յառնած է

դեռ կը սպասէ,  
որ թռչկոտող ծառերուն  
աներեւոյթ տերեւներուն թաքնուած  
թռչունները մէկտեղուին  
ու Ոգեղէն տաճարին մէջ Բարձունքին  
խաղաղութեան ի խնդիր  
պատարագներ մատուցեն  
արշալոյսներ համերգէն  
ու մանուկներն աշխարհին  
արեւուն ու աստղերուն  
թող ժպտին...

Խաղաղութեան տանիքները ամրանան  
ոչ մէկ տանիք  
փուլ չգայ  
բարկութենէն հողմերուն  
սատանայի խռովքին...

Խուժող արեան հոսումին  
ակերը յորդ թող ցամքին  
ու դռները ողբերգութեան արարին  
թող փակուին...

Յասկերն բարի հասունութեան աշտարակէն  
սուրբ շրթներով աղօթեն,  
որ սերմերը արտերուն մէջ ծլին, աճին  
դալարին,  
աղօթքի պէս բարեգութեան  
խաղաղութեան Անդաստանը թող հերկեն  
խղճի Գոյին  
ու Շունչերու ճակատագրին  
Յուշարձանը թող կանգնեն...

**ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ**

6 Մարտ 2003

**Թ. Փոստաճեան**

**ԼԻՈՆԱՆ**

Բարեկամս՝ շարժանկարի անուանի դերասան Տի  
Ճէյ, զոր հեղ մը յիշատակած եմ «Մարդը՝ սիրոյ բոյրը  
վրան» անուն նախորդ պատմուածքիս մէջ, ներկայա-  
ցուց ինծի միթխառի հարստութեան տեր անձ մը, եւ  
էյ՛ն, որ տերն էր ու հրատարակիչը «Ֆոլի պոյ» հռչա-  
կատր ամսագիրին, ուր կը ցուցադրուէին մերկամար-  
մին եւ ցանկայարոյց գեղուհիները:

Եւ Է՛ւր իր ամսագիրին մէջ ցուցադրուող այդ գեղու-  
հիներուն վարսայարդարութիւնն ու դիմայարդարումը  
վստահած էր Լիոնային, որ մեծ ձեռնհասութեամբ կը  
կատարէր իր պաշտօնը:

Տի՛, ճէյ բարեկամս պատմեց ինծի նոյն ատեն Լիո-  
նայի սիրային արկածներէն մէկը, որ տեղի ունեցած  
էր Շիքակոյի մէջ, եւ Էյ՛նի իրեն վստահած պաշտօնը  
վարած օրերուն:

Եւ Լիոնան է, որ պատմեր է.  
- Կանխահաս ձմեռնամուտը նորութիւն չէր Շիքակոյի հա-  
մար: Նոյեմբեր ամսուն մէջ էինք: Ցուրտ էր դուրսը: Եւ կը ձիւնէր  
անընդհատ:

Մթին ամպերով ծածկուած երկնակամարէն, դանդաղօրէն  
եւ վարանոտ՝ ձիւնի փաթիլներ կը տեղային քաղաքի մայրուղի-  
ներուն եւ շէնքերու քիւերուն վրայ: Ձիւնը կը դիզուէր նաեւ տե-  
րեւաթափ ծառերու ճիւղերուն վրայ:

Անբիժ եւ սպիտակափառ պատկեր մը կը տարածուէր ամէ-  
նուրեք:

Տաք էր սակայն մեր աշխատատեղին: Գուրսի տեսարանին  
ճիշդ հակապատկերն էր, որ կը պարզուէր հոս:

Վարսայարդարի համար կարգի սպասող հրայրքոտ եւ  
մարմնամատուց գեղուհիները աւելի կը շեշտէին կարծես ներսի  
ջերմ մթնոլորտը: Այդ գեղուհիներու վարսայարդարութիւնն ու  
դիմայարդարութիւնը ինձմէ առաւ աւելի քան չորս ժամ: Գրեթէ  
մօտեցած էինք օրուան աւարտին, երբ յանկարծ, անակնկալօրէն

ինձի մօտեցաւ յարկարածի տեղակալը՝ ճէյմս Հէմըլթըն, որ  
ինձմէ խնդրեց տուն մեկնելէ առաջ երթամ իր գրասենեակը.

- Կարեւոր խօսելիք մը ունիմ քեզի,- ըսաւ:

Ճէյմս Հէմըլթըն, իր յիսնամեայ տարիքին մէջ տատանող  
դիւրահաճ անձ մըն էր: Ճաղատ էր ան, բայց քունքերուն մէկ  
կողմէն դէպի միւսը մազի բարակ թելեր երկարած եւ տարածած  
էին գանկին վրայ, տալու համար այն պատրանքը, որ դեռ մազ  
ունէր գլխուն:

Ունէր նաեւ թաւ պեխ մը, որ կը շեշտէր մազերու ներկայու-  
թիւնը դէմքին վրայ:

Միշտ ժպտերես էր ճէյմս Հէմըլթըն եւ հաճոյակատար: Ինձի  
կը թուէր սակայն, որ իր ներկայ խօսելիքը կապ չունէր մեր գոր-  
ծին հետ:

- Լիոնա,- ըսաւ ան,- Մարք Ժուկըր անունով պարոն մը կայ,  
որ, չարաթը անդամ մը դոնէ՝ կու գայ դիւ տեսնելու, մեր գործին  
հետ կապուած օրինական հարցերու քննարկման համար: Այս  
պարոնը, ամէն հոս գալուն, կը տեսնէ քեզ: Քու արտաքին դրա-  
ւորութիւններէդ հրապուրուած կը թուի ըլլալ: Կը փափաքի ժա-  
մադրուիլ քեզի հետ: Ան ինձմէ խնդրեց, որ ձեզ իրարու ծանօ-  
թացնեմ: Մնացեալը ձեր գործն է:

Կանգ առաւ քիչ մը: Ապա՝ հարց տուաւ,

- Արդեօք դուն նկատած ես զինք:

- Ո՛չ,- ըսի,- չաա է թիւր քեզի մօտ եկող եւ մեկնողներուն,  
ես բնաւ ալ չեմ հետաքրքրուած դիտնալու այդ այցելուներուն  
ինքնութիւնը:

- Գալով քեզի հետ ծանօթանալու իր նպատակին, դժուար  
պէտք չէ ըլլալ գուշակել այդ: Ան կը փափաքի շտրաթավերջի  
իրիկուն մը ճաշի տանիլ քեզ քաղաքի յայտնի գիշերային գրօսա-  
վայրերէն մէկը, որպէսզի երեկոն քեզի հետ անցընէ: Յետոյ  
անշուշտ պիտի փափաքի քեզ իր աունը առաջնորդել եւ բնակտն  
է, որ գիշերը քեզի հետ անցընել պիտի ուզէ...

- Ինձի նայէ, ճէյմս,- ըսի,- ինձի համար այս Մարք Ժուկըր  
կոչուող պարոնը անծանօթ անձ մըն է: Ձինք չեմ իսկ տեսած: Ան  
թող նախ օր մը զիս ճաշի հրաւիրէ, որպէսզի ծանօթանամ հետը:  
Ճանչնամ զինք եւ տեսնեմ, թէ ես ալ կը հաւնիմ զինք: Իր զիս  
հաւնիլը չի բաւեր: Ե՛ս պէտք է, որ հաւնիմ զինք:

- Իրաւունք ունիս,- ըսաւ ճէյմս:

Եւ բաժնուեցանք:

\*

\* \*

Երկու օր ետք, Մարք Ժուկըր եկաւ մեր գործատեղին եւ  
ճաշի տարաւ զիս:

Միջին տարիքով, միջին արտաքինով անձ մըն էր ան: Ունէր  
մութ շագանակագոյն մազեր, թուխ աչքեր: Չունէր դէմքի այն  
մասնաւոր գրաւչութիւնը, զոր շատ կիներ կը փնտռեն: Իր ար-  
տաքինէն՝ աւելի իր խօսելու յատկութիւնն էր գրաւիչը, կատարե-  
լապէս կը տիրապետէր անգլերէն լեզուին: Գործածած իր հա-  
տընտիր բառաւորները կը յատկանշէր իր ուսեալ անձ մը ըլլալը:  
Ես հարցունքներու առկառնութիւնով մը ողողեցի զինք: Ուզեցի  
գիտնալ իր վարած պաշտօնը, իր անցեալը, ներկան եւ ամուսնա-  
կան վիճակը:

Պարզունցաւ, ըր Մարք ամուսնացած եղեր է տաս տարի  
առաջ: Ունեցեր է երկու աղջիկ: Շուրջ տարի մը առաջ ալ  
բաժնուեր է կնոջմէն:

Իր վարած ներկայ պաշտօնը՝ լեցուն ամսականով, իրեն հա-  
մար բարեկեցիկ գիրք եւ վիճակ ապահոված էր: Իր գլխաւոր նա-  
խասիրութիւնը ներդրումն ու շահարկութիւնն էր: Կ'ուզէր նի-  
թական նորանոր նուաճումներ կատարել: Կը փափաքէր մեծ  
դրամագլուխներու տիրանալ:

Իր միւս նախասիրութիւններն էին կիներու աշխարհը,  
թատրոնը, պտոյտները:

Մարք Ժուկըր համակրելի թուեցաւ ինձի, յատկապէս՝ իր  
լեզուական ճկունութեամբ:

Ընդունեցի ընթրիքի իր հրաւերը:

\*

\* \*

Յաջորդ ուրբաթ երեկոյեան, ժամը 6:00ին՝ Մարք եկաւ բնա-  
կարանս եւ միասին գացինք քաղաքին մէջ ծանօթ «Ռուսթըր  
թէյլ» անուն գիշերային գրօսատեղին (Night Club):

Մարք օրինակելիօրէն քաղաքավարի էր ու հիւրամեծար:  
Բտժակներով շամփանիա մատուցուեցաւ եւ աղանդեր բերուե-  
ցաւ: Ի վերջոյ, նաեւ փառահեղ ընթրիք մը սպասարկուեցաւ:

Նուագախումբ կար եւ կային երգիչներ:

Ընթրիքի աւարտին՝ պարի նուագներ հրամցուեցան: Անդի-  
մազրելի դարձաւ ներկաներու պարելու ցանկութիւնը:

Մենք եւս պարեցինք գիրկընդխառն եւ ընդերկար:  
 Ուչ ատեն՝ ա՛լ գոհացած եւ պարտասած՝ մեկնեցանք:  
 Մարք ժուկըր տարաւ զիս իր բնակարանը, որ կը գտնուէր  
 Շիրակոյի ծովափնեայ մէկ շրջանը: Հոն, Մարքի ննջասենեակին  
 մէջ, ինչպէս սպասելի էր արդէն, տեղի ունեցաւ անխուսափելին:  
 Իրարու գիրկ ինկանք:  
 Իրջանիկ էինք միատեղ:  
 Եւ սակայն անսպասելիօրէն կարճ եղաւ այդ պահը:  
 Երբ Մարք հասաւ բաւարարման, պառկած մնաց քանի մը  
 վայրկեան եւ յետոյ անմիջապէս քնացաւ: Ան կը ննջէր զարմա-  
 նալի անտարբերութեամբ եւ խորունկ քունով՝ ամբողջապէս ան-  
 տեսելով իմ ներկայութիւնը եւ արթուն մնացած յուսախարու-  
 թիւնս:  
 Հիասթափուած էի եւ շատ վիրաւորուած...

\*  
\* \* \*

Թէ որքան քնացայ այդ գիշեր՝ չեմ յիշեր: Միայն գիտեմ, որ  
 առաւօտուն՝ Մարք ժուկըր ցանկասիրութեան նշոյլն անդամ ցոյց  
 չտուաւ:  
 Լոգանք առինք, հագուեցանք, եւ ան զիս տարաւ մերձակայ  
 ճաշարան մը, որպէսզի նախաճաշենք: Ունեցանք սովորական  
 քանի մը կարճ զրոյցներ:  
 - Լիոնա՛, - ըսաւ, - ինչպէ՞ս քնացար գիշերը: Հանգի՞ստ էիր:  
 - Այո՛, - ըսի, - շատ հանգիստ:  
 - Սիրեցի՞ր «Ռուսթըր թէյլ» նայթ գլապը:  
 - Այո՛, - ըսի, - շատ հաճելի էր:  
 - Ուրիշ առիթով՝ կրկին պիտի փափաքէի քեզ հոն տանիլ:  
 - Նայի՛նք, - ըսի...  
 Ճաշարանին մէջ, սուրճի մատուցման եւ նախաճաշի սպա-  
 սարկութեան ատեն տեղի ունեցաւ ապշեցուցիչ այլ պատահար մը:  
 Մարք առաւօտեան թերթը առաւ եւ ընկղմեցաւ անոր ըն-  
 թերցման մէջ, դարձեալ անտեսելով ներկայութիւնս: Մինչ ես կը  
 սպասէի, որ ամուսնութեան առաջարկ մը ըլլար ինծի՝ ես ալ  
 մերժած ըլլայի զինք:  
 Մարք ժուկըրի այս վերջին արարքը ջնջեց մէջս իրեն հան-  
 դէպ տաճած ամէն համակրանք: Ընդհակառակն, իրեն հանդէպ  
 լեցուեցայ վերջին ծայր հակակրանքով եւ զայրոյթով:  
 Համբերեցի սակայն՝ մինչեւ նախաճաշի սպասարկութեան  
 աւարտը:

Պահը եկաւ դուրս ելլելու ճաշարանէն: Երբ որ մտանք ինք-  
 նաշարժին մէջ, եւ երբ Մարք ինքնաշարժը աշխատեցնել փորձեց,  
 կեցուցի զինք:  
 - Ո՞ւր կ'երթանք, - հարցուցի:  
 - Քու տունդ պիտի հասցնէի քեզ, - ըսաւ:  
 - Կանգ ա՛ռ, - ըսի, - զիս տուն չես կրնար տանիլ դեռ, որովհե-  
 տեւ տուն երթալէս առաջ շատ կարեւոր գործ մը ունինք կատարելիք:  
 - Ի՞նչ է այդ:  
 - Երէկ գիշեր, եւ այս առաւօտ, դուն ինծի հետ վարուեցար  
 ճիշդ այնպէս՝ ինչպէս մարդ պիտի վարուէր պոռնիկի մը հետ: Քու  
 միակ տենչդ էր այդ: Անմիջապէս որ հասար նպատակիդ՝ քնա-  
 ցար, ամբողջապէս անտեսելով ներկայութիւնս եւ ոտնակոխ  
 ընելով իմ կանացի դիւրազգածութիւններս:  
 Նոյնը ըրիր նաեւ այս առաւօտ: Օրուան լրագիրը առիր եւ  
 դէմս բռնած՝ զայն կարդալ սկսար որպէս թէ ես բնաւ ներկայ  
 չըլլայի այնտեղ: Դուն վիրաւորեցիր իմ արժանապատուութիւնս:  
 - Շատ կը ցաւիմ, - ըսաւ, - կը ներես:  
 - Ո՛չ, մի՛ ցաւիր: Ո՛չ ալ ներողութիւն խնդրէ: Այլ պարտքդ  
 կատարէ՛, - ըսի:  
 - Ի՞նչ պարտք:  
 - Ինծի նայէ՛, Մարք ժուկըր: Քանի որ դուն ինծի հետ  
 վարուեցար պոռնիկի մը նման, պարտաւոր ես վճարելու ինծի՝ իմ  
 սակս, ճիշդ այնպէս՝ ինչպէս որ պիտի վճարէիր պոռնիկի մը:  
 - Կրնա՞ս ըսել ինծի, թէ ի՞նչ է այդ սակը, - հարցուց:  
 - Հինգ հազար տոլար:  
 Այս գումարը իմանալուն պէս, ջղայնութենէն քիչ մնաց, որ  
 ինքնաշարժի ձեղունէն դուրս պիտի թռէր: Պոռաց, կանչեց:  
 Յետոյ փորձ մը ըրաւ այդ սակը վար իջեցնելու:  
 - Ո՛չ մէկ զիջում: Հինգ հազար տոլար, պարո՞ն Մարք ժու-  
 կըր, - ըսի, - դուն եթէ ուզէիր, «Փոլի պոյ»ի գեղուհիներէն մին  
 կրնայիր տանիլ տունդ եւ հետը գիշերել: Բայց քաջ գիտցիր, որ  
 անոնց սակն ալ հինգ հազար տոլար է, եթէ ոչ աւելի: Անոնք մե-  
 ծանուն պերճադիմներ են: Դուն փորձեցիր պերճադիմ մը գտնել,  
 որ ձրի ըլլայ: Շատ սխալեցար սակայն: Հինգ հազար տոլար է, եթէ  
 ոչ աւելի: Հինգ հազար տոլար, եւ վե՛րջ: Գեղը համար դժուար չէ  
 վճարել այդ գումարը:  
 Մարք ժուկըր, ողորումի երկար փորձերէ եւ վարանումներէ  
 ետք, դժկամակելով եւ դժգոհելով հանդերձ, գրեց հինգ հազար  
 տոլարի չէք մը եւ տուաւ ինծի: Ապա տարաւ զիս իմ տունս:

Հրաժեշտ տալէ առաջ՝ ըսի.  
 - Կը ցաւիմ, որ մեր այս հանդիպումէն յուսախար եղանք երկուստեք: Յաջողութիւն կը մաղթեմ քեզի սակայն՝ քու շահարկութիւններուդ մէջ:  
 Բաժնուեցանք իրարմէ քաղաքավարօրէն:

\*  
 \*   \*  
 \*

Շիքակոյի արուարձաններէն մէկուն մէջ կար կաթոլիկ քոյրերու մենաստան-կրթարան մը, ուր անչափահաս որբուհիներ կը խնամուէին եւ կրթութիւն կը ստանային:

Օրն էր Շարաթ: Մարք ժուկըրէն բաժնուելէս ետք, անմիջապէս գացի այս մենաստան-կրթարանը: Տեսնուեցայ միանձնուհի - մեծաւոր Քոյր Պարպըրա Էկընդէ հետ: Իրեն յանձնեցի այս հինգ հազար տոլարը, խնդրելով, որ այդ գումարը յատկացուի հոն ընդունուած անչափահաս որբուհիներու կրթութեան: Այս նուիրատութիւնը շնորհակալութեամբ ընդունուեցաւ:  
 Հարց կրնայ արուիլ ինձի,- թէ ինչո՞ւ այդ գումարը ես ինքս չպահեցի:

Եթէ այդ գումարը ես պահէի, այն ատեն ըրածս իրապէս պիտի ըլլար պոռնկութիւն: Բան մը, որ երբեք ընել չեմ կրնար ես: Կաթոլիկ քոյրերու այդ մենաստանը նրկալս եւ այդ գումարը իրենց յանձնելու որոշումս զիս հոգեպէս շատ հրճուեցուցին: Հոն կար փոքրիկ եկեղեցի մը, ուր պատարագ անելի կ'ունենար ամէն կիրակի:

Եկեղեցի մտայ: Յիսուսի, Աստուածածնայ եւ այլ սուրբերու նկարներ կային այնտեղ:

Աստուծոյ ներկայութիւնը զգացի հոն: Մատնուեցայ խոր յուզումի մը:

Հոն կար օրհնեալ ջուր: Խաչակնքեցի ճակատս այդ օրհնեալ ջուրով:

Ծունկի եկայ եւ սրտանց աղօթեցի: «Հայր մերը» արտասանեցի, եւ խնդրեցի Տիրոջմէն, որ իմ այս վերջին մեղանշումիս համար ներէ ինձի»...

ԹՈՐԳՈՄ ՓՈՍՏԱՃԵԱՆ

Լուս Աճճելըս

Արմանտ

## ԼՈՒԹԻՒՆՆ Է ԻՋԵԼ

Լռութիւնն է իջել լեռներից,  
 Ու իրիկնային մշուշում կապոյտ  
 Քայլում է խոհուն՝  
 Դաշտերում անծիր-  
 Ափերում առած գլուխն իմաստուն:  
 Եւ ոտնաձայնին նրա ունկընդիր՝  
 Շուրջպար են բռնել աստղերը ծիծղուն,  
 Ու նետում են ցած նրա գոգի մէջ՝  
 Առանց ծրպըտուն:

Ինչ հեռու՝ - հեռում,  
 Քաղաքը դիւահար՝  
 Կոկորդն է պատռում,  
 Ճշում անդադար-  
 Յիմարութիւնը լոկ փաստելու համար...

## ԱՅԴ Ո՞Վ Է ԱՍԵԼ

Որքան հեռացար՝  
 Մօտեցար այնքան.  
 Եւ ահա՛, տես, ես  
 Յուշ եմ ժողովում՝  
 Իմ մենութեան այս  
 Բաւիղներում լուռ,  
 Ու լսում ձայնըդ,  
 Որ կանչում էր ինձ՝  
 - Վերջալոյսը, տես,  
 Որքան է շքեղ...  
 - Շքեղ է, այո, յարում էի ես,  
 Բայց կուրծքըն իմ, տես,  
 Ախ, որքան է նեղ՝  
 Կարօտիդ դիմաց,  
 Ու լեցուել եմ մարդ՝  
 Քեզանով այնքան,



Որ նաեւ դուրս եմ մնացել ինձնից,  
 Ու հեռու-հեռուից  
 Քեզ գիրկս եմ առնում,  
 Շնչառութիւնդ եմ զգում իմ դէմքին.  
 Ուր որ է, հիմա, ասես, կը բացես  
 Դուռը, ու յանկարծ  
 Ներս կը մտնես դու...  
 - Որքան հեռացար՝  
 Մօտեցար այնքան...  
 Այդ ո՞վ է ասել՝  
 Որ «Աչքից հեռուն՝  
 Սրտից է հեռու...»:

### ՎԷՐՔՆ ԱՅՆ ԽՈՐՈՒՆԿ

Լեզուով քո փափուկ,  
 Աչքերով անմեղ,  
 Վերքն այն խորունկ,  
 Որ բացեցիր դու  
 Իմ սրտի վրայ՝  
 Կայ ու կը միայն...  
 Քանի՛ ամիս ու տարի են անցել,  
 Քերտում է այն դեռ  
 Որքան քաղցրօրէն,-  
 Եռում է յաճախ  
 Ու դեռ նորանում...  
 - Այդ ո՞վ է ասել,  
 Որ ժամանակը  
 Վերքեր է բուծում...

### ԴՈՒ՝ ԱՂՋԻԿ ԶԱՅԻ

Սովորեցրո՞ւ մեզ սիրել քեզ պէս:  
 Նման չես կանանցից ո՛չ մէկին-  
 Դու կին ես, դու կին ես կրկին,  
 Սիրոյ սրին, հրին գերի,  
 Զառ փոշի թիթեռի թելերի-  
 Սովորեցրո՞ւ մեզ սիրել քեզ պէս:

Սովորեցրո՞ւ մեզ տոկալ քեզ պէս-  
 Քարաստանում դու ծաղկած ծաղիկ,  
 Որ ապրեց լռանի ցօղով,  
 Տոկաց հողմին, ու դողաց հովից-  
 Սովորեցրո՞ւ մեզ տոկալ քեզ պէս:

Սովորեցրո՞ւ մեզ տրտմել քեզ պէս-  
 Թախծանքի դու խոհուն թովջանք,  
 Խայտանքի դու թել ու թռչչք-  
 Սովորեցրո՞ւ մեզ տրտմել քեզ պէս:

Սովորեցրո՞ւ մեզ ժպտալ քեզ պէս՝  
 Արցունքների միջից-  
 Աչքերը մեր երկնքին յառած,  
 Ու հայեացքիդ ծիրին:

Սովորեցրո՞ւ մեզ ներել քեզ պէս,-  
 Չաշտութեան դու ծիածան,  
 Բարութեան դու գրգանք ու գիրկ,  
 Դո՛ւ անհաս սիրոյ կածան,  
 Չողի բուրմունք, դրախտի միրգ-  
 Սովորեցրո՞ւ մեզ ներել քեզ պէս:

Նման չես ո՛չ մէկին, ո՛չ մէկին:  
 Դու կին ես, դու կին ես կրկին-  
 Ատամներդ մարգատաշար՝  
 Կարմրածիր շրթներիդ թելին,  
 Սիրոյ սրին, հրին գերի,  
 Զառ փոշի՝ թիթեռի թելերի,  
 Դու՛ մայր, դու՛ մայր,  
 Մայրենի դու բառ, դու՛ բարբառ,  
 Չայեացքով հրդեհավառ՝  
 Դու աղջիկ հայի:

ԱՐՄԱՆՏ

Վ. Շուշանեան

**ԽԵԼԱՅՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ  
ԲԻԷԶԱՆԴԻՈՆԻ ՄԷՁ**

**ՈՒ ԳԱՂԱՓԱՐՆԵՐՈՒ  
ՔԱՌՈՒՂԻՒՆ ՎՐԱՅ**



*Խուճապային տրամադրութիւններ*

Անտարակոյս մարդկային բոլոր բազմութիւնները կը նմանին իրարու իրենց ամբոխային տրամադրութիւններով, երկար զրկանքներէ վերջ երջանկութեան բռնակալ ծարաւով, իրենց հաւաքական ու որոտընդոստ յուղումներով, պարբերական դայրոյթներով, յեղակարծ ու խուճապային վախերով: Յետ-զինադադարեան շրջանին, սակայն, մահուան ապալեր ճամբաներէն վերադարձող հայ ամբոխներուն հողեկան վիճակը այլապէս ուշադրաւ էր ու տարբերային: Ողբերգականօրէն շահեկան:


Ով որ մաս կազմած է այդ զարմանալի ամբոխին՝ կը հասկնայ զիս: Ցայժմ դժուար կը թուի հասկնալ զայն, - այդ տարբերային յորձանքը, որ անապատներու խորէն ծայրագոյն տենդով մը կը հոսէր՝ զարնուելով ծովեզերեայ քաղաքներու պատերուն, որ արբեցութեամբ կը պլուէր է՛ն խօլ յոյսերուն՝ է՛ն անյոյս մղձաւանջներէն վերջ, որ է՛ն մթին ճախճախուտներէն կ'ելլէր՝ ձգտելով է՛ն անկարելի բարձունքներուն:

Գիտուն խորհրդածութիւններ ընել չէ նպատակս, ոչ ալ այն ժամանակուան դէպքերը վերլուծել այսօրուան տրամադրութիւններով, թէեւ անցեալին հանդէպ գործուած այս սխալը սովորական ու բնական ըլլայ: Կարգ մը անմոռանալի երեւոյթներ կան սակայն, որ բարախուն են՝ յիշողութեանս մէջ եւ որոնց վրայէն

չեմ ուզեր ցատկելով անցնիլ: Դէպքերու վերյիշումով տպաւորութիւնները աւելի՛ կենդանութեամբ կը զարթնուն ու որոշ հեռաւորութենէ յետոյ մարդ կրնայ աւելի դիւրութեամբ մեկնել զանոնք:

Առաջին կէտը, որ կ'ուզեմ մատնանշել՝ վերադարձին խուճապային բնոյթն էր: Երկիւղ, անհանգստութիւն, անձկութիւն, նաեւ յոյս ու հաւատք ապագային վրայ կը հրէին իրար, ստեղծելով տագնապալի ու ջղային մթնոլորտ մը: Մարդիկ չէին անդրադառնար նոյնիսկ, թէ ո՛ւր կ'երթային: Կարեւորը փակելն էր անցեալի ծանր դուռը: Այս հողեկան տրամադրութիւնը ճողոպրիւն էր, կարեւորը մեկնիլն էր, կարեւորը այդ չորս տարիներու անել թուող գիշերէն ձուլալիլն էր, կարեւորը փակելն էր անցեալին ծանր դուռը: Այս հողեկան տրամադրութիւնը արագութեամբ փոխուեցաւ սակայն, դէպքերու ու արուեստական խանդավառութեանց մղումին տակ, բայց սկիզբը կարելի չէր չնկատել խուճապը: Ամբոխային տրամադրութիւնները չնչին տաշեղներու պէս կը վարէին յուսաբեկ խլեակները: Խուճապը ճամբաներուն վրայ էր, խուճապը քաղաքներուն մէջ էր, խուճապը կը տատանէր մարդոց լքուն հողիներուն վրայ: Ո՛չ մէկ բառ աւելի կենդանի ու բարախուն կրնար ըլլալ, քան վերադարձը մեր բազմութիւններուն համար: Ո՛չ մէկ բառ կրնար աւելի մոգիչ ըլլալ:

Այդ օրերուն ո՛չ ոք կ'անդրադառնար, թէ ո՛վ է՛ն կը ձգէր իր ետեւ: Ուրիշներու մահը լո՛ւկ նոր սլատճառ մըն էր ամէն գնով կեանքին կառչելու, ուրիշներու մահը լո՛ւկ դժոխային անդորրութիւն մը կը պատճառէր ողջերուն: Լոկ մարդոց եղկելի անձն էր, որ արքայօրէն կ'իշխէր: Դարերու մոայլ ճիգերու, քաղաքակրթական զմայլելի տաժանքներու գնով կերտուած բարոյսական արժեքները ամէն օր կը փլէին: Ուրիշը յաճախ մայր մըն էր, ուրիշը ժեքները ամէն օր կը փլէին: Ուրիշը զէջ օրերու ընկնլ՝ մէ՛ն էր: յաճախ մատղաշ մանուկ մըն էր, ուրիշը գէջ օրերու ընկնլ՝ մէ՛ն էր: Կարելի չէ գիտակցաբար ընդունուած վատութեանց մասին հեռաւոր գաղափար մը կազմել: Է՛ն սրտառուչ ու գերմարդկային ինքնուրացումէն՝ մարդիկ թաւալգոր կ'իյնային է՛ն վատթար ուրացումներուն ճահիճին մէջ: Ու է՛ն տաժանելի զոհողութեան ընդունակ էակը՝ կրնար է՛ն անըմբռնելի նուաստութեան հեղինակը ըլլալ: Ո՛չ մէկ վերապրող առանց խղճի խայթի կրնայ յիշել այդ գեհնային տարիները: Ո՛չ մէկ վերադարձող խորին անդորրութեամբ մը կրնայ դիտել իր անցեալը: Մահը լոկ կրնայ գերագոյն ներում մը պարգեւել մեզմէ շատերուն: Լոկ լուրթիւնը կրնայ մեզմէլ մեր երէցներուն հպարտութեամբ ու արժանաւորութեամբ մահը դիմաւորել կրցած չըլլալու անշիջելի ցաւը:



228-2010



Այլուը քանիցս կրկնած եմ, թէ փոքր ժողովուրդները երբեք քաղաքական կարեւոր գործօններ չեն կրնար ըլլալ ու չեն կրնար վճռական դէպքեր յարուցանել, եթէ նոյնիսկ լըջօրէն կազմակերպուած ըլլան: Լոկ քաղաքական ակեղծութեանց ու վերիվայրումներու լուսանցքին վրայ՝ սահմանափակ շարժումներու հնարաւորութիւն մը կրնայ տրուիլ մեզի: Արդ՝ մեր չնչին քաղաքական գործօն մը ըլլալու գիտակցութիւնը, նոյնիսկ Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ, նոյնիսկ ջարդի, աքսորի, եզակի փլուզման տարիներէն յետոյ, երբեք մեր մտաւորականութեանը չէ եղած:

Համոզուելու համար այս հասարակ ճշմարտութեան՝ կը բաւէ թղթատել այն ժամանակուան մամուլը: Հաւաքական գիտակցութեան ու կամքի պակասը բացայայտօրէն կ'երեւայ ամէն մէկ սինակի վրայ: Շփոթ, շուայտ ու անհիմն խանդավառութիւն, սուտ յաղթանակի մեծամտութիւն, բարոյալքիչ գինովութիւն, - ու ամէնուրեք:

Կ'ըսեն, թէ Աղէտն ու երկար դժբախտութիւնները նոյն ընտանիքին ու նոյն ժողովրդին գաւակներուն կը պարզեւեն համերաշխութեան անքակտելի զգացում մը: Յամենայնդէպս, հայ ժողովրդին համար ճիշդ չէ ասիկա: Դարաւոր ստրկութեան պակաս ձգածը աքսորը լրացուց, քանդելով մեր ժողովրդին ստեղծագործական ու մշակութային շէնքը, տկարացնելով ինքզինքին վրայ ունեցած հաւատքն ու վստահութիւնը, եղծելով անոր բարոյականքն ու զայն վերածելով կեղրոնախոյս ու թշնամի, որ շուտով ալ շեղեցան, որովհետեւ իրական տուեալներու վրայ չէին յենուր: Իրողութիւնը հետեւեալն էր, - ամէն ոք կը վերադառնար իր հայրենի քաղաքը՝ նախապատերազմեան կեանքը վերսկսելու խուկարօտով մը: Այս ուղղութեամբ ատենի մամուլը հարազատ հայելի մը չէ: Բազմութեանց գլխաւոր ու անհերքելի ձգտումը կիսաքանդ տնտեսութիւնները վերահաստատելն էր: Մարդիկ խուճապային կերպով կը վերադառնային վերաշինելու, վերստին տաքցնելու համար իրենց կիսակործան բոյները: Ո՛վ որ այն ատեն դոյզն չափով ապրած է ժողովրդին մէջ, պիտի չհերքէ ըսածս: Շուտով Համաձայնականներու յաղթանակն ու թուրքիոյ վերջնական ջախջախումը անյեղլի ճշմարտութիւններու վերածուեցան, ժողովրդին նախնական մտքին մէջ: Ճշմարտութիւններ՝ որոնց իրերուն հիման վրայ մարդիկ սկսան կառուցանել իրենց խարխուղ երջանկութեանց պատերը:

Կը ջանամ պարզութեամբ դէպքերը մտաբերել ու մեկնիլ եւ

ո՛չ թէ յապաղած ու մետասաներորդ ժամու իմաստութիւն ծախել: Այն շրջանին գործող բոլոր դեկավար տարրերը, առաւել կամ նուազ չափով, զոհ գացին յետ-գինադադարեան այս մթնոլորտին: Ու ինչպէս ըսի, քաղաքական վճռական, գոզցես անսրբագրելի տուեալներ համարեցին վերոյիշեալ երկու վաղանցուկ երեւոյթները: Այժմ դժուար է ցրտութեամբ վերյիշել, թէ մինչեւ ո՛ւր հասաւ մեր հաւաքական գինովութիւնը, ի՞նչ որ կ'ուզէի շեշտել վերադարձող բազմութիւններու գիտակցութեան պակասն էր, մեր կրած եզակի անիրաւութեան արագ անտեսումը: Ժողովուրդը Աղէտէն հարկ եղած հետեւութիւնը չհանեց ու անուղակիօրէն թրքերուն հետ վերստին կենակցութիւնը, իր հոգւոյն խորը, կարելի համարեց: Կը զգամ, որ այս տուները կրնան գայթակղութիւն պատճառել շատերուն, բայց ճշմարտութիւնը մարդոց ինքնախարէութենէն գօրեղ է: Շատեր աստիճանաբար կ'ընդունէին այն միտքը, թէ եղածը եղած է: Կը մնար քանդուածը նորոգել ու շարունակել ապրիլ:

Ուստի տեղով ժամանակագրութիւնը, օրինակ մը տամ: Վերադարձած ըլլալով Ռոտոսթօ, տիրացած էի հօրս անշարժ կալուածներուն ու բարեկամներու դրդումով կը հետապնդէի շարժուն ստացուածքը: Աքսորի գացած էինք քաղաքը ձգելով չորս թէ հինգ գոյգ եգ, որ ուրիշ եղջիւրաւոր անասուններու կարգին կառավարութիւնը նուազուրդով ծախած էր տեղացի թրքեզին կառավարութիւնը նուազուրդով ծախած էր տեղացի թրքերու: Երկար պրպտումներէ յետոյ իմացայ, թէ մէկ գոյգը կը գտնուէր թուրք հողատէրի մը մօտ: Իրիկուն մը ծեր բարեկամի մը հետ ուղղուեցանք թրքական թաղը, այդ տաճիկ աղան տեսնելու համար: Այսօրուան պէս կը յիշեմ: Կաղամախիկ մը տակ կարկաչուն աղբիւր մը կար, որուն առջեւէն հարկ էր անցնիլ: Ամէն ինչ հին օրերուն պէս էր: Երիտասարդ կիներ ծառին տակ կը շաղփաղփէին: Վերստին փողոցէն մերթ ընդ մերթ տաճիկ կ'ընեղ կ'անցնէին փաթթուած սեւ վարչամականերու մէջ: Ծեր բարեկամս կը զգար տրամութիւնս ու մեր բնիկ լեզուով կ'ըսէր, թէ հարկ էր հաշտուիլ կեանքին հետ: Եղածը եղած էր:

Իր ախոռին դրան առջեւ կեցած էր այդ գէր ու ամսեղունկ տաճիկ աղան: Մեզ տեսածին պէս՝ սիրալիր շարժումներով մօտեցաւ ու առանց պատէ պատ իյնալու յայտնեց, թէ գիտէր մեր այցելութեան շարժառիթը: Մեզ մօտակայ սրճարան մը հրաւիրեց անելի հանդարտութեամբ խօսելու համար, բարեբախտաբար բարեկամս մերժեց երթալ, թուրքի իր ամբողջ ջլատիչ ու կաչուն կեղծաւորութեամբ սկսաւ ցաւ յայտնել՝ հայերուն գլխուն եկած

փորձանքին համար: Յանցաւորը իրենց՝ այստեղի տաճիկներուն հայերը չէին, այլ՝ Փոքր-Ասիոյ խորերուն քոմիթաճիները: Յանցաւորը իրենք՝ այստեղի աաճիկները չէին, այլ դրսէն եկած վալիները, թացն ալ չորին հետ այրած էր: Լայն շարժումներով կ'աւաղէր անցեալը: Քաղաքը շէն էր առաջ, հարուստ էր, համ ու հոտ ունէր:

- Հէյ կիտի րահմեթի Գրիգոր էֆէնտի,- կ'ըսէր խոշոր պեխերը սրբելով,- քիպար ատամ ըտը, ասլը ատամ ըտը...

Քիպար էր ու ասլը, իսկ այժմ րահմեթի՝ սքանչելի հայրս, որ Ռաճուի մօտ, անձանօթ հողակոյսի մը տակ կը փտէր: Երկարօրէն խօսեցաւ այսպէս ու պատմութեան ամբողջ բարոյականը այս էր,- եղածը եղած էր՝ թէ՛ մեղի եւ թէ՛ իրենց: Այժմ հարկ էր բարի դրացնութեամբ ապրիլ: Սուտ յուզումով մը ցոյց տուաւ կառավարութեան կնիքը կրող ստացագիր մը: Փեշիմ վճարած էր, բայց հոգ չէր, եթէ քանի մը օր առաջ եղները ծախած չըլլար, իր րահմեթի բարեկամին աղուն կը վերադարձնէր: Վճարածն ալ թող կառավարութեան պողազը անցած ըլլար: Երկարօրէն բացատրեց, թէ իր վճարածը գէթ կարելի էր ետ ստանալ ու ինք կը խոստանար հարկ եղածը ըսել պատկան իշխանութեան, հարկ եղածը սիրով ընել:

Լոկ օրինակ մը չէր ասիկա,- կատարուածին հետ հաշտութիւնը, այլ՝ ընդհանուր երեւոյթ մը: Քանի մը ամիս յետոյ: Ռոտոսթոյի պէս քաղաքի մը մէջ, կեանքը վերսկսած էր իր հին հունով թաւալիլ: Հայ ժողովուրդը աստիճանաբար ընդունած էր կատարուած իրողութիւնը ու նաեւ հողւոյն խորը՝ վերստին թրքերուն հետ կողք կողքի ասլրելու հնարաւորութիւնը: Բաց աստի, Օսմանեան կայսրութեան հաշիւը այլեւս մաքրուած էր, շունքը կտոր-կտոր եղած էին, քթերնին կտորած էր, եւայլն: Եղանակը ծանօթ է:

Այս երեւոյթը կը մատնանչեմ՝ ցոյց տալու համար ուրիշ յատկանշական պարագայ մը,- հաւաքական յիշողութեան բացակայութիւնը: Մոռնալով մօտիկ անցեալը՝ վերադարձողները կը յուսային թուրքիոյ սահմաններուն մէջ այլեւս խաղաղութեամբ ապրիլ օտար զրահանաւերու հովանիին տակ: Ո՛չ մէկ լայն ու խորունկ տրամադրութիւն կար թօթափելու այդ սին յոյսը: Ո՛չ հայ ժողովուրդի ազատագրութեան գաղափարը, ոչ ալ դէպի Երկիրներգաղթի հեռանկարը խոր արմատներ ձգած էին: Անկախութիւնը բառ մըն էր ու ո՛չ աւելի: Եւրոպական ցամաքամասին վրայ՝ հայրենիքէն ու հայկական հոծ զանգուածներէ մղոններով

հեռու, ժողովուրդը կը յամառէր իր տնտեսութիւնը վերականգնել: Աւելին. հաւանական նոր աղէտի մը հանդէպ ինքնապաշտպանութեան որեւէ միջոցի վրայ չէր մտածեր, որեւէ նախազդուչութիւն ձեռք չէր առներ:

Կարելի է առարկել անշուշտ, թէ դէպքերու ընական տրամաբանութիւնը այդ էր,- անյուշ ու անփառունակ վերադարձը: Բայց ժողովուրդ մը, որ հաւաքական գիտակցութիւն ունի, հաւաքական կամք ունի, որ կազմակերպուած է՝ տասներեք տարուան կարճ շրջանի մը մէջ, յաջորդաբար, երեք անգամ, նո՛յն ծուղակին մէջ չ'իյնար, նո՛յն աղէտին չ'ենթարկուիր, թշնամիին ի գործ դրած բնաջնջումի քաղաքականութիւնը առանց լուրջ ընդդիմութեան չ'ընդունիր,- առանց իր պատիւը եւս վրայ տալու:

Անոնք որ մանուկ էին Սպանդի առաջին տարին ու պատանի՝ երբ սկսաւ երկրորդ աքսորը, կրնա՞ն միթէ մոռնալ այդ նուաստ անցեալը: Մեր ո՞ր մէկ վէրքը յիշել: Փողոցներու ցեխին մէջ ճանչնալէ յետոյ մեր վիրաւոր մայրը, զայն յետոյ տեսանք գինով Պոլսոյ փողոցներուն մէջ, դինով՝ ուրիշին յազթանակով: Մեզմէ ոմանք այժմ չեն հաւատար նոյնիսկ անոր լացին ու արիւնին, վասնզի խորունկ է իրենց դառնութիւնը:

IV

Առաջին ծանօթութիւն Պողտոյ հետ

Երբ կայարանէն ելայ դուրս անուշ առաւօտ մը կը դողար Պոլսոյ վրայ: Զեռքերս տաբատիս գրպանները, երիտասարդ իշխանի մը պէս աներկմիտ՝ խրեցայ նկարագեղ փողոցներուն մէջ, ապրելու աննման հրճուանքով մը շնչելով բարակ զեփուր: Երբք քաղաքի մը հետ առաջին ծանօթութիւնս այդքան խորունկ բքք քաղաքի մը հետ առաջին ծանօթութիւնս այդքան խորունկ տպաւորութիւն չէ ձգած վրաս: Ոսկելոյս քաղցրութիւն մը կար փողոցներուն մէջ ու շէն եռուղեռ մը: Մերթ ընդ մերթ կը հանդիպէի Համաձայնական զինուորներու եւ հոգիս կը լեցուէր ապապէի Համաձայնական զինուորներու եւ հոգիս կը լեցուէր ապապէի Հովութեան ամբաւ զգացումով մը: Հայեր կ'անցնէին քովէս հովութեան ամբաւ զգացումով մը: Հայեր կ'անցնէին քովէս ազատօրէն ու բարձրաձայն խօսելով: Գեղեցիկ ցուցափեղկերով վաճառատուներ կային, որոնց առջեւ երկարօրէն կը կենայի՝ զմայլանքով դիտելով թանկագին թուող առարկաներ, որոնց գոյութիւնն իսկ ուրախութիւն կը պատճառէր ինձ: Նոյն այս

հրճուանքը զգացած եմ նաեւ Թիֆլիսի մէջ, Հայաստանէ վերադարձիս, թէեւ ո՛չ նոյն զօրութեամբ, ո՛չ նոյն ծաւալով:

Փոքր-Ասիոյ խորերէն կու դայի, չորս տարիներու անօրինակ զընկանքէ յետոյ, իյնալու համար մոզիչ առաւօտով մը դիւթական քաղաքի մը մէջ, ուր ամէն ինչ կը թրթռար չքնաղ գեղեցկութեամբ մը: Ուր Եւրոպան ու Ասիան դարերէ ի վեր կը վիճէին՝ իրենց ուրոյն բանաստեղծութեամբ ու ինքնատպուլթեամբ օժտելու համար բնութեան է՛ն մենաշնորհեալ ու դալարագեղ անկիւններէն մէկը:

Անցեալէն ո՛չ մէկ մթին ստուեր, ո՛չ մէկ չարաշուք հետք կար հոգւոյս խորը, լոկ պատանի մըն էի, որ քնքուշ առաւօտով մը ինկած է հրաշագան ու հեքիաթային քաղաքի մը մէջ: Աքսորի չորս տարիներու ընթացքին՝ զանազան քաղաքներու մէջ աննպատակ դեգերելու հաճոյքը ճանչցած ըլլալով, շատ երիտասարդ՝ կը զգայի նաեւ անոնց մասնաւոր նկարագիրն ու ուրոյն գեղեցկութիւնը: Չափահասները ընդհանրապէս թերի գաղափար ո՛չ ունին մանուկներու զգայնութեանց ու մտածումներու մասին: Կարգ մը գեղեցկութիւններ յաճախ աւելի՛ ուժգնութեամբ կը տպաւորեն մանուկ մը: Օրինակ, երբեք չափահաս մը նո՛յն զօրութեամբ ու ծածուկ զմայլանքով, խոովքով հանդիսատես չ՛ըլլար ծաղիկի մը բողբոջումին: Բազմաթիւ երեւոյթներ անջնջելի յիշատակ մը կը թողուն մեր մտածման խորը, երբ դեռ մեր զգացական կարողութիւնները անաղարտ են, ցայժմ կը բաւէ, որ աչքերս փակեմ ու ոտնգերս բանամ զգալու համար Պոլսոյ մասնայատուկ բուրումը: Կարծես մարմինս իր վրայ կը կրէ այդ զարմանալի քաղաքին հրապոյրը: Վոսփորը արեւին տակ կը շողայ, կը ցոլցլայ: Շիրքէթի շոգենաւերը սուրալով կը ձեղքեն կապոյտ ջրերը: Զով ու ստուերառատ փողոցներու շուքին մէջէն հանրմ էֆեմտիներ դիւթական ստուերներու պէս կը սահին՝ իրենց հետքերուն վրայ ձգելով վարդի ու արեւելեան անուշահոտութեանց բուրումներ: Գայլքներ կը բացուին իրիկունը: Մահիկը երկնից խորունկէն կը ցոլայ ու ցայգային թեթեւ հովը կը տարտղնէ մինարէներու կատարներէն անհաւատներու քաղցր մեղեդին, - Ալլահ էֆպէր: Արնամ ամբողջ էջեր մըրտել՝ երգելու համար Պոլիսը ու չսպաննել հոգւոյս խորը տարիներէ ի վեր ննջող յուզումներու պաշարը: Կարելի՞ է միթէ մոռնալ Վոսփորի եզերական արուարձաններուն անդորրաւէտ իրիկունները, թաթխուած շուայտ արբեցութեամբ մը: Յունական մեխանիսները, ուր միջերկրականեան ծագում ունեցող մելամաղձիկ երգերուն կը խառնուէին Արեւելի հեշ-

տաւէտ ու ախտագին մեղեդիները: Ժամեր կային երբ ողջ քաղաքը սիրով կը տոչորէր, հաճոյքով կը սրսփար, յետոյ խորունկ, յաւիտենական ծուլութեամբ մը ննջելու համար:

Կարելի՞ է միթէ մոռնալ յայրատ ու հեղգ իսլամ թաղերը, ուր չինարներուն ու դավախներուն տակ, իրենց երգեցիկ կլկլակներուն առջեւ նստած ծոյլ մահմետականները կարծես յաւիտենութիւնը կը հաշուէին: Կարելի՞ է միթէ մոռնալ՝ յանկարծ հեղփողոցի մը վրայ բացուող ծաղկագարդ պատերը: Հանրմ էիներու եւ վարդերու նուրբ դիւթանքը դարնան, երբ բլուրներէն հովերը ծոյլ բարախումներով կ'իջնէին քաղաք ու կը համբուրէին շայիր-չիմէն ֆիւչիւֆ հանրմներու նորարոյս կուրծքերը: Աննիւթական ու թաւշային գիշերներ կային, օծուած անորոշ յուզումներով եւ որոնց խորունկներէն սիրտ արիւնող ու մորմոքալի երգեր կը բարձրանային, վշտագին թաւալումներով կ'ելլէին ու կը գարնուէին մարմնիդ: Զրերուն վրայ առկախ ֆոնաֆներ կային՝ մթին ու խորհրդաւոր պարտէզներով, ուր լուսնին զուարթ ցոլքերուն տակ՝ յետամնաց փաշաներ կրնայիր երեւակայել: Փաշաներ՝ մատանեզարդ ու փափուկ ձեռքերով, ստեղծուած շոայլ խնջոյքներու, միջօրէի հանգիստներու, քէֆի եւ զեխութեան համար: Կը քալէիր յամբօրէն ու անձկութիւնը կոկորդէ կը սեղմէր: Պատէ մը կարմիր նոււեր կը կախուէին վար: Համալ մը տատանելէն կ'անցնէր ու մէկէն յունական նուրբ մեղեդի մը քեզ կը կանչէր ուրիշ յուզումներու: Կը զգայիր ծովը, որ կարծես անուշ էր: Ու ծովային հովը կը համբուրէր երեսդ:

Իրիկուններ ու առաւօտներ կային, երբ մարդ ինքզինքը անափ ու հմայուած պարտէզի մը մէջ կը զգար: Ամէնէն բիրտ ու արձակունակ էակները անդամ քաղաքին նկարագեղ ամբողջութեան մաս կը կազմէին: Ուրիշ ո՛չ մէկ քաղաքի մէջ՝ մարդիկը այդ ուժգնութեամբ շահադրողած են դիս: Կարելի՞ է միթէ մոռնալ թաթաւլայի յոյն աղջիկները, որ զուարթ լրջութեամբ մը կը ժպտէին թօթուելով իրենց ձերմակ ծիծերը: Կը հանդիպէիր անոնց փոս փողոցի մը մէջ, երբ գիշերը շուրջդ սլքտալ կը սկսէր, երբ աստղերը կը սկսէին պլպլալ: Լաթեոնա մը անկիւնէ մը գինովի տրտում երգ մը կ'արձակէր: Գդակները ծուռ ուղած հոռոմ տղաք չես գիտեր ուրկէ՛ կը վերադառնային՝ քիչ մը գինով ու միշտ կռիւ հանելու պատրաստ, երբ հայր միմակ ըլլար: Ու վերստին՝ ուրիշ փողոցի մը մէջ, կը հանդիպէիր նո՛յն ասպերասան ու շուայտ գեղեցկութեամբ աղջիկներուն, որ հայ տղան կը սիրէին իր սեւ ու խորունկ աչքերուն ու արու հաւատարմութեան

պատճառաւ: Կիրակի առաւօտները կ'իջնէիր Բերա ու նուրր օրիորդներ մանր քայլերով կը սահէին քովէդ, եւրոպական անուշահոտութիւններով օծելով միջոցը: Քիչ մը ջղային ծեփծեփումներով կ'օրօրուէին, ջանալով նմանիլ փարիզեան քաղաքակերտներու պչրուհիներուն: Գարնան յետմիջօրէի մը եզերելով Տոլմա պաղչէի պալատը, թրքական լոին թաղերէ, կ'երթայիր մինչեւ Առնավուտ գիւղ, մինչեւ Պեպէք: Ծովը շէն աղմուկով մը կը զարնուէր արուարձանին, աղի բուրումներ կը զարնուէին ունգերուդ, բարձունքէն հովը մեղմօրէն կը հոսէր՝ կարծես ծանրաբեռնուած ելակի անուշ հոտերով: Բողոքական կրթութիւն ստացած աղջիկներ՝ մաքուր ու քիչ մը ցուրտ գեղեցկութեամբ՝ լուրջ գուարթութեամբ մը կ'երթային նաւամատոյց: Կը սպասէիր երեկոյեան շոգենաւերուն, որ խայտաբղէտ բազմութիւններ կը նետէին քարափ ու արուարձանին գիշերը կը սկսէր շէննալ, դիւրահոս, թեթեւ, մեղմօրէն արբեցեալ:

Կարելի՞ է միթէ մոռնալ միտին խաները, բաղնիքները՝ որոնց խուլ ու խորունկ աղմուկը երբեմն փողոցը կը լինէր: Կը զգայիր ողջ Արեւելքի խոնջէնքն ու հեւքը՝ երբ կը մօտենայիր անոնց ծանր դռներուն: Կը յիշէիր ներքին շատրուանները, որոնց շուրջը հեշտաւէտ արեւելուհիներ կը բուրաւէտին իրենց արեւ չտեսած մարմինները: Կարելի՞ է միթէ մոռնալ մահմետական գերեզմանոցները, ուր նոճիները սեւ բոցերով կը վառէին, ուր զարնան լուսեղ գիշերները ճերմակ մելեֆներ կը պարէին ծեր շնացողներու շիրիմներուն վրայ: Կարելի՞ է միթէ մոռնալ Սամաթիոյ կամ Կէտիկ-փաշայի հայկական փողոցները, որ Շաբաթ երեկոնները միաժամանակ խունկ ու տապկած ձուկ կը բուրէին: Յոյն մեխանիկները, որ ո՛չ արեւելքցի էին, ոչ ալ եւրոպացի, որոնց է՛ն պարկեշտին հոգւոյն խորը կաւատ մը կը ննջէր: Պալատի ետեւտիները, որ ամէ՛ն ինչ կ'ուրանային՝ պահելով հանդերձ է՛ն յամառ ինքնատպութիւնը, կարելի՞ է միթէ մոռնալ բոլո՛ր Մարիքաները, որոնցմէ է՛ն հպարտին հանդէպ մեղաւոր զգացում մը անուցանելը արտօնելի կը թուէր:

Քիչ մը յապաղեցայ այս զգայնութիւններուն վրայ, որովհետեւ կարելի չէր վերակոչել այդ անկորուստ առաւօտը՝ առանց խօսելու Պոլսոյ ապշեցուցիչ դիւթանքին վրայ: Նկատած եմ, թէ ո՛չ մէկ պոլսեցի գրող կրցած է տալ այդ քաղաքին մոգիչ հրապոյրը: Օտար գրողներու մօտ միայն մարգ կը հանդիպի յանկուցիչ էջերու, թաթխուած այդ արեւելեան հինաւուրց ոստանին զարտուղի ու անկորնչելի բանաստեղծութեամբ:

Քարափին կոթնած՝ կը դիտէի քաղաքը ու ինձ կը թուէր, թէ կեանքը նոր է ու բաբախուն անհնարին հրճուանքներով: Երջանկութիւնը բառ մըն է միայն: Իրողութեան մէջ ներքին խանդավառութեան, թեթեւութեան ժամեր կան, որ երբեք նոյն տարողութեամբ ու նոյն բաղկացուցիչ տարրերով չեն կրկնուիր, որ բառերու մաշած կաղապարին մէջ կը նմանին ոսկի փոշիի: Չորս տարիներու խաւարակուռ գիշերէն յետոյ, Պոլսոյ քաղաքին վրայ մարմնիս զգացած խոտվքը անգտանելի է: Այդ առաւօտ է, որ վերստին իկեանեսոսի սէր ծնայ: Այս զգայնութիւնը յուզիչ ու արբեցուցիչ էր միանգամայն: Քարափին կոթնած կը դիտէի քաղաքը ու հոգիս աստիճանաբար իր կճեպը կը պատռէր: Յատակօրէն կը յիշեմ, թէ եւրոպացի խարտեաչ կին մը անցաւ քովէս: Երկարօրէն, խորին զմայլանքով մը դիտեցի զինքը ու ինձ թուեցաւ, թէ առասպելային կերպով գեղեցիկ էակ մըն էր: Տարիներ վարժուած ըլլալով արաբական թուխ ու արոյրէ դէմքերուն՝ անոր վարսերուն փրփուրը ինձ պարզեւեց անէական անուշ հաճոյք մը: Աչքերուն ծաւի ալիքներուն մէջ ցաւերն ու վշտերը խալառ կորսուեցան: Ստած կ'ըլլամ ըսելով, թէ այդ ժամուն մտածեցի մեր քաղաքին, ծնողքիս եւ ուրիշ կորուսեալ սիրելիներու վրայ: Կեանքին ցոյց տուած դէմքը լոյսով այնքան թաթխուած էր, որ հովի պէս թեթեւ կը զգայի ինքզինքս: Ի վերջոյ հաճելի ծուլութեամբ մը ու տնտնալով հասայ Եիսուս-Քրիստոսի ու քաղաքը բռնեց կոկորդէս իր եռուզեռով, իր տենդով: Կէսօր էր արդէն, երբ անցորդներու ճամբաս հարցնելով վերջապէս դտայ Բերայի Ս. Երրորդութեան եկեղեցին, ուր կը յուսայի հանդիպիլ մօրեղբայրս, Տէր Բարթոլ Ք. Թագրմանեանին:

Փոխանակ սակայն ներս մտնելու, սկսայ դեգերիլ շրջակայ փողոցներուն մէջ: Ծովի աղի բուրում մը կար շուրջը, կարծես ծովի մեղմ հով մը կ'ելլէր՝ տարտղնելով հաճելի աղմուկ մը: Յունարէն, հայերէն ու թրքերէն բառեր կը բախէին իրարու, ստեղծելով խառնիճաղանճ մը, ուր մարդ ինքզինքը երջանիկ կը զգար: Հողւոյս խորը աստիճանաբար կ'արթնար, ծովեզերեայ քաղաքներու բնակիչներուն յատուկ, խորունկ սէրը յաւիտենական ծովին հանդէպ: Մարմինս կը յիշէր իր բոլոր զգայարաններով ծովային բուրումներն ու հեռանկարները: Զինավաճառի կրպակներուն առջեւ կը կենայի՝ զուարթութեամբ դիտելով խեչափառներն ու խեցգետինները, ուլականջներն ու ոստրէները, որ միշտ սիրուն թուած են ինձ: Չորս տարիներ ապրած ըլլալով անապատին մերձ շրջանի մը մէջ, ուր տօթն ու աւազախառն հովը վերջ ի վերջոյ

կ'ընկճէին մարդը, ոստրէի մը փակած ծովային սէզի թել մը կը բաւէր՝ մարմնիս խորը արթնցնելու համար մեր ծիծղուն ու ծովափնեայ քաղաքին յիշատակը, ինձ վերադարձնելու համար ծովային մանկութիւնս:

Բայց ինչ որ ամէնէն անելի ուշադրութիւնս գրաւեց՝ յոյն ու հայ ձկնավաճառներու խօսելու եղանակն էր, երգեցիկ ու շուտիկ քաղցրութիւնը: Հաճելի էր իրենց շարժումներուն ազատութիւնը, ուրախ շաղփաղփիւնը, մեծ քաղաքներու բնակիչներուն յատուկ քիչ մը ստահակ համարձակութիւնը, որուն կարելի չէ հանդիպիլ զիւրացիներու մօտ: Հմայուած, թեթեւ, անհոգ՝ կը կենայի սալայատակին վրայ, զարմանալով, թէ ինչպէս այդքան դիւրին ազատութիւն, այդքան շէնութիւն մնացած է մարդոց մօտ չորս տարիներու անել թուող գիշերէն, մղձաւանջէն յետոյ:

Երկարօրէն, մանկօրէն դեզերեցայ այդպէս, պրպտելով ու սիրելով Պոլսոյ պարզ մարդիկը, վերստին ծանօթանալով ծովին ու ծովային ուրախութիւններուն՝ որ մանկութեանս էն քաղցր յիշատակներուն մաս կը կազմեն, մոռնալով, թէ գիշերը իջնելէն առաջ հարկ էր ազգականներու հասցէն գտնել, մոռնալով, թէ անօթի էի ու գրպանս դրամի յետին կտոր մ'իսկ չկար՝ անօթութիւնս որեւէ ուտելիքով խաբելու համար: Պտտելէն հասայ Փրթի-Շանի թատրոնին առջեւ: Պարտէզին վրայ միջօրէն այնքան անուշ էր, որ հեռանալը յանցանք մը կը թուէր: Կը յիշեմ, որ մինչեւ Գապրիսիան փողոց իջայ՝ հանդիպելով ուրիշ երոպացի կիներու: Կենալով իւրաքանչիւրին առջեւ խորին զմայլանքով մը՝ վասնզի թշուառութեան յիշատակը արթուն ու անջնջելի էր հոգւոյս խորը: Կարելի՞ էր միթէ, որ այդքան նուրբ ու գեղեցիկ կիները ըլլային երկրի վրայ, շերեփագիներու պէս թեթեւ, երբ անդին մարդիկ աղսի ու բորտութեան մէջ կը փտէին, երբ երկիրը կը տքար անոնց տաժանելի կեանքէն, երբ բազմութիւններ արին կու լային:

Ի վերջոյ անփութօրէն մտայ եկեղեցի: Բակին մէջ հանդիպեցայ խարտեաչի վրայ մարդու մը, որ ինձ բան մը հարցուց: Հայեացքս բարձրացուցի ու երկարօրէն դիտեցի զայն: Տարօրինակ յուզում մը ցնցեց մարմինս: Կարելի՞ էր միթէ, որ այդ մարդը մօրեղբայրս ըլլար: Հարցումին գոհացուցիչ պատասխան չկրնալով ստանալ՝ մարդը հեռացաւ ու կտրուեցաւ եկեղեցիին աջակողմը գտնուող ներքին շէնքի մը խորը: Սալայատակին եզերքը կեցած՝ հոգւոյս խորը կ'որոնէի անծանօթ մարդուն դիմագծերը ու անորոշ խոտվք մը կը համակէր զիս: Երկմիտ ելայ դուրս ու գլխաւոր

դրան աջ կողմը գտնուող ձկնավաճառի մը խանութին առջեւ կեցայ: Ծովային նո'յն մոռցուած բուրումը կը զարնուէր ոտնգերուս ու նո'յն յուզումը տեսակ մը զուարթութիւն մը կը պարգեւէր ինձ: Կարմրախայտերու սիրուն դէզ մը դիտելու վրայ էի, երբ վայելուչ քահանայ մը մտաւ խանութէն ներս: Հեռաւոր մանկութեան մը ընթացքին զայն տեսած ըլլալով՝ յիշողութեանս մէջ ան բարձրահասակ ու գեղադէմ մարդ մըն էր, արթուն ու քաղցր աչքերով: Ու դէմքին վրայ միշտ հաճելի լոյս մը կար: Մինչդեռ քահանան, որ կը տեսնէի, գրեթէ կարճահասակ էր ու առաջին ծերութեան մէջ: Աչքերուն տակ յոգնութեան գծեր կային արդէն ու մօրուքին մէջ ճերմակ թելեր: Այսուհանդերձ, ինքն էր, կենսասէր, շէն Տէր Բարթող հայրը, պիտերուն կամ մօրուքին մէջ ծուարած իր ծածուկ ժպիտովը: Առանց ինձ նայելու անցաւ քովէս ու ես փոխանակ մօտենալու՝ գոհացայ հետեւելով իրեն:

Ինչ աղուոր էր օրը ու ինչ հրապուրիչ, ցնծուն էր քաղաքը, Բերայի շիտակ ճամբան կը յորդէր բազմութեամբ: Համաձայնական զինուորներ փոքրիկ խմբերով կը շրջագայէին, քաղաքին արդէն տարասեռ ու այլազան բազմութեան մէջ մտցնելով տարաշխարհիկ ու զուարթ տարր մը: Սպաներ յամրաբար կ'անցնէին՝ զսպուած ցանկութեամբ մը դիտելով երիտասարդ կիները: Իրենց դէմքերուն վրայ յաղթանակը տհաճելի, հակակրեղի լոյս մը կը ձգէր: Անոնց էն յետին շարժումներուն մէջ մարդ կը զգար անվիճելի գերակայութիւն մը, հպարտութիւն մը, որ անհանդուրժելի էր:

Սալայատակէ սալայատակ կը ցատկէի, կը վազէի ցուցափեղկ՝ անհուն հրճուանքով մը ճաշակելով քաղաքին շէն եռուզեոր: Ու երբ քահանային միջին ստուերը հեռանար՝ հեւհեւ կը վազէի՝ չկորսնցնելու համար զայն: Երջանկութիւնը լոկ բառ մըն է իրապէս: Ինչ որ կը զգայի անբացատրելի, աննախընթաց լիութիւն մըն էր, շնորհաց քաղցր վիճակ մը, տարերային ու արարչական գոհութիւն մը: Ամէն ինչ օժուն էր, բարախուն բանաստեղծութեամբ մը ու ամէն ինչ կը թրթուար ակնարկիս առնչուութեամբ: Երկինքը թեթեւ կը թուէր երկրին վրայ: Պոլսոյ առաջին համրոյրը աչքերուս վրայ էր դեռ՝ երբ հասանք Բանկալթիի գերեզմանատան մատուոր: Տէր Բարթող հօր ետեւէն մտայ ներս ու նոր անակնկալ մը դիմաւորեց զիս:

(Շար. 3)

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ



Ն. ԲՆՃԷՃԻԿԵԱՆ

# ԽԱՉԱՄԱՐՄԻՆ

Մառախլապատ կատարներու վրայ  
ես ու դուն  
երկու խաչաձեւ մարմին  
մղձաւանջածին  
սիրոյ գամերով  
կռնակ-կռնակի խաչուած

Ես քու խաչդ  
դուն իմ խաչս

Արիւնով  
մեր թելերն են  
կապուած

Ո՛չ որոտում  
ո՛չ խաւարում  
լռութիւն է համատարած

Յաւերժութեան սաղմը  
մեզմէ  
յարութիւն է առած...

19 Մարտ 2002

# ԱՆԼԱՅ ԾՆՈՒՆԴ

Մեղեդի մը  
հեռուներէն  
կը սուգով պատուհանէս  
ներս

զիս կ'առնէ իրեն հետ  
ու կը տանի  
ծննդավայրը  
ուր կը ծնիմ  
անլաց  
ինքնամոռացութեան մեջ...

1 Յուլիս 2003

# ԲՆՈՒԹԵԱՆ ՉԱՅՆԸ

Բնութեան ձայնը կը լսե՛ս

Երկինքը  
մթնշաղ կը նուագէ

Ծառերը՝  
գօս աշուն

Թռչուններուն թափահարումը՝  
բաժանում

Ու ծովը՝  
խենթութիւն

Իսկ ես  
իմ համր նուագարաններովս՝  
ինքնութիւն

Բնութիւնը արձագանգս է

Սպասում...

4 Յուլիս 2003

## «ՅՈՆ»

Ոտնաձայներս  
հզօր արձագանգներ կ'ունենան  
լուռ փողոցներուն մեջ

Արշալոյսը  
իրիկնամուտ է կարծես

Կը հասնիմ  
«Յոն»  
ուր տունն է իմ մենութեան

Բացօթեայ  
ինքնամոռացութիւն մըն է այս  
ուր կ'անջատուիմ  
անվերադարձ...

4 Յուլիս 2003

## ԱՍՄՈՒՆՔ

Գիշերը  
մղձաւանջներ կ'ասմունքե  
բարձրաձայն

Հսկայ սրահին մեջ  
միայն մէկ աթոռ

Գիշերը  
զիս բեմ կը հրաւիրէ...

3 Մարտ 2003

## ՕՂԵՐԸ ՍԿՍԱՆ ՊԱՂԻԼ

Թէ օղը պաղ է  
եւ թէ դուն չկաս  
այսքանը շատ է ինծի համար  
շալ մը կ'առնեմ կռնակիս

Օ, օղերը սկսան սառիլ  
բառերես  
կարօտի շոգիներ կը բարձրանան  
խաւարին մեջ  
շատոնց չտեսած դեմքդ  
կը գծեն  
թէ օղը պաղ է  
եւ թէ դուն չկաս  
այսքանը շատ է ինծի համար  
շալը  
կը սեղմեմ կռնակիս...

11 Հոկտեմբեր 2002

## ԱՆՄԱՅ ՄԱՅ

Հոլաթեւած կը խեղդուիմ  
մենագորշութեանս  
անդունդին մեջ

Տիեզերքը  
դագաղ մըն է  
ուր անմահ մահը  
կը շնչեմ  
շնչահեղձ

Թեւերդ  
մարմնիս շուրջ օղակելով  
լաստս ըրէ  
ու ես քեզմով  
վեհանամ  
անդունդն ի վեր...

27 Յուլիս 2003

# ՄԵՆՈՒԹԵԱՆ ՄԱՅԹԵՐ

Արցունքներով խցուած  
սպունգ մըն եմ

Յաւր  
կը ճմլէ՛ գիս

Ու արցունքներս կը կաթկթին  
մենութեանս մայթերուն վրայ  
ուր կը քալեմ  
շուքէ մը աւելի սեւ  
դէպի վախճանը սրտիս

Թող մահանան  
ալեկոծուող տառապանքները  
ներաշխարհիս  
ու ես ըլլամ  
սորածին  
ցաւերէ գերծ

Թող փճանան  
գոռիկ երգերը կեանքին  
ու ես ըմբռնիս  
գարունս անբիծ...

25 Օգոստոս 2003

# ԶԱՐԹՆՈՒՄ

Արթնցուր գիս  
իմ մղձաւանջներես

Ու միասին քալենք  
մշուշոտ տարածքներու վրայէն  
դէպի անհունը լուսաբացի  
ուր ձեռք ձեռքի  
դիտենք գարթնումը  
հորիզոնին

լռութիւնը  
ոչ ոք խանգարէ

Տեսարանը սառի  
պահին մէջ

Իսկ մեր երեւակայութեան երիզը  
ընթանայ  
ուրորտն ի վեր  
երկարի՛

Մղձաւանջներուս մէջ  
խնդուքս կը ննջէ

Արթնցուր գիս  
անուրջի պէս...

29 Յուլիս 2003  
Հալէպ

ՆԱՆՈՐ ԻՆՃԷՃԻԿԵԱՆ

Ս. Չէրիճեան

ԱՄԱՌՆԱՅԻՆ ԱՆՁՐԵՒ...

Ե.

Երկրորդական վարժարանի աւարտական տարիէն առաջ Հայրս ինծի միշտ կ'ըսէր. «Տղաս, դուն դասերդ լաւ ըրէ, ես քեզի ամէնէն «բարձր» Համալսարանը կը ղրկեմ»:

Միշտ դասարանին լաւագոյն աշակերտներէն մէկը կը Հանդիսանայի, մա՛նաւանդ գիտական նիւթերու մէջ: Երբ որ վկայականս առի, Հայրս ինծի ըսաւ.

- Եկուր քեզի Սալէհին քով դնենք, քանի մը տարիէն արհեստը կը սորվիս, վերջը Աստուած մեծ է:

Սալէհը ասորի ոսկերիչ մըն էր, որ իր անձնական աշխատանոցը բացեր էր, միայն մէկ տեսակի՝ ձուկի թեփերու նմանող ոսկի ապարանջաններ կը շինէր, աշխարհի ամէնէն ձանձրացուցիչ գործը: Կտրուկ մերժեցի: Հայրս շատ վիրաւորուեցաւ:

- Իմ արհեստս չե՞ս Հանիւր կոր,- ըսաւ:

Բան չըսի իր խոստումին մասին, ան արդէն գիտէր, անոր Համար է, որ բարկացած էր:

Այդ օրը չափահաս դարձայ:

Պէյրութի Հանրակառքի գիծը կ'երթար Տորայէն մինչեւ քաղաքի կեդրոնը՝ Պուրճի հրապարակը: Երբ Նահր գետի կամուրջը անցնէր՝ կը կտրէր Քորնիչ պողոտան եւ ձախին Խալիլ Պէտէուի, իսկ աջին՝ Հաճըն թաղերը ունենալով՝ երկաթէ կամուրջին տակէն կ'անցնէր:

Սահակեան Փութպուլի դաշտը անցնելէ ետք, Հանրակառքը զառիվեր կը բարձրանար, անոր Համար վարորդը աւագ կը թափէր անիւներուն տակ՝ լծակ մը կոխելով, եւ քանի որ դարձուածք կը դառնար, անիւները ահոելի ճոխնչներ կը Հանէին, եւ միշտ այդտեղ վարիչը Հանրակառքին զանգը կը զարնէր, արոյրէ ոտնակ մը կոխելով առնուազն հինգ-վեց անգամ:

Այդ ձայնն է, որ կը լսեմ ամէն անգամ, որ մանկապարտէզս յիշեմ, որ Հաճըն թաղին դիմացը Ակիւլեան եղբայրներուն ձուլարանին ետեւը կը գտնուէր: Ծաղիկ դասարանին պատին վրայ

գետնին Հաւասար պզտիկ պատուհան մը կար՝ երկաթէ ճաղերով, որուն պղտոր ապակիէն ձուլարանին Հնոցը կ'երեւէր. եւ աւագով շինուած կաղապարները, որոնց մէջ կը թափէին Հալած մետաղը, կշիռքի Հնգանկիւն քիլոնոցներ շինելու Համար:

Ֆելլինիի Փիլմերը յիշեցնող այս տարաշխարհիկ շրջապատին մէջ կը մեծնայինք ով գիտէ ինչ պատկերներ կը պելով մեր մտքի պաստառներուն վրայ:

Դպրոցին երկաթէ դրան դիմաց մետաղի թափօն Հաւաքող խանութ մը կար, ուր քանի մը գործաւորներ Հսկայ մուրճերով, խոշոր սալի մը վրայ ժանգոտած իրեղէններ կամ ոստիոյի լամբեր կը կտորէին՝ մէջի մետաղը առնելու Համար: Մտքիս մէջ տպաւորուած են նաեւ այդ մուրճերուն ձայները մանկապարտէզին հեղձուցիչ տաքին Հետ, երբ կէսօրէ ետք մեր գլուխները փայտէ սեղանին դրած կը փորձէինք քնանալ:

Երկաթէ դուռը դպրոցին բակին վրայ կը բացուէր. որուն կեդրոնը ջրհոր մը կար՝ կարմիր երկաթէ ջրհանով: Ամէն օր, զբօսանքէն ետք, երկու աշակերտ այս ջրհորէն ջուր կը քաշէին եւ պէտքարաններուն մէջ կը թափէին, քանի որ Հոն ջուր չկար:

Դպրոցի մուտքի դրան ձախ կողմը փայտէ Հսկայ սեւ պահարանին եւ երկաթէ ճաղերով պատուհանին միջեւ պատժուած աշակերտները կը կենային: Պահարանին խճրճուած սեւ փայտին վրայ խորունկ եւ անջնջելի քառակուսի երկաթագիր տառերով փորագրուած էր՝ «Ես մեղք գործեցի»:

Դրան ճիշդ դիմացը կար առաջին դասարանը, որ շատ մուխէր, քանի որ պատուհան չունէր. այս դասարանին մէջտեղը, գետինը, փայտէ ծածկ մը կար, անոր տակ՝ պզտիկ աւագան մը՝ չափահասներ մկրտելու Համար: Կրօնամոլ այս աղանդը ամէն երիտասարդ կը մկրտէր, ինչպէս որ Յովհաննէս Մկրտիչ Յիսուսը մկրտեց: Պեթրոսէ շինուած առաքիճանները կը կորսուէին սեւ ջուրին մէջ:

Այդ դպրոցին մէջ սորվեցայ զգացումներս ծածկել, որովհետեւ մոլեռանդ կրօնամոլ այդ միջավայրին մէջ գրեթէ ամէն ինչ արգիլուած էր: Ի՞նչու՞ ուատանիները եւ երիտասարդները այս ճնշումին մէջ կը կեղծէին սիրելի եկեղեցին եւ Հաւատքը, բայց ճնշումին մէջ կը կեղծէին սիրելի եկեղեցին: Կեղծաւորութիւնը իրենց միակ գէնքն էր: Այստեղ սորվեցայ նաեւ բանտարկեալներու պէս՝ առանց շրթունքներս շարժելու խօսիլ:

Երկաթէ դրան մօտ աստիճաններ կային, որոնք կը բարձրանային երկրորդ յարկը դէպի եկեղեցին, որ քառանկիւն սրահ մըն

էր, եւ որ սաւանի նման ճերմակ պարզ լաթէ վարագոյրներով չորս մասի բաժնուած էր եւ իբրեւ չորս դասարան կը գործածուէր դպրոցի ժամերուն: Սրահի ճակատին գրուած էր՝ «Կրթէ մանուկը իր ճամբան ոկսած ատենը»:

Ամէն առաւօտ՝ պաշտամունք:

Ես համոզուած եմ, որ կրօնական մոլեռանդութիւնը սեռային մղումը արգելքի աակ դնելով անոր ուժգնութիւնը կը բաղմապատկէ: Հինգերորդ դասարանին գտած էինք Հին Կտակարանի բոլոր հատուածները, որոնք տառացի սեռային նկարագրութիւններ ունէին: Աղջիկները, որոնք տարեկից տղոցմէ աւելի արագ կը կազմաւորուին՝ կը ցուցաբերէին պչրոտ վարուելակերպ:

Այս ֆշչացող խառնարանին մէջ, կապուելիք խենթ «քարոզիչ»ներ դժոխքի չարչարանքները կը նկարագրէին: Իրենց հիւանդ երեւակայութեան ճարտաութեան իբրեւ Աստուծոյ խօսք ներկայացնելով՝ հաճոյք կը զգային իրենց առջեւ գանուող խեղճ երեխաները սարսափեցնելով, միւս կողմէ՝ սեռային լիցքաւորուած մթնոլորտը - վատառողջ լարուածութիւն մը ստեղծած էին. որ իշխեց մեր մատղաշ մտքերուն վրայ մինչեւ իմացականութեան զարթնումը, անկէ ետք ալ ո՛չ մէկ բանի հաւտացինք:

Մեր մէջ չկան կուսակցականներ, քանի որ չենք կրնար հանդուրժել երկու արժեչափ, որովհետեւ մեր դիմաց կը գտնենք նոյն «քարոզիչ»ը, այս անգամ ուրիշ տարազով, բայց նոյն յանկերզով: Նոյն նախիրի հոգեբանութիւնը եւ նոյն կեղծիքը:

Այստեղ հազարաւոր մղոններ հեռու ընտանիքէս եւ ընկերներէս, այս խայտաբղէտ կարկտանները հոգիս մէջ՝ կը զարմանայի, որ տակաւին ապագային կը նայէի անսպառ սոսնդոզ:

Ուրբաթ կէսօրէ ետք եկած էի Աննային քով, մուտքի նրբանցքին այրած լոյսը փոխելու համար: Հիմա Կիրակի կէսօրէ ետք, տուն վերադարձայ երկու օրուան բացակայութենէ ետք: Յարկարածինս, զոր շտա կը սիրէի, այսօր տարբեր երեւցաւ ինձի: Իմ նոր գաած երջանկութեանս հետ բաղդատելով՝ քիչ մը անհրապոյր թուեցաւ: Սկսայ պատկերացնել Աննային ներկայութիւնը այստեղ, եւ փոփոխութիւնները, որ պիտի ընէինք միասին՝ այս յարկարածինը մեր բոյնը դարձնելու համար:

Հազիւ քանի մը վայրկեան անցած էր՝ հեռաձայնը հնչեց: Լաչքան էր, չեիս ընկերուհիս: Այս հեռաձայնին մասին քանի մը անգամ մտածած էի շարաթավերջին, թէ ի՞նչ պիտի ըսէի անոր,

բըր որ հեռաձայնէր: Ան մտահոգուած էր, որովհետեւ Ուրբաթ օրերը անպայման կը խօսէինք իրարու հետ եւ ընդհանրապէս քովս կու գար: Իրեն ըսի, որ Պէյրութէն ընկեր մը եկած էր, անոր հետ ժամանակ անցուցեր էի: Լաչքան բարկացած էր, որ չէի հեռաձայնած, եւ իմ մասիս մտահոգուելը էր ամբողջ շարաթավերջի ընթացքին: Բաւական երկար խօսեցաւ, վրաս նեղութիւն եկաւ, կարճ պատասխաններ տուի եւ վերջապէս հեռաձայնը գոցեց: Ջղայնացայ. որովհետեւ չկրցայ իրականութիւնը ըսել իրեն, հետեւարար այս հարցը պարզապէս յետաձգուեցաւ, եւ միտքս պիտի չարչարէր մինչեւ որ կարենայի իրեն գոհացուցիչ պատասխան մը տալ:

Այս մտածումներուն մէջ էի, երբոր հեռաձայնը նորէն զարկաւ: Կարծեցի, որ Լաչքան ետ կը հեռաձայնէր իր դժգոհութիւնը արտայայտելու համար: Հեռաձայնը վերցուցի դժկամակուրթեամբ: Բայց այս անգամուն Վարդգէսն էր, «Շիրակ» մշակութային միութենէն: Թէեւ վեց տարի հեռու մնացած էի հայկական մշակութային շրջանակներէն, բայց գործիս բերումով ատենը մէյ մը հետս կապ կը պահէին երբոր վիտէոյի կամ այդ տեսակ բաներու պէտք ունենային:

- Էհ, Զաւէն, ինչպէ՞ս ես,- հարցուց Վարդգէս:
- Լաւ եմ:
- Ուրիշներին քանի մը անգամ հեռաձայնեցի՝ չկայիր,- ըսաւ ան բացատրութիւն պահանջելու թոնով:
- Հա, Ուրբաթ իրիկուրնէ ի վեր աղջկայ մը հետն էի:
- Ո՞ր մէկն է ասիկա,- շարունակեց ան, առանց այլեւայլի: Ասիկա բնական բան մըն էր մեր շրջանակին մէջ, մարդիկ անձնական հարցերուդ կը խառնուէին, կարծես պարտաւոր էիր քու ըրածներուդ մասին իրենց բացատրութեան տալու:

- Ձեխը,- ըսի, նախ որովհետեւ անոր մասին լսած էր, եւ այդ պատճառով կը յուսայի, որ հարցաքննութիւնը կարճ կապէր եւ յետոյ Աննային մասին հայու մը չէի կրնար խօսիլ: Բերնէ բերան պիտի տարածուէր եւ խեղճ աղջկան միտք պիտի ծամէին հայկական շրջանակին մէջ: Իմ յարաբերութիւններուս մասին երբեք չեմ կան չըջանակին մէջ: Իմ յարաբերութիւններուս մասին երբեք չեմ խօսիր ընկերներուս հետ, որովհետեւ ասիկա շափազանց անձնաւոր ընկերներուս հետ, որ ինքզինք յարգող մէկը չի կրնար բաժնել նական բան մըն է, որ ինքզինք յարգող մէկը չի կրնար բաժնել ուրիշներու հետ: Զիս կը զգուեցնեն այն մարդիկը, որ իրենց յարաբերութիւններուն մասին հոս-հոն կը խօսին: Կիներուն անունը ելած է իբրեւ բամբասող, բայց տղամարդիկ անոնցմէ ետ չեն մնար:

- Լաւ, ինչ որ է: Հեռաձայնելուս պատճառը այն է, որ կ'ուզեմ քեզի երիտասարդներու համար նոր ծրագրի մը մասին խօսիլ, կ'ուզեմ կարծիքդ առնել այդ մասին:

- Էհ, ըսէ:

- Ասանկ հեռաձայնով խօսուելիք բան մը չէ, Ալիսին հետ կ'ուզենք դալ եւ լուրջ հանդիպում ունենալ այս մասին:

- Լաւ:

- Հիմա յարմար է, Ալիսը արդէն քովս է, այս ծրագրին մասին կը խօսէինք, ըսինք, որ քեզի հանդիպինք: Քու արհեստավարժի կարծիքդ կ'ուզէինք ունենալ:

- Օֆէյ, եկէք,- ըսի, հակառակ, անոր, որ բնաւ տրամադրութիւն չունէի հայկական հարցերու մէջ մտնելու, բայց եթէ այսօր մերժէի՝ ուրիշ օր մը պիտի տրամադրէի ասոր համար:

- Լաւ, կէս ժամէն քովդ կ'ըլլանք,- ըսաւ Վարդգէս եւ հեռաձայնը դոցեց:

Անմիջապէս սկսայ մէջտեղերը հաւաքել: Իմ բնակարաններս միշտ իմ թատերարեմներս եղած են, եւ բեմայարդարի մը պէս իմ ունեցածներս լաւագոյն ձեւով կը փորձեմ ներկայացնել, որ իրական կեանքի գործածութեան հետ չի համապատասխաներ, անոր համար, երբ հիւր ունենամ՝ պէտք է ամէն ինչ նախապէս յատկացուած տեղը երթայ:

Դուռը զարնուեցաւ, կարծեցի, որ Վարդգէսը եւ Ալիսն են, բացի որ Արոն, Տիգրանը եւ Լորնան են, ականջէ ականջ ժպիտները իրենց դէմքերուն վրայ: Անպայման ծխեր էին:

- Հէյ, ինչպէ՞ս էք:

- Լաւ, մինակ՞դ ես,- ըսաւ Տիգրան՝ ներս մտնելով:

- Հա, ներս եկէք, բայց հիմա Վարդգէսը եւ Ալիսը պիտի դան:

- Ինչո՞ւ համար,- հարցուց Տիգրան:

- Երիտասարդներուն համար ծրագիր մը կ'ուզեն պատրաստել:

- Թող, Գանը՛մ, իրե՞նք մնացին երիտասարդներուն համար ծրագիր պատրաստելու:

- Ուզեցին գալ, ո՞չ մը ըսէի:

- Լաւ, գան նէ՛ շատ մի երկարեր, շուտ մը վերջացուր թող երթան:

- Լաւ, լաւ: Դուք ուրկէ՞ կու գաք՝ այսքան լաւ տրամադրութեամբ:

- Նայէ, քեզի աղուոր լուր մը ունիմ տալիք: Մայմի դպրոց պիտի արձանագրուիմ:

- Ուրտեղէ՞ն ելաւ ասիկա:

- Քիչ առաջ Հարպըրֆրոնթ գացեր էինք, հոն մէկը *mime* կ'ընէր կոր, հետը խօսեցանք, ըսաւ, որ Տէնֆորթի վրայ սթիւտիօ մը ունի մայմ սորվեցնելու: Վաղը պիտի երթամ արձանագրուիմ,- ըսաւ Տիգրան երեխայի մը պէս ոգեւորուած:

Հարպըրֆրոնթը Թորոնթոյի լճափն էր, ուր նախապէս միայն գործարաններ կային: Բայց ութսունական թուականներուն քաղաքապետարանը ընդառաջելով կարգ մը համբաւաւոր արուեստագէտներու փափաքին՝ անոնցմէ մաս մը նորոգելով մշակութային կեդրոններու վերածեր էր: Հոն կային թատրոններ, շուկաներ եւ ցուցասրահներ, ինչպէս նաեւ գեղեցիկ այգի մը ջուրին եզերքը: Ցատկապէս շաքաթավերջին բեմադրութիւններ կ'ըլլային, տեղացի եւ ուրիշ նահանգներէ կամ երկիրներէ եկած զանազան խումբերու կողմէ:

- Լո՞ւրջ ես:

- Yeah, he's serious all right,- ըսաւ Լորնան, որ Տիգրանին ընկերուհին էր եւ հայերէն բաւական կը հասկնար:

- Բան մը կը խմէ՞ք:

- Ես սառով վոտքա մը կը խմեմ:

- Ես պիրա մը կ'առնեմ,- ըսաւ Արոն եւ սառնարանէն հատ մը առաւ:

- I'll have a vodka too,- ըսաւ Լորնան:

Այս խմիչքները պատրաստելու ատեն Վարդգէսը եւ Ալիսը եկան:

- Տիգրան, եկուր դուն ասոնք ըրէ,- ըսի եւ գացի դուռը բացի:

Վարդգէսը, ըստ իր սովորութեան, թուղթերով պայթելու աստիճան լեցուած պայուսակ մը ձեռքը՝ ներս մտաւ: Ծատ մը հայերու պէս մօրուք ձգած էր՝ մտաւորականի նմանելու ակնյայտ ճիգով մը, բայց աւելի պաղեստինցի ահաբեկիչի կը նմանէր: Ալիսը այն աղջիկներէն էր, որ տարիներով միութիւններու մէջ կ'աշխատին եւ երթալէն տղոցմէ մէկը կը դառնան, ըսել կ'ուզեմ՝ որ իրենց շուրջիները կը մոռնան, որ անոնք կին են: Ցաւալի բան մըն է այս, որ յաճախ կը պատահի, եւ շուրջիներուն անզգամ վերաբերմունքը պատճառ կը դառնայ, որ իրենք ա՛լ աւելի կորսնցընեն իրենց իգական ինքնութիւնը:

Տիգրանենց ներկայութիւնը տեսնելով՝ Վարդգէս հարցական ինժի նայեցաւ:

- Հոստեղէն կ'անցնէին կոր հանդիպեցան,- ըսի,- քանի ոտքի ենք, ի՞նչ կ'ուզէք խմել: Իրենց խմիչքները պատրաստեցի: Մինչ այդ Վարդգէսը եւ Ալիսը ներս անցան: Վարդգէս տղաքը բարեւեց եւ սիրալիր խօսեցաւ անոնց:

- Է՛հ, ինչպէ՞ս էք տղաք, ի՞նչ նորութիւն:

- Լաւ ենք:

- And you Lorna, how are you?

Լորնան ընդհանրապէս կ'անտեսէին մեր շրջանակին մէջ, քանի որ տեղացի էր, եւ մեր կարծիքով անցողական. այնպէս որ, ան կարմրեցաւ պատասխանելէ առաջ: Մինչ այդ ես ալ միացայ իրենց:

- Կը ներէք, տղաք, մենք լուրջ հարցով մը եկած ենք Ձաւէնին հետ խօսելու,- ըսաւ Վարդգէս, յուսալով, որ անոնք միւս սենեակը կ'անցնին:

- Խնդրե՛մ,- ըսաւ Տիգրան՝ ձեռքի մեծահոգի շարժումով մը: Վարդգէս ինծի նայեցաւ: Կ'ուզէր, որ միջամտեմ, բայց ես այնտեղացի չեղայ: Ան կոկորդը մաքրեց եւ սկսաւ հանդիսաւոր ոճով մը.

- Նախքան մանրամասնութիւններուն անցնիլս, երկու բանով ներածական մը կ'ուզեմ ընել այս ծրագրին մասին, որպէսզի դուն ալ գաղափար մը ունենաս մեր ունեցած մտահոգութիւններուն մասին:

Վարդգէս կը սիրէր այս ձեւով խօսիլ, նոյնիսկ եթէ «ինչպէ՞ս ես» հարցնէիր՝ առանց ներածականի չէր պատասխաներ, յետոյ կը սիրէր ամէն ինչ «փերսփեթիւ»ի մէջ դնել:

- Գիտես անշուշտ,- շարունակեց ան,- որ երիտասարդները համայնքին մէջ պահելը մեզի համար լուրջ առաջնահերթութիւն մըն է, որոշ տարիքէ մը ետք տնոնք կը հեռանան մեր կեդրոններէն եւ եկեղեցիներէն: Այս մտահոգութեամբ յանձնախումբ մը կազմեցինք, որպէսզի միջոցներ գտնենք զիրենք մեր միութիւններուն կապելու համար: Յանձնախումբը քանի մը անգամ ժողով գումարեց եւ հետեւեալ ծրագիրը մշակեց. երիտասարդները իրաբու քով բերելու համար կ'ուզենք գիտաժողովներու շարք մը սկսիլ. արդիական ձեւով պատրաստուած լսա-տեսողական վերջին միջոցներով անոնց ներկայացնել, օրինակի համար, հայկական եկեղեցիներու այդ գեղեցիկ շարքը, որ Խտալիոյ մէջ պատրաստուած է, անոնք սահիկներու վերածել եւ ցոյց տալ: Գիտաժողովներէն ամէն մէկը մշակութային տարբեր նիւթի մը մասին պիտի ըլլայ, օրինակի համար, ճարտարապետութիւն, երգ, պար, տոհմաբանութիւն, պատմութիւն, գրականութիւն, երգ, պար, տոհմաբանութիւն, արուեստի զանազան բնագաւառներէն զլիսաւոր միկ տարազներ, արուեստի զանազան բնագաւառներէն զլիսաւոր դէմքեր, միջազգային համբաւի տիրացած հայեր, եւայլն: Իւրաքանչիւր նիւթին մասին ուսումնասիրութիւն պիտի կատարուի եւ

լսա-տեսողական միջոցներով այդ նիւթը կարելի եղածին չափ հետաքրքրական ձեւով պիտի ներկայացուի երիտասարդներուն:

- Այս ծրագիրը ի՞նչ ձեւով երիտասարդները համայնքին մէջ պիտի պահէ,- հարցուցի:

- Եթէ կարենանք հայ մշակոյթը լաւ ձեւով ներկայացնել իրենց, վստահ ենք, որ հպարտ պիտի ըլլան իրենց ազգային արմատներով եւ կը յուսանք, որ այդ ձեւով կապ ստեղծուի համայնքին եւ իրենց միջեւ:

Տիգրանը արդէն սկսած էր անհանգստութեան նշաններ ցոյց տալ, չղիմացաւ եւ միջամտեց.

- Երիտասարդները կը հեռանան, որովհետեւ բախում կ'ունենան հին սերունդին հետ: Մեր միութիւններուն մէջ ընդհանրապէս Միջին Արեւելքէն եկածներն են, որ ղեկավար դիրքեր գրաւած են եւ հոս մեծցածները կը խրտչին անոնց վարուելակերպէն եւ կը հեռանան:

- Ճիշդ անոր համար է, որ պիտի փորձենք տեղացի պատանիները եւ երիտասարդները մասնակից դարձնել այս ծրագրին:

- Չե՞ս կարծեր, որ իրենցմէ պէտք է գաղափար առնել եւ յետոյ ծրագիրներ մշակել, քանի որ դուք չէք գիտեր, որ ինչո՞վ հետաքրքրուած են անոնք: Ես կը կարծեմ, որ գաղափարները իրենցմէ պէտք է գան:

- Ատիկա լաւ պիտի ըլլար, բայց մէյ մը որ սկսինք, կրնանք իրենցմէ ալ գաղափարներ առնել:

- Ճիշդ այդ է դժուարութիւնը, միշտ դուք է, որ կը ծրագրէք իրենց համար: Ես կը կարծեմ, որ իրենք պէտք է ծրագրեն եւ դուք միայն իրենց պէտք եղածը տրամադրէք:

- Բայց իրենք փորձառութիւն չունին, մշակոյթին ծանօթ չեն, ինչպէ՞ս կրնան այս մակարդակի ծրագիր մը մշակել:

- Մօ՛, նախակրթարանէն անոնց կը վարժեցնեն նիւթ մը առնել, ատոր մասին project մը պատրաստել, կը սորվին գրադարանէն եւ ուրիշ աղբիւրներէ օգտուիլ: Դուն իրենց տուր գործը, նայէ իրենք ինչպէս կ'ընեն: Բայց դուք մէկու մը բան չէք վստահիր, ամէն ինչ դուք պէտք է ընէք, անոնք ալ կը փախչին:

- Վայրկեան մը,- ըսաւ Վարդգէս,- հարցը նախ պէտք է perspectiveի մէջ դնել, այսպէս անպատրաստից ինչպէս կրնաս...

- Ի՞նչ perspectiveի մասին կը խօսիս կոր,- պատասխանեց Տիգրան,- մէյ մը շուրջը նայէ եւ ինծի մէկ հատ վարչական ցոյց տուր, որ հոս ծնած է:

Ես գիտէի, որ այսպէս պիտի ըլլար: Ստեղծուած վէճը նիւ-

թին հետ բնաւ կապ չունէր, Վարդգէս ինչ ծրագիր ալ բերէր, արդիւնքը նոյնը պիտի ըլլար, Տիգրան այդ ծրագիրը պատէ պատ պիտի զարնէր: Ան կը վիճէր, որովհետեւ իր մէջ ամբարուած բարկութիւն մը կար: Բարկութիւն՝ լուսանցքային մեր գոյութեան դէմ, բարկութիւն՝ միջակութեան դէմ, բարկութիւն՝ մեր անգոր ըլլալուն դէմ: Բարկութիւն՝ քանի որ ակամայ դատապարտուած ենք այս յիմար դերերը խազալու: Ժառանգական հիւանդութիւն մը ունինք, որ մեզի չի թոյլատրեր բնականոն կեանք մը ունենալ: Այդ հիւանդութեան անունն է Սփիւռք, որուն համար դարման չկայ:

Այս մտքերով տարուած էի, երբ Ալիս ըսաւ.

- Ի՞նչ է այս մտտան, վերջերս ամէն անգամ, որ բան մը ծրագրենք՝ ամէն մարդ կ'ուզէ երիտասարդները մէջը խառնել, եթէ աշխատիլ կ'ուզեն, ո՞վ է իրենց ձեռքէն բռնողը, թող գան աշխատին, ընելի՞ք կը պակսի:

Հիմա երեքը նոյն ատեն սկսան խօսիլ:

- Տիգրան,- ըսի,- նայէ, եկած են ծրագրի մը մասին խօսելու, ձգէ թող խօսին, վերջը կարծիքդ յայտնէ:

Տիգրան լռեց: Վարդգէս, ըստ իր սովորութեան, կէտ առ կէտ կարդաց իր գրածները: Երբ վերջացուց՝ ըսաւ.

- Ի՞նչ է կարծիքդ:

- Կը մտածեմ այս մասին եւ յետոյ կը խօսինք,- ըսի՝ պարզապէս անհաճոյ կացութենէ մը խուսափելու համար:

- Հիմա այս բոլորին մասին ըսելիք մը չունի՞ս,- ըսաւ Վարդգէս գսրմացած:

- Նայէ, Վարդգէս, դուն ըսիր, որ ծրագիր մը ունիս, բայց ինչ որ մեզի ներկայացուցիր՝ փափաքներու շարան մըն է միայն: Ասիկա ծրագրի վերածելու համար աշխատանք պէտք է: Ասիկա կը նմանի մէկու մը, որ կ'ուզէ ինքնաշարժով Գալիֆորնիա երթալ, եւ երբ զինք կը հարցուփորձես՝ մէջտեղ կ'ելլէ, որ քարտէս չունի, ինքնաշարժ չունի եւ Գալիֆորնիան միայն պատկերասփիւռի վրայ տեսած է:

- Ուրեմն դո՞ւն ալ չես հաւատար, որ այս աշխատանքը կրնայ յաջողիլ:

- Ոչ: Իմ ըսածս աշխատանքին հետ կապ չունի: Քիչ առաջ խօսեցար Իտալիոյ մէջ պատրաստուած եկեղեցիներու նկարներուն մասին: Այն մարդիկը, որ գիրքերը պատրաստած են, սլայտներ ալ պատրաստած են, կրնաք անոնք գործածել:

- Անոնք բաւական սուղ են, եթէ մենք պատրաստենք՝ աւելի աժան կ'ըլլան:

- Բայց ըսիր, որ հայկական մշակոյթը կ'ուզես լաւ ձեռով ներկայացնել, հիմա քանի մը հարիւր տոլարի համար կ'ուզես նորէն ամաթօր գործ մը ընել:

- Պիտե՞նքի դժուարութիւն ունինք:

- Արդէն կարգը երբ մշակոյթին գայ՝ դրամական աղբիւրները կը չորնան: Նայէ՛, մշակութային աշխատանքը կատակ չէ, որեւէ կարելու գործի պէս մասնագիտական մօտեցում կը պահանջէ: Օգտակար արգիւնք տալու համար լուրջ աշխատանք եւ պիտոճէ պէտք է: Եթէ տասներկու սեմինար կը ծրագրէք, այն ատեն տասներկու ֆիլմ պատրաստել կը նշանակէ: Անոնց ուսումնասիրութիւնը պիտի ըլլայ, պէտք եղած նկարներու կամ գծագրութիւններու ցանկը պիտի պատրաստուի, անոնք պիտի ճարենք, նկարենք եւ այս բոլորը պիտի համադրուին բնագիրին հետ:

- Գիտես, որ այդ տեսակի պիտոճէ չենք կրնար ճարել:

- Բայց, Վարդգէս, գեղարուեստական կիսկատար գործ մը աւելի վնաս կը հասցնէ, քանի որ ծիծաղելի կը գառնայ: Քանի՛-քանի՛ անգամներ այդպիսի գործեր ըրած եմ, հիմա այլեւս չեմ կրնար հանդուրժել, պիտոճէն գտիր եւ խելքը գլուխը գործ մը ընենք: Նայէ, հիմա Միջին Արեւելք չենք ապրիր, Գանատա կը գտնուինք, ինչ որ ընենք, մահաւանդ երիտասարդներու համար, անմիջապէս պիտի բաղդատուի տեղականին հետ: Եւ յետոյ, ինչո՞ւ համար գեղարուեստական նիւթերը միշտ ամաթօր եւ փերուշան վիճակի մէջ պէտք է ներկայացուին: Ես ալ կ'ուզեմ հպարտ ըլլալ իմ գործովս, փոխանակ ամէն անգամ ըսելու, որ այս պայմաններու տակ ասկէ լաւ չ'ըլլար:

- Մեր ծրագրածը պարզ սեմինարներու շարք մըն է, որուն համար պիտի դիմենք զանազան մասնագէտներու, որ իրենց բաժինը բերեն: Քեզմէ կը սպասէինք, որ համադրես այս բոլորը:

- Ասիկա ամէնէն կարելու բաժինն է, հոն է, որ պիտի կարենաս ներկայացուցած գործիդ անհրաժեշտ փայլքը տալ, որ կարենայ լուրջ գործերու կողքին դասուիլ:

- Լաւ,- ըսաւ Վարդգէս նեղացած,- չնորհակալ ենք ժամանակիդ համար:

Քանի մը վայրկեան անհաճոյ լուրթիւն տիրեց, մինչեւ Վարդգէս թուղթերը հաւաքեց եւ գացին:

Հագիւ դուրս ելած էին, Տիգրանը եւ Աբոն քահ-քահ մը փրցուցին, որ վստահ եմ մինչեւ փողոց լսուեցաւ: Աբոն սկսաւ Վարդգէսին գործածած բառերը ծաղրել «լսա-տեսողական», «սահիկ», եւայլն:



- Աս տիպարներուն երեսէն է, որ երիտասարդները փախուստ կու տան,- ըսաւ Տիգրան,- Հիմա ալ ելեր են իրենք երիտասարդները բերելու մասին կը խօսին կոր:

- Ինչ որ է, Հիմա մոռցէք ատիկա, ուրիշ բանի մասին խօսինք:
- Ջաւէն, Ռուբէն Հախվերդեանին երգերը լսա՞ծ ես,-

Հարցուց Աբոն:

- Չէ, չեմ լսած,- ըսի:
- Գրպանէն քասէթ մը հանեց:
- Շատ պիտի սիրես, ուզես նէ մէկ անգամէն արձանագրէ,-

ըսաւ ան:

Պարապ քասէթ մը դրի եւ սկսանք արձանագրել եւ նոյն ատեն մտիկ ընել: Ռուբէնին երգերը ինքնաբերաբար էին: Ժորժ Պրասէնզի եւ Ժազ Պրելի խառնուրդը՝ Հայերէնով: Պատանեկութենէս երազած էի այս տեսակ երգերու մասին: Ռուբէն պարզ բառերով խորունկ մտքեր եւ զգացումներ կ'արտայայտէր՝ շատ հաճելի երաժշտութեան մը ընկերակցութեամբ: Երկար տարիներէ ի վեր ասիկա առաջին անգամն էր, որ նոր հայերէն երգ կը լսէի.

Լնակի խորքում մեռնում էին աստղերը,  
 Քամին փշրել էր լնի հայելին,  
 Ես այնտեղ մի պահ տեսայ նրա պատկերը,  
 Տեսայ ու կորցրի կես գիշերին...  
 Տեսայ ու կորցրի կես գիշերին...  
 Կես գիշեր, կես գիշեր քու գործած ուռկանը բեր  
 Լնակի հայելում սիրահար է յայտնուել,  
 Կես գիշեր, կես գիշեր...

Չէի կրնար սպասել, որ քասէթը արձանագրուի եւ Աննային հետ մտիկ ընէի: Ռուբէն կարծես մօտիկ ընկեր մըն էր. այնքան հաղորդական էին իր երգերը: Շատ մը երգերու մէջ ան կը յիշէ իր մանկութեան ընկերները, եւ կը ցաւի, որ անոնք գացած են: Իմ պատանեկութեանս ատեն ես ալ շատ կապուած էի ընկերներուս, ազգականներէս շատ աւելի կը սիրէի զիրենք: Նւ հիմա, մենք Ռուբէնի երգերուն մէջ յիշուած ընկերներու պէս ցրուած ենք աշխարհի զանազան անկիւնները.

Ներս արի, ներս արի, ի՞նչ ես կանգնել,  
 Ի՞նչ ես յիմար ժպիտով ֆարացել:

Սա երեւանն է, այստեղ դու տանն ես,  
 Ուր քեզ սպասում են դեռ կես գիշերին,  
 Ուր կա՛մ սիրում են, կա՛մ հայիտում են,  
 Երբ յիշեցնում են անյիշելին:

Ինչ գով գիշեր է,  
 Մէկն ինձ յիշել է,  
 Նա ինձ յուշել է  
 Անյուշելին,  
 Բայց արդէն ուշ է,  
 Յուշը մշուշ է,  
 Սէրը քնքուշ էր  
 Կես գիշերին:

Աբոն միշտ այս տեսակ նորութիւններ կը գտնէր: Ուրկէ՞ կը հանէր, չեմ գիտեր: Ամէն անգամ, որ հայկական նոր խումբ մը կամ երգիչ մը մէջտեղ ելլէր, Աբոն կը գիտնար անոնց մասին:

Քասէթը լման արձանագրեցի:  
 Մեծ փափաք մը ունէի Աննային հետ ըլլալու: Տղաքը գացին: Աննային հեռաձայնեցի, ան կը պատրաստուէր քնանալու եւ ձայնէն յայտնի էր, որ հիմա իր քովը երթալը ճիշդ պիտի չըլլար: Անուշ քուն եւ բարի երազներ մաղթեցի իրեն եւ հեռաձայնը գոցեցի:

Լոյսերը մարեցի եւ հիւրասենեակի գորգին վրայ պառկեցայ եւ երգերը նորէն մտիկ ըրի՝ սիկարէթ ծխելով եւ կորսուած օրեր եւ ընկերներ յիշելով:

Ժամը տասնմէկ ու կէսն էր, Ռուբէնի «Կես գիշեր» երգը վիտէոյի ձայնի trackներուն վրայ արձանագրեցի, եւ յետոյ պատուհանէն փողոցէն անցնող պասերն ու թաքսիները նկարեցի. ուրիշ իմ ունեցած վիտէոներէս նկարներ առի եւ մոնթաժ մը ըրի: Մինչեւ առտուան ժամը չորսը աշխատեցայ անոր վրայ: Անկէ ետք միայն կրցայ քնանալ:

Յաջորդ օրը, իրիկունը Աննային քով գացի, միասին ընթերցինք, Ռուբէնի քասէթէն իրեն համար օրինակ մը արձանագրած էի, զոր միասին մտիկ ըրինք, բայց Աննան ինծի չափ չտպաւորուեցաւ, թէեւ ինքն ալ սիրեց, բայց կարծես թէ սովորական հայերէն երգ մը կը լսէր:

- Աննա, գիտե՞ս, ինծի համար արուեստի գործ մը հրաշք

մըն է, որուն համար երախտապարտ պէտք է ըլլանք, եւ արուեստագէտին վրայ երեխայի պէս պէտք է գուրգուրանք: Մա՛նալանգ երաժիշտները եւ դերասանները, որոնք ուղղակի հանրութեան առջեւ կը ստեղծադործեն: Չեմ կրնար բացատրել, որ որքան արժէքաւոր է անոնց ըրած գործը: Սիրտդ կը կոտորի, երբ գիտնաս, թէ արուեստագէտը որքան բան կը դնէ իր հոգիէն, իր աշխատանքին մէջ եւ մենք շատ անդամ դժկամակութեամբ կը գնահատենք զինք:

- Լաւ է, լաւ է, սիրեցի՛,- ըսաւ Աննա՝ զարմացած այս պոռթկումէս:

- Կը ներես, այս երգերը շատ սիրեցի, կը յուսայի, որ դուն ալ նոյնքան խանդավառուիս,- ըսի քիչ մը յուսախար:

Ռուբէնին երգերը իբրեւ երաժշտութիւն պէտք է մտիկ ընել, այլ պէտք է խօսքերը հասկնալ եւ ընկալել իր դառն եւ սրամիտ հիւմորը, իշխանութեանց հանդէպ իր ունեցած անպատկառ կեցուածքը, փողոցային ազնուական լակոտի իր ներաշխարհը: Այստեղ առիթ կար հիանալի կապ մը ստեղծելու մեր երկուքին միջեւ, սակայն ատիկա չպատահեցաւ, ես առանձին մնացի իմ հիացմունքիս մէջ: Ատիկա ինծի համար նորութիւն չէ, ես յաճախ առանձին կը մնամ իմ ճաշակներուս հետ, եւ վարժուած եմ այդ կացութեան:

Ընթրիքէն ետք, խօսեցանք Աննայի գործին մասին, այսինքն՝ ես զինքը ստիպեցի, որ խօսինք այդ մասին: Չորս տարի է, որ պզտիկ ընկերութեան մը մէջ կ'աշխատէր, ուր ան հեռաձայնին կը պատասխանէր, քարտուղարութիւն եւ քիչ մըն ալ հաշուապահութիւն կ'ընէր: Հիմա, որ Կարոն չկար, ըստ իս, պէտք է մտածէր նոր ասպարէզի մը մասին, քանի որ հիմա իր ըրած այս գործը ասպագայի որեւէ հեռանկար չունէր: Աննա կը խուսափէր այդ մասին խօսելէ եւ, մա՛նալանդ՝ այդ մասին քայլեր առնելէ, քանի որ տակաւին ինքզինք անապահով կը զգար: Ձինք համոզեցի, որ վերամուտին համալսարանէն գոնէ մէկ դասընթացքի հետեւի (դործէն ետք իրիկունները) եւ սկսի մտածել նոր գործի ասպարէզի մը մասին: Կարոյին Թորոնթոյի համալսարանի ուղեցոյցը մնացած էր իր համալսարանական օրերէն, անոր մէջ նայեցանք՝ տեսնելու համար, թէ ի՞նչ նիւթեր Աննան կը հետաքրքրեն, բայց ես աւելի խանդավառ էի, քան թէ ինքը:

- Կարոյի մասին որեւէ մէկուն խօսա՞ծ ես,- հարցուցի:

- Ոչ,- պատասխանեց ան,- արդէն մեզի շատ մօտ մէկը չունինք, յետոյ՝ համալսարանին մօտ ըլլալու համար այստեղէն

յարկարաժին վարձեցինք, մեր ծանօթներուն համար հեռու է, այնպէս որ, շատ եկող-դացող չէր ըլլար: Իսկ դո՞ւն, մէկու մը այս մասին խօսեցա՞ր,- հարցուց տազնապած դէմքով:

- Ձէ, չէ, որո՞ւն պիտի խօսէի,- վստահեցուցի զինքը:

- Վայրկեան մը կարծեցի, որ անոր համար կը հարցնես:

- Ձէ: Միայն կ'ուզէի գիտնալ, որ արդեօք կըրցա՞ր այդ մասին ոեւէ մէկուն սիրտդ բանալ: Պարզապէս այդ էր հարցումիս պատճառը:

- Ոչ, մինչեւ հիմա միայն դուն դիտես: Այն օրը եթէ դուն չըլլայիր, չեմ դիտեր ի՞նչ պիտի ընէի բոլորովին առանձին: Կը սարսափիմ նոյնիսկ այդ մասին մտածելէն:

Ձինք թեւերուս մէջ առի, գլուխը ուսիս դրի եւ մեղմօրէն շոյեցի: Մարմնին ցնցումներէն զգացի, որ կու լար: Երկար ատեն մնացինք այդպէս, մինչեւ որ հանդարտեցաւ:

- Գլխուդ փորձանք եղայ:

- Ձէ, վնաս չունի, հոդ մի ըներ:

Գնաց՝ դէմքը լուաց եկաւ:

- Գիշերները ընդհանրապէս ժամը քանիի՞ն կը քնանաս,- հարցուցի:

- Հիմա արդէն քնանալու ժամս անցած է,- ըսաւ:

- Լաւ, գնա՛ պատրաստուէ, այս գիշեր հոս կը մնամ ըսի, որ առանձին չմնաս, հոս սոֆային վրայ կըրնամ քնանալ:

Գնաց ներս, ես գրադարանէն դիրք մը առի եւ սոֆային վրայ երկնցած սկսայ կարդալ, բաւական ետք գիշերանոցը հազած եկաւ, պզտիկ աղջկան մը պէս կեցաւ, ձեռքերը իրարու միացուցած կարծես բան մը պիտի ըսէր, յետոյ եկաւ եւ երեսս համբուրեց:

- Չեմ ուզեր, որ սոֆային վրայ քնանաս:

- Լաւ, վաղը գործի օր է, գիտեմ, որ կանուխ պէտք է քնանաս, անոր համար այդպէս ըսի:

- Շնորհակալ եմ: Բայց եթէ դուն կարդալ կ'ուզես, վերջը ներս եկուր:

- Ոչ, ես երբոր պարապ վայրկեան մը ունենամ կը կարդամ, այս գիրքը այնպէս առի, որ ժամանակ անցընեմ մինչեւ որ գաս:

Աննա լոյսերը մարեց եւ միասին ննջարան գացինք:

- Ես անկողինին աջ կողմը կը սիրեմ պառկիլ, քեզի համար տարբերութիւն կ'ընէ՞,- հարցուց:

- Ոչ, մասնաւոր նախընտրութիւն մը չունիմ:

Տեսայ, որ սաւանները եւ բարձի երեսները նոր փոխեր էր:

Սենեակին լոյսը մարեց եւ անկողինին քովի քովն առնալ վրայի լոյսը վառեց: Պզտիկի մը պէս ուրախ էր: Անկողին մտանք: Ամէն ինչ անուշ կը բուրէր, մա՛նաւանդ ինքը: Լոյսը մարեց, գրկեցի զինքը, քիչ մը գգուեցի, յետոյ ազատ ձգեցի, որ քնանայ:

- Շնորհակալ եմ, որ հասկցող մէկն ես,- ըսաւ,- գիշեր բարի:
- Լոյս բարի, հոգիս:

Ինծի համար շատ կանուխ էր քնանալու: Ես բուռի պէս գիշերները մինչեւ ժամը մէկ կամ երկու արթուն կը մնամ, նոյնիսկ եթէ ընելիք մը չունենամ: Բայց հանդարտութիւն մը եկաւ վրաս: Անդորրութիւն բառը թերեւս ակելի ճիշդ կը բացատրէ վիճակս: Աննայի համաչափ շնչառութիւնը եւ իր մարմնին ջերմութիւնը հաճելի էին, բայց ատկէ անդին բան մը կար: Օտարազգի կիներու հետ նոյն անդորրութիւնը չէի ունեցած: Կրնայ ըլլալ, որ անոնց հետ զգացական գետնի վրայ ապահով չեմ զգացած: Այս մտքերով տարուած քնացայ:

Քունին մէջ զգացի, որ փափուկ ձեռք մը շատ զդուշութեամբ մազերս շոյեց, ուսիս դպաւ եւ հոն մնաց, ձեռքս վրան դրի:

- Արթնցուցի՞ր քեզ,- հարցուց Աննա մտահոգ:
- Վնաս չունի, անոր համար է, որ հետդ մնացի: Ժամը քանի՞ է:

- Չորսուկէս:
- Ե՞րբ արթնցար:
- Ժամը երեքէն ի վեր արթուն եմ: Վրաս անձկութիւն մը եկաւ, չուզեցի քեզ արթնցնել, բայց յետոյ ուզեցի քեզի դպնալ, որ ապահով զգամ:

Պանդաղատանքով գրկեցի զինք: Գլուխը ուսիս վրայ դրաւ, մազերը շոյեցի, եւ համբուրեցի:

- Քնացիր, հոգիս,- ըսի:
- Մէյ մը որ արթնամ, ա՛լ քունս չի դար եւ կը սկսիմ անկողինին մէջ տապալակիլ:
- Նախ այդ համոզումը մտքէդ հանէ: Անշուշտ կրնաս քնանալ, երկրորդ՝ մէկ դիրքի վրաս եթէ մնաս եւ շնչառութիւնդ դանդաղեցնես՝ անպայման կը քնանաս,- ըսի մեծ համոզումով:
- Գիտե՞ս, ճակատագրական բան մը կար, որ այն օրը դուն հոս էիր:

- Այո, ես ալ անոր կը հաւատամ: Ծըչ... քնացիր, հոգիս:
- Թեւերու մէջ քնացաւ, ես միայն մրափեցի: Վեցուկէսին ռատիոն նուազեց, Աննա արթնցաւ: Նախ շուարած նայեցաւ եւ յետոյ փաթթուեցաւ ինծի:

- Լաւ քնացա՞ր, հոգիս:
- Այո, չեմ հաւատար, որ կրցայ քնանալ:

Անկողինէն ելաւ եւ բաղնիք գնաց: Թեւ, որ իր տակը մնացած էր՝ թմրած էր, լաւ մը երկարեցի, շփեցի մինչեւ որ արեան շրջագայութիւնը բնականոն դարձաւ եւ քնացայ, մինչեւ որ Աննա նախաձաշի կանչեց զիս:

Շատ անգամ կը զմայլիմ կիներուն վրայ, որովհետեւ անոնք ահագին աշխատանք պէտք է տանին բնական երեւելու համար: Անոնց լոգանքէն բռնէ մինչեւ հագուածքը, մէյքափը եւ անվերջանալի մանր-մունր բաները, որ կ'ընեն նախքան հանրութեան առջեւ ելլելը, իրենց տոկունութիւնը դիմանալու այս ամէնուն, իրապէս կը գնահատեմ: Մենք՝ էրիկ մարդիկս, շատըր մը կ'առ-իրապէս կը գնահատեմ: Մենք՝ էրիկ մարդիկս, շատըր մը կ'առ-նենք եւ վերջացաւ, իրենք հազար տեսակ բաներ պէտք է ընեն, կարծես դերասաններ են, որոնք իրենց կերպարին մէջ պէտք է մտնեն ամէն օր, եւ ատիկա կ'ընեն անտրտունջ: «Փէնթի հոդ» եւ երկար կրունկով կօշիկներ հագուելը արդէն միջնադարեան չար-չարանքներու ենթարկուելու պէս բան մըն է, անոր համար մեծ յարգանք ունիմ կիներուն հանդէպ...

Հիմա Աննա իր առօրեայ կերպարանքին մէջն էր եւ ոչ ոք կրնար գուշակել, որ դժուար կացութեան մէջ է: Միասին նախա-ձաշ ըրինք եւ իրիկունը նորէն հանդիպելու խոստումով բաժնուեցանք: Աննա գործի գնաց եւ ես տուն վերադարձայ:

Բանտարկեալ մըն եմ իմ շինած բանտիս մէջ, եւ այս բանտը շինած եմ տարիներու ընթացքին: Քար առ քար, ձող առ ձող իմ ձեռքերով բարձրացուցած եմ զայն: Հիմա, յետադարձ ակնարկ մը նետելով՝ կը տեսնեմ, որ անխուսափելի էր այս ճակատագիրը: Ամէն երազ թակարդ մըն է, զոր միամտօրէն կը հետապնդենք, եւ երբ յաջողինք հասնիլ անոր՝ կը դառնանք իր բանտարկեալը:

Բանտը, որուն մէջ կալանաւորուած եմ՝ վիտէոյի մեքենաներով լեցուն է, որոնք կրնան երազները պատրանքի վերածել, պատրանք մը, որ իրականութենէն ակելի շօշափելի սկսած է դառնալ քսաներորդ դարու վերջին տասնամեակին:

Մեքենաները, իրենց պատուանդաններուն վրայ նստած՝ կարծես յանդիմանական նայուածքներ կը նետեն վրաս ամէն անգամ, որ դրան առջեւէն անցնիմ: Իսկ երբ երկար վարանումներէ ետք, մէկ-մէկ աշխատեցնեմ, սենեակը աշխոյժ բզզիւններով եւ խշղոցներով կը լեցուի, զանազան գունաւոր լոյսեր կը քթթեն իրենց մանր, սիրուն աչքերը:

Ձայնի զօրութիւն չափող սլաքները քառանկիւն փոքրիկ ապակիներուն ետեւ մշիկ-մշիկ կը քնանան, կը սպասեն մեղեդիին, որ պիտի գայ եւ զիրենք օրօրէ սեւ եւ կարմիր թիւերուն վրայ:

Պատկերասփիւռի քամերանները իրենց կիկլոպեան խոշոր եւ անլոյս բիբերը մէկ կէտի վրայ յառած՝ կը սպասեն չնաշխարհիկ էակներուն, որոնց ջերմութիւնը պիտի վառէ իրենց պաղած աչքերը:

Համակարգիչը իր թելերը նետած բոլորին՝ սարդոստայնին կեղրոնը նստած սարդի մը նման մեքենաբար կ'որսայ ձայներ եւ պատկերներ:

Պաղ մետաղէ այս գործիքներուն եւ զիրենք իրարու կապող խայտաբղէտ թելերուն համալիրը, որ մարդու հանճարին հաւաստիքն է՝ իր բազկերակը ունի, որուն բաբախիւններուն կշռոյթը դարաշրջանի դրոշմը դարձած է: Խոր, ցաւի չափ յստակ տրոփիւնը կը մնայ մեր քունքերուն մէջ, անվերջ երգի մը պէս անընդհատ նոյն յանկերգը կը կրկնէ:

Արուեստական լոյսերու տակ, մահադիմակ դէմքերով որձեւէզ էակներ կը մեկնաբանեն իրենց հոգիին ամլութիւնը, յղփացած եսակեղրոն սերունդի մը, որ երբեք ուրախ չէ եղած, որովհետեւ տխրիլ չի գիտեր, միայն անտակ պարապութիւն մը կը զգայ, երբ իր ուզածը չկարենայ ունենալ:

Անոնց աշխարհը իմս չէ, անոնց շարժառիթները ինծի համար անհասկնալի են, իրենց ցաւերը՝ անհեթեթ:

Իսկ այն աշխարհը, որ իմս պէտք է ըլլար, ուր իմ արմատներս կան, ինքզինք լծած էր անլուծելի հարցի մը, որ դարձած էր իր միակ անցեալը, եւ աւազաթումբերու ետին պահուած եօթանասուն տարիներէ ի վեր մահը կ'որոճար: Այն օրուրնէ ի վեր ժամանակը սառած էր գերիրապաշտ պաստառի մը նման, գորշ մշուշի մը մէջ կը դեգերէր ժողովուրդ մը ամբողջ:

«Ո՞ւր էիր Աստուած», կը գոչէ երգիչը, բայց ուշ է, շատ ուշ այդ հարցը տալ: Եթէ հաւատք ունէինք՝ մենք մեր ձեռքերով հիմնայատակ պէտք է կործանէինք մինչեւ յետին եկեղեցին: Փշրէինք, հիւլէի վերածէինք վերջին խաչքարը: Կոյր բնազդով կարծես, դեռ եկեղեցիներ կը շինենք, այնպէս որ, ծիծաղելի է գոչել «Ո՞ւր էիր Աստուած»:

Մայակովակին գրած է.

«Կայսրիւն՝ Կայսրիւն, Աստուծո՛ւր՝ Աստուծո՛ւն,

Իսկ

Որտե՞ղ հապա

Խցկուեմ պիտ' ես,

Որտե՞ղ է ինձ համար որջը պատրաստում...»:

Ես ալ, կարծեմ նոյն խնդիրը ունիմ: Երբ որ կեսար եւ Աստուած իրենց բաժինները վերցնեն՝ ես միշտ դուրս կը մնամ:

Եւ յանկարծ այս էլէֆթոնիք պաստառը կը խզէ խոպոտ ձայն մը, հօրս հագին չափ ծանօթ, անոր չափ հին եւ ընտանի...

«Կանչէ կոունկ, կանչէ,

Քանի գարուն է,

Ղարիբներուն սիրտը

Գունդ-գունդ արիւն է...»

Եւ անհուն կարօտ մը կ'անդամալուծէ հոգիս:

Թարոնքօ (Շար. 5)

ՍՈՒՐԷՆ ՉԷՔԻՃԵԱՆ

Ս. Արեան**ՄԿՐՏՈՒԹԻՒՆ**

Այս առաւօտ  
 Մայրերը թաց էին  
 Լուացուած էր մեր դպրոցը, անոր լայն բակերը  
 Անոր շէնքը ամրակուռ ու պատուհանները որոնցմէ դուրս  
 Ամեն սերունդ իր երազը կ'արձակէ:

Այս առաւօտ  
 Անձրեւին հետ արթնցող հողին բոյրը  
 Թոքերու մէջ բնակեցաւ որ ապրիմ:

Ու սենեակս երազներուս վրան մնաց փակ:

Սենեակիս մէջ գինիի շիշը կիսաբաց  
 Երեկոյեան արձակուած կիրքը,  
 Ակռայի մածուկի երկու անվաւեր սրուակներ  
 Ու չկազմուած համակարգիչին մարմինը ինչպէս դիակ:

Դուրսը՝ տխուր ու միևնակ  
 Յոյզերէ թափուած ու դալկացած տերեւներով  
 Երգ մը նռնենի:

Ու անոր վրայ փայտացած նուռ մը,  
 Այդ ծառը հայելիս էր  
 Այդքան գեղեցիկ սերերով գեղուն  
 Բայց հիմա միևնակ:

Սիրտս կարծրացաւ  
 Ոչ մէկ կաթիլ արեան կամ արցունքի...  
 Մաշկս քալելէն կարծր կաշի է  
 Առաջուան պէս սիրտս սեղանին վրայ չեմ պարզեր ես  
 Սիրոյ խօսքեր յայտնելու:

Սակայն նորէն տխուր եմ  
 Նորէն միևնակ:  
 Ինքնաշարժ մը անցաւ  
 Կեանքի ալիք մը՝ սպասուած խայծ մը տալով քարերուն:

Երազս էր որ անցաւ: Ոչ իսկ անցեալս:

Ծառին պէս այսօր միևնակ եմ ու չոր  
 Գարնան հետ սակայն պիտի գարթնում ես:

Թեւերս պարզած  
 Կանաչ տերեւ ես  
 Պիտի երգեմ աշխարհին:

Սակայն այսօր տխուր եմ  
 Ու միևնակ:  
 Այսօր քերթող մկրտեցին իմ անունս  
 Աւազանս դուք դարձաք  
 Կնքահայրս հին սերերս  
 Ու տերտերը անցեալս էր ճեփ-ճերմակ:

14 Փետրուար 2001

## ԱՌԱՒՕՏ ՆԻԿՈՍԻՈՅ ՄԷՋ

Խոնաւ Է հիմա  
Գետինը երկրի  
Թաց են մայթերը  
Հին Նիկոսիայի:

Մարդիկ ծուարած իրենց կառքերուն  
Կը փութան հասնիլ հին քաղաքէն տուն  
Հեռուն փութացող կարմիր ամպեր  
Կը զարնուին եթերին ու մեր ունկերուն:

Հեռուն ուրիշ քաղաք մը կ'երեւի աչքերուս  
Քաղաք մը որ ուրախ է  
Քաղաք մը որ արեւոտ է  
Ուր քերթողները չեն մահանար:

Որքան ապօրէն է ու դժուար  
Հին քաղաքին երազովը համակուիլ  
Հին դէմքերը շղարշ կապած  
Վերյիշելով արծակուիլ...

Մինչ նոր հանդիպում  
Մինչ նոր երազներ  
Մինչ նոր քաղցրութիւն  
Ու համբոյր ու ջերմ  
Բանաստեղծեալ նուիրում:

Ինչ դժուար է քաղաքը հին  
Քաղաքը թաց ու անտեր  
Երբ միւսակ ես իբրեւ քերթող  
Քաղաքացի կամ ստրուկ:

Բանտ է քաղաքը թաց ու մայթերը մշակուած  
Մէյ-մէկ դիակ կը դառնան:

Խոնաւ Է հիմա  
Գետինը երկրի  
Թաց են մայթերը  
Հին Նիկոսիայի:

14 Փետրուար 2001

## ՎԵՐԱԴԱՐՁ

Վերադարձայ քեզի,  
առանձին  
տխրութեանս շափկները կախուած էին պատերէդ.  
ու յիշատակներս մարմրող կը հալածէին զիս ու քեզ:

Վերադարձայ,  
աքսորիս հառաչանքներէն.  
փշրեցի սուտ կղզիին պատկերը մէջս.  
ու ամբոխը նկարեց  
զիս ու քեզ:

Վերադարձայ քեզի,  
սիրելու ու բնակելու մէջդ:  
Սուկացի սիրոյ կրակէն, բայց անձնատուր չեղայ:  
Բարի աչքերդ ցանեցի մէջս,  
Պաղ բաժակ մը բերիր  
Լեղի չէր ու խմեցինք:

Չզինովցայ ես երբեք:

Վերադարձայ քեզի,  
Ու մտայ խորքիդ մեջ:

Ազնաւոր ունկնդրեցինք ու պատմեցինք,  
Մեր պոեմիք անցեալին մասին:

Յանեցի կարմիր արտը  
Եւ հիմա երեխան կը ժպտի:

Հիմա խելացնոր ու օտարական սա հողին վրայ,  
Օտար եմ հոս, օտար եմ հողիդ վրայ,  
Ըսէ, ո՞ր է երկիրս:

Հասկերը ձեռքերուս մեջ  
Եւ ալիւրը ափերուս մեջ իբրեւ հաց:  
Ըսէ, ո՞ր է երկիրս:

Ահա եւ ես,  
Կը փութամ գրկելու քեզ,  
Ամէն օր  
Սուրճիս ու աղօթքիս հետ:

Հիմա կարեւոր ալ չէ,  
Թէ ով աւելի կը սիրէ,  
Սիրոյ մեջ՝ ոչ թիւեր, ոչ թուղթ, ոչ հաշիւ:

Սիրոյ մեջ, ա՛յլ ինչ կասկած կամ փորձութիւն կամ անկում:  
Նոյնիսկ արկածահար աշխարհի օղանաւները կը պայթին:  
Մերը միայն պիտի փրկէ մեզ:  
Սիրոյ մեջ ինչ քերթուած, ինչ յանգ կամ տաղաչափութիւն:

Այսօր անձրեաբեր եղանակներուն պէս  
Տեղա՛ վրաս.  
Նաաբեկութեանս միևսակ պահերուն  
Փրկէ զիս:

Պատէ զիս,  
Ու պատռէ մեղաւոր հոգիիս վերքը  
Թող մաքրուիմ...

Պատէ զիս, սերս,  
Որ ինթելեքթուալ սա յիմար դարու փլատակներուն տակը,  
Խեղդամահ չըլլամ...

Եւ փրկէ ձայնս  
Վիշապներէն:

Սերս,  
Սիրոյ մեջ ալ ի՞նչ ըսել,  
Ոչ թուղթ, ոչ պայման, ոչ անցագիր, ոչ սահման:

## ՔԵԶ

Քեզ գտեր էին անձրեւի տակ անպատսպար ու լուսնոտ  
Ամառնային թափառումներէ յոգնած  
Ու մռայլ

Քեզ գտեր էին նզովքի օրը.  
Միևսակ ու դեղին - պարտուած  
Աշխարհին դէմ կռուի ելած  
Ու աշխարհիդ մեջ  
Դարձած խորհուրդը գերիներու գայրոյթին:

Քեզ գտեր էին իբրեւ վերջին կտորը արեւմտահայուն  
Ովքեր ջարդի ժամանակէն ետք,  
Վերադարձան հայրենիքը կորուստի:

Եւ քեզ գտեր էին սաղմիդ մեջ կատարեալ  
Կենաց ծառի պտուղներու երանգով՝

Բոսորագոյն ու կարմիր:

Բայց հիմա

Կորուստիդ մէջ

Երբ կ'այրի գլանիկը

Առանց ծուխի

Երբ մատներդ ան չեն հոտիր անօթութիւն եւ ողբ

Երբ թոյներդ կը դառնան երկիրը պատող ծիրանի գօտիներ

Քեզ, հիմա երբ այրող անապատներուդ եւ հիւանդկախ

Քաղաքներուդ ողբը կը լսեմ:

Ինչպէ՛ս ծունկի չգամ, ի՛մ Գորիս,

Հայրենիքը իմ ժամանումներուս եւ երգերուս,

Ինչպէ՛ս չաղօթեմ քու ոգեղէնիդ ու մարմնիդ առջեւ

Խորանիդ առջեւ...

Ես՝ որ մշուշ էի եւ ուրուական մը՝ անիծող

Մախաղը կապած ուսերուս

Անիծապարտ պոետի մը պէս, ո՛վ Գորիս

Մեղաւորի կարմիր աչքերով անցայ ճանապարհներէդ:

Ու հիմա՝ երբ արգանդդ կը բացուի

Կ'արիւնին իմ երակներս ու երակներէս Լոր կեանք կը վազէ,

Լոր ոստ:

Հիմա՝ երբ կը ժպտի որդիդ

Որուն համար հաճեցար ու որուն մէջ բնակեցար,

Ո՛վ քաղաքս.

. . .

Տես, քու արգանդիդ մէջ

Յանաճ ցորեաններս կը բացուին

Ու մայրը իմ արեւներուս

Հեթանոս եւ կրքոտ մայրը

Կը պարզէ իր թելերը ու կ'աղօթէ

Անոր կանաչ աչքերուն համար՝

Աղօթք քեզի, աղօթք քեզի

Իմ հրաշք քաղաք:

Յաւիտենաշունչ, ի՛մ Գորիս:

Ապրիլ, 2003

## ԿԱՐՕՏԻ ՀԱՅ

Կարօտիս հետ

Կարմիր հաց

Կարօտիս հետ

Կարմիր երգ

Ամէն երեկոյ թէյիս հետ

Ու դժգոհ բառերուս թելերուն վրայ

Կարօտի հաց

Բոլոր առաւօտներուս

Արեւներուս հետ

Ու սպիտակ աղաւնիներուս

Կարօտի երգ

Ու ամէն ժամ

Երբ դառնամ գիրկիդ

Իմ սեր

Արագիլներ կը ճախրեն վեր...

Միշտ յիշելով

Միշտ երգելով

Որ հացի փոխարէն

Ինձի դուն

Հոգիի հաց կը բերես

Կարօտի հաց

Կարօտի երգ

Միշտ այդպէս:



## ՎԷՐՔ

Բաժանումի հովերէն  
Բացուած ակօսներէն  
Անջրդի արտերու ճեղքերէն

Ես վերք եմ, տես:  
Խրամատներէն կը դառնան  
Հողէ արձաններու պէս,  
Արեւէն կիզուած աչքերով  
Մարմինները իբրեւ շապիկ հոգիին  
Օտարուած հայեացքներով  
Մաքառումի ճանապարհներուն վրայ,  
Բոլորը ծունկի եկած  
Հայրենիք մը գրկելու յոյսով:

Ես արիւն եմ, տես:

Այսօրը իր հոգին կը վաճառէ  
Եւ երազս կը մտնէ իր անկողինը  
Յոգնած եմ բայց անօթի հողի սեւցած արիւնիւն:

Ես սպի եմ, տես:

Անցած ռազմերու պսակը անոնց ճակատներուն  
Եւ երգը անոնց, երգը խելառ,  
Քացխած գինիի սեղաններուն վրայ  
Ինչպէս աղօթք:

Ես հաց եմ, տես:

Բորբոս կապած բայց ընտիր,  
Ծարաւ հոգիս ձեր տան մօտ բանտեցի  
Գաղափարներս սապատներուն մէջ ապահով  
Եւ ճամբորդի պայուսակին մէջ՝ յուշերս:

Տես,  
Ինչպէս բայց չմեռած նժդեհներուն  
Գինին եմ:

Ես գինի եմ արիւնիդ պէս:

## ՄԱՐԴՈՑ ԵՒ ԾԱՌԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Ծառեր կան,  
Որ կը բուսնին անծածկ ու չոր հողերու վրայ.  
Երգերու մէջ  
Մարդոց հոգիներուն վրայ  
Երազներու պէս անմարմին:  
Ծառեր ալ կան  
Որ բուսած են հինէն,  
Ծառեր՝ որ կը հագուին յիշողութեան  
Մետաքսեայ շղարշը դեղին  
Ծառեր՝ որ կը դառնան կեղեւը յիշատակի  
Նորոգելով երկիրը այս պանդուխտ:

Ծառեր կան որ կը դառնան  
Դագաղ ու պատանք  
Նահատակի մը կարմրած մարմինը պահելու  
Տալու հողին  
Հողէն ոստի պէս  
Հողէն սերմի պէս  
Ծաղկելով ամէն գարնան:

Մարդիկ կային,  
Որ տարիներ առաջ  
Կը քալէին, կ'երգէին ու կը բարբառէին  
Ահեղ Կրակին շուրջ-ծառերու խարոյկին շուրջ կը պարէին.

Մարդիկ կային,  
Որ տառապանքի սքեմը իրենց ուսերուն նետած  
Հաւատամքի մը համար մահացան:

Ու մարդիկ ալ կային  
Որ տխրութեան ալիքներուն զարնուած  
Զգայացունց ու մինակ  
Իրենց ցաւը ողջ աշխարհէն զատեցին  
Իրենց լացը հոգիին մէջ բանտեցին  
Իրենց սուգը արեւներուն յանձնեցին  
Իրենց խաչը բարձրացուած  
Գողգոթայէն վար առին:  
Ու մարդիկ այդ ծառերուն հետ հաշտուած

Ծառերուն մէջ ծառացած  
Ու չոր դարձած-փայտացած  
Սպասեցին գարնան կապոյտ անձրեւին.  
Որ դառնան հող  
Կամ դառնան ծառ  
Կամ դառնան մարդ

Միեւնոյնն է

Մարդը ծառ է պատարագ:

Պէյրուս

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

3. Միքայէլեան

ՄՈՂԷՋԻ ԱՐԻԻՆ

Երկրորդ տարբերակ

Խորանին վրայի մոմին բոցը մեծցաւ, մեծցաւ ու լեցուց ամբողջ մտապաստառը: Տիեզերքը հեղեղող լոյսին մէջ սեւ խոռոչն էր, ուրկէ ներս կը մտնէր սուրալով, խոռոչապատերուն արտահոսքին հակառակ:

Խունկի հոտը բոներ էր գլուխը: Հաշիշախառն բան մը կար միջոցին մէջ, ի՛ր մէջ:

Ծաղկազարդ նստարաններուն վրայէն, հոս-հոն թռչկոտող հազի ճայթիւնները, ճենձերող կրակի ճաթոտիւններ գարձան. գնդասեղի գլխիկի չափ փոքր պղպջակներու փթփթոցներ: Սրտագիրի փոքր ու մեծ կտուցներ, գազաթիկներ ցից ու շրջուած, ու վերջապէս ուղիղ գիծ, շիփ-շիտակ:

Նայեցաւ ձախակողմեան խորանի համբարձող Յիսուսին:

\* \* \*

Խորանը դասէն անջատող սպիտակ ժապաւէնին այս կողմը կեցած կը սպասէր, մինչ ան ամբողջ շրջան մը ընելով, ներկաներուն լուռ ու հետաքրքիր նայուածքներուն տակ, դուռնէն մինչեւ խորան, կարմիր վարդի կոկոններու փոքրիկ փունջ մը ձեռքին, սպիտակներու մէջ լողացող հրեշտակի մը նման կը քալէր մինակ, գլուխը բարձր, յաղթական ժպիտ մը դէմքին:

«Կ'ուզեմ, որ ոչ ոք թեւէս մտնէ. ես իմ ոտքերովս, իմ ազատ կամքովս պիտի յառաջանամ խորան...»: Մտիկ չըրաւ «չ'ըլար»-ներուն, որոչեց ու ըրաւ:

Մութ կարմիր թիթեռնիկ փողկապը սկսած էր սեղմել կոկորդը, իսկ ինք, քրտնակալած դէմքին վրայ հազիւ ժպիտ մը գծելու յաջողած, սրտատրոփ կը սպասէր, որ վերջապէս հասնէր իրեն. իսկ ան չէր աճապարներ, հանգիստ կը ձեռքէր նայուածքները ու տոտիկ-տոտիկ կը յառաջանար:

Ինչպէս ծովուն հայելին ճեղքող նաւուն փրփրահետքը երկար կը մնայ իր անցումէն ետք, այդպէս ալ անոր հարսանեկան հագուստի երկար փէշը:

Հասաւ սպիտակ ժապաւէնին:

- Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեացէ արքայութիւն քո, եղիցի կամք քո...

\* \* \*

Ինչպէս անպէտք ու լքուած գոյքերու պահեստարանի սնտուկներէն կամ դարաններէն մէկէն յանկարծ մոռցուած-զացած յուշ մը փոշիներուն ու սարդոստայններուն տակէն գլուխը կը ցցէ, այդպէս ալ, չես գիտեր իր ուղեղին ո՛ր անկիւնէն ահա յառնեց ու դէմը փոռուեցաւ մանկութեան օրերէն մնացած պատկեր մը, սկիզբը՝ տարտամ ու աղօտ, սակայն կամաց-կամաց այնքան յստակացաւ, որ անմիջապէս վերականգնեցաւ իր ամենայն-տին մանրամասնութեամբ:

Դասընկերներուն տասնեակ անդամներ ըրածը-գոնէ այդպէս կ'ըսէին միշտ-հիմա ինք ալ կ'ընէր: Քարով մը պատին վրայէն յաջողած էր վար բերել վիրաւոր-արիւնոտ մողէզ մը, ու քիչ մը տատամսելէ ետք, մատը արիւնին դպցնելով սկսած էր ներկել ձախ ափը, ապա միւս մատով՝ միւս ափը: Երկրորդ անգամ աւելի համարձակ ու անվախ առաջ արիւնէն ու տարածեց ափերուն մէջ: Վերջապէս այս ալ ըրաւ: Միշտ իր ընկերներէն ետ կը մնար փողոցային քաջագործութիւններու մէջ: Ինչ օգուտ՝ եթէ լաւ էր դասերուն մէջ: Փողոցի հաշիւին մէջ դասերը տեղ չունին:

Կամացուկ մը բռնեց սատկած կենդանիին պոչէն ու դրաւ բակի որթատունկի բունին ետեւ: Եթէ չհաւատան, փաստ ուզեն, ահա՛:

Փողոց ելաւ սովորականէն տարբեր տրամադրութեամբ ու քալուածքով: Դէմը ելլող ընկերներուն ցոյց տուաւ ձեռքերը: Թե՛րահաւատ նայուածքներուն, իր պատասխանը պատրաստ էր՝ «Բեստեմեմիլէն պահեր եմ բակը, վաղը առտու մէկ հատ ալ պիտի քսեմ դպրոց չգացած»:

- Լան, մինչեւ առտուն այրունը կը չորնայ տահա...
- Բան մըն ալ չ'ըլլար
- Ձարնե՞մ մէկ հատ
- ...Ձարկ:
- Հը՞:

- Քիչ մը ցաւեցաւ, տակա լաւ չէ չորցեր:

Փորձուած ձեռքը աննկատ տարաւ անութին տակ ու, ետ տուն չմտած՝ ափին հակառակ կողմովը աչքին տակէն կախուած թաց բան մը չորցուց:

Հիացումով կը դիտէր դասընկերները, որոնց ափերուն մէջ կը շրխկային ուսուցիչներուն զաւազաններն ու քանակները, սակայն անոնք աչք իսկ չէին թարթեր. ափ ափի ետեւէ կը բանային ու կը պարզէին ուսուցիչին՝ «Ձա՛րկ ինչքան կ'ուզես...», նոյնիսկ արհամարհոտ ժպիտ մըն ալ կը խաղցնէին իրենց շրթունքին մէկ ծայրը:

Ծեծը դպրոցի ամէնօրեայ ծրագրին մաս կը կազմէր: Դասը չես սորված՝ ծեծ: Գիրքդ տունը մոռցեր ես՝ ծեծ: Մասնավճարդ չես բերած՝ ծեծ: Չարութիւն ըրած ես՝ ծեծ:

Ու այս ծեծը ո՛չ միայն աշակերտին «օգտին» համար էր, այլ լեւ, վստահ եմ՝ ուսուցիչին, որպէսզի ջղադունդի վերածուած այդ խեղճ արարածները - ընկերային ու տնտեսական միլիոն հարցի տակ կքած այդ մարգերը - քիչ մը լիցքաթափուէին, հանդարտէին: Թէ չէ... մէկուն վրայ պիտի պարպէին իրենց բարկութիւնը, չէ՞:

Առաջին հարուածէն իսկ աչքերը կ'արցունքոտէին ու կ'ամչնար նայելու ընկերներուն: Հիմա, այլեւ վե՛րջ. ափերը վահանած էր «քեստենքելլէ»ի արիւնով. թող պատժեն որքան ուզեն, այլեւս պաշտպանուած էր ցաւին դէմ:

- Տեսէ՛ք, որդիներս, դուք եկեղեցի եկած է՛ք Աստուծոյ հրամանով եւ մեր սրբազան հայրապետներու...

Մատներուն միջեւ վառուող սիկարէթէն գրեթէ բան չէր մնացած, մոխրացեր-գացեր էր ու մատներուն հասեր: Այրուածքէն ցնցուեցաւ, գլանիկը նետեց գետին ու կոխեց վրան: Նամակը փռեց սեղանին:

Երանի կարելի ըլլար սիրտին ալ մողէզի արիւն քսել:

- Սակայն, շատ լաւ գիտէ՛ք, որ կեանքի մէջ կան տեսակ-տեսակ փորձութիւններ՝ հիւանդութիւն, աղբատութիւն...

Ամուսնութեան առաջին տարիներու իրենց երջանկութեան օրերը հիմա «անցեալ-կատարեալ» եղած էին. կարօտով ու յուզումով կը մտաբերէր զանոնք: Երբեմն, նոյնիսկ ակնթարթ մը կը զումով կը մտաբերէր զանոնք: Երբեմն, նոյնիսկ ակնթարթ մը կը մտածէր, թէ արդեօ՞ք այդպէս եղած էին անոնք: Չէ՞ր չափազանցեր. ինքնախաբէութիւն չէ՞ր ըրածը. ներկայի գորշութիւնը զանցեր. ինքնախաբէութիւն չէ՞ր ըրածը:

անցեալի յաւելեալ փայլքով հակակշռելու եւ խտացնելու ճիգ չէ՞ր ըրածը: Ինքզինք աւելի դժբախտացնելով կ'ուզէր վերագտնել իր հոգեկան գուարթութիւնը:

Ո՛չ, միլիոն փաստ կար մէջտեղը, թէեւ... վերջինն ալ, ինչ-որ չափով, իրականութենէ հեռու չէր:

Միջարէթ մը եւս վառեց:

Շատ լաւ կը ճանչնար իր նկարագրին տկար կէտերը: Երբ հաշուի կը նստէր ինք իրեն հետ, թուղթերը կը բանար ու պահուրտուք չէր խաղար անոնց հետ: Ես՝ ես եմ. ես ուրիշը չեմ կրնար ըլլալ: Թէեւ զանազան հարցերու կապակցութեամբ, զանազան տիպարներ ունէր մտքին մէջ, որոնց կը դիմէր ու որոնք կ'ուզէր նմանակել, բայց ունեցած դէշ-աղէկդ հագնիս, քան թէ կառկտաններ:

Բայց հակառակ այս բոլորին, յաճախ կ'իյնար անբաղձալի վիճակներու մէջ: Կնոջ անտարբեր վերաբերմունքը նոյնչափ անտարբերութեամբ հակադարձելու իր որոշումը հազիւ կիրարկել սկսած, կ'ընկրկէր ու կը կակուզնար, մինչեւ իսկ արժանապատուութիւնը հողին հաւասարեցնելու աստիճան: Զօրաւոր կերպով կապուած էր անոր, պէտք ունէր անոր, եւ այնպէս, ինչպէս բոյսը կը վերադառնայ գէպի լոյսի աղբիւր ամէն անգամ, որ փորձես այլ ուղղութեամբ թեքել զայն, այդպէս ալ ինք: Փորձեր էր շեղիլ, չէր կրցած, չէր կրնար:

\* \* \*

Լոյսի արագութիւնը ոչինչ է՝ համեմատած մարդկային ուղեղի արագութեան հետ: Ակնթարթի մը մէջ քսանեօթը տարի ետ գացած էր ու հասած իր պսակի օրուան եւ ակնթարթի մը մէջ ալ ետ դարձած: Ո՞վ խանգարեց:

- Ներողութիւն, ճամբայ կու տա՞ք.

Ետ քաշուեցաւ ու ճամբայ տուաւ: Հաստամարմին կին մըն էր, որ իրեն սեղմուելով, քսքոտուելով, երեխայի մը ձեռքէն բռնած անցաւ ներս: Քրտինքին միախառնուած բարկ հոտը արբեց-տարաւ խունկի բոյրը:

- Այժմ, որդեակ իմ փեսայ, կը խոստանա՞ս բոլոր պարագաներու մէջ ըլլալ տէր եւ պաշտպան:

Նամակը մէյ մըն ալ կարդաց ու պատշգամ ելաւ: Պէտք էր ցրէր այս սեւ միտքերը: Ինչպէ՞ս կարելի է: Կատակ չէ՞ արդեօք:

Պողոտայի ծայրին երթեւեկութեան եռագոյն ազդանշաններուն հետ հաշուեց քանի ինքնաշարժ կը կտրէ - կ'անցնի կանաչէն կարմիրը, նորէն հաշուեց, նորէն հաշուեց, նո... զգաց, որ ըրածը ապուշ բան է, ետ մտաւ ներս:

Դուրսի գով օդը քիչ մը կազդուրած էր զինք: Կրակ կտրած ականջները քիչ մը զովացած էին թէեւ, յանկարծ պաղ ջուրի մէջ խրուած-կարմրած կտոր մը երկաթի պէս դժոճոց պէտք է արձակէին... ականջը՝ հէ՛չ, սիրտին կրակը, կրակ կտրած սիրտը ինչպէ՞ս ջրդեղէր...

Սիրտին մողէզի արիւն քսել կ'ըլլա՞յ:

Ինչո՞ւ այս որոշումը...

\* \* \*

Նայեցաւ կողքիններուն. գլուխը դարձուց միւս կողմ, յետոյ ետեւ ու ետ դարձաւ դէպի խորան: Մարդ կարենայ այս մարդոց իւրաքանչիւրին մէջ մտնել ու միտքը կարդալ այս վայրկեանին: Ինչ ցանկութիւններ, ինչ ափսոսանքներ, ինչ քաղցր ու լեղի յիշատակներ:

Իսկ իր ըրածը ինչ էր որ:

Ինչպէս որ որոշած էին, այդպէս ալ ըրին: Եկեղեցիին մէջ խոնուած բազմութեան ամենահեռու կեցողին իսկ լսելի ձայնով «այո» ըսած էին երկուքն ալ, զարմացնելով բոլորը: Հապա ինչ: Քիթիդ տակէն «այո» մը ըսել, որ հազիւ քահանա՞ն լսէ: Թող բոլորը լսեն ու վկայ ըլլան:

Քիթ քիթի ժպտացին երկուքն ալ: Վերջապէս հասան իրենց երազած այս օրուան: Իրենց սիրոյ պատմութիւնը՝ վերջակէտ, նոր տող: Կամ՝ կախման կէտ ու նոր պարբերութիւն:

- Իսկ դուն, որդեակ իմ հարս, կը խոստանա՞ս տէր եւ հնազանդ

ըլլալ:

Կրկին աչքերը սեւեռեց մոմի լոյսին ու փնտռեց խոտոչը:

Քահանան անընդհատ ցուցմունքներ կ'ընէր, պսակուող գոյգին գլուխները մէկ կը միացնէր, մէկ կը հեռացնէր, նարօտ կ'անցընէր, նարօտ կը հանէր: Խունկի բոյրը բուրվառէն ուղղակի լեցուեցաւ ունդերուն մէջ:

\* \* \*

Ահաւոր ծանրութիւն մը կը զգար կուրծքին տակ: Իր գիտ-  
ցած սիրտը չէր կարծես կրծքավանդակին մէջինը, այլ՝ աւելի շատ  
մանկութեան լաթէ գնդակին կը նմանէր, որուն մէջ, երբեմն, դա-  
ւադրութեամբ քար մը կը դնէին, որպէսզի հարուածողին ոտքը  
ցաւի: Յստակ ձեւ չունէր, գնդաձեւ էր թէեւ, սակայն հարուածներ  
ստանալէն բզկտուած էր ու ծուէնները հոսկէ հոնկէ կախուած  
էին եւ եթէ առասանով լաւ մը կապկպուած չըլլար, շատոնց քայ-  
քայուած կ'ըլլար:

Ճիշդ իր սիրտին պէս, քուրջի կտորի վերածուած սիրտին  
պէս, մէջը քար...

Սիրտին ծանրութիւնը երբեք այսքան յստակ չէր կշռած:  
Այս գարանակալ քարը միշտ ալ ցաւ պատճառած է: Յիշեց  
իր կատակներէն մէկը, իբր թէ անմեղ, բայց որ ահաւոր աւարտ  
ունեցաւ. կտորուեցաւ ընկերոջ ոտքի բլթամատին ոսկորը:

Պատանի էին: Ֆիլմի մը մէջ տեսած էր ու չարածհիութեամբ  
մը, յարմար առիթը գտնելով, «քալեցուց» ընկերոջ վրայ: Գլխար-  
կի մը տակ խոշորկեկ քար մը պահեց ու երբ նկատեց վազգէնին  
մօտենալը, ընկերներուն աչք ընելէ ետք, այնպէս մը ձեւացուց, որ  
իբր մէկ հարուածով գլխարկը պարտէզի երկու ծառերու բունե-  
րուն մէջէն անցընել կը փորձէ ու չի յաջողիր: Վազգէնը, որ  
ֆուլթպոլի սիրահար էր, հետաքրքրութեամբ մօտեցաւ ու սկսաւ  
զինք դիտել:

- Մէկ ժամ է կը փորձեմ կոր գլխարկը մէկ շուքով ծառերուն  
մէջէն անցընել, չ'ըլլար կոր, հէջ մէկերնիս չ'իջանք...

- Լէ՛ք անդին գնա՛...: Ինչու, չ'մտցնե՞լիք ի՞նչ կայ որ:

Կարթը անցեր էր: Անդին գնաց ու վազգէնը տեղը դիրք  
բռնեց ու շուքեց... բլթամատը նրկու տեղէն կտորուեր էր, մօտ  
ամիս մը կաղաց տղան: Վազգէնը բաբը սողայ էր, ցուր անցաւ,  
դէպքը մոռցաւ ու ոչ մէկ ռիս կամ փոխվրէժ: Սակայն ինք, ահա  
քանի տասնամեակ ետք, ամէն յիշելուն սիրտը կը քամուի: Վազ-  
գէնին ցաւը տեւեց մէկ ամիս. իբր՝ ահա՛ երեսունհինգ տարի...

Կեանքին մէջ այլեւս ասանկ կատակ չըրաւ: Շատ դժոյշ էր  
որ մէջ մըն ալ ինք իր սիրտը այդպէս չցաւցնէ: Բայց ինչո՞ւ ուրիշը  
չի մտածեր, երբ կը ցաւցնէ: Այս ինչ շուտ ցաւող սիրտ է. թուղ-  
թէ՞ չի նուաճ է, ինչ է:

\* \* \*

Թուղթ, թուղթ...: Ահա՛ դիմացը թուղթի կտոր մը, աւելի հա-  
տու, քան ամենասուր դոնակը:

Բոլորը այսպէս կ'ըլլան, իրեն պէս, իրենց պէս: Հին ջերմու-  
թիւնը կամաց-կամաց տեղի կու տայ անսովոր պաշտութեան մը,  
որ ժամանակի ընթացքին կը վերածուի անտարբերութեան,  
նոյնիսկ անտեսումի: Ինք կայ-չկայ, միեւնոյնն է, ոչ մէկ ջերմիկ  
խօսք, սիրալիր ժպիտ, ձեռքի կատակ:

Ամբողջ կեանքը մեղրալուսին չ'ըլլար...  
Հա՛, բայց մեղրէն, մեղրի քաղցրութենէն բան մը կը մնայ,  
չէ՞...: Ո՞ւր կ'որթայ...

Երեւի սկսած է ձանձրացուցիչ դառնալ, իրմով չի հե-  
տաքրքրուիր, իրմէ կը խուսափի...

Ինչո՞ւ կ'երթայ. իրա՞ւ կ'երթայ. ինչպէ՞ս...

Սուրճին ջուրը դրաւ ու նստեցաւ խոհանոցի փոքր սեղանին.  
արմուկը յենեց ու խոր շունչ մը քաշեց: Թթուածինի պակաս կար  
սենեակին մէջ:

Ամբողջ կեանքը մեղրալուսին չ'ըլլար...  
Բայց, ինչո՞ւ «վերջ»:

Սիկարէթ մը հանեց ու բերանը չտարած, դրաւ սեղանին.  
Սուրճին հետ: Շատ կը ծխէր վերջերս, կարծես դիտմամբ: Կ'ու-  
ղէր, որ կինը տեսնէ ծխախոտի մնացորդներով լեցուն մոխրամա-  
նը եւ բան մը ըսէ: «Սկսեր ես շատ ծխել...», այսպիսի բան մը, ինչ  
որ ցոյց տար, թէ իրմով, իր առողջութեամբ հետաքրքրուած էր:  
Ոչ իսկ մէկ անդրադարձ:

Այս բոլորը շատոնց կը գրաւէր, երբեմն հաճելի բան մը կը  
պատահէր, պղտիկ, դրական միջոցառում մը. իսկութեան մէջ ոչ  
շատ կարեւոր, սակայն իրեն համար մեծ նշանակութիւն ունեցող.  
Ինք մեծ նշանակութիւն կու տար, կ'ուզէր տալ, ժպիտ մը,  
մարդոց ներկայութեան փաղաքշական արտայայտութիւն մը. ու  
կը սրբէր, կը մոռնար կուտակուած ամբողջ նախկին մրուրը:  
Շովու մակընթացութեան եւ տեղատուութեան կը նմանէր...

Այո՛, սակայն, այս վերջինը: Այս վերջինը երբեք չէր սպա-  
սեր անկէ: Ու տասներորդ անգամ ըլլալով կարդաց դրան մուտ-  
քին, գետինը գրուած մեքենագրուած նամակը, որը երեւոյնան,  
գործէն վերադառնալուն, ներս մտնելուն պէս նկատած էր ու  
վերցուցած:

«Զիս սխալ չհասկնաս, սակայն ես պէտք է երթամ, ես պէտք է

դուրս ելլեմ կեանքէդ ու այս անգամ ընդմիջտ. մեր համատեղ կեանքը անհիմաստ դարձաւ այլեւս: Չփնտոնես զիս, որովհետեւ ապարդիւն է, ա՛յ ոչ մէկ կամուրջ կայ իմ եւ քու միջեւ: Մնա՛ք բարով»:

**Եւ տակն ալ գլխազիր տառերով «վերջ» մը:**

**Գլխուն մէջի պողպատեայ գնդիկը նորէն սկսաւ ցատկուտել: Թուղթը դրաւ սեղանին ու երկու ձեռքերով սեղմեց քունքերը:**

\* \* \*

– Հետեւաբար, Աստուծոյ միացուցածը մարդ չբաժնէ: Ինձ պիտի նախընտրէր գրաբարը՝ Արդ, որ Աստուած գուգեաց, մարդ վի՛ մեկնեցէ:

**Քովը նստող կինը հիմա աւելի ուժգին կը թափահարէր ձեռքի գունազարդ հովահարը, որ սիրամարզի պոչին պէս բացուած անդադար կը շարժէր, մերթ իր, մերթ ալ ազջնակին քրտնակալած դէմքը զովացնելու:**

**Աղջնակը, յայտնապէս դժոճ, ետ կը քաշուէր ու թափահարուող հովը կը բախէր իր դէմքին, քրտինքի ու անուշահոտի անախորժ հոտը բերելով իրեն հետ:**

**Բարկացաւ: Բայց զսպեց ինքզինք ու դէմքը փորձեց փախցընել: Դարձաւ միւս կողմ: Միջանցքին միւս կողմի նստարանին վրայէն կին մը իրեն նայեցաւ: Ժպտեցա՞ւ: Կարծես թէ այո: Ի՛նչքը ետ դարձուց:**

– Ով Տէր, յաւիտեանական Աստուած, դուն՝ որ անփակտելիօրէն իրար կը միացնես...

**Կնքամայրը իր պճլիկ պայուսակէն սպիտակ թաշկինակ մը դուրս բերաւ ու կամացուկ մը չորցնել փորձեց հարսին ճակատին վրայ մարգարիտի պէս շարուած քրտինքի կաթիլները: Փեսան աչքին տակէն նայեցաւ: Աստուած իմ, երբ վերջ պիտի գանէ այս արարողութիւնը:**

\* \* \*

**Ինչո՞ւ այսպէս եղաւ: Ու քանիբրո՞րդ անգամ ըլլալով վերաքննութեան ենթարկեց իրենց անցեալը: Երբեւէ անհաւատարիմ գտնուա՞ծ է, դաւաճանա՞ծ է կնոջ. երբե՞ք: Կոպիտ վարուա՞ծ է անոր հետ. երբեմն. ո՞ր ամուսինը այդպէս չէ որ: Ցաւցուցա՞ծ է զինք. լո՞ւրջ. չէ՛, գոնէ ոչ-դիտմամբ:**

**Սուրճը պատրաստ էր: Ինչո՞ւ այդպէս եղաւ: Վառեց սիկա-**

**րէթը ու սուրճէն ունայ մը առաւ: Ինչո՞ւ այդպէս եղաւ: Դրամի՞ հարց է: Նիւթապէս չի՞ բաւարարեր զինք: Ասկէ աւելի ի՞նչ կրնայ ընել: Ճիշդ է, ճոխութիւններու մէջ չեն լողար, սակայն գէշ ալ չեն ապրիր:**

**Ձէ՛, դրամի հարց չէ: Թէեւ դրամ ըլլաք, տարբեր կ'ըլլար: Սկիզբէն ծանօթ էր իրեն եւ իր պայմաններուն, ի՞նչ փոխուեցաւ:**

**Պատուհանի ապակիին վրայի ճանճը զուր կը փորձէր դուրս ելլել. ի՞նչ փոխուեցաւ. խեղճը ապակիին ինչ ըլլալը չի դիտեր, կը կարծէ, որ դիմացը բաց է ու տղզալով կը զարնուի ապակիին: Ի՞նչ փոխուեցաւ: Ինչո՞ւ իրենց միջեւ գոյութիւն ունեցող ջերմութիւնը պաղ ապակիի վերածուեցաւ, ու ահա՛ ինք ալ կը տղզայ, կ'աշխատի ապակիէն անդին անցնիլ:**

**Ճանճը յոգնած, նստեցաւ ապակիի շրջանակին:**

**Ի՞նչ փոխ... Անդրադարձաւ, որ ժամ մըն է միեւնոյն բառերը կը տողանցեն գանկին մէջ: Պողպատեայ գնդիկները կարծես մանրուեր, փշրուեր, նստուածք էին տուեր գանկի յատակին ու կը ցնցուէին, գանկի իւրաքանչիւր շարժումին, ճիշդ իր աղջնակին մանկութեան թիթեղեայ գանձանակին նման, որ ամէն ցնցուելուն, մանրուք, մետաղեայ դրամներուն շրխկոցովը կը լեցնէր տունը:**

**Ի՞նչ փոխուեցաւ: Շատ բան փոխուեցաւ, էշ չէ, որ չնկատէ:**

**Գանձանակին շրխկոցը...: Յիշեց կորաքամակ հայրը, քանի՞ տարի առաջ էր: Աղջնակը հազիւ դեռ... ո՛չ, ճիշդ մէկ տարեկան էր: Այո՛, աղջկան առաջին տարեդարձն էր. եկեր էր իրենց ու աննկատ՝ թոռնիկին բարձին տակ դրեր էր թիթեղեայ, ժանգոտած իր գանձանակը, որուն մէջ տարի մը ամբողջ մետաղեայ մէկ ոսկինոցներ հաւաքած էր: Մարդուն ամբողջ խնայողութիւնը:**

– Խաղաղութի՛ւն շնորհեա՛...

– Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի...

**Ցնցուեցաւ: Հեռախօսն էր: Անմիջապէս վերցուց ընկալուչը:**

– Հա՞, Կարին, դո՞ւն ես. ոչինչ. նստեր՝ կ'որոճամ... Խոտի պէս բան մը... խոտ դարձած կեանքս... աս ալ այսպէս... չէ՛, հոս չէ... չեմ գիտեր... չեմ գիտեր... Հաւատա՛, չեմ գիտեր... եղա՛ւ, ցը՛:

**Դժբախտ մըն ալ այս աղջիկը: Երկու տարի առաջ ամուսինը կոնակը դարձուց-գնաց ու մէյ մըն ալ չվերադարձաւ: Տեղացի սիրուհի մը ունի եղբր, գացեր անոր ծոցը մտեր է ու Կարինէն մէկ-մէկուկէս տարեկան երեխայով ձգեր է անտէր-անտիրական: Կարինը աղուոր աղջիկ է, ձեռքէն ինչ ըսես չի գար, կ'աշխատի ու**

ձեռով մը կ'ապրին: Բայց աւելի լաւ կ'ըլլայ, ելլէ վերադառնայ, հոս ի՞նչ ունի այլեւս: Ափսոս, որ այն ատեն խաբուեցաւ, ձգեց ու այս խըլարին ետեւէն եկաւ. մարդ կարծեց զինք, իշուն մէկը դուրս եկաւ:

Հիմա տե՛ս, բաղդատէ զինք ու այդ անպէտքը: Ինք ինչ դուրդուրոտ, հոգատար ամուսին է, բայց յարզը գիտցող չկայ: Կարինէն իրեն պէս ամուսին մը պիտի ունենար, որ գիտնար. ով գիտէ որքան երջանիկ զոյգ կ'ըլլային: Չես գիտեր: Գոցէ՛ այդ տետրակը:

Լա՛ւ, կ'երթա՞յ, թող երթայ: Այդպէ՞ս կ'ուզէ, թող այդպէս ըլլայ: Կը կարծէ, որ անոնց արժէքը չ'իմացուիր, սովորական կը դառնայ, նոյնիսկ տաղտկալի, անհամ: Շատ աղէկ, ես ալ երես չտամ, տեսնեմ ի՞նչ պիտի ըլլայ, ետեւէս պիտի գա՞յ, թէ ոչ: Կնոջ մը շատ երես տալու չէ: Տես տգէտ տեղացին, տես ինչպէս կը վարուի իր կնոջ հետ, հա՛ կինը, հա՛ մահճակալը: Ո՛չ կեանքի ընկեր է, ո՛չ հաւասար ամուսին: Գո՛յք, ստացուածք, գործիք, ատոր համար ալ գառնուկի պէս են, իրենց ամուսիններն ալ թագի պէս գլուխնուն վրայ կը դնեն:

Ինքզինք համոզելու, իր տեսակէտը պաշտպանելու համար դեռ ինչ օրինակներու պիտի կառչէր: Այս մակարդակի՞ն հասաւ: Ի՞նչ հասաւ: Հասցո՛ւց:

\* \* \*

Վերջ գտաւ արարողութիւնը:

Իր պսակի օրը, երբ արարողութիւնը վերջ գտաւ, «Ուրեմն հիմա տէր եւ տիկին ենք» ըսաւ մտքէն ու նայեցաւ աղջկան: «Կի՛նս», վերջապէս:

Քահանան ցոյց կու տար, թէ ինչպէս, ուր պիտի շարուէին՝ շնորհաւորանքները ընդունելու համար: Ժողովուրդը խուժեց: Ինք նստեցաւ, աճապարելիք բան չունէր, առաստաղէն առկախ կանթեղները. աջէն ձախ, ձախէն աջ. մէջտեղի ամենամեծէն դէպի աջ, յետոյ՝ մէջտեղի ամենամեծէն դէպի ձախ:

\* \* \*

Կարծես փուշի վրայ նստած էր, անհանդիստ: Թեթեւ դլխացաւ մը զգաց. գիտէր, որ կրնայ զարգանալ ու տարածուիլ, դուրս խէն մինչև ուսերը. ուսերէն՝ ողնայար: Ելաւ տեղէն ու ննջասեն-

եակ անցնելով երկնցաւ մահճակալին վրայ, աչքերը առաստաղին:

Առաստաղի խոնաւութիւն ծծած այդ մասը, ուր հայեացքը կը սեւեռէր միշտ, երբ միտքը կեդրոնացնել կ'ուզէր կարելոր հարցի մը վրայ, հետաքրքրական պատկերներ կը պարզէր, որոնք արդի նկարչութեան նման զանազան մեկնաբանութիւններ կրնան ունենալ, ըստ մարդու հոգեվիճակին ու տրամադրութեան: Ուրիշ օրերու դէմքի մը նմանող գծագրութիւնը, հիմա ճիշդ բացուած ափի մը տեսքը ունէր, ափ մը, որ կարծես պարզուած էր բան մը ստանալու ակնկալութեամբ: Ո՛չ, Միքել Անժելոյի Աստուծոյ ձեռքն էր, որ կարկառած էր հպելու համար Ադամի ձեռքին: Աստուծոյ եւ մարդու առաջին հաղորդակցութիւնը, գուցէ առաջին ներարկման գործողութիւնը, ուր բան մը կ'անցնի Արարիչէն դէպի մարդ, եւ ինչու չէ՞ նաեւ բան մը մարդէն դէպի Աստուած:

Մարդը պէտք ունի աստուածանալու:

Աստուած ալ՝ մարդանալու:

Մարդը պէտք ունի աստուածանալու... Աստուած ալ՝... սիրեց գաղափարը՝ մարդը պէտք ունի... Աստ... մա... ծա...

Կը վազէր ոտքերուն ամբողջ ուժովը, միայն թէ թաղին ծայրը հասնէր ու տեղ մը մտնէր: Գանակով մարդը կրնակադիս կը հետեւէր իրեն, արդէն դանակին շուքը ինկած էր վրան... միայն հասնէր թաղին ծայրը... ոտքերը ծանրացեր էին, ոտքերուն տակի հողը կը սահէր, կը վազէր, բայց առաջ չէր երթար... ահա՛ դուռ մը, ահա՛, ու դանակը իջաւ ճիշդ ծոծրակին... զարնուեցաւ պատին ու կոնակին վրայ փոռուեցաւ գետին, արեան լճակի մը մէջ... զարմանալի է, ոչ մէկ ցաւ կը զգար, սակայն շատ լաւ կը հասկնար, որ այս է վերջը: Կիսախուփ աչքերով կը նայէր գլխուն վրայ հաւաքուած մարդոց, որոնց մէջ էր նաեւ դանակով մարդը... մարդ չէր, կին էր, իր կինը... ձեռքինը դանակ չէր, ոլորուած օրաթերթ էր ու կը ժպտէր... բացաւ օրաթերթը ու իր կողմը դարձուց, որ կարդայ, փորձեց, չկրցաւ կարդալ... կինը ծունկի եկաւ ու ամբողջ հասակով քովն ի վեր պառկեցաւ, բացաւ օրաթերթին էջերը ու փոքր իրենց վրայ...

\* \* \*

Երեւի մի քանի անգամ ըսած էր ու ինք չէր լսած, ատոր համար ալ բաւական բարձր հնչեց քովի կնոջ ձայնը՝ հաճիս նէ ճամ-

բայ կու տա՞ս: Ոտքերը ետ քաշեց ու ափերով քիթն ու բերանը ծածկեց, երբ քսքոտուելով անցան, ապա այդ ձեւով ալ գլուխը յենեց առջեւի նստարանին, աչքերը փակ:

\* \* \*

- Ի՞նչ է նորէն գլխացա՞ւ ունիս... Ի՞նչ ունիս... անհանգի՞ստ ես... մէկ ժամ է կը փորձեմ քեզ արթնցնել... այնքան խորունկ քնացեր ես որ... ան ալ այս ժամո՞ւն...

Կինն էր, ձեռքը ճակտին, վրան հակած, մտահոգ իրեն կը նայէր:

Շուրջը նայեցաւ, ճեփ-ճերմակ սաւան: Նոր միայն հասկցաւ, որ քունը տարած էր ու տեսածը երազ էր: Միտքը հանդարտեցաւ, թէեւ գլխացաւը դեռ կը շարունակուէր, սակայն անհանգիստ չէր զգար, կինը կը շարունակէր շոյել գլուխը ու մտահոգ, աչքերուն մէջ նայիլ:

- Ինչո՞ւ չես խօսիր, բա՞ն մը ունիս,- ու ծոցեցաւ եւ համբուրեց ճակատը - չէ՛, տաքութիւն չունիս. անքո՞ւն էիր... երէկ ծանր կերար, ատկէ է երեւի... դէ՛, բան մը ըսէ...

- Բան չկայ... միայն թէ...: -Ու ժպտեցաւ. փակեց ու ետ բացաւ աչքերը. այնպէս կարօտով կը նայէր կնոջ:

- Ի՞նչ է, տասը տարիէ ի վեր չե՞ս տեսեր զիս...: Դէ՛, ելիր, կ'ուշանանք, հազիւ կը հասնինք... չնկատեցիր ալ, ազուր եղե՞ր է:

- Ո՞ւր էիր:

- Քուաֆէօրիմ. թուղթ գրած էի, չէ՞, որ ես վարսայարդարի կ'երթամ, կրնամ ուշանալ, դուն պատրաստուէ, որ գալուս պէս երթանք...

- Ի՞նչ թուղթ:

- Ահա՛: -Ձարմացաւ, որ չէր տեսեր,- ահա՛,- ու բարձին վրայէն առնելով «նամակ»ը շրջեց ու պարզեց աչքերուն առջեւ - Ինչպէ՞ս, «Ի՞նչ թուղթ» կ'ըսես, սեղանին վրայէն առեր ես ու հոս բերեր ու կարծես չես ալ նկատած...

- Սեղանին վրայ բան չկար, մտայ ներս, գետինը այս թուղթը դասյ:

- Է՞, չկարդացի՞ր:

- Կարդացի, սա Ի՞նչ է,- ըսաւ ու մեքենագրուած կողմը դարձուց անոր:

- Հա՛, պարապ թուղթ գտնելու ժամանակ չունէի, կը շտա-

պէի, «Նորա»ի մեքենագրուած էջերը կային թղթապանակին մէջ, էջ մը քաշեցի ու ետեւը դրեցի. չկորսուի՛, ետ տեղը վերադարձնելու եմ: Դէ՛ շարժէ... Հաղուելիքներդ տիւանիմ վրայ են: Դէ՛ տղայ, ամա քիփ ես, հա՛, Ի՞նչ ապուշի պէս կը ժպտիս, մի ձգեր, որ զօռով քաշեմ-հանեմ, դէ՛:

Ու երկու թեւերով սկսաւ քաշել թեւէն: Որքան կը քաշէր, ինք աւելի կը մօտենար, ան ալ զինք կը քաշէր, մինչեւ որ երկու թեւերը անցուց վիզին շուրջ ու մօտեցուց իրեն, յետոյ գլուխը թաղեց վիզին ու մազերուն միջեւ...

- Մօ կամա՛ց, հիմա ասոր ատե՞նն է, կամաց, մազս կ'աւրուի...

Քիթն ու բերանը աւելի սեղմեց: Ո՛չ, վարսայարդարին սրսկած օծանելիքներուն բուրմունքը չէր, ո՛չ, սա ուրիշ բան էր, իր ամբողջ զգայարաններովը ուրիշ բան կը ներշնչէր, կարօտի հոտն էր ատիկա:

Ազատեց կնոջ գլուխը իր թեւերէն: Մէկ աչքին տակ թաց բան մը կար, ձեռքը տարաւ, որ սրբէ:

- Աս Ի՞նչ է...

- Հէ՛չ, մողէզի արիւն

\* \* \*

- Մարդ չմնաց, պիտի չելլե՞ս: Ուշքի եկաւ, վերջին գոյգը կը ձեռնուէր: Դէմքը շփեց ու հասաւ դաս: Զեռնուեցաւ. կանդնեցուցին, լուսանկարուեցաւ քնաթաթախ ժպիտ մը հազիւ գծելով դէմքին ու նետուեցաւ դուրս:

Եկեղեցույ բակի թարմ ու զով օդը կազդուրեց զինք: Արդէն սկսեր էր մթննալ: Երկու խորունկ շունչ քաշեց, ձեռքերը մտցուց ասրատին գրպաններուն մէջ ու ելաւ դուրս: Դլուխը կախ կը յառաջանար՝ նեղ ու կեղտոտ թաղերու սալաքարերուն վրայէն զգոյշ քալելով: Ո՛չ, այս չէ, այսպէս չէ Ֆիւալը՝ այսպէս չէ եղած: Նոյնիսկ գրական զեղումի օրէնքով իրաւունք չունի փոխելու իսկական աւարտը: Քայլերը աւելի դանդաղեցուց ու սկսաւ հիւսել իրականութիւնը, պէտք է անպայման փոխէ պատմուածքին աւարտը, կամ՝ այդ գեղեցիկ աւարտին՝ իբրեւ յաւելուած, պոչին կպցնէ իրականը, նորը: Ու սկսաւ շարադրել:

Կա՛մ մողէզն էր շատ ծեր, կամ ալ արիւնը՝ շատ նօսր: Դպրոցական երեխայ չէր, որ ձեռքերը ցաւազրկէր ուսուցչին դանակին դէմ: Մեծ էր ու իրեն հետ մեծցուցած էր կողքէն շուքի



նման քալող ինքնախարէութիւնը: Օր օրի, տարիներ շարունակ, շերտ-շերտ իրարու վրայ դիզած էր չգոյ սիրոյ մը անպատճէն պատճէնները:

Քոչարի «Սպիտակ գիրքը»: Կոյր չէր «Սպիտակ գիրք»ի հերոսին նման, սակայն կոյրի պէս վարուած էր: Սպիտակ թուղթին յանձնած էր սպիտակ մելանով գրած վէպը - ոչ իսկ սպիտակ, այլ՝ թափանցիկ, անգոյն: Գրիչի ճնշումէն հետքեր մնացած էին թուղթին վրայ, սակայն՝ անընթեռնելի - անշուշտ ուրիշի համար-ինք գոց գիտէր բոլոր գրպանները:

Վերջապէս արթնցաւ թմբիրէն - ինչ թմբիր - Ռիփ Վան Ուինքըլի տարիներու քունէն: Քսանեօթը տարի...

Մխելը ձգած էր տարիներ առաջ, քաշեց աթոռը ու նստեցաւ պատուհանին գիմաց: Մատներուն միջեւ խաղցուց համրիչը, քանի մը անգամ ձեռքին վրայ փաթթեց ու ետ քակեց, հաւաքեց, դրաւ գրպանը, ու թեւերը ծալած, գլուխը ետեւ յենած, աչքերը սեւեռեց ապակիին վրայի ճանձերուն՝ հիմա, երկուքն էին:

«Նորա»էն փրցուած էջը:

Նոյնիսկ գլուխը չղարձուց. գիտէր, որ այգպիսի բան չկայ: Եղածը չոր ու ցամաք թուղթի կտոր մըն էր, ու վրան շարադրուածը՝ շատ պարզ ու հասկնալի: Մէկ թուղթի կտոր չէր, էջեր էին, ամբողջ նամակ մը, հազարաւոր բառեր, սակայն բոլորը մէկ բան ըսող:

Չօգնեց մողէզի արիւնը. ո՛չ տարիներու ցաւը մեղմելու, ոչ ալ փշրուածը վերակազմելու:

Ոչ մէկ վերականգնող հնազէտ պիտի կարենար այս անօթին բեկորները քով քովի բերելով վերակազմել նախկինը:

Թեւերը հիմա կախուած էին վար, աթոռին կողքերէն: Հաշիշոտ թմբութիւն մը շարժազերծած էր ամբողջ մարմինը: Միակ կանոնաւոր գործողը սիրտն էր: Սիրտը եւ ուղեղը:

Ուղեղը...: Նոր բաներ ամբարելու համար, հին բաները դուրս թափելու էին, մոռցուելու: Տեղ պէտք է տրամադրուէր նորին: Մոռացում, երկնային պարգեւ:

Երկու ճանձեր տաք վէճի մէջ էին, այդպէս կը թուէր, գործի լծած էին իրենց գլուխներն ու առջեւի ոտքերը: Երկար վիճեցան, ապա թռան միասին, հասան վեր, ամէն մէկը ապակիին մէկ անկիւնը: Յետոյ կրկին մօտեցան իրարու, աւելի կարճ խօսակցութիւն մը ու այս անգամ թռան դէպի պատուհանին բացուածքն ու անհետացան:

Գիտէին ուրեմն, որ այդ թափանցիկ ապակին անանցնելի է,

ուրեմն խաղ կ'ընէին անոր վրայ հոս ու հոն թռչկոտելով ու տղզալով: Պատուհանին բաց տեղն ալ գիտէին, երբ որոշեցին, այն ատեն թռան միասին...

Իրենք միասին թռան:

Ան թռաւ, ինք մնաց:

Եղա՛ւ: Աճապարեց. պէտք է հասնէր տուն ու գրի առնէր այս բոլորը:

Աչքին տակ դարձեալ թաց բան մը կախուեցաւ:

Հալէպ, Օգոստ. 2003

Յ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

**Չագին**

### ԲԱՐԻ ՎԵՐԱԴԱՐՁ...

«Ազդակ» օրաթերթի Երկուշաբթի օրերու 7րդ էջը պատրաստող Լուսիկ Կիվոյեան-Սրապեան, յաճախ կ'որսայ ազգային ու միջազգային կնիքով գրական ու մշակութային յոյժ հետաքրքրական երեւոյթներ, գորս խնամքով կը յանձնէ ընթերցողին ուշադրութեան:

23 Յունիս 2003 համարին մէջ հերթական իր նիւթերուն առաջինը խորագրուած է «Բաց ձեռքեր», անգլերէն գրուած եւ ստորագրուած Ամերիկա ծնած Էլիզապէթ Ասլանեանի կողմէ, որ «Յոյժ եւ մշակոյթ կազմակերպութեան հետ Յայաստան երթալով եւ հայկական գիւղի մը մէջ վերանորոգութեան աշխատանքներու մասնակցելով՝ կը վերագտնէ իր ազգային պատկանելիութիւնը»:

«Ազդակ»-ի մէջ յօդուածագրին կողմէ թարգմանաբար երեւցող «Բաց ձեռքեր» գրութեան հետ՝ Յայաստանի մամուլին մօտէն հետեւած ընթերցողները յիշեցին հաւանաբար անոր յար եւ նման ուրիշ գրութիւն մը, որ երեւցաւ հայրենի «Յայրենիքի ձայն»-ի 21 Յունուար 1987 թուակիր համարին մէջ, ծանօթ գրող եւ հմուտ թարգմանիչ Կարպիս Սուրենեանի ստորագրութեամբ, «Վերագտնուած ժառանգութիւն» անունին տակ, որուն հերոսուհին՝ Տայանա Բրաուն, մօտէն կը յիշեցնէ Էլիզապէթ Ասլանեանի ազգային ինքնաճանաչման սրտառու պատմութիւնը:

«Վերադարձը միշտ կարելի է, եթէ մաքուր է արիւնը», պիտի ըսեր եղերաբախտ Վազգէն Շուշանեան:

Պատմական ճակատագրով, ըսել է՝ ակամայ օտար լեզուով ու մշակոյթով սնած նման մանկամարդները եւ երիտասարդները այնքան կ'ուրախացնեն հայ մարդը, որքան կը տխրեցնեն օտարամոլութիւնը տգիտաբար սկզբունք դարձուցած այն կամակորները, որոնք իրենց մատղաշ գաւակները կը յանձնեն օտար վարժարաններուն ու միջավայրին: Ակնարկը, ի հարկէ, առաւելագոյն չափով կը վերաբերի անոնց, որոնց աչքին առջեւ ազգային օճախներ կան ու միջավայր, բայց կամաւ բռնուած են օտարամոլութեան վարակէն:

Իրենց երակներուն մէջ մաքուր արիւն կրող երկու հոգի՝ Էլիզապէթ Ասլանեան եւ Տայանա Բրաուն, որոնց վերադարձի պատմութիւնները միաժամանակ կը յանձնենք «Չագին»-ի ընթերցողներուն, յիշեցնելով նոյն ատեն, որ վերադարձի, կամ լաւ եւ է ըսել՝ ինքնաճանաչման նման պատմութիւնները միշտ տեղ ունեցած են եւ պիտի ունենան այս էջերուն մէջ...

### Է. Ասլանեան

## ԲԱՑ ՁԵՌՔԵՐ

«Լիիզիի, Լիիզիի, Լիիզիի». տակաւին կը լսեմ այդ բարձր եւ իրարմէ տարբեր ձայները, որոնք դիւ կը կանչեն: Հայկական թաւ շեշտաւորում մըն է, թէ՛ պարզապէս «Լիիզի» անունը արտասանելու անկարողութիւնը: Անունս չի հնչեր այնպէս՝ ինչպէս վարժուած էի զայն լսելու: Թերեւս 75 հոգի շրջապատած են զիս: Են է 15 տարեկան տղաք եւ աղջիկներ:

Կը նայիմ եւ միայն ձեռքեր կը տեսնեմ հայ մանուկներու այս բազմութեան մէջ: «Լիիզիի, Լիիզիի, Լիիզիի» կը կանչեն անդադար: Կը նայիմ ոտքերուս տակ շէկ մազերով եւ փայլուն աչքերով աղջկան մը, զայն քովս կ'առնեմ եւ կը սկսիմ բաժնել հետս բերած մատիտները, դրիչները, սկաւառակները, շրթնաներկերը, մազիկապերը, շաքարները եւ գիրքերը: Եթէ նախատեսած ըլլայի անոնց մրտած դէմքերուն արտայայտութիւնները, անոնց կանչերը, որոնք կը յամենան ականջներուս մէջ, եւ անոնց կարկտան հագուստները, աւելին կը բերէի: Խելայեղօրէն կը փնտոնեմ, մինչ անոնք կը բազմանան շուրջս, բայց կերպընկալէ տոպրակիս յատակը կ'երեւի: Ոչինչ մնացած է: «Լիիզիի, Լիիզիի» բարձր կ'արձագանգէ ականջներուս մէջ, մինչ կը նայիմ վարձար փոքրիկ ձեռքերու՝ բաց եւ դատարկ: Անմիջապէս իրենք եւս կ'անդրադառնան, թէ ոչինչ մնացած է: Անոնց կանչը կը սկսի մարիլ եւ անունս միայն տարտամ կերպով կը թաւալի անոնց լեզուներուն վրայ: Կը հեռանամ եւ կ'ուզեմ արտասուել: Կը հեռանամ եւ կ'արտասուեմ:

Երկու ծնողներս հայ են: Անոնց ծնողները Հայկական Ցեղասպանութենէն վերապրած են: Ասիկա առաջին այցելութիւնս է Հայաստան, 10 հազար մղոն հեռու իմ երկրէս:

Հայերէն չեմ խօսիր, որովհետեւ ծնողներուս ծնողները արագ ձուլուած են, երբ Միացեալ Նահանգներ հասած են 1920ական տարիներուն: Հետեւաբար ամբողջ կեանքս «ամերիկացի» եղած եմ, ամերիկեան դպրոց յաճախած եմ եւ ապրած եմ հաւաքականութեան մը մէջ, ուր քիչ Հայեր կան: Այս գիւղին՝ Տաթեւի ժողովուրդը շատ քիչ բան ունի, սակայն ինչ որ ունի կը

բաժնէ ուրախութեամբ: Զիս կը հրաւիրեն իրենց տունը եւ մեծ սեղաններ կը պատրաստեն ինծի համար, հաւանաբար գործածելով իրենց շաբթուան մը ուտելիքի պաշարը, պարզապէս որովհետեւ իրենց հիւրն եմ: Ոչխարներն ու կովերը առաւօտուն արածելու կ'երթան, մինչ մեր խումբը գործի կ'ուղղուի, եւ կը վերադառնան գիշերը, երբ կ'երթանք ուտելու վարունգի, լոլիկի, պանիրի ու լաւաշի մեր ճաշը: Յաճախ կը ճաշենք գիւղացիներուն հետ, եւ անունս կենացներու մէջ կը լսեմ շատ աւելի յաճախ, քան՝ ինչ որ լսած եմ կեանքիս 17 տարիներուն ընթացքին, իմ երկրիս մէջ: «Բարեւ», «ի՞նչ է անունդ», «բարի լոյս» եւ «ինչպէ՞ս ես» բառերը դիւրութեամբ եւ ինքնավստահութեամբ կը թաւային լեզուիս վրայ:

Առաքելութիւնս էր Հայաստան դալ եւ բան մը վերադարձնել այն երկրին, ուրկէ նախնիներս եկած էին: Երբեք չէի ակնկալեր կապուիլ այս հողին, սակայն տեղ մը կապուեցայ: Հայերէն լեզուին դանդաղ եւ երգեցիկ հնչիւնը, ջերմ գիւղացիները, որոնք ոչինչ ունին եւ ամէն ինչ կու տան, գրոյցով, պարով ու խնդուքով լեցուն ամրան երկար գիշերները յիշատակներ են, որոնք դրոշմուած են ուղեղիս մէջ: Կը յիշեմ գիշեր մը, երբ կամաւորներս պտոյտէ մը Տաթեւ կը վերադառնայինք, եւ երբ պասը գիւղ մտաւ, ես ինծի հարց տուի, թէ այս գիւղը ե՞րբ տուն դարձաւ ինծի համար: Զէի զգար, թէ հնադարեան գիւղ մը կը վերադառնայի, այլ կը վերադառնայի դէպի քնապարկս, կարծր գետինը եւ տունս: Միայն քանի մը ամիս առաջ ոչինչ գիտէի այս գիւղին ընակիչներուն մասին, եւ այժմ անոնք ընտանիքս դարձած էին: Մեծ մայրս մահացաւ վերջերս, եւ ես, որ եկած էի այն վայրը, որ մեծ տեղ ունէր անոր սրտին մէջ, կ'ուտէի նոյն ճաշերը եւ կ'աշխատէի նոյն հողին վրայ, աւելի լաւ կը հասկնայի անոր կեանքը:

Անցեալ տարի հայ գրագէտ մը՝ Աղամ Պաղտասարեան ինծի ըսաւ, թէ հայութիւնը միշտ «ոսկորներուս» մէջ պիտի ըլլար, որովհետեւ հայ էի: Այդ հաստատումը ներշնչեց զիս եւ հետաքրքրութիւնս սրեց, որպէսզի այցելեմ Հայաստան եւ կապ մը գտնեմ իմ ժառանգութեանս հետ: Ամառ մը Հայաստան անցընելէս ետք այժմ գիտեմ, թէ հակառակ ամերիկեան կենցաղիս, մէջս կայ բան մը, որ հայկական է: Տաթեւի գիւղացիները ունին ճշմարիտ հարստութիւն մը. կեանքի ուրախութիւնը: Անոնք շատ աւելի բարձրաձայն կը խնդան, քան ոեւէ ժողովուրդ, որուն հանդիպած եմ, եւ առանց անձնասիրութեան կու տան ինչ որ ունին,

հակառակ իրենց սահմանափակ պայմաններուն: Անոնց ուրախութիւնը կարելի կը դարձնէ անոնց դոյատեւումը:

Անոնք նոյն հաճոյքով ու լաւատեսութեամբ վարակեցին զիս: Նաեւ դիտեմ, թէ ամբողջական պիտի չզգամ, մինչեւ որ դարձեալ վերադառնամ Տաթեւի նեղ ու փոշոտ փողոցները եւ դարձեալ լսեմ մանուկներուն թաւ հնչիւնները: Կը հաւատամ, թէ Տաթեւը միշտ հետս պիտի ըլլայ, թերեւս նոյնիսկ՝ ոսկորներուս մէջ:

ԷԼԻԶԱՊԷԹ ԱՍԼԱՆԵԱՆ

\*.- Ելիգապէթ (Լիզի) Ասլանեան 18 տարեկան կամաւոր մըն է, որ մաս կազմած է «Հող եւ մշակոյթ» կազմակերպութեան 2002ի ամառնային ծրագիրներուն՝ հարաւարեւելեան Հայաստանի Տաթեւ գիւղին մէջ, ուր մասնակցած է գիւղին 150 տարուան դպրոցին վերանորոգութեան աշխատանքներուն: «Հող եւ մշակոյթ» կազմակերպութեան 2003ի ամառնային ծրագիրը կ'ընդգրկէ հիւսիսային Հայաստանի Լորի-Տաւուշ մարզին Այրում գիւղին մէջ արեւու ջերմութեամբ պտուղ չորցնելու շինութեան մը վերանորոգութիւնը, Արցախի մէջ Շուշիի գլխաւոր հիւանդանոցին հիւանդներու սենեակներուն վերանորոգութիւնը, ինչպէս նաեւ Սուրիոյ հիւսիսային Քեսապ գիւղին մէջ վերանորոգութեան աշխատանքներ: Հետաքրքրուողներ կրնան դիմել կազմակերպութեան համացանցի կայքին (հասցէ՝ www.landandculture.org, ուղղակի կապ՝ info@landandculture.org), յաւելեալ տեղեկութիւն ստանալու եւ մասնակցութեան դիմումնագիր ներկայացնելու համար: Թէեւ դիմումնագիր ներկայացնելու պայմանաժամը Մայիս 18ն էր, սակայն կազմակերպութիւնը տակաւին դիմումնագիրներ կ'ընդունի:

Կ. Սուրենեան

ՎԵՐԱՔՆՆՈՒԱԾ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ

Պատահաբար ծանօթացայ ամերիկուհի գրող Տայանա Պր-րաունին, որ այս տարուայ Սեպ-տեմբերին այցելել էր Հայաստան:



Եթէ մինչ այդ փողոցում կամ այլուր տեսնէի այդ կարճահասակ, փոքր-ինչ գիրուկ, շատ պարզ հագնուած կնոջը՝ չէկին տուող շաղանակագոյն մագերով, թափանցիկ մոխրագոյն աչքերով, ուսից էլ կաշուէ պայուսակ կախուած, պիտի մտածէի, անշուշտ, որ զբօսաչրջիկ է՝ ով գիտէ որ երկրից: Ու մտքովս էլ չէր անցնելու, որ նրա վէպերի ընդհանուր տպաքանակը «մի քանի միլիոնի» է հասել արդէն, ինչպէս իմ հարցին պատասխանելով ասաց ինքը հետագայում, գլուխը մի տեսակ վարանոտ շարժելով:

Եթէ այդ վէպերից մէկնումէկը կարդացած լինէի մինչ այդ, ինձ պիտի թուար, երեւի, թէ բարեկեցիկ, գուցէ նաեւ բարձր դասին պատկանող մի բարձրահասակ, շիկահեր անգլուհի է հեղինակը, քանի որ, ինչպէս դիտեմ հիմա, դրանք ոտմանթիկ շնչով պատմավէպեր են, որոնց գործողութեան միջավայրը Անգլիան է, ժամանակը՝ տասնիններորդ դարի առաջին տասնամեակները յատկապէս, գործող անձինք տարբեր դասերի գտարիւն անգլիացիներ են ու գաւառական ազնուականութիւնը մանաւանդ՝ տիպիկ անգլիական կենցաղով ու բարքերով: Ու մտքովս էլ չէր անցնելու, որ այդ վէպերի իսկական հեղինակին մի օր կը ծանօթանամ այստեղ՝ Երեւանում, գրողների մեր տան մի սենեակում, այն էլ պատահաբար, ու իր մասին հէնց իրենից կ'իմանամ մի ճակատագրի պատմութիւն, որ մի մասնիկն է Հայոց ճակատագրի պատմութեան:

Բայց, նախ եւ առաջ, գաղափար անգամ չունէի այս ամերիկուհի գրողի մասին, անունն անգամ չէի լսել: Եւ ոչ միայն ես: Զարմանալի չէ. դեռ մի տասնամեակ էլ չի անցել այն օրից, երբ լոյս է տեսել իր առաջին վէպը, որ շուտով վերահրատարակուել է Լոնդոնում, թարգմանուել իսպաներէն, յունարէն, ինչպէս իմացայ իրեն հետ ծանօթանալուց յետոյ՝ իր գրքերից մէկի շապկին տպուած համառօտ բնութագրումից: Իսկ նա երիտասարդ չէ, ունի երկու հասուն դուստր: Ամուսնու եւ գատրերի հետ ապրում է Կալիֆորնիայի Սան Զոզէ քաղաքում:

Հէնց սենեակ մտնելու պահից երեւաց, որ շատ աշխոյժ, մարդամօտ կին է, հմայիչ ժպիտով: Մեզանից մէկը նոյնիսկ «կրակի կտոր» կոչեց նրան: Իմ ուշադրութիւնը գրաւեց նաեւ իր ոչ-ամերիկեան, բուն անգլիական անգլերէնը: Եւ հազիւ մտքովս էր անցել, որ երեւի ամերիկուհի էլ չէ իր ծագումով, երբ նա կարմիր-կանաչ հրթիռ կրակելու նման մեզ մատուցեց իր անակնկալը. հայրը հայ է եղել: Անդրանիկ Մակարեան: Կիւրիսցի: Մեծ Եղեռնի օրերին ուսանող է եղել Լոնդոնում, դրա շնորհիւ էլ փրկուել է կոտորածից: Իսկ յետոյ, իր հարազատների ճակատագրով մտահոգ, եկել է նրանց որոնելու: Գտել է միայն իր մի քրոջը Պոլսում՝ որբանոցում: Նրան ամուսնացրել է մի ամերիկահայի հետ եւ ուղարկել Ամերիկա, իսկ ինքը, ճարահատ, նոյնպէս որբ մնացած ու սգաւոր, վերադարձել է Լոնդոն: Ամուսնացել է անդլուհու հետ, ունեցել չորս դուստր, որոնցից երրորդն է Տիանան եւ կամ, անգլիական արտասանութեամբ, Տայանան:

- Եթէ հակառակ կարդանք ձեր անունը, - ասացի, - կը ստացուի Անահիտ՝ հայկական ամենագեղեցիկ անուններից մէկը:

Ասացի հէնց այնպէս, ի միջի այլոց, իսկ նա իսկոյն վրայ բերեց.

- Այո, այո, հայրս հէնց Անահիտ էր ասում ինձ:

Լոնդոնում է ինքը ծնուել ու մեծացել: Երբ հարց տրուեց, թէ ո՞ր գրողին է ամէնից աւելի սիրում, պատասխանեց՝ Զէյն Օսթինին: Եւ այսպէս պատճառաբանեց. երբ պատերազմի օրերին Լոնդոնը ուճակոծուում էր շարունակ, ինքը, ջահել աղջիկ, կեանքի ապահովութիւնից բացի փնտոտում էր նաեւ հոգեկան ապաստան, որ գտաւ Զէյն Օսթինի վէպերում: Ասաց մի տեսակ արդարանալու նման, բայց այնքան բնական էր բացատրութիւնը. չէ՞ որ պատանեկան հրապուրանքը միշտ էլ թանկագին է մնում, առաւել եւս, երբ հոգեկան ապաստան է դարձել պատանու ներաշխարհը տակնուվրայ անող արհաւիրքի ժամանակ: Իսկ Զէյն Օսթինը՝ ինքնատիպ կին գրող, որ ապրել է տասնութերորդ դարի

վերջում եւ տասնիններորդի սկզբում, անգլիական գրականութեան ականաւոր դէմքերից է իր կենցաղային-հոգեբանական վէպերով, որոնց մէջ իրոնիկ հայեացքով ու վառ պատկերուած են յատկապէս գաւառական ազնուականութեան բարքերը:

Կիւրինցու աղջիկ է ուրեմն: Փոքր Հայքում էր Կիւրին գիւղաքաղաքը՝ Սեբաստիայի վիլայէթում: Բերրի ու դալարագեղ մի գաւառակ, ինչպէս լսել եմ վերապրողներից: Էր: Անցեալ ժամանակով ենք մտածում ականայ, որովհետեւ այդ գաւառակի հայութիւնն էլ բնաջնջուեց, թէպէտ Կիւրինը, անշուշտ, հիմա էլ կայ: Կիւրինցի էր հայրենադարձ նկարիչ Յարութիւն Կալենցը, որ տխուր, բարկացկոտ աչքեր ունէր, բայց գարնանային մաքուր, պայծառ, սիրտ ուրախացնող դոյներով էր տեսնում աշխարհը: Կիւրինցի է բանաստեղծ ու գրող Վահէ-Վահեանը, որ ժամանակին հայոց լեզուի եւ դրականութեան իմ ուսուցիչն է եղել: Կիւրինցի է նաեւ Անդրանիկ Ծառուկեանը, որ «Մանկութիւն չունեցող մարդիկ» սարսուզով գիրքը դրեց՝ փրկուած որբերի իրենց սերնդի մասին: Կալենցը մահացաւ մօտ քսան տարի առաջ. Երեւանում: Վահէ-Վահեանը նոր դժոխք դարձած Պէյրութում է ապրում այժմ, իսկ Ծառուկեանը՝ Փարիզում, երկուսն էլ իրենց կեանքի ութերորդ տասնամեակում են արդէն:

Տայանա Պրաունը լարուած լսում էր այս բոլորը, եւ իր ոչ-հայկական մոխրագոյն աչքերում կար տրտում մի ջերմութիւն, թախծոտ մի լոյս, որ աղաչանքի էր նման եւ խորապէս հայկական մի բան ունէր իր մէջ:

- Բայց գիտէ՞ք,- ասացի,- հէնց այս օրերիս Վահէ- Վահեանն էլ այստեղ է՝ «Արմենիա» հիւրանոցում: Լաւ կը լինէր հանդիպէիք նրան, դուցէ ազգական գտնէք:

- Իսկապէ՞ս,- ուրախացաւ նա յանկարծ: -Ես էլ նոյն հիւրանոցում եմ, կը հանդիպեմ անպայման:

Եւ ծոցատետրում աշխոյժ-աշխոյժ դրեց անուն-ազգանուն, հիւրանոցի համար, հեռախօս: Ինչո՞ւ չէ, դուցէ իրօք տեղի ունենայ եւս մէկը այն անթիւ-անհամար հանդիպումներից, որով աշխարհի չորս ծագերից եկած հայեր յանկարծ վերագտնում են իրար հէնց «Արմենիա» հիւրանոցում՝ աշխարհագրութիւն դարձած հայոց պատմութեան այդ յուրօրինակ կիզակէտում: Հանդիպումներ, որոնք ամենաոտոմանթիկ վէպում անգամ պիտի աւելի քան անհաւանական թուային:

- Սա ինձ համար կարեւոր է,- ասաց նա: - Տարիներ առաջ ես սկսել եմ որոնել իմ հայկական արմատները: Եւ դիտէ՞ք, ինչ-

քան խորանում էի, այնքան ինձ անհանդիստ էի զգում Ամերիկայում: Գնացի ծննդավայրս՝ Լոնդոն, ու այնտեղ էլ հողիս անհանգիստ էր: Հիմա ահա եկել եմ Հայաստան, թէկուզ կարճ այցելութեամբ: Եւ այստեղ էլ անհանդիստ եմ, որովհետեւ շուրջս հայեր են ամէն կողմ, իսկ ես լեզուն չգիտեմ, լսում եմ հայերէնը, ականջ եմ դնում եւ ոչինչ չեմ հասկանում: Բայց ոտքերս արդէն հանգիստ են քայլում այս հողի վրայ...

Ու ինձ նուիրեց իր մեքենագիր մի գրուածքը, մօտ յիսուն էջ, խնդրելով, որ կարդամ, եթէ ազատ ժամանակ ունենամ: Տխողոսաթերթի վրայ խորագիրը՝ «Վերաքննուած ժառանգութիւն»: Վերելում՝ «Գալիֆորնիայի պետական համալսարան»: Ներքեւում հեղինակի անունը, ֆակուլտէտը եւ 1975 թուականը: Ի՞նչ է սա տիպլոմային աշխատա՞նք, ռեֆերա՞տ, դիսերտացիա՞:

- Նման մի բան,- ասաց: -Ես ուչ եմ համալսարան գնացել: Ու դրել եմ այնտեղ: Բայց ինքս ինձ համար եմ դրել, խորհրդատուի օղնութեամբ: Մի խօսքով, ինչպէ՞ս ասեմ, ուսումնասիրութիւն է սեփական հոգու պահանջով, սեփական հոգու համար...

Նոյն երեկոյ, անհամբեր հետաքրքրութեամբ, կարդացի այդ զարմանալի վաւերաթուղթը, որ սկսում է այսպէս.

«Երբ առաջին անգամ հեռանում էի տնից՝ ինքնուրոյն ճամբորդութիւն կատարելու, հօրս միակ խորհուրդը, որ տուեց ինձ, այս էր. «Եթէ որեւէ տեղ օտարութեան մէջ կարիք ունենաս օգնութեան կամ բարեկամի, բաց արա տեղի հեռախօսադիրքը եւ փնտիր հայի ազգանուն»: Երիտասարդական յանդուգն ինքնավստահութեանը ապաւինելով՝ երբեք չհետեւեցի այս խորհրդին: Թէպէտ հայրս հայ էր, ես ինձ բնաւ էլ հայ չէի զգում: Եւ, սակայն, երբ հայրս մահացաւ եօթ տարի առաջ, մի մեծ դատարկութեան զգացումից բացի ունեցայ նաեւ այն գիտակցութիւնը, թէ մեռել էր իմ մի մասը, որ երբեք չէի ճանաչել կամ հասկացել իսկապէս: ...Ես շատ էի սիրում հօրս, բայց գրեթէ ջանք չէի արել որեւէ բան իմանալու այն երկրի կամ ժողովրդի մասին, որին նա պատկանում էր: Եւ ահա հիմա սկսում եմ ուշացած մի հետազօտութեամբ քննել իմ հօրենական ժառանգութիւնը՝ փորձելով ուրուագծել իմ ինքնութեան այն կողմը, որ հայ է, բնութագրել այն բնորոշ գծերը, իւրայատկութիւնները, առաքինութիւններն ու թերութիւնները փաստօրէն այն էութիւնը, որ կազմում է հայ մարդուն՝ հայրենագուրկ հայրենակցին, որ մերժել է ձուլուել կամ ոչնչացուել»:

Նա նկարագրում է իր հօրը՝ կարճահասակ, հաստիկ, սեւ

զանգուր մագերով, խոշոր արտայայտիչ աչքերով, բոցավառ բնա-  
 տրութեամբ մի հայ, որ չէր հանդուրժում անգլիական շրջապատի  
 սնորհիզմն ու սառնարին վերաբերմունքը, չէր սիրում ուրիշի հա-  
 մար աշխատել եւ անընդհատ տեղից տեղ էր փոխադրուում ըն-  
 տանեօք՝ «ոսկեգեղմը փնտռելով»: Եւ իր դուստր Տայանան էլ  
 փոխադրուելով դպրոցից դպրոց՝ ամէն անգամ իր դասընկերներին  
 պէտք է բացատրէր, թէ որտեղից է իր այդ տարօրինակ ազգա-  
 նունը՝ Մակարեան, որ լաւագոյն դէպքում ընկալում էին որպէս  
 շոտլանդական, երբ չեշտում էր առաջին «մակ» վանկը: Իսկ թէ  
 կայ Հայաստան կոչուող մի երկիր, որտեղից եկել է իր հայրը, ոչ մի  
 կերպ չէին հասկանում. ի՞նչ երկիր է, որտե՞ղ է դտնուում այդ եր-  
 կիրը: Փառք Աստծոյ, ինքը անդուհու նման էր դէմքով, եւ դա յա-  
 ճախ փրկում էր իրեն այդ հարցապնդումներից, իսկ իր երկու աւագ  
 քոյրերը ժառանգել էին նաեւ իրենց հօր սեւ մագերն ու աչքերը...

Բայց իրօք,- հարց է տալիս հասուն տարիքում արդէն,- ի՞նչ  
 են Հայաստանն ու հայր այս աշխարհում: Եւ ահա սկսում է պար-  
 զել այդ առեղծուածն իրեն համար՝ դիմելով զանազան գրքերի,  
 շփուելով հայերի հետ ու դիտելով նրանց կենցաղն ու բարքերը  
 Գալիֆորնիայում, ուր ընտանեօք տեղափոխուել էին պատերազ-  
 մից յետոյ: Գրողին յատուկ հայեացքով, իր կուռ էջերում, փոր-  
 ձում է ընդգրկել գրեթէ ամէն ինչ՝ Հայաստանի աշխարհադրու-  
 թիւն, պատմութիւն, դիւցազնավէպեր, լեզու, դիր ու դրականու-  
 թիւն, եկեղեցի, մշակութային այլ դործօններ, հայկական  
 խառնուածք ու բնաւորութիւն, եւ աշխատում է իմաստաւորել  
 այդ բոլորը, անելով մէջբերումներ գրքերից, ոգեկոչելով անձնա-  
 կան յիշատակներ, ծանօթ հայերի պատմած նշանակալից  
 դիպուածներ՝ կարճ ու դիպուկ խորհրդածելով: Ուշագրաւ է, որ  
 ամէնից աւելի է յուզում իրեն, որովհետեւ... «կարծում եմ՝ հայ  
 լինելու իմ ամենատեւական տպաւորութիւնը գալիս էր այն փաս-  
 տից (ու չեմ յիշում ոեւէ մէկն ինձ ասած լինի դրա մասին, թւում  
 էր՝ միշտ էլ դիտէի), թէ իմ հօր ամբողջ ընտանիքը՝ հայրը, մայրը,  
 վեց եղբայրները, բոլորը, բացի մի քրոջից, որին յետադայում գտել  
 է Պոլսի որբանոցում, կոտորուել են թուրքերի կողմից»: Որքան  
 ճիշտ ու նուրբ է դիտուած: Հոգեբանական ճշմարտութիւն, որ յա-  
 տուկ էր ցեղասպանութիւնից յետոյ ծնուած սերնդի բոլոր հայերին:  
 Եւ գուցէ մանաւանդ՝ «օտար ամուսնութեան զաւակին», ինչպէս  
 նա կոչում է իրեն, որի ճակատագիրն առաւել եւս բարդ էր...

Ահա թէ ինչպէս է աւարտում նա իր այս յուզիչ վաւերա-  
 թուղթը.

«Հայերն ունեն «արիւնը քաշում է» արտայայտութիւնը,  
 այսինքն՝ հայերի մէջ ուժեղ ձգտում կայ իրար գտնելու, իրար մօտ  
 հաւաքուելու: Վստահ եմ՝ արեան այդ կանչն էր, որ ինձ համար  
 մղիչ ուժ եղաւ հօրենական ժառանգութիւնս որոնելու: Ինձ խորա-  
 պէս յուզեց այն ամէնը, որ լսեցի ու կարդացի: Հայրենի տուն վե-  
 րադառնալու մի զգացում ունեմ հիմա, զգացում, որ վստահ եմ՝  
 հայրս կ'ողջունէր ու կը հասկանար: Եթէ ընկնէի հիմա մի օտար քա-  
 ղաք եւ կարիք ունենայի օղնութեան կամ բարեկամի, հեռախօ-  
 սագրքում հայի ազգանուն կը փնտռէի իսկապէս եւ զանգ կը տայի»:

Իրօք որ «գիտերտացիա» սեփական հոգու պահանջով, սե-  
 փական հոգու համար: Այս բոլորով հանդերձ, սակայն, զգաստ  
 լինենք ու չմոռանանք, որ նա անդուհու զաւակ է նաեւ, ու աւե-  
 լին՝ իր անգլիական ծննդավայրից, որ իր մայրենի երկիրն է,  
 ստացել է կեանքի սկզբնական տպաւորութիւնները: Իսկ դրանք,  
 մանկութիւնից ձեռք բերուած լեզուամտածողութեան հետ, միշտ  
 էլ էական հիմք են դառնում մարդու հոգեկան կերտուածքի  
 համար: Սրանով աւելի բարդ ու վերլուծման կարօտ երեւոյթ է  
 դառնում նրա պարագան, մանաւանդ «հայրենի տուն վերադառ-  
 նալու» այդ զգացումը: Իր անգլիական կողմի ցայտուն վկայու-  
 թիւնն են իր վէպերը, եւ ուշագրաւ է, որ դրանք դրել է իր հայ-  
 կական կողմը այդպէս վերաքննելուց յետոյ, իրար յետեւից, նա-  
 խանձելի բեղունութեամբ:

Մեր ծանօթութեան օրերին, մէկդի թողնելով ամէն գործ,  
 գիշերը խառնելով ցերեկին, բացի մեր հանդիպման ժամերից,  
 կարդացի այդ վէպերից երկուսը: Բայց դա իսկական «գործ» էր  
 ինձ համար, մանաւանդ նրա այն «Վերաքննուած ժառանգու-  
 թիւնը» կարդալուց յետոյ. հոգու գործ, որով աշխատում էի գէթ  
 որոշ չափով հասկանալ նրա բարդ պարագան, իսկ դա նշանա-  
 կում էր դիտել մարդկային հոգեբանութեան լաբիրինթոսում մի  
 անկիւն, ուր եւս մի տարօրինակ հանգոյց էր կապել հայոց ճակա-  
 տագրի բազմահանգոյց ցանցը:

Այդ վէպերը կլանեցին ինձ որպէս ընթերցողի: Եւ դա գե-  
 դարուեստական արժէքի առաջին գրաւականն է արդէն: Այո,  
 կարելի է ասել՝ ողմանթիկ վէպեր են իրենց սիւժէով, որի գլխա-  
 ւոր գիծը սիրոյ պատմութիւն է, հիմնականում՝ գժուար ճակա-  
 տագրով հերոսուհու պատմութիւն: Վառ ու ճշմարիտ են պատ-  
 կերուած կերպարները, միջավայրը, հոգեվիճակի նրբութիւնները,  
 կայ սոցիալական կենդանի ենթահող, որ հեղինակն ուսումնասի-  
 րել է հանդամանօրէն ու օգտագործում է հմտօրէն: Նա տաղան-

դաւոր վիպող է եւ իր խնդիրն ու խոհը առաջ է տանում գեղարուեստական միջոցներով, պատումի մէջ: Մի խօսքով, կարծես զուտ պատմավէպեր էլ չեն ըստ էութեան, այլ աւելի՛ սոցիալական խորքով հոգեբանական ոտմանթիկ վէպեր, որոնց գործողութեան միջավայրը, ինչպէս ասացի արդէն, տասնիններորդ դարասկզբի Անգլիտն է: Միայն վերջին, վեցերորդ՝ «Կնոջ ձեռք» խորագրուած վէպում, որ լոյս է տեսել նախանցեալ տարի, գործողութիւնը տեղի է ունենում տասնիններորդ դարի երկրորդ կէսի Ամերիկայում: Ես առիթ ունեցայ կարդալու այս վերջինը, իսկ նախորդներից՝ «Արի եղիր իմ սէրը» վէպը:

Նպատակս գրական վերլուծութիւնը չէ այստեղ: Ինձ հետաքրքրեցին ուրիշ հարցեր: Նախ եւ առաջ, ի՞նչն է մղել հեղինակին՝ մեր այս տենդազին դարում այդպիսի վէպեր դրել: Պատասխանը եկաւ ինքնիրեն, երբ յիշեցի իր ասածը, թէ Ձէյն Օսթինի վէպերում հոգեկան ապաստան է գտել Լոնդոնի ոմբակոծութեան օրերին, պատանի հասակում: Արդեօք նա շարունակե՞լ է այդ հոգեկան ապաստանում մնալ, այսինքն՝ որոշ իմաստով, գէյնօսութիւնեան աշխարհում, որ յիշեցնում են իր վէպերն իրենց ժամանակաշրջանով ու միջավայրով: Արդեօք դա «էսքէյփիզմ» չէ՞ մեր դարի տազնապաններից (անգլերէն էսքէյփ՝ փախչել, փախուստ տալ): Երբ հարցս ու պատասխանս յայտնեցի իրեն, իսկոյն համաձայն եղաւ:

- Բայց դիտէ՞ք, - աւելացրեց, - ես փիլիսոփայ չեմ, պատմութիւն պատմող եմ միայն: Ուզում եմ գեղարուեստական հաճոյք պատճառել իմ ընթերցողներին, եւ այդքան: Գուցէ նաեւ անարդարաւած կանանց դատը պաշտպանել: Փիլիսոփայութիւնն իմ բանը չէ:

Ուզում էի առարկել, որ թերադնահատում է իր ստեղծագործութեան ներքին արժէքը, դուցէ ինքն իրենից էլ թաքցնում է մի կարեւոր բան, որ կայ իր վէպերի խորքում՝ թերեւս նոյնիսկ անկախ իր կամքից, միայն «պատմութիւն պատմելու» իր ձգտումից: Բայց չչարունակեցի այդ խօսակցութիւնը տուեալ պահին, որովհետեւ ինքս էլ դեռ պէտք է այդ կարեւոր բանը յստակացնէի, իմաստաւորէի ինձ համար:

Երեւանեան պայծառ, շոգ օր էր, քայլել էինք կողմնակի փողոցներով, մայթերի հաճելի ստուերով, հասել Խնկօ-Ապօր անուան հանրապետական մանկական գրադարանի առաջ: Նա գրադարանադէտ է մասնադիտութեամբ, ցանկացել էր հէնց այդ գրադարանը այցելել: Մուտքի մօտ առաջարկեց մի քիչ նստել սրբատաշ բազալտի վրայ, որ ստուերում էլ դեռ պահել էր արեւից ծածծ ջերմութիւնը: Զրոյցի նիւթը փոխեցի.

- Անցեալ օր ասացիք, որ ձեր ոտքերն արդէն հանգիստ են քայլում այս հողի վրայ: Գեղեցիկ հնչեց: Բանաստեղծական փոխարարերութեան նման: Բայց ես կ'ուզէի իմանալ, թէ...

- Հասկացայ,- ժպտաց նա: -Ձէ, դա գեղեցիկ խօսք չէր միայն: Ճշմարիտ զգացում է: Գժուար է բացատրել: Զարմանալի բաներ են կատարուում իմ մէջ այս օրերին: - Լոնց մի պահ, մտածկոտ:- Գիտէ՞ք, այդ զգացումը յատկապէս սրուեց Խոր Վիրապ գնալուց յետոյ: Սիրտ արեցի, իջայ մինչեւ Վիրապի խորքը: Երբ դուրս էի դալիս, թուաց՝ պատմութեան խորքերից եմ բարձրանում: Իսկ յետոյ՝ արեւ, լոյս: Հրաշալի էր դէպի արեւ դուրս դալը: Զդիտեմ՝ որքանով է Գրիգոր Լուսաւորչի մասին այդ պատմութիւնը առասպել կամ ճշմարտութիւն, բայց ես դրա մէջ աւելի մեծ իմաստ եմ զգում:

Եւ խօսեցինք այն մասին, թէ դա դուցէ այն առասպելացած պատմութիւններից է, որոնց մէջ խորհրդանշացած ձեւով արտայայտուում է այս կամ այն ժողովրդի պատմական ճակատագիրը: Ձէ՞ որ հայ ժողովուրդը դարերի ընթացքում յաճախ պայքարել է խորվիրապային վիճակներում եւ դուրս եկել դէպի կեանքի լոյսը, դոյատեւել: Ու աննկատելիօրէն անցանք հէնց «փիլիսոփայական» հարցերի. մարդկային կեցութեան իմաստն այս աշխարհում...

Գրադարանում մնացինք երկու ժամ: Մի աշխատակցուհի սահուն անդլերէնով բացատրութիւններ էր տալիս: Մեր օտար լեզուների ինստիտուտն աւարտած մի երիտասարդ, համակրելի հայուհի: Երեւաց, որ դա հաճելի անակնկալ էր Տայանա Պրաունի համար: Ի դէպ, նաեւ ինձ համար: Նա լսում էր աշխոյժ հետաքրքրութեամբ, հարցեր տալով, նոթեր առնելով: Անցնում էինք յարկից յարկ, գեղեցիկ ձեւաւորուած սրահներով, ծանօթանալով գործի դիտական գրուածքին եւ դաստիարակչական նպատակադրմանը: Մասնագէտի աչքերով նայում էր ամէն ինչի, ու դէմքին պայծառութիւն կար: Օտար լեզուների բաժնում բաւական երկար զրուցեց անդլերէն ընթերցող մի պատանեակի հետ: Ի վերջոյ ասաց, որ ուրախութեամբ գրելու է այս գրադարանի մասին, որի նմանը, իբրեւ մանկական գրադարան, ուրիշ տեղ չի տեսել: Ինչ մեղքս թաքցնեմ, ինձ համար լրիւ նորութիւն էր այս վերջին ասածը: Եւ միա՞յն ինձ համար, արդեօք: Բայց նրա դէմքին ոչ մի աւելորդ ոգեւորութիւն չկար, հաճոյախօսութիւն չէր անում, զուտ մասնագիտական խօսակցութիւն էր նրա եւ գրադարանի աշխատակցուհու միջեւ: Վերջինիս պատասխանից էլ իմացայ, որ օտար այցելուները յաճախ են նոյնը ասում: Երբեմն, երեւի, կարիք

ունենք դրսի հայեացքին, որպէսզի աւելի լաւ ճանաչենք մեր արժէքները, առհասարակ ինքներս մեզ, մա՛նաւանդ ոչ-հեռաւոր անցեալի մեր օրհասական ողբերգութիւնից յետոյ: Իսկ այս «դրսի հայեացքը» օտար էլ չէր ըստ էութեան, իր հետ բերել էր «հայրենի տուն վերադառնալու» գղացումը, հող չէ թէ հողբրանական բարդոյթով հանդերձ...

Այդ երեկոյ, մինչեւ ուշ գիշեր, շարունակեցի կարդալ ու աւարտեցի «Կնոջ ձեռք» վէպը: Նոյնիսկ աւելի կլանուած էի, քան նախորդ օրերին, որովհետեւ կարդում էի ցնցող էջեր՝ դեղին տենդի մահասփիւռ համաճարակը 1878ին Մէմֆիս քաղաքում, Միսիսիպի դետի ափին, եւ օգնութեան եկած գլխաւոր հերոսուհու միանձնուհի եւ բժշկուհի Քոյր Սիրինի ապրումները ի տես այդ ահաւոր աղէտի: Շատ դժբախտութիւններ է կրել երիտասարդ միանձնուհին իր անձնական կեանքում: Եւ իր հաւատքը չի խախտուել: Բայց ահա խախտում է արդէն՝ անիմաստ տառապանքի եւ մահուան այդ դժոխքում: Տարակոյսն սկսում է կրծել իր հաւատքը «այնպէս անողորքէն, այնպէս նողկանք ազդելով, ինչպէս առնէտների ատամները կրծում էին մեռած ու մեռնող մարմինները»: Նա յիշում է աստուածաշնչական Յոբին, եւ սիրտը չի հաշտուում այն պատասխանի հետ, որ Աստուած տուել էր այդ բողոքող տառապեալին: «Ինչպէ՞ս Աստուած համարձակուել է թոյլ տալ այս չարիքը», - մտածում է միանձնուհին բարկութեամբ: Ու նրա տարակուսանքը խորանում է, խորանում. «Առանց Աստծոյ անիմաստ է աշխարհը, բայց նայել չուրջը եւ հաւատալ, որ կայ մի բարի ու սիրող Աստուած, եւ որ նա հանդուրժում է այն, ինչ կատարւում է, աւելի եւս անիմաստ է»:

Կարդում էի ու հեղինակի կենդանի ձայնը լսում շարունակ: Յիշում էի ցեղասպանութեան մասին էջերն իր «Վերաքննուած ժառանգութիւն» գրուածքում եւ մա՛նաւանդ այն տողերը, ուր ասում էր, թէ հայ լինելու իր ամենատեւական տպաւորութիւնը գալիս է հօր ամբողջ ընտանիքի կոտորուած լինելու իրողութիւնից: Ձէ, այնուամենայնիւ, նա լիակատար փախուստ չի տուել, առերեւոյթ է միայն մնացել գէյնօսութիւնեան աշխարհում՝ իր այն «հոգեկան ապաստանում»: Ձէյն Օսթինը գտարիւն անգլուհի է, նրա վէպերը լի են կծու իրոնիայով: Իսկ Տայանա Պրաուն-Մակարեանի պատմական վէպերում, ուր արտաքուստ, անշուշտ, հայկական ոչինչ չկայ ու չէր կարող լինել, կայ աւելի նուրբ եւ վշտագին իրոնիա՝ խոր մարդկայնութեամբ ու չվհատուող կենսասիրութեամբ ջերմացած, որի խորքում, անկասկած, թաքնուած

է հայ լինելու իր այն «ամենատեւական տպաւորութիւնից» բխող բարդ, գուցէ նոյնիսկ լրիւ չգիտակցուած կենսափիլիսոփայութիւնը:

- Արարատը ամենահայկական բնանկարն է եւ դժուար թեմա է նկարելու համար՝ գեղանկարչական առումով,- ասում էր յաջորդ օրը Յակոբ Յակոբեանն իր արուեստանոցում, երբ իր եգիպտական շրջանի նկարները դիտելուց յետոյ անցանք իր հայկական շրջանին, եւ նա ցոյց էր տալիս երեք կտաւ Արարատով, մի փոքր մասը այն բազմաթիւ կտաւներից, որոնց մէջ նա անխոնջ ձգտում է յաղթահարել այդ թեմայի գեղանկարչական դժուարութիւնը եւ, ըստ իս, յաջողում է պատկերել հայոց սրբազան լեռը այնպէս կենդանի ու խօսուն, այնպէս վեհօրէն մտերիմ, ինչպէս ընկալում ենք իրականութեան մէջ, զգալով նրա մշտական ներկայութիւնը, որ «անմատչելի հեռաւոր եւ անընդմիջելի մերձաւոր» է՝ Նարեկացու մի արտայայտութեամբ ասած:

- Եւ ընդհանրապէս Արարատը դժուար է,- արձագանգեց Տայանա Պրաունը: -Մա՛նաւանդ, երբ լսում ես նրա կանչը եւ ուղեւորւում ուխտաւորի նման: Կարդացե՛ւ էք Կրտսեր Մայքլ Արլէնի գիրքը: Հէնց կոչւում է «Ուղեւորութիւն դէպի Արարատ»: Նա ու ես նոյն ճակատագրի մարդիկ ենք: Ու մեր հայրերն էլ ժամանակին իրար ծանօթ են եղել Լոնդոնում:

- Նոյն ճակատագրի մարդ է նաեւ Ալան Յովհաննէսը,- աւելացրի:

- Նա՞ էլ օտար ամուսնութեան զաւակ է:

- Մայրը շոտլանդուհի է եղել: Նա էլ ուշ է զգացել «կանչը»: Եւ նա էլ «ուղեւորուել» է: Գրել է հայկական խորագրերով շատ երկեր, ընդ որում նաեւ «Արարատ» սիմֆոնիան...

Յայտնեցի նրան երէկ իրիկուայ իմ մտորումներն իր վէպը կարդալիս: Նրա մոխրագոյն աչքերում դարձեալ երեւաց այն թախծոտ լոյսը, որ աղաչանքի էր նման:

- Իսկ դուք ասում էիք՝ փիլիսոփայ չէք,- յիշեցրի ժպտալով:

- Խոստովանեմ,- ասաց,- այդ վէպում Քոյր Սիրինի ապրումներն ու տարակուսանքը իմ սեփական հոգու փորձառութիւնից են:

Կարիք չունէր աւելացնելու, ես էլ կարիք չունէի այլեւս հարցնելու, թէ այդ փորձառութեան մէջ ինչ դեր է ունեցել իր հօրենական ժառանգութեան վերաքննումը...

- Ի դէպ,- վրայ բերեց նա յանկարծ,- հիւրանոցում զանգ տուեցի պարոն Վահէ-Վահեանին եւ հանդիպեցինք: Դա գիւտ էր ինձ համար, դէպք էր իմ կեանքում: Շատ բան իմացայ Կիւրինում



մեր Մակարեանների գերդաստանի մասին: Ու նաեւ պարզուեց, որ իմ եւ նրա գերդաստանները խնամի են եղել:

Լոեց մի վայրկեան, յետոյ աւելացրեց.

- Այդ կորսուած աշխարհում...

Եւ դարձեալ լռութիւն տիրեց մի պահ:

- Իսկ վիպասանը կարող է վերակենդանացնել այդ աշխարհը,- յուշեցի զդուշորէն: -Մա՛նաւանդ պատմավիպասանը:

- Շատ դժուար խնդիր ինձ համար,- ասաց նա: - Գոնէ առայժմ...

Անկասկած դժուար խնդիր է նրա համար: Նոյնիսկ պատկերացնում եմ, որ հոգու խորքում նա աւելի անհանգիստ է հիմա՝ Հայաստան այցելելուց յետոյ, թէպէտ հաւատում եմ, որ իր ոտքերն իրօք հանգիստ էին քայլում այս հողի վրայ: Աւելի անհանգիստ է հէնց այն պատճառով, որ դարերի անմիջական զգացողութիւնն ունեցաւ այս հողից: Հօրենական ժառանգութեան բուն արմատներին մօտեցաւ: Աշխարհի հեռախօսադրքում գտաւ բուն հայկական Ազգանունը: Եւ իր մէջ պարտաւորուածութեան մի զգացում ծանրացաւ: Արմատների, դարերի հանդէպ պարտաւորուածութեան իր այնքան սիրած հօր հանդէպ: Գուցէ նոյնիսկ զղջումի նման մի զգացում կայ հիմա իր մէջ՝ թաքուն. թէ ինչո՞ւ եկաւ, իջաւ մինչեւ Խոր Վիրապի խորքը: Ուզում էի հասկանալ «օտար ամուսնութեան» զաւակների այս բարդոյթը, բայց հասկացա՞յ արդեօք: Չդիտեմ: Դժուար է հայ լինելը այս աշխարհում: Ինչո՞ւ են նրանք դժուարացնում իրենց կեանքը հայութեան վերադառնալու, հայ լինելու ձգտումով, մա՛նաւանդ, երբ յաջողութեան են հասել իրենց միւս կողմով: Երեւի ո՛չ միայն հայութեան խնդիր է այստեղ, այլեւ՝ աւելի խոր մի բան, որ պէտք է փնտռել առհասարակ մարդկային հոգու ծալքերում:

Այս մտքերն էին պտտւում իմ մէջ, երբ հիւրանոցի առաջ հրաժեշտ էինք տալիս իրար: Եւ ակամայ բերանիցս թռաւ հայերէն.

- Է՛հ, շատացաւ հոգուդ բեռը, քո՛յրս:

Նա հարցական մի ժպիտով նայեց ինձ: Ասածս թարգմանեցի անդլերէն, ինքս էլ ժպտալով, բայց նաեւ տարակուսելով, թէ արդեօք անդլերէն բառերը հաղորդե՞ցին այն երանգը, որ կար հայերէն այդ բառերում: Բայց ինձ թուաց, որ «քոյր» բառը հասկացել էր հայերէն. անուշ էր այն ժպիտը, որով հարցական նայեց: («Հայրենիքի ձայն», 1987, թիւ 4):

Երեւան

ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԷՆԵԱՆ



### ՄԵԾ ԲԱՅԱԿԱՆ...

«Բագին»-ն նախորդ համարին մէջ, անկատար մնացած պարտականութիւններու առիթով, ուրուագրած էինք մեր խղճին ծանրացող ցաւը, Սփիւռքի թէ Հայաստանի գրականութեան արձանագրած կորուստներուն ի յուշ:

Սփիւռքի գրականութեան պարագային՝ նոյն ցաւը մենք խոր զգացինք մա՛նաւանդ Վահէ Օշականի կորուստին առիթով, իր նուաճած արժէքներուն հետ՝ այս բեմին հանդէպ իր հաւատարմութեան զոյգ պատճառներով: Աններելի մեղք կ'ըլլայ, եթէ ըսենք կամ ըսուի, որ պատճառը անտարբերութիւնն էր, ընդհակառակն, ծրագրուած էր իր յիշատակը ոգեկոչել աւելի ընդարձակ ծաւալի մը վրայ եւ հաշուի առնել իր տարբեր կողմերուն բոլոր լոյսերը, որ սակայն, ցաւ ի սիրտ, բոլորովին կամքէ անկախ պատճառներով անկարելի եղաւ մարմին տալ մեր կազմած ծրագրին: Եւ որովհետեւ այսօր առաւել եւս դժուար է մեզի նման գործ մը իր արժանաւոր լրումին հասցնել, յաջորդող էջերուն մէկ մասը պիտի յատկացնենք իրեն, յայտնելով նաեւ, որ «Բագին»-ի հետագայ թիւերէն իւրաքանչիւրին մէջ պիտի թարմացնենք իրենց աժմութիւնը պահած իր գրութիւններէն մէկը կամ միւսը, որոնց առընթեր առանձին վկայութիւններ պիտի տրուին իր գրականութեան նուիրուած գրութիւններէն:

Մեծ բացակայ մը ստեղծուած է Սփիւռքի գրականութեան մէջ եւ վերջին բացակայներուն մէջ իր բացակայութիւնը ամենէն աւելի զգացնողը անտարակոյս ինքն էր, Վահէ Օշական, որ ստեղծագործական, քննադատական թէ հրապարակագրական մարզերուն մէջ միշտ զգացուց իր ներկայութիւնը, Սփիւռքի այս դժնդակ ափերէն մինչեւ Արարատի փեշերը, մինչեւ Արցախ, միշտ նոր ըսելիք մը ունեցող մտաւորականի մը պէս, ու միշտ քաղաքացիական քաջութեամբ...

Աւելի անդին, ընթերցողը պիտի հանդիպի հայրենի մտաւորական դասուն ուժեղ տիպարներէն Լեւոն Ներսիսեանի կորուստը դրուագող սրտառուչ էջի մը, որ ստորագրուած է նոյնպէս՝ հայրենի բացառիկ բանաստեղծ-մտաւորականներէն Հենրիկ Էդոյեանի կողմէ:



Պ. Սնապեան

**ԽՕՍՔ՝ ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ**

*Ուղիղ յիսուն տարի առաջ, Վահէ Օշական ստորագրութեամբ, Գահիրէի «Յուսարբեր» ամսագրին 1945 տարւոյն սեպտեմբերեան Համարին մէջ սկսած ու յաջորդ ամսոյն աւարտած ութ էջոց պատմուածք մը երեւցաւ, խորագիրը՝ «Պիրատեր Յակոբ», որուն կ'ընկերանար խմբագրական Հետեւեալ նոթը.*

*«Այս է այն պատմուածքը, որ Բ. մրցանակ շահեցաւ (10 եգոսկի): Վահէ Օշական անդրանիկ մանչ գաւակն է մեր աշխատակից տաղանդաւոր գրագետ Յակոբ Օշականի»:*

*Մեր ծանօթութեան սահմաններուն մէջ, Վահէ Օշականի դրական կենսագրութիւնը կը սկսի այս պատմուածքով:*

*Տարի մը ետք, 1946ին, Վահէ Օշական Պաղեստինէն անցաւ Փարիզ եւ երեւի քանի մը տպաւորութիւն ստորագրեց Լուսոյ քաղաքի թերթերուն մէջ, որոնց ի տես Հայրը, Յակոբ Օշական, պաղտատաբնակ իր աշակերտներէն Ասքանազ Վարդանեանի ուղղուած 17 Մարտ 1947 թուակիր նամակի մը մէջ կը գրէր.*

*«Շատ պիտի ուզէի, որ խոստումդ յարգես՝ Օշական կարդալու: Պիտի գորանաս. հպարտանաս ու օրին մէկն ալ թերեւս փորձուիս գրելու: ...Վահէն, տղաս, առանց իմ արտօնութեան, «Մնացորդաց» կարդալով գրող եղաւ»:*

*Մենք չենք կարծեր, որ Հօրենական փառասիրութիւն մըն է այս Հաստատումին մղիչ ուժը: Քաջ դիտենք, որ Օշական դէմ էր, որ իրենց տոհմէն երկրորդ անձ մը նետուի դրական արկածախնդրութեան մէջ, ա'յն պնդումով, որ իր՝ Օշականի խօսքն է դարձեալ, «Մէկ գրող մէկ ընտանիքի մէջ կը բաւէ ու կ'աւելնայ»:* *Կրնանք Հետեւաբար եզրակացնել, որ ո'չ թէ Հօրը Հօրենական տկարութիւնն էր որդին գրող գաւանելու փաստին աղբիւրը, այլ որդւոյն յայտնաբերած գորութիւնը:*

*Վահէ Օշական Փարիզ գնաց գրականէն տարբեր երազներ փայփայելով:*

*- «Երկրաչափ կ'ուզէի ըլլալ,- կ'ըսէ ինք տեղ մը,- սակայն*

շուտով տեսայ, թէ այդ գլուխը չունէի: Հակառակ իօրս անեծմներուն, մտայ գրականութեան համալսարանը»:

Ըսելու ձեւ մըն է հարկաւ «այդ գլուխը չունէի» արտայայտութիւնը: Փարիզ հասած օրերուն ու համալսարան մտնելու նախապատրաստական աշխատանքներէն առաջ, կամ ընթացքին, Վահէ Օշական հասկցած էր անշուշտ, որ գրական ասպարէզին մէջ նետուելու կոչ ըրած գլուխը աւելի դիւրին ճակատագիր մը չէր խոստանար իրեն, քան երկրաչափական ասպարէզին մէջ գործելու կանչուած գլուխը: Դիւրինը եւ դժուարը ինք չէր կրնար ճշդել հաւանաբար, որովհետեւ հարցը ասպարէզներէն մէկուն՝ ճարտարապետութեան համար գլուխ չունենալը չէ հոս, այլ միւսին՝ գրականութեան համար սի'րտ ունենալն էր, խառնուածքի մղում, ստեղծագործական տառապանքին հաճոյքը անդամ մը ճաշակած հոգիի մը հրամայականը: Հոս՝ հօրը անէծքն ալ որոշիչ դեր չէ կրցած կատարել իր ընտրութեան մէջ: Գրական խառնուածքի ենթակայ անձը, ընդհանրապէս, ո՛չ ուրիշ մարդերու մէջ գլուխ կը բարձրացնէ եւ ոչ ալ, երեւի, հօրը առջեւ գլուխ կը ծռէ, այլ կ'առնէ գլուխը ու կ'երթայ, ինչպէս ըրած է, փաստօրէն, Վահէ Օշական:

Այսպէս սկսաւ Վահէ Օշականի գրական կենսագրութիւնը, հետեւելով իր ներքին դելին ու կոնակ դարձնելով արտաքին բոլոր նկատումներուն ու ըմբոստանալով նոյնիսկ պաշտելի անձերու յորդորներուն դէմ:

\*  
\* \*

Իր անսովոր գրականութեան պէս, ունի նաեւ անսովոր կենսագրական մը Վահէ Օշական.-

Ծնունդը տեղի ունեցած է Պուլկարիա,  
Խմորումը՝ Կիպրոս,  
Կազմաւորումը՝ Պաղեստին,  
Տեսադաշտին ընդարձակումը՝ Փարիզ:

Յաջորդաբար այդ բովերէն անցնելէ ետք, ան կեանքը շարունակած է ապրիլ Լիբանան, Արեւելեան եւ Արեւմտեան Ամերիկաները, Աւստրալիա:

Յիշեալ միջավայրերը, անշուշտ, ունեցած են իրենց անդրադարձները իր գրականութեան վրայ, մթնոլորտի, նիւթի թէ տիպարներ ընտրելու բոլոր ազդակներուն մէջ:

Կամաւ ընտրուած երկիրներուն ու ակամայ կատարուած տեղափոխութիւններուն ընթացքին՝ Վահէ Օշական առաւել քան ուրիշ մը ճանչցաւ աշխարհասփիւռ հայութիւնը եւ աշխարհասփիւռ հայութեան հետ աշխարհի քաղաքակրթութիւնները, տարբեր մշակոյթները, հայութեան հետ այս կամ այն կապերով կապուած աշխարհի տարբեր ժողովուրդներուն զաւակները, որոնք բաւական տեղ գրաւած են իր էջերուն մէջ՝ տիպարային, միջավայրային, լեզուական թէ մտայնութեանց միջամտութեամբ առաւել եւս տեսանելի դարձնելով Սփիւռքի գրականութեան սփիւռքային նրբերանգները:

\*  
\* \*

Յիսունական թուականներէն ետք Սփիւռքի տարածքին ստեղծագործած եւ նոյն ասպարէզին մէջ իրենց կոչումին սպասարկող դէմքերուն մէջ, բաղադրեալ ածականը ամէնէն աւելի բնորոշիչ ըլլալ կը թուի Վահէ Օշականին:

- Գրական միջավայրերուն մէջ ծնածներուն ամենարատաւորը ինք եղաւ:

- Մշակոյթով՝ ամենահարուստը:
  - Լեզուներու իմացութեամբ՝ ամենաճոխը:
  - Փորձառութեամբ՝ ամենախորը:
  - Տեղափոխութիւններով՝ ամենափորձառուն:
  - Հետաքրքրութիւններով՝ ամենալայնը:
  - Ընդգրկումներով՝ ամենատարածունը:
  - Գաղափարներով՝ ամենայանդուզնը:
  - Ստեղծագործական կիրքով՝ ամենաաշխուժը:
  - Թշնամիներ շինելու առումով՝ ամենավարպետը:
- Արժանիքներու այս տասնաբանեային վրայ կարելի է ուրիշներ ալ աւելցնել եւ սխալած չենք ըլլար անտարակոյս:

Մեր թերթերէն ոմանք եւ անոնց անտէր սիւնակներուն հերոսանալու մարմաջէն տառապող թերաճ գրողներ, Վահէ Օշականի գրականութեան մասին ստորագրած իրենց յօդուածներուն մէջ պարտականութիւն կը համարեն մեղադրել մեր ժողովուրդը, որ իր նուաճած արժէքին համապատասխան գնահատանքով մը չէ արժեւորած Վահէ Օշականը եւ, ընդհանրապէս, զայն դիմաւորած է հին կանգուններով, ժամանակավրէպ արժեչափերով, եւայլն, եւայլն:

Վահէ Օշական, վստահ ենք, մարդկօրէն վիրաւորուած պիտի զգար ինքզինք, եթէ ընթերցողները անծանօթ մնացած ըլլային իր գրականութեան:

Եւ անպայման աւելի՛ պիտի վիրաւորուէր տեւական որոնումի մէջ եղող մտաւորականի իր խղճմտանքը, եթէ ուրիշ մարդիկ ամբողջութեամբ բաժնէին իր հաստատումները, մտածումները, դաւանած ճշմարտութիւնները:

Ուրիշ խօսքով՝ եթէ զգալու, դատելու, ծաւալելու, խորանալու, արժեւորելու ու արարելու իր կերպերուն կոյրկուրայն հետեւած ըլլար ամէն ոք, ընդդիմախօսներ չունենար, դժգոհներու սով ըլլար իր շուրջը:

Մնաց որ, աւելի պերճախօս է մետալին միւս երեսը:

Ու թող տարօրինակ չթուի, երբ ըսենք, որ ան նաեւ ամէնէն աւելի գնահատուած գրողն է իր սերունդին:

Յարգ ինը հատոր հրատարակած է Վահէ Օշական, որոնց կէսը լոյս ընծայած են մշակութային մեր հաստատութիւնները:

«Փախստականը» լոյս ընծայեց «Գէորդ Մելիտինեցի» դրական մրցանակին դատակազմը:

«Թակարդին շուրջը»՝ «Համազգային»ի Լոս Անճելըսի մասնաճիւղը:

«Քառուղին»՝ դարձեալ «Համազգային»ը:

Իսկ երէկ տպարանէն դուրս եկած եւ այսօր ընթերցողին մատուցուած «Սերունդներ»ը նորէն «Համազգային»ի հովանաւորութեամբ լոյս տեսաւ:

Ասկէ զատ, ան արժանացած է մրցանակներու:

Եղած են թերթեր, որոնք բացառիկ համարներ նուիրած են իրեն:

Ուրիշներ՝ թերթեր ու հանդէսներ պատիւ համարած են իր գրութիւններով բանալու իրենց հերթական համարները:

Իսկ երկու տարիներէ ի վեր յօբելեանական մեծարանքի կ'արժանանայ իր գրականութիւնը, Լոս Անճելըսէն մինչեւ Սիտնի, Փարիզէն մինչեւ Սուրիա ու Լիբանան ու մինչեւ Երեւան:

Այս բոլորը մէկ բան կը նշանակեն, կը նշանակեն այն, որ մեր ժողովուրդը բնազդական մղումներով թէ գիտակցական լոյսով զգաց տառապած ու ստեղծագործած Վահէ Օշականի գրականութեան մէջ վսեմական արժանիք մը, կենդանարար շունչ մը, համոզում մը, պատգամ մը:

\*  
\* \*

Վեց հատոր բանաստեղծութիւն, երեք հատոր արձակ: Պիտի մաղթէինք Վահէ Օշականէն շուտափոյթ ունենալ տասներորդ հատոր մը, այս անգամ քննադատական անոր փորձերէն կազմուած, ուր ընտրուած ըլլային Յակոբ Օշականի, Ակսել Բակունցի, Ուիլերմ Սարոյեանի, Մուշեղ Գալչոյեանի եւ քանի մը ընտրեալներու մասին իր ուսումնասիրութիւնները: Մեր կարծիքով, նման ձեռնարկ մը ո՛չ միայն աստիճան մը աւելի պիտի պայծառացնէր Վահէ Օշականի դէմքը, այլեւ տեսանելի պիտի դարձնէր քննադատական մեր մտքի զարգացման մէկ փայլուն աստիճանը...

\*  
\* \*

Անցնող յիսնամեակին, Վահէ Օշական մնայուն ներկայութիւն մը եղաւ մեր մամուլին մէջ, ընթերցողը միշտ առիթ ունեցաւ հանդիպելու անոր պարբերաթերթերու, շաբաթաթերթերու, նոյնիսկ օրաթերթերու էջերուն մէջ, ուր յաջորդաբար ստորադրեց բանաստեղծութիւններ, արձակ էջեր, քննադատական վերլուծումներ ու հրապարակագրական յօդուածներ:

Այս կարգով պէտք է դիտել նաեւ իր վաստակին յարաբերական արժէքը:

Բանաստեղծը՝ նախ:

Արձակագիրը՝ յետոյ:

Երրորդաբար՝ քննադատը:

Եւ, վերջապէս, հրապարակագիրը:

Այս յաջորդականութիւնը կազմելու համարձակութիւնը կու տայ նաեւ ինք, Վահէ Օշական, լուռ վերաբերումով մը:

Ինը դիրք հրատարակած է ան, վեցը բանաստեղծական, սկսեալ առաջինէն:

Այս կը նշանակէ, որ իր վաստակին հանդէպ առաւելագոյն համարումը կ'երթայ բանաստեղծութեան:

«... Առաջին ապրումներս, - կ'ըսէ ան տեղ մը, - արձակով եղան. յետոյ տեսայ, որ արձակը դանդաղ է, արագ չի շարժիր, ներքին շունչը դանդաղ է, բանաստեղծութեան անցայ ու հոն աւելի արագ, աւելի ուժով, աւելի խիտ թափ առի»:

**Աւելի անդին, կը շարունակէ.**

«Բանաստեղծութեան մէջ երեւակայութիւնը իր առաւելագոյն թափը կրնայ առնել. հոն կը հանդիպիս մեծագոյն մարտահրաւերներուն: Աստուած, անհունութիւն, վերացական բոլոր մեծ հարցերը բանաստեղծութեան կալուածին մէջ կ'իյնան, մինչդեռ մարդկային կեանքի հետ կապուած հարցերը արձակի կալուածն են»:

\*  
\*   \*  
\*

**Դիտուած է, որ ի վերուստ օժտուած բանաստեղծները կը սկսին ի վերջոյ յաճախակի գործածել որոշ բառեր, որոնք կը խորհրդանշեն ու կը յատկանշեն իրենց ներքին կլիմաները, աշխարհները:**

**Բոլոր ընթերցողներուն ծանօթ են Նարեկացիի անցնելիք, Ծնորհայի լոյսը, Սայաթ-Նովայի բեգարիլը, Դուրեանի միսլը, Մեծարենցի ըլլային, Չարենցի արեւահամր, եւայլն:**

**Վահէ Օշականի պարագային, սեւցող էջերուն վրայ յաճախակի տողանցող բառերէն մէկը խուճապն է, միւսը՝ թակարդը, երրորդը՝ ահագանգը, չորրորդը՝ քառուղին, հինգերորդը՝ արուարձանը:**

- Խուճապը արող ակնարկ մըն է երբեմն:**
- Ուրիշ էջի մը վրայ կը դառնայ հատուած:**
- Եւ օր մըն ալ կը վերածուի լրիւ հատորի մը:**
- Նոյն ընթացքով կազմուած է անոր «Ահագանգը»:**
- Նոյնը՝ «Քառուղին»:**
- Նոյնը՝ «Արուարձանը»:**
- Նոյնը՝ «Թակարդին շուրջ»ը:**
- Նոյնը՝ «Փախստականը»:**

Այս բառերուն հետ ենթադրելի հոգեվիճակով ու մտածումներով՝ Վահէ Օշական ունէր «Պատուհան» մը, ուրկէ կը դիտէր դուրսի աշխարհը, ապա դուրս եկաւ պատուհանէն ու իջաւ «Բաղաբ» ու խառնուեցաւ քաղաքը կազմող առարկաներու իշխանութեան ու զիտակից ու անզիտակից մարդերով կազմուած քառսին մէջ, յետոյ մտաւ «Քառուղի», որ շփոթութիւնը կը խորհրդանշէ անպայման, քառուղիէն հեռանալով ի վերջոյ մխրճուեցաւ «Արուարձան»ին մէջ, որ մեկուսացումն է անշուշտ, միշտ «Խուճապ» մը հոգիին ու «Ահագանգ»ը հնչեցնելու հրամայականի մը

ենթակայ, ա'յն համոզումով, որ մարդ էակը զգայ կեանքին անկատարութիւնը, ու անդրադառնայ իր կացութեան եւ ստանձնէ իր ճակատագիրը՝ ցարդ ստեղծուած ուժերէն բոլորովին անկախ յանձնառութեամբ մը:

Այդ խուճապին, այդ ահագանգին, թակարդը ինկած ըլլալու գիտակցութեան մէջ նկատելի է անշուշտ Համաշխարհային Առաջին պատերազմի վաղորդայնին Գերիրապաշտ անունին տակ ըմբոստութեան դրօշակ պարգած Փրանսացի երիտասարդներուն ճիշդը. իսկ ավելի շեշտուած ձեւով մը 1944ին, դարձեալ Փրանսայի մէջ ձեւ առած գոյապաշտ փիլիսոփայութեան պատուաստներէն տարրեր:

Յիշել պէտք է սակայն, որ կոյր հետեւողութեան արդիւնք չէ այդ փիլիսոփայութեան որդեգրումը: Մենք կը կարծենք, որ ազգային խառնուածքի մը մղումը ունի անիկա իր ետին, տարրեր ազգային խառնուածքի մը մղումը ունի անիկա իր ետին, տարրեր արիւնմը ներծծած էութեան մը նախասիրութիւնը անհերքելի է հոգ: Մենք ազգովին, ու Փրանսացիներէն շատ առաջ ապրած ենք յուսաբեկութիւնը, առանձնութիւնը, լքուածութիւնը՝ աշխարհի թէ անդրաշխարհի ուժերէն: Գոյապաշտներէն առաջ փիլիսոփայական շատ հոսանքներ նշած են ու գոյապաշտներէն ետք ուրիշներ նետուեցան հրապարակ, բայց, - ինչպէս կ'ըսէր առջի գիշեր Վահէ Օշական, - ինքզինքս ամէնէն ավելի հանգիստ կը զգամ այդ ավազանին մէջ:

Կ'արձանագրենք վարկածը ու կ'անցնինք: Մեր ծանօթութեան սահմաններէն մէջ, չհաշուած Նարեկացին, ու Նարեկացիէն ետք ինտրան, հայ գրականութիւնը դժուար թէ կարենայ յիշել ուրիշ դէմք մը, որ այնքան զբաղած է ըլլայ մարդուն մարդկային ճակատագրով, որքան զբաղած է Վահէ Օշական:

Ցաւը կայ մեր գրականութեան մէջ, սէրը կայ, պանդխտութիւնը կայ, զրկանքը կայ, սխրագործութիւնը կայ, կարօտը կայ, ուժը կայ, զոհաբերութիւնը կայ, բայց չկայ ատոնցմէ վերը, ատոնց պսակէն վերը, մարդուն վախճանական ճակատագրին տարրալուծման նուիրուած իմացական արկածախնդրութիւնը, առնուազն չկայ բացայայտօրէն, իբրեւ փիլիսոփայութիւն ու գրական թեմա, հանդարտ վերլուծումներու ձեւին տակ կամ ահագանգային վիճակի մը մէջ:

Թող ամէն ինչ ընծայուի մարդուն, շնորհուի լիակատար ազատութիւն. ապահովութիւն, հանգստաւէտութեան բոլոր պայմանները, սէր, ինչ որ կ'ուզէ, ինչ որ կը փափաքի, բայց այդ

բոլորէն ետք, բոլոր ստացումներէն ու յագեցումներէն յետոյ կը մնայ ճակատագրական հարցումը.- Յետոյ:

Ձեռով մը այդ «Յետոյ»ին պատասխանն է, որ կ'որոնեն 20րդ դարու առաջին քառորդին ու կիսուն հրապարակ նետուած փիլիսոփայութիւնները, եւ վաճէ Օչական անշուշտ իր ձեռով, նոյնը կը փորձէ զգացնել մասնաւորաբար բանաստեղծական իր ստեղծումներով:

\*  
\*   \*  
\*

Գրագէտը, բանաստեղծը, արուեստագէտը ա՛ն է, որ ուրիշներու փնտռած ու չգտած բաներուն յայտնութիւնը կ'ընէ ու շարժում մը կը ստեղծէ մեր մէջ:

Այսինքն՝

Կը պատճառէ հանդիպելու հաճոյք մը:

Յնցիչ անակնկալի մը առջեւ կը դնէ ընթերցողը:

Հարցումներ ուղղելու աճապարանք մը կը ստեղծէ:

Կը հրահրէ վիճելու բնազդ մը:

Լուրը կը հաղորդէ նոր հորիզոններու:

Վաճէ Օչականի գրականութիւնը, հրապարակ նետուած նորը բանաստեղծութիւնն ըլլայ, արձակ, քննադատական խոհ թէ հրապարակագրական խորհրդածութիւն, ընթերցողին մօտ նման շահագրգռութիւններ ստեղծող երեւոյթ է՝ իր ջախջախիչ տոկոսին մէջ:

Մենք մեզ խաբած կ'ըլլանք ու այս պարագային ունկնդիրները, առնուազն ունկնդիրներուն մէկ մասը յարգած չենք ըլլար, եթէ ըսենք, որ մեր թուած արժանիքներով պսակուած են Վաճէ Օչականի բոլոր գործերը:

Առաւել կամ նուազ չափով մը կը տեսնենք պատուհանէն դիտուածը,

քաղաքին մէջ կը կորսուինք վայրկեան մը,

քառուղիին վրայ ուղղութիւն մը ճշդելու տազնապը կ'ապրինք,

արուարձաններու առանձնութեան մէջ կը տուայտինք պահ մը,

խուճապը կ'ապրինք անպայման ու ահազանգը կը զգանք ի խորոց սրտի, դողալէն, բայց կան հատուածներ, որոնք բոլորովին

անտարբեր կը ձգեն ընթերցողը: Չենք գիտեր, գուցէ թափանցելու մեր մշակութային պակասը կը միջամտէ հոս: Չենք գիտեր: Բայց որոշ էջերու մէջ պայծառութիւն մը տեսնելու, զգալու բաղձանքը կը մնայ ի գօրու:

Թող չըսուի, թէ գրողին գործը ընթերցողին հասկացողութիւնը, մշակութային մակարդակը կամ ճաշակը հաշուի առնելու ողէնքի մը չի հպատակիր, գրողը կը գրէ, մնացեալը իր գործը չէ:

Գիտենք սակայն, որ ճշմարիտ գրողները, խոստովանութիւններ ընելու քաջութիւն ունեցողները մանաւանդ, եւ անոնց կարգին Վաճէ Օչական, բնաւ այդպէս չեն վարուիր ընթերցողին հետ:

Չորս-հինգ տարի առաջ տեղի ունեցած հարցազրոյցի մը ընթացքին, ինք՝ Վաճէ Օչական, իրեն վայել քաջութեամբ մը կը յայտարարէր.

- «Ես իմ գրիմնս կը դաւանիմ յանձնառու գրող, մտաւորական. մէկը, որ բարայական պարտաւորութիւններ ունի, որպէսզի հայութիւնը տեսէ եւ իմ գործս կարդացողներ ըլլան առնուազն»:

Ինչպէս գրող մը կը սպասէ, որ կարդացող ունենայ, նոյնպէս կարդացողը կը սպասէ հարկաւ, որ ունենայ կարդալիք գիրք: Այս երկու գործօնները փոխադարձ պարտաւորութիւններ ունին իրարու նկատմամբ:

Դեռ վերջերս ֆրանսացի մը կը գրէր.

«Գիրք մը նրկու հեղինակ կ'ունենայ, մէկը՝ գրողը, եւ միւսը՝ ընթերցողը: Առանց միեւնոյն միւսը կը խամրի կը մնայ»:

Նոյնպիսի հաստատում մը կատարած է Վաճէ Օչական, զուտ Վաճէ-օչականեան ոճով մը.

- «Գիրքը սիրուելի մը կը նմանի. եթէ ընթերցողը չմօտենայ անոր, միևնաւորեան մէջ կը պաղի, կը վերջանայ»:

\*  
\*   \*  
\*

Իր կենսաքը անիղելի կապերով, ճակատագրականօրէն գիր ու գրականութեան նուիրաբերած ըլլալու հաւաստիքը տուած գրող մը, ինչ ալ գրէ, գրական ինչ ոճ ալ կիրարկէ, կը բերէ իր անձին վկայութիւնը:

Այդ պատճառով է Հոուանաբար, որ վաւերական դէմքերուն առիթով, գրական հետախոյզները կը գուրգուրան ենթակային կապուած բոլոր թուղթերուն ու թուղթի կտորներուն վրայ, ո՛ր

սեռին ալ պատկանին անոնք եւ ոճական ի՛նչ կնիք ալ կրեն, ա՛յն հաստատ համոզումով, որ իրաւութեան փաստը տուած գրողը կենսատու կայծ մը, շող մը, շեշտ մը դրա՛ծ է անպայման խնդրոյ առարկայ էջերուն:

Մասնաւորելով խօսքը, ըսել պէտք է, որ այդ կախարդանքը նուաճած դէմք է Վահէ Օշական, վերադարձի խայծ մը կը ձգէ անպայման ընթերցողի մտքին:

Կիսաթափանց մնացած բաժինը պարզելու համար երբեմն:

Եւ երբեմն առաջին ընթերցումով զգացուած դրական վայելքը կրկնելու հաճոյքին համար:

«Ահագանգ»ին մուտքը կարդացողը, օրինակ, չի կրնար հոն կրկին անգամ մտնելու փորձութեան դիմանալ:

«Ահաբեկիչը» ճանչցողը չի կրնար չկարօտնալ «Ահաբեկիչ» գրութեան:

«Փարոս»ի լոյսով ողողուածը չի կրնար հրաժարիլ իր ճշմարտութիւնը երաշխաւորող խորախորհուրդ գաղտնիքէն:

«Աւարայր 80» թատերգութիւնը ըմբոշխնող անձը չի կրնար երկրորդ անգամ չվերադառնալ անոր վերաթարմացնող ճշմարտութիւններու ճոխութեան:

Իրականութեան խմորին վրայ՝ ստեղծագործ երեւակայութեամբ կառուցուած կտորներ, որոնք կ'առնեն ու կը տանին ընթերցողը, վարձատրելով զայն՝

Լճացման դէմ՝ ալեկոծումի մը կարօտով:

Իրաւախորհութեան դէմ՝ ահաբեկումի մը հրամայականով:

Անիմաստութեան դէմ՝ իմաստի փնտռութիւնի մը եռեւեփումով:

Մահուան անխուսափելիութեան դէմ՝ անմահութեան տենչով:

\* \* \*

Յաճախ բուռն հետաքրքրութիւններու առարկայ դարձած եւ միշտ հարցումներու առիթ տուած է Յակոբ Օշականի եւ որդւոյն՝ Վահէ Օշականի փոխյարաբերութիւնը: Այս օրերուն ալ ականջալուր եղանք նմանօրինակ հարցումներու: Եւ թերեւս առիթը պատե՛հ է մեր տպաւորութիւններէն յիշել մէկ-երկու նշմար:

Վահէ Օշական տեղ մը կ'ըսէ.

«Հօրս գործն ալ վրաս շատ ազդած է. իր վէպերը մեծ յափշտա-

կութեամբ կարդացած եմ: Հօրս նմանիլը կեանքիս խտէպներէն մէկը եղած է»:

Պիտի ըսէինք,- բարերախտաբար խտէպներէն մէ՛կը եւ ոչ թէ՛ բացարձակ խտէպը:

Վահէ Օշական հօրը նմանած է տեղ մը, որ պատիւ կը բերէ իրեն:

Ան հօրը նմանած է գրական իր կոչումին ըրած հաւատարմութեան խորութեամբ, անհանդարտութեամբ, աշխատելու կորովով, արտադրելու կիրքով, իրեն տրուած ժամանակը առաւել լազոյնս օգտագործելու այնպիսի՝ արժանիքներու մթերքով մը, որուն նմանը դժուար է հաստատել: Սփիւռքի գրողներէն ոեւէ մէկուն մօտ:

Վահէ Օշական հօրը չէ նմանած, եւ այս անգամ չնմանելու փաստը պատիւ կը բերէ իրեն:

Երկու Օշականներու գրականութեան մօտէն ճանչցած անձերը հաստատած են ըստմիցս, որ յղացումներով, լեզուով, ոճով, պատկերելու եղանակներով, թելադրելու ուժով ու ձգտումներով որդւոյն գրականութիւնը ըլլորովին ազատ է հօրը կիրարկած եղանակներուն ճնշումներէն, է՛նք է ու ի՛նքը՝ իր բոլոր յղացումներուն ու արտայայտչական կերպերուն մէջ:

Յուզուածը, անշուշտ, արժէքներու յարաբերութեան խնդիր չէ: Ինքզինք ըլլալու խնդիր է գերազանցապէս: Ու Յակոբ Օշականի մօտ ոեւէ մէկուն համար ինքզինքը եղած ըլլալու փաստը փոքր արժանիք մը չէ ու չի կրնար համարուիլ:

Գոցելու համար այս փակագիծը, ըսենք լրացուցիչ տպաւորութիւն մը եւս.-

Մեր ժողովուրդը շատ բախտաւոր չէ եղած իր մեծավատակ ու մեծանուն դէմքերուն զաւակներով:

Սեղմելով շրջանակը՝ ըսենք, առնուա՛զն գրականութեան մէջ:

Երեւակայութեանց մէջ անմէջապէս կազմուած պատկերին մէջ Վահէ Օշական կ'անջատուի թէ՛ իր բերած այլազանութեամբ, եւ թէ՛ կուտակումներով, աշխարհին բացուելու ունակութեամբ, կազմած աշխարհահայեացքով, մահաւանդ նուաճածներուն անհրաքելիութեամբ: Աւելցնելով պիտի ըսէինք,- Յակոբ Օշական հոն է, իր վեհափառութեան բարձունքներուն, իսկ Վահէ Օշական է, իր վեհափառութեան բարձունքներուն, իսկ Վահէ Օշական է, իր յայտնարեւրած իրայատկութեանց ծիրաններուն մէջ:

Փորձիչ բան է, բայց ըսենք դարձեալ, որ տեղ մը որդին

աւելի բախտաւոր եղաւ, քան Հայրը: Կ'ակնարկենք զոյգ յորելեաններու տարբերութեան: Առաջինը դառնութեան առիթ եղաւ, երկրորդը՝ խնդութեան, ա'յն իմաստով, որ որդւոյն յորելեանական ձեռնարկներուն մասնակցեցան ու կը մասնակցին անոնք, որոնց նախորդները փորձեցին ամէն գնով խափանել հօրը յորելեանը:

Ասիկա այլապէս նաեւ բարենիշ մըն է մեր ժողովուրդին:

\*  
\*   \*  
\*

Արդէն հատոր հատորի վրայ դիզած բանաստեղծ, արդէն վաստակ կուտակած գրագէտ, քննադատական ընդարձակ ժառանգութեան մը տէր դատող, հարիւրաւոր ու հարիւրաւոր յօդուածներու հեղինակ Վահէ Օշական, նովին բանիւ կը հետաքրքրէ ընթերցողն նաեւ անտիպ գործերու առկայութեամբ կամ չգոյութեամբ:

Հարցազրոյցի մը ընթացքին, ան կը յայտնէր, որ «Երկու հատոր անտիպ բանաստեղծութիւններ ունիմ»:

Անտիպ վէպ մը կը գտնուի «Բագին»ի խմբագրութեան տրամադրութեան տակ:

Իրմէ, ու բանիւ բերանոյ իմացանք, որ 1993ին Հայաստան այցելելէ ետք, այդ այցելութեան ընթացքին որսացած տպաւորութիւններով հիւսած է վէպ մը, որ իբրեւ թերթօն սկսած է արդէն լոյս տեսնել Փարիզի «Յառաջ»ին մէջ:

Ըստ քանի մը տարի առաջ կազմուած ծրագրի մը, որոշած էր երկնել հինգ հատորնոց վէպ մը, որ պիտի ընդգրկէր Հայ ժողովուրդին ապրած մէկ ու կէս դարը 1800էն 1950:

Կ'իմանանք, որ առաջին հատորը արդէն աւարտած է, 500 էջ, իսկ երկրորդին առաջին սրբագրութիւնները կը կատարուին այժմ:

\*  
\*   \*  
\*

Պիտի համարձակէինք դուրս գալ գաղտնապահութենէն ու անտիպներու շարքին վրայ գումարել նամակային լուր մը, որ ունի, կը կարծենք, պարզ հետաքրքրութենէն աւելի մեծ արժէք մը:

Ինք կը գրէր, քանի մը տարի առաջ.

– «Պաշտօն չունիմ հիմա, բայց սիւստիստ անագիրներ իրենց աւարտին կը սպասեն, չհաշուած օրական երեք մամակ գրելու պարտքս»:

Ընդգծելին, օրական երեք նամակ գրելու պարտքն է, երանդը, պատասխանատուութիւնը, ըսելիք ունենալու առատութիւնը նաեւ:

Բանաստեղծ է Վահէ Օշական, գրագէտ է, քննադատ է, հրապարակագիր, Սփիւռքի բոլոր տազնապներուն մասնակից Հայ. ըսել կ'ուզենք՝ իր նամակները սովորական նամակներ չեն կրնար եղած ըլլալ, մտածում մը կայ անպայման անոնց մէջ, խոր ապրում մը, կոտտացող ցաւ մը, ընդվզում մը, թելադրանք մը, աղօթք մը, ուղղուած հարազատի մը, ընկերոջ մը, ցաւող սրտի մը, գրողի մը, խմբագիրի մը, օգնութեան կարօտ սրտի մը, միով բանիւ՝ ուրիշներուն ապրումները բաժնող հոգիի մը մասնակցութեան ազնիւ մղումը:

Նամակներուն բովանդակութիւնը, անշուշտ, կը մնայ ենթադրութիւններու ծիրին մէջ, ուշագրաւը անոր քանակական երեսն է, որ մօտէն կը յիշեցնէ եւրոպացի գրագէտներուն տիպարը:

Դեռ քանի մը տարի առաջ, Փրանսացի Ժորժ Սանին նուիրուած «Մակագին Լիթերէր»ի մէջ, գրագիտուհիին նամակներուն հրատարակութեան հսկող Ժորժ Լիւպէնին հարց կը տրուի, թէ իր ամբողջութեանը մէջ կրնա՞ք ըսել, թէ քանի նամակ գրած է ան, հրատարակիչը կը պատասխանէ. «Բառասուն կամ յիսուն հազար, կը խորհիմ»:

Բացառելով Արչակ Զօպանեանի պարագան, մենք երբեք նման առատութեամբ մը չենք կրնար պարծենալ, ո՛չ արեւմտահայերս եւ ոչ ալ արեւելահայերը: Հոն բացառութիւն կը կազմէր Մահարին: Հետաքրքրական է Պալանգայէն Վահագն Դաւթեանին գրած իր առաջին նամակը. –

– «Ես այսպէս, բացուած եմ յայտարարում մեր միակողմանի մամակագրութիւնը»:

Չենք գիտեր, օրական երեք նամակ գրող Վահէ Օշականի նամակագրութիւնը միակողմանի՞ բնոյթ մը ունէր, թէ երկկողմանի, բայց իր վերաբերումը պարզապէս հիացում կ'առթէ:

Պիտի չգժուարանանք այլեւս ենթադրել, որ յղացման, արարման, երկնելու տեւական հեւքի մը մէջ եղող երեւոյթի մը առջեւ կը գտնուինք, շարք մը ընդգծելի ուժեր անձնաւորած



ստեղծագործ տիպարի մը: Մանրամասնելով՝ պիտի ըսէինք, որ վաճէ Օշական յայտնարերեց շարք մը իրապէս բացառիկ ուժեր.

- Փորձելու ուժ մը, որ նորութեան ծարաւէն կը բխի:
- Յանդգնելու ուժ մը, որ ներքին գեւէ մը կը մղուի:
- Ինքնավստահութեան ուժ մը, որ համեմատական եզրէ մը

կ'առնէ իր սլացքը:

- Ճգնելու ուժ մը, որ տեսիլքին ձգողութենէն կու գայ:
- Զոհարերութեան ուժ մը, որ ձեռնարկած գործին հանդէպ

ունեցած հաւատքէն թել կ'առնէ:

### ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ

### Վ. Օշական

## ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ...

Ես ինքզինքս կը դաւանիմ յանձնառու գրող, մտաւորական մէկը, որ բարոյական պարտաւորութիւններ ունի, որպէսզի հայութիւնը տեւէ եւ իմ գործս կարդացողներ ըլլան առնուազն: Եթէ ես չպայքարիմ, որ հայութիւնը դիմանայ աշխարհի երեսին, հայերէն լեզուն կորսուի 50-60 տարի վերջը, ես ո՞ւր կ'ըլլամ:  
(«Յառաջ», 7 Ապրիլ 1991)

Ես եկեղեցիի արժէքին կը հաւատամ, ան՝ որ եկեղեցիին ուժը կը նուազեցնէ, կը վնասէ հայ ժողովուրդին դիմադրական կարողութիւններուն: Ես եկեղեցի կ'երթամ, Հայաստան երթալու, հայրենիք երթալու պէս: Մշակոյթի ամէն ձեւերը կան հոն:  
(Անդ, էջ 3)

Հայութիւնը դարերու վրայով միշտ աւելի եղած է՝ քան իր մշակոյթը, իր պատմութիւնը, իր հողը, ու ստիպուած ենք ուրեմն կեանքէն ու դիտութենէն անդին անցնիլ, արուեստի ու երեւակայութեան ծիրին ոստել:  
(«Հայրենիք», 21 Յունիս 1977)

Յետ այսու, հայ միտքը միայն ճշմարտութեան եւ իրաւ գրականութեան պիտի ծառայէ՝ առանց արժեզրկելու ստեղծագործ երեւակայութիւնը, ու այդ ծառայութեան մէջ կը կայանայ գլխաւոր նպաստը հայ ժողովուրդին ու մշակոյթին, յատկապէս ներկայ խոռվայոյդ ժամանակներուն:  
(«Ասպարէզ», 12 Դեկտեմբեր)

Նոր, ճկուն, արդիական «ոամկօրէն»ի մը պէտք ունինք, քովն ի վեր մեր գրական հայերէնին:  
(Անդ)

Հայ մտքին ազատագրումը պէտք է սկսի հայ գրագէտի ազատագրումով: Այսինքն՝ արուեստի նոր հանգանակով մը:  
(Անդ)

Կը հաստատենք, թէ հայութեան բնագոյնները եւ ստեղծագործական կարողութիւնը առողջ են եւ հայ միտքը տէրն է իր ուժերուն: Առողջ է նաեւ հայ երիտասարդութեան լուսամիտ զանգուածը, եւ ինչ որ տարտամօրէն հայ ինքնութիւն կը կոչուի՝ գո՛յ է ազգին գիտակցութեան մէջ:

(«Ասպարէգ», 18 Դեկտեմբեր)

Մէկ ժողովուրդ, մէկ հայրենիք եւ մէկ մշակոյթ՝ կը մնայ իտէպը հայ մտաւորականին, քովն ի վեր արուեստի ձգտումներուն:

(Անդ)

Երբեք հայութիւնը չի կքիր, չի հասնիր անկումի վերջին անդունդին: Ներքին հզօրութիւն մը ունի, որուն ինքն ալ անծանօթ է:

... Յայտնի է, որ Հայաստանը շատ անգուժ եւ աններող երկիր է, տկարը եւ յուսահատողը շատ չեն դիմանար: Կլիման, բնութիւնը, երկրաչարժը, զինք շրջապատող ցեղերը, հայերու անգիջող անհատապաշտութիւնը, ներքին դաժան մրցակցութիւնը կը մաքրեն-կը նետեն անկարները, խակերը կամ անխելքները:

(«Կամֆ», 1 Դեկտեմբեր 1993)

... 28 տարեկանիս հոգեբանական սլահանջը զգացի շարքերը մտնելու, տարուած «ընկեր» բառին միսթիքէն: Վերացական, անընկեր կը յուսայի շարքային ընկերներու արու, անվերապահ սրտակցութեան մէջ գտնել մարդկային կասլի եւ իրաւութեան ապրում մը, որուն կարօտովը մեծցած էի: Տարիներու ընթացքին չփոխուեցաւ այս տենդագին ակնկալութիւնը, որ ի վերջոյ գերակշռեց ամէն այլ փառամոլութիւն դիրքի, հեղինակութեան ու պաշտօնի:

(«Կամֆ», 25 Յունուար 1964)

Առաջին տուեալը մտաւորական ըլլալու հաւատամքն է, գաղափարին կառչած մնալու եւ զայն փրկելու հաւատքը մեծ ուժ է: Ես այդ հոգեբանութիւնը գտայ երիտասարդներուն մօտ: Եթէ պահ մը բաղդատեմ մեր երիտասարդութիւնը ամերիկացի երիտասարդութեան հետ, որուն ծանօթ եմ դասախօսական ասպարէզի միջոցաւ, կը հաստատեմ, թէ գոյութիւն ունի հայկական տարրերութիւն մը: Մեր երիտասարդութիւնը գերադաս աստիճանի վրայ է թէ՛ իբրեւ նկարագիր եւ թէ՛ իբրեւ մտաւորական:

\*  
\* \*

Ինծի կը թուի, թէ մենք Սփիւռքի մէջ պիտի դիմանանք տապալին քանի մը հարիւր տարի, հաւանաբար այն շնորհին, որ մենք ունինք անցեալէն: Ես որքան որ ուսումնասիրած եմ մեր ժողովուրդը՝ պատմութեան եւ գրականութեան ընդմէջէն, կրնամ ըսել, որ անիկա ներքին հսկայական ուժին պահեստը ունի: Կը հաւատամ, որ մեր ժողովուրդը յուսահատող չէ եւ կը շարունակէ հետապնդել Հայ Դատը. առ այդ՝ մշակոյթի գոյութիւնը կը շարունակուի:

(«Կայծեր», Գ. աարի, 1986, թիւ 4)

Մեր ազգը շատ հեռուներէն կու գայ ու շատ հեռուները պիտի երթալ, մեր պատմութեան այս ներկայ կարճ եւ անստոյգ հանգրուանը չի կրնար թուլցնել մեր ներքին պրկումը, հայ ըլլալու մեր հպարտութիւնը, չի կրնար մեզ յուսահատեցնել:

(«Կամֆ», 26-27 Փետրուար 1994)

\*  
\* \*

Դաշնակցութեան ընկերվարական ու ազգայնական գաղափարաբանութիւնը լաւագոյնն է, որ կրնայ մեր երկիրը դուրս բերել իր ներկայ անկումէն:

(«Յառաջ», 28 Նոյեմբեր 1993)

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

4. Էդոյեան

«ԵՍ ԿԸ ՄՆԱՄ ՁԵՐ  
ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ  
ՄԷՁ...»



Լեւոն Ներսիսեան

Շուտով մէկ տարի կը լինի, որ մենք հրաժեշտ տուեցինք Լեւոն Ներսիսեանին: Այս ժամանակահատուածը դեռեւս բաւարար չէ նրա երեւոյթը լրիւ ըմբռնելու, նրա մասին սառը դատողութիւններ անելու, նրան օբյեկտիւօրէն արժէքաւորելու համար, միւս կողմից, այնուամենայնիւ, կարելի է արդէն խօսել մի մարդու մասին, որի կերպարը հետզհետէ սուղուում է անցեալի մէջ, դառնում պատմութիւն՝ թողնելով նրա կեանքի հետագիծը՝ անհարթ եւ խորհրդաւոր: Ժամանակի շարժումը շատ խորն էր ընկալուում նրա կողմից, կարելի է ասել, որ այն իշխում էր նրա բոլոր ընկալումների վրայ, «Իսկ ես... ես ի՞նչ... Ես կը մնամ ձեր յիշողութիւնների մէջ... եթէ, ի հարկէ, դուք ցանկանաք»...

Ժամանակի, պատմութեան, շարժման, մարդկային գոյութեան հարցերի մասին մենք խօսում էինք նրա հետ տարիներ շարունակ, եւ այն, ինչի մասին մենք դատողութիւններ էինք անում, մտքեր արտայայտում, ձգտում թափանցել այդ ամէնի էութեան մէջ տարրեր ասպեկտներով (մետաֆիզիքական, փիլիսոփայական, բանաստեղծական եւ այլն), այժմ դարձել է իրականութիւն: Ձկայ այն մարդը, որի կարծիքը այս ամէնի մասին մեծ նշանակութիւն ունէր նրան շրջապատող մարդկանց համար: Հիմա, երբ ուզում ես հարց տալ՝ արդեօք իր մահով նա հաստատում, թէ՞ ժխտում է այն, ինչի մասին խօսում էր, կանգնում եմ երկմտանքի առջեւ, որ նրա մահով մեր մտքերի մէջ ինչ-որ բան այնուամենայնիւ շարժուեց, ինչ-որ բան ճշգրտուեց, ինչ որ բան իր տեղն ընկալ (ի հարկէ, մինչեւ մի նոր ցնցում, եւ այսպէս մինչեւ վերջ): Դա մեծ հոգու յատկանիշն է, որի կեանքը եւ մահը հաւասարարժէք

են մէկը միւսին, նա ապրում է մեռնելով եւ մեռնում՝ ապրելով, նրա գոյութիւնն աւելի է, քան կեանքը, աւելի է, քան մահը, աւելի՛ քան այդ երկուսը միասին, որոնց մէջ ինտէնսիւութեամբ բարախում է նրա մշտական գոյութիւնը կամ նրա «մետաֆիզիքական գաղտնիքը»:

Ժամանակը, շարժումը, այսպէս ասաց՝ «կեանքի հոսքը» արտաքին աշխարհի առջեւ բաց է: Ներքին աշխարհում փակ այդ բարդ հոգու դիտակէտն է, նրա ներքին մտորումների եւ որոնումների սկիզբն ու վերջը, որի բարձրագոյն արտայայտութիւնը մշակոյթն է, արուեստը. գրականութիւնը եւ մարդկային մտքի կատարեալ ձեւը՝ լեզուն, այդ «ոգու քարտէսը», ուր տպուած են կեցութեան բոլոր «ծածկագրերը», լեզուն կենդանի խօսքը, կենդանի շնչառութիւնը, ներքին ինտոնացիան, մարմնի եւ հոգու խորքերից եկող ձայնը, այն, ինչը անհնար է կնիւծել, խաբել, ընխորինակել, դա Լեւոն Ներսիսեանի միակ աշխարհն էր, նրա միակ կղզին, որից դուրս նա ոչինչ չուներ: Նա ինքն իր խօսքի մէջ էր, իր ձայնի, իր ինտոնացիայի, իր ժեստի, որի մէջ արտայայտուում էր այն, ինչը դուրս էր մնում նրա խօսքից, այսինքն՝ նրա ժեստը այն, ինչը չարունակութիւնն էր, նրա յուրօրինակ «ձայնը», որը կախօսքի շարունակութիւնն էր, նրա յուրօրինակ «ձայնը», որը կախօսքի էր ոչ թէ լսել, այլ՝ տեսնել: Այս պատճառով նա մարմնաւորելի էր ոչ թէ լսել, այլ՝ տեսնել: Այս պատճառով նա մարմնաւորում էր ոչ գրաւոր, այլ բանաւոր խօսքի մէջ, ժեստի եւ ձայնի, կենդանի շնչառութեան, ուր նրա հոգին ձեռք է բերում կատարեալ ազատութիւն եւ հաղորդակցման հնարաւորութիւն: Կենդանի խօսքը նրա տարրերն էր, նրա ազատութիւնը, նրա ստեղծագործութիւնը, ուր նրա հոգին բացուում էր իր ամբողջ եզակիութեամբ:

Շատերը հարց էին տալիս՝ ինչո՞ւ նա թողնէր չի յանձնում այն, ինչ խօսում է, չէ՞ որ այդ «խօսացուածը» չափազանց հետաքրքիր է, ինքնատրպ, անսովոր, բացառիկ, ինչո՞ւ չի ուզում սերունդներին թողնել այդ հարստութիւնը, որը ի վերջոյ կը դառնան սերունդներին թողնել նար նրա յուշարձանը, ինչո՞ւ չի ուզում սերունդներին թողնել այդ հարստութիւնը, որը ի վերջոյ կը դառնար նրա յուշարձանը, ինչո՞ւ է նա վատնում ինքն իրեն լսարաններում, սրճարաններինչո՞ւ է նա վատնում ինքն իրեն լսարաններում, սրճարաններում, փողոցներում, ինչո՞ւ չի գրում դիւերտացիաներ, մենագրում, փողոցներում, ինչո՞ւ չի միւսները: Այդ հոգեւոր որոշութիւններ, յօդուածներ, ինչպէս միւսները: Այդ հոգեւոր որոշմարդկանց տանում էր դէպի սխալ եզրակացութիւններ, մինչդեռ իրականում Լեւոն Ներսիսեանը պարզապէս կատարել էր իր ընտրութիւնը, այն, ինչը չի յաջողում մարդկանց մեծամասնութեանը: Նրա կեանքի գերագոյն ճիգն էր՝ հետզհետէ քայքայուող լիւրջուող, «ճաւասանիւրի ապստամբութիւնից» իր դէմքը կորցնող

իրականութեան մէջ պահպանել սեփական ինքնութիւնը, իր անհատական անկրկնելի գծագիրը, կեանքի իր ձեւը, իր ներքին ընտրութեան իրաւունքը, իր իմաստն ու իր արժէքները: Լինել այնպիսին, ինչպիսին դու ես, ոչ թէ այնպիսին, ինչպիսին ցանկանում են քեզ տեսնել միւսները, դու պէտք է լինես քո ներքին կամքի եւ ոչ թէ միւսների ցանկութեան արդիւնքը: Լեւոն Ներսիսեանը ինքը իր չգրուած վէպի հերոսն էր եւ հեղինակը, բայց այդ «վէպը» գրուում է աւելի բարձր մակարդակում, մի այլ տեղ, մի այլ իրականութեան մէջ, ուր դադարում է լեզուն եւ խօսքը (այն լռութիւնը, որի գաղտնի ներկայութիւնը շօշափում է այդ լեզուի եւ խօսքի մէջ եւ որի բացակայութիւնը նշանակում է հանճարի եւ ստեղծագործական մտքի բացակայութիւն): Նա ինքն էր ստեղծագործում իրեն, եւ թոյլ չէր տալիս, որ իր նկատմամբ դա կատարէին միւսները: Շատերը դրում են, մինչդեռ պէտք չէ գրեն, շատերը խօսում են, մինչդեռ պէտք չէ խօսեն, չգիտակցելով, որ իրենք չեն կարող գրել կամ խօսել: Սեփական արարումից դուրս կատարուող քայլերը ցոյց են տալիս միայն դաւաճանութիւն, նահանջ, պարտութիւն, այն, ինչին անընդունակ էր նա: Դա նրան տրուում էր ներքին լարուած դիմադրութեամբ, արտաքին հայեացքից չնկատուող ճիգերով, երբ նրա յումորի, ժպտի, երբեմն իրոնիայի վարագոյրից այն կողմ թաքնուում էր նրա մեծ մենակութիւնը եւ այդ մենակութեան մէջ ծաւալուող ողբերգութիւնը:

Նա շատ էր խօսում ճակատագրի մասին, եւ պատահական չէր, որ գրականութեան մէջ նրա նախընտրած հերոսներից մէկը, որին նա միշտ անդրադառնում էր իր դասախօսութիւններում, էտիպ արքան էր «ճակատագրի զոհը», բայց որը նաեւ ճակատագրին յաղթողն էր: «Յաղթանակը» այստեղ ոչ թէ «պաթետիկ-հերոսական» արարքն է, այլ՝ նախ եւ առաջ՝ ճանաչողութիւնը, ճանաչել սեփական ճակատագիրը՝ նշանակում է յաղթել նրան: Էտիպի տառապանքները մեծ մարդու տառապանքներ են՝ երկրային մակարդակից մարդու մօտեցումը «աստուածային դատավճռին», երբ աստուածները նկատում են նրան եւ նրա վրայ դնում իրենց գաղտնի մտայղացման իրագործումը: Լինել աստուածներից նկատուած՝ նշանակում է լինել մեծ, դա պէտք է ընկալել ոչ թէ իբրեւ ողբերգութիւն, այլ՝ երջանկութիւն, որը ստրուում է բացառիկ հոգիներին: Էտիպ արքան դժբախտ չէ, ինչպէս կարծում են յաճախ, այլ՝ երջանիկ, քանի որ ցմրուր խմելով ճակատագրի գաւաթը՝ նա ըմբռնում է նրա գաղտնիքը եւ ձեռք տալիս աստուածների ոլորտին:

Երեւանի Համալսարանում Լեւոն Ներսիսեանը դասախօսութիւններ էր կարդում՝ սկսած 1950ական թուականներից (ծնվ. 1931 թ.), կարդում էր «Անտիկ գրականութիւն», արեւմտաեւրոպական գրականութիւն (եւրոպական Միջնադար եւ վերածնունդ), պատուկ կուրսեր՝ «Ապսուրդի թատրոնը», «Ալ. Կամին եւ Էկզիստենցիալիզմը», «XX դարի ֆրանսիական պոէզիա» եւ այլն, բայց, այնուամենայնիւ, նրա դասախօսութիւնների կենտրոնը անտիկ գրականութիւնն էր, «յունական հրաշքը», որտեղ նա զգում էր ինչպէս իր տանը: Նա ունէր իր ինքնուրոյն ծրագիրը, իր սեփական մեթոտը՝ նպատակ ունենալով ուսանողներին եւրոպական քաղաքակրթութեան սկզբին՝ անտիպ մշակոյթին կապելով մօտեցնել նրանց իրենց ժամանակին: Հասկանալի եւ հարազատ դարձնել արեւմտեան մշակոյթի կենտրոնական արժէքները, որոնց մէջ, ինչպէս գտնուում էր ինքը եւ համոզուած էր դրանում, պէտք է գտնել նաեւ հայկական մշակոյթի եւ գիտակցականութեան արմատները:

«Ամէն ինչ սկսուել է շատ վաղ, բայց սկսուել է որոշակի տեղում, եւ պէտք է պարզել, թէ որն է մեր սկիզբը: Մի քանի չափանիշ կայ սկիզբը պարզելու համար, նայած ո՞վ էք, ի՞նչ էք զգում, որտեղի՞ց էք եկել, ո՞ւր էք ուզում գնալ: Ժամանակը գայ՝ կը հարցնեմ՝ բնիկ որտեղացի՞ էք: -Կոնդեցի, քեւավառեցի, -կ'ապէք, բայց, միեւնոյն է, ես կը զայրանամ եւ նորից, որտեղ մարդը մարդ դառնալուց յետոյ սկսել է երազել, յօրինել. սպասել, տառամարդ կտոնալուց յետոյ սկսել է երազել, յօրինել: Ես ծովն եմ պել: Ես ինձ համար ընտրել եմ մի ուրիշ կենտրոն: Ես ծովն եմ ընտրել: Հեռու ծովը: Ոչ թէ՛ Սեւ, Վան, այլ՝ Միջերկրականը: Միջերկրական եմ հոգու ծնունդով եւ զգում եմ իմ մէջ հազարամարդ կտոնալուց յետոյ սկսել է երազել, յօրինել: Այդ կանչն եմ տր տարիներ առաջ ապրած նախնիներիս կանչը: Այդ կանչն եմ տեսնում երկիրն է եկել ու երազները ձեր Մեծ Ծովի մնացել են րաստան երկիրն է եկել ու երազները ձեր Մեծ Ծովի մնացել են այնտեղ, մնացել են իրենց խզոցի հետ, բայց ձեր Ծովի երազների խզոցը կարող էք լսել, եթէ ուզենաք... Շատ երկրներում եմ եղել, խզոցը կարող էք լսել, եթէ ուզենաք... Շատ երկրներում եմ եղել, շատ ծովեր եմ տեսել, բայց ոչինչ չեմ հասկացել դրանց խզոցից: Իմ Ծովի խզոցն էլ չեմ լսում, հեռացել եմ: Հեռացել հոգեպէս...»:

Այդ հեռացումը տրտմութիւն է պատճառում Լեւոն Ներսիսեանին. «Շատ են ցանկացել մեզ կապել ուրիշի հետ, բայց մենք պատկանում ենք այն ցեղախմբին, որն իր պատմական կոչումով կապուած է եւրոպականի հետ: Չեմ ուզում թաքցնել՝ պարսկականի հետ ու նաեւ՝ թուրքերի: Եկան, խցկուեցին, հալածեցին, կանի հետ ու նաեւ՝ թուրքերի: Եկան, խցկուեցին, հալածեցին, կանի հետ ու նաեւ՝ թուրքերի: Եկան, խցկուեցին, հալածեցին...»:

մենք էլ հնազանդուեցինք... Բայց, միեւնոյն է, ձեր հոգու կանչը անտես ձայնով կը կանչի ձեզ, կը քաշի իրեն: Գնացէք, գնացէք աւելի խորը, քան նախնիների կանչն է, սրէք ձեր ականջները, եւ դուք կը լսէք հնուց եկած ուրիշ մի ձայն, ուրիշ երգեր կը լսէք: Չեմ կարող ապացուցել, որ մենք արեւելեան չենք այլ՝ արեւմտեան, եւ չեմ կարող ասել՝ ինչպէս կապուտան լիճը չի մեր հայրենիքը, այլ Միջերկրականը»:

Այս պարզ, բայց եւ անկեղծ հոգին, ստեղծագործական այս տարերքը, խոր գիտելիքների եւ իմացութեան վրայ հիմնուած ազատութիւնն էր պատճառը, որ նրա դասախօսութիւնները տեղի էին ունենում լեւի-լեցուն լսարաններում, ուր ուսանողներէր ընդ ընդ, ներկայ էին նաեւ բազմաթիւ երիտասարդներ, որոնք գալիս էին լսելու նրան: Այդ լսարանները միշտ չէ, որ կարողանում էին տեղաւորել բոլոր ցանկացողներին, բացառիկ երեւոյթ Համալսարանի պատմութեան մէջ:

Լեւոն Ներսիսեանի դասախօսութիւնները խիստ տարբերուում էին դասախօսութեան ակադեմիական ըմբռնումից: Նա ձգտում էր տալ ոչ թէ «տառը», այլ ոգին, դրականութեան ոչ դասագրքային, այլ ստեղծագործական ըմբռնումը, գիտելիքը ոչ թէ պարզապէս հաղորդել, այլ՝ ունկնդրին ներշնչել այն, վարակել նրան հոգեւոր էներգիայով, լայնացնել մտահորիզոնը, ազատել ոգին, մտեցնել արդիական աշխարհին, ինչպիսին էլ լինէր այդ աշխարհը՝ գեղեցիկ թէ սարսափելի: Փաստերի եւ գիտելիքների փոխարէն (դա կարելի էր կարդալ նաեւ գրքերում) նա ձգտում էր յղկել եւ խորացնել ունկնդիրների մտածողութիւնը, ազատել նրանց միտքը մեռած կաղապարներից, յորդորելով նրանց՝ լինել ինքնուրոյն եւ ժամանակակից: Ըստ էութեան այդ դասախօսութիւնները վերդիտական բնոյթ ունէին, դրանք, կարելի է ասել, ստեղծագործական ազատ իմպրովիզացիաներ էին («նոր յորժնեցի», - ինչպէս կատակով ասում էր նա), գրական-մշակութային կոնկրէտ փաստերի վրայ վերաձեւաւորուած «փորձեր», այսպէս ասաց էսսէներ, որոնք կրում էին նրա անհատականութեան գորեղ կնիքը: Դա գիտնականի, մտածողի, բանաստեղծի «խոստովանութիւն» է, նրա հոգու ձայնը, այն հետքը, որ մարդ թողնում է ժամանակի մէջ ոչ թէ գրքի էջերում, այլ բոլորի առջեւ, դահլիճում, լսարանում, Համալսարանային Ոգու մի գաղտնարանում, որտեղից գալիս եւ որտեղ գնում են մեծ մարդու հիմնական ազդակները: Լեւոն Ներսիսեան պէտք է որոնել այդտեղ:

ՀԵՆՐԻԿ ԷՂՈՅԵԱՆ

ԲԱԳԻՆ

## ԱՅԱՐՈՆ ՏԱՏՈՒՐԵԱՆ



Գրականութեան մը կշիռը բացառիկները կը ծանրացնեն հարկաւ, բայց գրականութիւն մը միայն բացառիկներուն յայտնագործութիւններով չ'ապրիր, կրտսեր դէմքերը եւս կարեւոր դերեր ու ներդրում ունին հոն: Դասընկերներ էին, օրինակ, Վարուժանն ու Ահարոնը, մեծ բանաստեղծ է Վարուժան, բայց Վարուժանի մեծութիւնը չի կրնար ու չ'է կրցած բոլորովին անշքացնել Ահարոնի վաստակը, առանց որուն զգալի բաց մը պիտի գոյանար մեր դպրութեան անդաստանին մէջ, մանաւանդ պիտի պակսէին մեզի ամենդպեայն, պատմապաշտն ու ազգային տարրերով ընդելոյց այն բանաստեղծութիւնները, որոնք նաեւ լեզուական պերճութեամբ մը կը փողփողին բոլոր հատորներուն մէջ, որոնց մեզի ծանօթները՝ թիով վեց հատ են, յաջորդաբար՝ «Սագադաթներ»-1937, «Պոեմականք»-1939, «Սօսեաց անտառ»-1948, «Երկեր երկիր»-1957, «Հին քերթումներ»-1971, «Վերջին կաթիլներ»-1971: Առաջին երեքը իր ողջուցը հրատարակուած, վերջին երեքը՝ յետ մահու, գրական եւ անձնական բարեկամներու նախաձեռնութեամբ:

Փարիզի մէջ, վաթսուական թուականներուն, մեր գրողները, - Շաւարշ Նարդունի, Բիւզանդ Թօփալեան, Կարօ Փօլատեան, Յուրի Իփեկեան եւ ուրիշներ, ուսումնասիրութիւններով, հարցազրոյցներով ու բանախօսութիւններով անդրադարձան Ահարոնի վաստակին ու տօնեցին իր 70ամեակը, յուշագիրներէն իմացած ենք՝ հակառակ իր կամքին, ու գրականութեան պատմիչներէն ոմանք՝ Գուրգէն Մխիթարեան, Միլոսա Թօլեյօլեան «Բառորդ դար» ու «ՄԵԿ դար գրականութիւն» անուն իրենց հատորներուն մէջ երբեք չ'մոռցան Ահարոնը եւ արժանաւոր էջեր նուիրեցին անոր անձին ու վաստակին, բայց ինք շարունակեց միշտ «մեկուսապաշտը» մնալ:

2000 թուականին, Արթուր Անդրանիկեանի խմբագրութեամբ եւ Մեսրոպ արք. Աշճեանի հովանաւորութեամբ ու մեկենասութեամբ Գալուստ եւ Էմմա Սողոյեաններուն, Երեւանի մէջ Ահարոնէն հրատարակուեցաւ «Զոհ քերթողական» անուն 150 էջոց ընտրանի մը, յուրախութիւն իր հոգիին՝ մեսրոպեան ուղղագրութեամբ...

Բանաստեղծ Ահարոն Տատուրեան բանաստեղծական ու բնատրութեան կարգ մը գիծերը ուրուագրած ու կեանքին մէջ պահը արձանագրած Թորոս Թորանեանի յուշագրութեան հետ, նպատակայարմար նկատուեցաւ բանաստեղծին վաստակէն տալ քանի մը նմոյշ, որոնք քիչ մը աւելի տեսանելի կը դարձնեն միշտ մութին մէջ մնալու նախասիրութեամբ ապրած իր դէմքը:

### ԳՈՂԻ ԼԱՊՏԵՐՆԵՐՈՎ

Բ.

Ծովերուն տակ իջան առտուն չըլուսացած,  
Լապտերներուն ցոլքն աչքերուն մէջ ձուկերուն.  
Տեսէք Նոր Մարդն որ կ'ելլէ վեր ծովէն եռուն,  
Մընչ Յինն արդէն ճարճատաձայն կ'ընկղմի ցած:

Եւ ծովերուն տակ հարսանիք հազարդարեան,  
Մենք փեսաներ ալիքներով գօտետրուած,  
Լապտերներով դիմաւորել կ'երթանք աստուածս,  
Որ պիտի գայ, ձեռքին բըռնած անգիր մատեան:

Ոստաններու գրգռիկներուն մէջ եւք, ըսին,  
Լոյսերուն սէրն արծարծեցէք մըռայլօրէն,  
Եւ լըռեցէք, մինչեւ յառնէ մութին խորէն  
Մեր բանաստեղծին, ինչպէս հովտին ծոցէն սօսին:

Հըրդեհարոց քաղաքներուն տօնն է այսօր,  
Պիտի անցնինք կարմիր ծովէն բանաստեղծին,  
Պիտի յանձնենք մեր հոգիներն իր հընցին,  
Նոր քերթութեան կերտողներն ենք ամենագօր:

### ՀԻՆ ԿԱՐՕՏ

Օտար բոլոր ճամբաներէն քալեցի,  
Չըհարցուցի թէ ո՞ր կու գան, ո՞ր կ'երթան.  
Յաճախ փուշեր, երբեմն ալ վարդ քաղեցի,  
Բայց չըզըտայ դեռ քու ճամբադ, Հայաստան:

Օտար բոլոր աղբիւրներէն խըմեցի,  
Չըհարցուցի թէ ջուրերն ո՞ր կը փութան.  
Սողոտիս կըսկիծն անոնց ցօղով մեղմեցի,  
Բայց չըզըտայ դեռ քու աղբիւրդ, Հայաստան:

Օտար բոլոր գիրքերն անվերջ կարդացի,  
Չըհարցուցի թէ ի՞նչ կ'առնեն, ի՞նչ կու տան.  
Զանոնք փակած, մերթ լացի, մերթ խնդացի,  
Բայց քեզ երբեք չըկարդացի, Հայաստան:

Օտար բոլոր վիշտերն ինձ մօտ ըզգացի,  
Չըհարցուցի թէ մերթ ինչո՞ւ կը կոտտան.  
Սոռցալ գանոնք, կամ մէկ օր լոկ սըզացի,  
Բայց չըմոռցայ քու վիշտն, անգին Հայաստան:

### ԿՐԿԻՆ ԿԱՐՕՏ

Առ Հայաստան

Լոյսի առէջ մը քեզմէ՝  
Տըրտմութեան այս ցայգին վերել համօրէն,  
Ոսկի ըմպում է, Մայր, խաչիդ թելերէն,  
Լոյսի առէջ մը քեզմէ:

Արծաթ ժըպիտ մը քեզմէ՝  
Աջնան վերել մեր յոյսերուն ոսկեթել՝  
Ծիծառն մ'է, Մայր, սարերէդ ճախր ի ճեմել,  
Արծաթ ժըպիտ մը քեզմէ:

Ձիւնի հատիկ մը քեզմէ՝  
Մեր կոպտուն վըրայ տենդով բըռընկած,  
Կախարդանքիդ է, Մայր, նըրբին առիգած,  
Ձիւնի հատիկ մը քեզմէ:

Դողդոջ արցունք մը քեզմէ՝  
Մեր ափերուն մէջ ուր ան մեռաւ,  
Ճըրագ մ'է, Մայր, վաղուան համար անգըրաւ,  
Դողդոջ արցունք մը քեզմէ:

Անմահ ողջոյն մը քեզմէ՝  
Մեր հոգիի հընձաններուն ի պարգեւ,  
Երկինքդ է, Մայր, ծագէ ի ծագ աստղաթել,  
Անմահ ողկոյճ մը քեզմէ...:

Բայց, աղուոր խօսք մը քեզմէ՝  
Այս առտրան դողանջն իբրեւ խընկաւետ  
Թո՛ղ լացընէ մեզ, Մայր, - մեռանք կարօտե՛ր...  
Օ՛, աղուոր խօսք մը քեզմէ...:

Կ. Պոլիս, Բերա, 27 Մայիս 1922

## ՍԷՐԸ Կ'ԵՂԵՐԵՐԳԷ

Ըրէ՛ այնպէս որ ազատինք իրարմէ,  
Թեպէտ երբեք սափորն ազատ չէ ջուրէն,  
Եւ կը քայլէ ըստուերս ինձի հետ նորէն.  
Թո՛ղ, Տէ՛ր իմ, ձեռքն աւազակ գիս ալ գամէ:

Ա՛յ չեմ մարիր, իբրեւ պատրոյզն ըլլայի  
Յիմարօրէն վերը վառող արեւին.  
Մագ - կամուրջէն ոտքերս հազի՛ն դեղեւին,  
Եւ կը վախնայ մահն, երբ ինձի կը նայի:

Խ՛նչ հեղուկ էր, որ ըրաւ գիս թափանցիկ,  
Արտասուագեղ մեր գետերէն աւելի.  
Ինձմէ ներս, արդ, ցոլացումն է ահռելի,  
Սիրատոցոր սա մարդերուն մուրացիկ:

Մահես առաջ կ'ուզեմ տեսնել որ, Տէ՛ր իմ,  
Հաւատարիմ լուսարարն այս տաճարիդ՝  
Մարէ բոլոր մոմերն յոյսին, շիթ առ շիթ,  
Զի կը վախնամ որ մահես վերջն ալ վառիմ:

## Ա՛Ր, ՏԷ՛Ր, ՊՈՌՆԻԿԻՆ ԱԶՔԵՐԸ ԵՒ ՏԱՔՅԻ՛Ր...

Տէ՛ր, աղջիկներն այնքան խորունկ սիրեցիր,  
Որ սիրտդ ափիդ՝ լեցուն բաժակ մ'եր պատրաստ.  
Անոնք քու մէջ կ'աստղանային ցանուցիր,  
Վարդերու պէս, թերթերն հովին առագաստ:

Եւ իր մեղքէն ծըխացող խեժ տարփական,  
Երբ ոտքդ ինկաւ հուսկ սիրունիդ լալագին,  
Դուն դողացիր աչքերուն մէջ աղջըկան,  
Ինչպէս գուռին մէջ լուսընկան գիւղակին:

Նաւարկէ, Տէ՛ր, աչքերուս մէջ մըթածիր,  
Դուն ու Գիրքիդ վերջին ձըկնորսն այսահար.  
Առ արունիկի անմեղ աչքերս ու տաքցիր,  
Զի մահեղ վերջ անոնց համար դուն յարեար:

## ԱՐՅՈՒՆՔՆԵՐԸ

Մասիսի հըսկան կու լար դառնապէս,  
Կու լար վիրաւոր մեր առիւծը վէս.  
Բաշերը սըփռած լայն դաշտին վըրայ,  
Արաքսի վըրայ, որ դեռ կը սարսռայ:

Մասիսը կու լար հերոսի նըման,  
Զերթ արտասուքի արծաթ խընկաման.  
Մասիսը կու լար Աստուծոյ նըման,  
Ի նըշան սիրոյ հին ուխտին խըզման:

Եւ Հայոց աշխարհն իրեն հետ կու լար,  
Զերթ սուգի տալիդ երգով բազմալար.  
Իրեն հետ կու լար աւերակ Անին,  
Գլուխը ծունկերուն՝ իր սիրականին:

Եւ իր հետ կու լար Անտառը Սօսեաց,  
Հայկական դըպիր եւ գոռ տաղասաց.  
Եւ իր հետ կու լար Սուրբ Էջմիածին,  
Հեծած մեր վիշտին վեհ ու խըրոխտ ձին:

# ՍՓԻՆՔՍԻ ՏՈՒԱՅՏԱՆՔ

Կեանքի շուրթին առեղծրած մը մըթին,  
Եւ ըսփինքսն իր նոյն ատեն,  
Հոգիիս մէջ նոր տեսիլներ կը փըթթին,  
Եւ աշխարհներ նորակառոյց ու հեշտին.  
Մարդեր կ'ելլեն անդունդէն,  
Զոր մըշուշներ կը պատեն:

Անապատն եմ եւ իր ծաղիկը վայրի,  
Առանց երգի ու բառի.  
Աչքերուս մէջ ամբողջ երկինք մը կ'այրի,  
Լոյսի, մութի, ծիածանի եւ բոյրի,  
Մինչ աւազին վրայ բարի՝  
Երազն հեռուն կը մարի:

Դեղին բոցով հըրդեհն եմ այս քառսին,  
Ժամուն պատեն կախ պատկեր.  
Բայց, արցունքներս ամեն անգամ կը հոսին  
Մանկան ի տես, փարած նօթի մօրն ուսին,  
Եւ կիներու մարդակեր,  
Որոնց վրայ մեղքն է ծաղկեր:

Ու չեմ կըրնար խօսիլ, համր եմ ես այնքան,  
Աղաղակել չեմ կըրնար,  
Ես տըրտմութեան դաշտն եմ հունձքով կուսական,  
Ես տանս առջեւ թըշուառական մութացկան.  
Եւ կեանքիս ցայգն անհընար՝  
Երբեք, երբեք չի լուսնար:

Զիս ըստեղծող անագորոյն արարչին  
Հայիոյանքն եմ գերազարդ.  
Տիեզերքին կապուած անիւ մը չընչին՝  
Կը գլորեմ գայն հոն ուր կիրքերը կ'ածին,  
Ուր ոճիրներ բարդ ի բարդ՝  
Կը բողբոջին իբրեւ վարդ:

Ես ըսփինքսն եմ, անապատի՛ սիրահար,  
Սերս ինձ բախիղ տօթսկեզ.  
Ես իմ դիմաց նըստած լուծել չեմ կըրնար  
Սիրտս. ափերուս մէջ ծաղկաման շանթահար.  
Խարոյկ եւ կամ մութի դեզ,  
Կը հատնիմ լուռ եւ անտես:

ԱՀԱՐՈՆ ՏԱՏՈՒՐԵԱՆ

# Թ. Թորանեան

## ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱՀԱՐՈՆԻՆ ՀԵՏ

Տարին 1964 էր: Ընտանեօք կը դտնուէինք Փարիզ:  
Քենեկալս՝ Սիրականը, գիտնալով գրականութեան հանդէպ  
իմ տածած սէրս, ըսաւ.

- Ինձի հետ Մոն Մոռանսի կ'երթա՞ս:  
Ու երբ հասկնալ ուզեցի ինչ ըլլալը ըսուածին ու հասկցայ,  
Թէ հայկական ծերանոց մը կայ հոն, ուր ապաստան գտած է  
Ահարոն Տատուրեան բանաստեղծը, այնքան խանդավառուեցայ,  
որ արժանացայ Սիրականի լիահագագ խնդուքին:

Գացինք:  
Հայ տարեց մարդոց այս հանգստարանը պարտէզներու մէջ  
կորսուած դիցուհի մըն էր, ուր վարդ ու մեխակ սիրոյ հրաւէր կու  
տային թռչուններու, բայց եւ ուր իրենց կեանքին վերջալոյսը  
կ'ապրէին ցեղասպանութենէն ճողոպրած հարիւրեակ մը հայեր,  
կազմելով մեր երկրին խճանկարը:

Շէնքը ունէր ընդարձակ հիւրասենեակ մը, ուր կային քանի  
մը սեղանիկներ, հայերէն եւ ֆրանսերէն մամուլի օրգաններով  
ծանրաբեռն:

Մօտենալով Հէք հայրենակիցներուս, իրենց ո՞ր բնակավայ-  
րերէն եկած ըլլալը հասկնալու համար, երբ հարց կու տայի մէկ  
առ մէկ, կը լսէի անունները էրզրումի, Ակնի, Տարօն աշխարհի,  
Խարբերդի, Գոմ գիւղի, Վանի եւ այլ գիւղ ու քաղաքներու...

Անշուշտ անհամբեր էի տեսնելու բանաստեղծը, որուն  
անունին մագնիսը բերած էր զիս այստեղ:

Յոյց տուին Ահարոնին սենեակին դուռը, ուր յամրաքայլ դիմե-  
ցի երկիւղածօրէն, սուրբի մը մօտենալու պէս, քանի գիտէի, թէ քիչ  
յետոյ ափերուս մէջ պիտի ունենայի այն ձեռքը, զոր օր մը սեղմած  
էին Վարուժանն ու Սիամանթոն: Արդարեւ, Ահարոնը եղած էր ժա-  
մանակակիցն ու ընկերը մեր դպրութեան այդ եւ այլ հսկաներուն:

Դուռը յուշիկ կը մօտենահարեմ: Ներսէն արձագանգողը  
խոպոտ ձայն մըն է.

- Ո՞վ է, ի՞նչ կ'ուզէ...  
Կարճ դադարէ մը ետք, դանդաղ կը մտնեմ ներս, ներկա-



յացնելով ինքզինքս, աւելցնելով, որ ուսանող եմ Երեւանի մէջ, արձակուրդով եկած եմ Փարիզ ու լսելով, թէ այս հասցէին կ'ապրիք, եկած եմ ձեզ տեսնելու եւ համբուրելու այն ձեռքը, որ երկնած է «Մագադաթներ», «Պոհեմականֆ», «Սօսեաց անտառ», «Երկնէր երկիր», «Բագիմներու կրակին դէմ» եւ «Կարմիր աւետարան» գիրքերը:

- Խոպոտ ձայն մը, կարծէք անդենականէն եկող՝ կը պոռայ գրեթէ.
- Բայց ուրկէ՞ առիր այդ բոլորը:
- Բիւզանդ թօփալեանէն:
- Բանաստեղծը ի զարմանս ինծի՝
- Կորսուէ ասկէ, դո՛ւրս ելիր շուտ, դուն թիթեռնիկի չափ

իսկ խելք չունիս, որ կարդացած ես այդ գիրքերը: Թիթեռնիկը իր երփնադեղ պատմունճանը լայն բացած դէպի լոյսը կը թեւածէ, իսկ դուն եկած ես խաւարին ընդառաջ, ըսի կորսուէ՛, գնա՛...

Բանաստեղծը ողորելու փորձերս անցան ի գուր: Գլխիկոր դուրս ելայ իր սենեակէն փշրուած սիրտով: Կարծէք արթմնի երազ մը տեսած ըլլայի ու երազիս մէջ փշրուած ըլլար երազս:

Կոտորուած սիրտով երբ տուն կը վերադառնայինք, զգացի, ինքտնչարժը վարող քենեկալս, նոյն տխրութիւնը կ'ապրէր: Անխօս հասանք տուն:

Յաջորդ Կիրակիի համար նոր ծրագիր մը կազմած էի: Որո՜չած էի կրկին այցելութիւն մը աւալ բանաստեղծին, հետս ունենալով զաւակներս՝ Անին ու Արան:

Երբ բանաստեղծին դուռը մատնահարեցի ու հրաւէր ստացայ ներս մտնելու, այսպէս պատասխանեցի անոր առաջին հարցումին.

- Անցեալ Կիրակի վտարած տղան է եկողը, այս անգամ եկած եմ զաւակներուս հետ: Ահա անոնք, ու դառնալով ձագուկներուս ըսի.
- Անի, աղջիկս, այս հօրեղբայրը բանաստեղծ է, իրեն համար երգէ կամ արտասանէ:

Անին արտասանեց: Նոյն առաջարկը մանչուկիս ըրի, ան եւս արտասանեց ու ես ալ իմ կարգիս ասմունքողի դիրք մը ընդունելով սկսայ արտասանել իր իսկ մէկ քերթուածը.

Արդարավա՛ր ալեկոծում ու շարժում,  
 Քեզ կ'երգեմ ես, բանամեայ պատանի,  
 Համակ խնդում ու կայքում,  
 Մինչդեռ աշխարհն հետգհետէ կը մթագնի,  
 Ծանր իր բեռով թշուառութեան,  
 Ծանր երկունքով բոցեղ արեան:

Ժպիտ մը ուրուագծուեցաւ բանաստեղծին դէմքին ու իր

խորշոմները լոյսով լեցուեցան, երբ ան յուշիկ-յուշիկ արտասանելու պէս ըսաւ.

- Կարծո՞ր Հոգիս կակուղցուցիր, տղա՛յ, եկուր նայիմ, եկուր, սանկ նստէ մօտս, ըսիր Հայաստան ուսանող ես, պատմէ նայիմ, ի՞նչ կը պատմես Հայաստանի մասին:

Ըսի իրեն, թէ Հայաստանի մէջ յատկապէս մեր գրագէտներուն աւագ սերունդը կը ճանչնային զինք: Իր մասին բարձր կարծիք ունէին Վաղարշակ Նորենցն ու Սողոմոն Տարօնցին, թէ իր մասին իմ ներկայութեանս նոյնպիսի բարձր կարծիք յայտնած էր մեր արձակագիրներէն Ստեփան Զօրեանը:

Տամկացան բանաստեղծին աչքերը ու ան իր մշուշոտ աչքերը դէմքիս ուղղելով՝ ըսաւ.

- Ճի՞շդ կ'ըսես, հաւատա՞մ, ուրեմն Հոն, Հողին վրայ մոռցրած մը չե՞մ, զիս յիշողներ կա՞ն, ուրեմն խաւարի մէջ չէ անցած կեանքս ու խաւար մը չեմ ես, ինչպէս հաւատացած էի:

Բարեկամական դարձաւ մեր զրոյցը ու երբ դուրս կ'ելլէինք, Ահարոն համբուրելէ ու օրհնելէ ետք զաւակներս, փակուող դրան ձեղքէն պոռաց գրեթէ.

- Խորոս, տղա՛ս, իմ կողմէս չե՞րք բարեւներ տուր Ստեփան Զօրեանին, որուն «Սպիտակ քաղաք»ը ո՛չ միայն կարդացած, այլ հաւնած ալ եմ:

Երեւան վերադառնալէս ետք, երբ օր մը գացի Գրողներու տուն, Հոն, Ստեփան Զօրեանին հանդիպելու յոյսով, Եղուարդին հանդիպեցայ, Գրողներու Միութեան նախագահ՝ Եղուարդ Թովչեանին, որուն մանրամասն պատմեցի Հանդիպումս բանաստեղծ Ահարոնի հետ:

Եղուարդ Թովչեանը անմիջապէս հեռախօսեց Զօրեանին, որ փութաց գալ Գրողներու տուն:

Հանդիպումի պատմութիւնս երբ կրկնեցի «Պապ թագաւոր» պատմավէպի անուանի հեղինակին, ան, պահ մը խոկալէ ետք, հարցումը Եղ. Թովչեանին ուղղելով՝ յարեց.

- Ինչո՞ւ Հայ բանաստեղծը իր կ'անքի վերջին օրերը անցկանցի օտար ծերանոցներում, մի՞թէ չենք կարող Ահարոնը բերել այստեղ, չըջալատել նրան մեր գրողներով... մի՞թէ:

Երկու գրողներ մեր ներկայութեան կարճ պահ մը խորհրդողակցելէ ետք, ըսին ինծի.

- Յաջորդ անգամ ե՞րբ էք մեկնելու Փարիզ, Փետրուարի՞ն, հետու չէ, երբ մեկնիք Փարիզ, մեր անունով կ'ասէք Ահարոնին, որ մենք նրան սիրով հրաւիրում ենք Հայրենիք: Թող գայ երկրում ապրի: Եթէ համաձայն է, մենք ունենք միջոցներ հարցը կարգաւորելու:

Փետրուարը չուշացաւ: Ես կարճ արձակուրդով գարձեալ մեկնեցայ Փարիզ, աւետիսը հասցնելու համար Ահարոն բանաստեղծին: Ու ըստ լուրերու թեանս, կառաչարէն իջնելէս ետք, փոխանակ քենեկալիս տունը ուղղուելու, գացի Ռիշէ փողոցին վրայ գտնուող Բ. Թօփալեանին տպարանը:

Բանաստեղծ ու նկարիչ Թօփալեանը ինչպէս միշտ տպագրելի գրութիւն մը սրբագրելով գրադած ըլլալուն, ձայնիս դիմաց անսկզբնապէս զարկով շրջուեցաւ դէպի դուռը եւ դէմքը խստացնելով ըսաւ.

- Նեղուած եմ քեզմէ ու շատ նեղուած եմ...
- Պատճառը կրնա՞մ հասկնալ...
- Երէկ ինչո՞ւ ներկայ չէիր թաղումին...
- Որո՞ւն թաղումին, Բիւզանդ սիրելի...
- Որո՞ւն թաղումին պիտի ըլլայ, ինչո՞ւ, չէ՞ր գիտեր.

Ահարոնի թաղումին, բազմութեան մէջ քեզ փնտոցցի ու չգտայ, արդար էր, որ ներկայ ըլլայիր, նեղուած եմ քեզմէ...

- Բայց, պարոն Թօփալեան, ես Երեւանէն, Մոսկուայի վրայով նոր հասայ Փարիզ ու կայարանէն ուղիղ մտող եկայ, ժամ մը չեղաւ Ֆրանսա հասնելու:

Թօփալեանը զարմացած դէմքիս կը նայէր: Հայրենիքէն բերած աւետիսս չէր գիտեր, թէ 1965ի Փետրուարին մահը պիտի կանխէր գինք: Բայց ընտանեկան թաղումին համար Թօփալեանը մահուան երեսն ի վեր յայտարարած էր իր «Տապանագիր» քերթուածով.-

Հոս է թաղուած վարդն, որ երբեք չի թողնիր,  
Ճառագայթին պէս այգուն.  
Ձի արիւնէն ծաղկեցաւ վա՛րդը կարմիր,  
Կարօտներովն իր թաքուն:

Հոս է թաղուած սիրտն, որ երբեք չի մեռնիր,  
Լուսնակին պէս տանիքիս.  
Ձի հոն կաթեց Աստուծոյ սէրն անպատիր,  
Եւ արցունքն հէք Մայրիկիս:

Երբոր կարդաս, անցո՛րդ մարդ, դուն մի՛ տխրիր,  
Տես շուրթերս իմ կը ժպտին,  
Ձի քարին տակ երկինք մը կայ լուսալիւր,  
Կոյս դայլայլովն արտոյտին:

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

Վիմամպլը, 1949

# ԲԱԶՄԵՌԱՆԴ ՈՒԺԸ

Եթէ ուզենք աշխարհի հինգ ցամաքամասերուն հինգ անգամ հինգ եւ թերեւս աւելի քաղաքներ այցելած Սփիւոքի մտաւորականներուն մարդահամարը կազմել, առաջին անուններէն մէկը, եթէ ոչ՝ առաջինը անպայման թորոս թորանեանը կը հանդիսանայ:



Վաթսունական թուականներէն ցայսօր, կարծէք մնայուն հասցէ չունի ան,- օր մը Հալէպէն կ'առնենք ձայնը, օր մը՝ Պէյրուսի, դեռ բարեւ - Աստու բարեւ չըսած իրեն, Երեւանէն կը սկսի թէն, դեռ բարեւ - Աստու բարեւ չըսած իրեն, Երեւանէն կը սկսի խօսիլ, քիչ ժամանակ անց՝ Փարիզէն, Լոնտոնէն, Նիւ Եորքէն, Թեհրանէն, Գահիրէէն ու Պոլսէն՝ ընտանեկան թաղումներ, գէտի մը, գիտնականի մը մասին թանկ տեղեկութիւններ, մտածումներ ու ապրումներ փոխանցելով ընթերցողին՝ կարճ յօդուածի մը տակ, դիմաստուերով մը ու երբեմն երկու հարիւր էջի մօտեցող մենագրութիւններով, որոնց մէջ ըսինք արդէն, ընթերցողը անպայման կը գտնէ անտիպ գեղեցկութիւններու շարք մը՝ հայրենական, գրական կամ մարդկային կալուածներէն ներս:

Ուրիշ խօսքով՝ ոչ մէկ երկրէն կամ քաղաքէն ձեռնունայն վերադարձաւ թորանեան, այլ՝ երբեմն քիչ ծանօթ, երբեմն անտեսուած, անիրաւուած կամ իրենք զիրենք Համեստաբար մեկուսացած արժանաւորներէն շող մը տեսանելի դարձուց, էութենէն թաքուն գիծ մը՝ մատչելի:

Բազմաթիւ մարզերու ձեռք գարկած է թորոս թորանեան. բանաստեղծական, արձակի, յուշագրական ու տպաւորապաշտ հակումներու առնչուող այլազան հատորներ ունի, որոնք հաշուի առնուեցան իր ծննդեան 75 եւ գրական գործունէութեան 55 ամեակին նուիրուած Հալէպի յորձեանական Հանդիսութեան ընթացքին, ու արդար նմաններու մէջ պիտի արժեւորուին անշուշտ թացքին, ու արդար նմաններու մէջ պիտի արժեւորուին անշուշտ Պէյրուսի մէջ եւ այլուր: Յարգանքի մեր այս կարճատու խօսքին

մէջ մենք պիտի շարունակենք ընդգծել վերը ուրուագծուած իր արժանիքը, շրջագայութեան ընթացքին իր անկրկնելի ձեռքբերումները՝ հանրածանօթ թէ քիչ ծանօթ դէմքերու մասին, ինչպիսիք են մեծանուն նկարիչ Գառզուն եւ տիեզերահոչակ գիտնական Գրիգոր Գուրղաղեան, եւ նուազ անուանի, այլ՝ արժանաւոր ուրիշներ, որոնց մէջ առանձնացնելու համար երկուքը, տանք անունները բանաստեղծ Ահարոն Տատուրեանի եւ դարձեալ բանաստեղծ բազմաչարչար Օննիկ Փանիկեանի, որոնք նոր ընթերցողին ընտանի դարձան չնորհիւ Թորոս Թորանեանի հետապնդումներուն ու բացսիրտ վերաբերումներուն:

Թորանեանի հեղինակութիւններէն կը յիշուին չուրջ ութսուն եւ նոյն թիւով իր կողմէ խմբագրած հատորներ: Ո՛չ իր ստեղծումները եւ ոչ ալ խմբագրած հատորներուն մէկ կարեւոր տոկոսը չեն կրնար անշուշտ դիմանալ ժամանակի քննութեան: Ու ատոր պատճառը, փարատօքս թուի թերեւս, պէտք է փնտռել իր միւս արժանիքին մէջ, որ իր արագ խանդավառութեան չափազանց ուժգին բռնկումը եղաւ յաճախ: Իր անունը կրող հարիւր քսուն հատորներուն մէջ ամուր արժէքներուն փայլը չի շողար այնքան, որքան կը ծփայ իր անձին բարութեան լոյսը...

Ու ասիկա զանցառելի արժանիք մը չէ:

Պիտի ըսէինք տակաւին, - երանի այն գրականութեան, որ Թորոս Թորանեան մը ունի իր ծոցին:

Մենք ունինք այդ բազմեռանդ ուժը:

Երանի մեզի...

Պ. Ս.

Ս. Տէյիրմէնճեան

«ԽԱՉԸ»

Եղիշէ Արք. Դուրեանի «Խաչը» բանաստեղծութեան նուիրուած հետագայ վերլուծումը «Բագին»-ի էջերուն երեցած Սեւան Տէյիրմէնճեանի նուիրող գրութիւնն է, իսկ առաջինը, ընթերցողը կը յիշէ անապաման, կը կրէր իր եւ մեր հաւատարիմ աշխատակիցներէն Վարդան Մատթէոսեանի միացեալ ստորագրութիւնը, «Կոստան Զարեան եւ Անդրանիկ Ծառուկեան» անուն ուսումնասիրութեան ներքեւ:

Երիտասարդ, հետաքրքիր, ծանօթութիւններու անյագ ծարաւով օժտուած Սեւան Տէյիրմէնճեան, որ Պոլսոյ եւ հայրենի մամուլին մէջ տարբեր նկարագիր ունեցող գրութիւններ լոյս ընծայած է: Վերջերս մեր տրամադրութեան տակ դրաւ բաւական թիւով նոր յղացումներ, զորս պարբերաբար պիտի յանձնենք մամուլին:

Վստահաբար, երիտասարդ մտաւորականին ոճը աստիճանաբար աւելի պիտի բիւրեղանայ եւ շուտով առանձին տեղ մը պիտի գրաւէ նորահաս դէմքերու շարքին:

Պոլսոյ Ազգ. Կեդրոնական վարժարանէն շրջանաւարտ Սեւան Տէյիրմէնճեան ասարտած է նաեւ Երեւանի Համալսարանի բանասիրական ճիւղը եւ այժմ կը աւարտուի ներկայացնել դոկտորայի թեզը՝ ի մասին Անդրանիկ Ծառուկեանի գրականութեան:

Արմաշու մոնազնի անցեալ ու հետագայ գրեթէ բոլոր քերթածներուն կաղապարները ամփոփուած ու խտացած կը տեսնենք իր «Խաչը» բանաստեղծութեան մէջ: Քերթելու իր այս կերպը կառուցուածքի առանձնայատկութեան մը յայտարարը ըլլալով հանդերձ, օտար հեղինակներէ կատարուած թարգմանուլու ազդոյն բանաստեղծութիւնն է՝ կրնայ տարբեր կարծիքներու առիթ տալ, սակայն, իբրեւ կառուցուածք ու քերթուածք, նախա-եւ յետ-ոտանաւորներու տիպական արտայայտութիւնն է՝ ընդունելի իրողութիւն մը: Մուտքը, դարձապէս չի փոխուիր՝ միջոցները՝ գրեթէ ընդելուզուած իրարու, կը բերին հանգուցի շեշտ վիճակին, որ ար-

ձագանգն ու յամեցումն է, կարելի է, շատ անգամներ համբաւուած իր քարոզխօսութեան:

«Խաչը» իբրեւ գրական յղացք կը շրջանակէ խաչափայտը: Երբեմն շնչաւորելով ու անձնականացնելով զայն եւ երբեմն ան Յիսուսի իմաստը անոր հետ միաւորելով՝ կը փորձէ խաչքար մը ճարտարապետել բանաստեղծութեամբ: Խաչքարի մը մնայնութիւնն ու ապագայ սերունդներու գնահատումները եթէ տեսանելիութեամբ կարելի է պայմանաւորել, ապա շատ աւելի դժուար է պեղել այս քերթուածքի է-ն, գոյնը, ձեւին գեղեցկութեան ետին Թուքնուած մշտամնայ խորքը, որ, մոնազնի անունին անմահութեան կողքին ու անկէ անկախ, ինքնուրոյն անձնագիր մըն ալ ձեռք անցուցած է:

Պայմանադիր-առաջադրանքներու ի յառաջագունէ առկայութիւնը, քերթողութիւնը ընկալող ու զայն քարոզի մը հանգոյն ընդունիլ ջանացող ընթերցողին կը պարտադրէ տուեալ վիճակներուն հասնումի հոգեխառնութիւն մը:

Իբր այդ, «պաշտումի թափը»՝ «գոյգ մը թեւ», «տեսիլները»՝ «Յայտնութիւն»,

Բարձրացումը՝ «շեշտ»,

«լոյսիկ»,

Մերձեցումը՝ «ջահ»,

«վերքի համբուրումը»՝ «կեանք»,

Թաղումը «շուքի տակ»՝ «շող» մը կը խոստանայ ընծայել: Հոգիի հասնումը մատնանշուած վիճակին էական փոփոխութիւն մը կ'ենթադրէ ենթակայէն եւ խոստացուած ստացումներու ակնկալիքը ոգեւորութիւն կը յառաջացնէ նման հասնումի ենթադրած փոփոխութեան համար: Մեկնաբանումի նման եղանակը այս բանաստեղծութեան գեղեցկութեան ընկալումը պիտի եզրէր հաւատացեալներու շրջանակով մը գուցէ, ինչ որ անտեսել պիտի նշանակէր քրիստոնէութենէ հետու գտնուողներու գեղագիտական ախորժակը: Դեռ աւելին, բանաստեղծութիւնն ալ պիտի ղնէր պարագայական ըլլալու վտանգաւոր կացութեան մը մէջ:

Բանաստեղծութեան ընկալումի, կամ աւելի ճիշդը՝ անոր գեղագիտական արժէքի իմացումը առարկայականօրէն կարելի պիտի ըլլայ պատկերել վերջինիս հարթութեան վրայ, քանի որ հոգեւոր բանաստեղծութիւն մը, անկախ ըր արժէքէն, միշտ ալ ենթակայական զգացողութիւն մը յառաջացնելու ատակ է՝ իր լաւ ընտրուած ու գեղեցիկ բառերով, թէկուզ աւետարանական խօսքերու սոսկ շարադրմամբ վերածուելու համար ազդեցիկ խօսքի

մը հաւատացեալի հոգիին մէջ (նման բանաստեղծութիւն մըն է, օրինակ, Դուրեանի «Իդօներ»):

«Խաչը» ի եռայարկ կառուցուածքը (հասնում-ստացում- եւ առաջնոց նպատակը՝ ուժի սաւառնումը, կամքի հանդիսացումը, խօսքի արձագանդումը. փառքի վարդավառումը, շունչի ոգեւորումը) մարդկային միսթիք ընկալումի մը յուշը բերելէ աւելի, բանաստեղծին ներկայացուցած Բացարձակին միանալու, անոր խորքը մտնելու՝ զգացողութիւնը կը բերէ հետը: Փախուստի մը հետեւանքն է այս միացումը, իսկ պատճառը: Պատճառն ալ «տրուած Խաչն է միայն»: Հեղինակին պարտադրած Բացարձակը որքան անկախ ըլլայ իրմէ, այնքան ալ ընդունելի կրնայ ըլլալ ուրիշ մէկու համար, հացողձակը Աստուած կոչուի թէ Յիսուս, Պուտա կոչուի թէ Մովսէս: Առանց անձնականանալու նոյնիսկ, կրնայ վիճակ մըն ալ ցոյց տալ՝ Նիրվանայի նման: Իր այս յատկութեամբ ալ բանաստեղծութիւնը իր վրայէն կրնայ նետել քարոզակերպ ըլլալու իր պատմուճանը՝ հանդերձուելով հաւատացեալին թէ անհաւատին ապահովութիւն մը տալու, ու այս ապահովութենէն բխող հաճոյք մը զգացնելու տարազը (կարելի կ'ըլլա՞յ գեղեցիկի զգացումը առնչել կամ պայմանաւորել նման զգացողութեամբ):

Քերթուածին մէջ, ընթերցման ընդերքի բացայայտումը կը յանգեցնէ խաչի երկու հակառական ընկալումներուն:

Նախ՝ խաչի աւանդական իմաստը, իբրեւ չարչարանաց գործիք, մահուան նշան, տաժանի առարկայ, տպա՝ խաչը, իբրեւ «ուժ», «կամք ու խօսք», «կայծ ու վրէժ», «փառք», «շնորհ ու շունչ», «լոյս»...: Հասկնալի է, չարչարանաց խաչը պիտի տանի շնորհաց խաչին: Աշխարհին տուած խաչը իր տաժանքով, փորձութիւններով, կեղծ ու պատիր միջավայրերով եւ մասամբ նորին մահ է թէ, միաժամանակ միակ ճանապարհն է, որ կը հասցնէ Աստուածատուր խաչին: Խնդրոյ առարկան տարարժէք իրերու մասին ըլլալէ աւելի, ի շրջանս իւր պտտուող առանձին գոյգ ընկալումներու մասին է իրի մը:

Ուրեմն, առաջին հոգեվիճակին հասնումը («Թէ»երով սկսող ստղծումը նշանակէտը) կ'ենթադրէ աշխարհատուր խաչի յաղթա-

\*.- «Մի անալու, խորքը մտնելու» կապակցութիւնները տուեալ պարագային իր գործը կատարելու, Անոր նպատակը իրագործելու բացատրութիւնը կը յայտարարէ: Ուստի, «միացումը» չի կրնար բացարձակ ըլլալ՝ նման զգացողութիւն մը տալով հանդերձ: «Գործիք» ըլլալու փաստը որոշ հեռաւորութիւն մը կը ստեղծէ:

Հարուճը: Առարկայի մը (այս պարագային՝ խաչի) տարրեր ու հակադիր տարարժեքները, իմաստները կարողանալ տալու յատկութեամբ ալ կ'արժեւորուի Արմաշու մոնազնի քերթուածը: «Թէ»երը «եթէ»ի փոխուած են «Նտեւէս եկո՛ւր»ին մէջ, ուր գարձեալ տեսանելի է Հասնումի մը գոյութիւնը: Այն տարրերութեամբ, որ «Խաչը»ին մէջ նման Հասնում մը եթէ ամբողջովին կախում ունի ենթակայէն («Թէ պաշտումի թափն ունենաս դուն»), ապա «Նտեւէս եկո՛ւր»ին մէջ կը գտնուի ենթակային անձէն գուրս, կախում ունի կոչումէն, կանչումէն, կանչուիլէն. «Եթէ գիս տանիս...»:

«Նտեւէս եկո՛ւր»ը ու «Խաչը» շարունակութիւն մը կը ստեղծեն՝ ունենալով միջգրութենական ակնյայտ յարաբերութիւն մը: Առաջինի վերջին քառեակը, ուր ենթական վարանքով ու վախով կը շարունակէ հետեւիլ Բացարձակին՝ Խաչի ճամբուն վրայ իսկ, ու այս իսկ բանաստեղծութիւնը կը դառնայ մեր վերեւ ակնարկած աշխարհատուր խաչին յաղթահարումը, որով միայն կարելի պիտի ըլլայ Հասնիլ Շնորհաց Խաչին, ինչպէս նաեւ, հեղինակի պարադային, «Խաչը» բանաստեղծութեան.

Ո՛հ, միթէ կրնա՞մ գալ Քու ետեւէդ  
Երբ խաչը ուսիդ կ'ելլես Գողգոթա,  
Բայց ի՞նչ սերտ հրապոյր, ի՛նչ բուռն ուժ է դա՛  
Որ գիս միւնչեւ հոն կը տանի Քեզ հետ:

Բանաստեղծութեան գաղտնագիրը «սերտ հրապոյր»ի, «բուռն ուժ»ի բացումին, բացատրութեան մէջ է, զոր կը տեսնենք «Խաչը»ին մէջ, երբ «սերտ հրապոյր»ի ու «բուռն ուժ»ի կաղապարին մէջ կը գտնենք՝ «պաշտումի թափը», «տեսիլներ»ը, աղօթքը («բարձունքէ մ'իսուսիս»), եւայլն:

«Խաչը» Հասնումի յաղթական ու Հաստատ աւարտի մը ղգացողութիւնը եթէ կու տայ ընթերցողին, նովին բանիւ արդարացնելով իր վայելած առաւել ժողովրդականութիւնը միւս բանաստեղծութիւններուն համեմատութեամբ, կամ այդ բոլորի գմբէթումը տեսնելու առիթը տալով մեզի, ապա «Անտառին մէջ»ը կու գայ մոնազնին վերջովումը բերելու՝ անհաաի նկատմամբ: Միջգրութենական կապ մըն ալ այս ու մեր բանաստեղծութեան միջեւ՝ ձեւի նոյնութիւնը, տեղ-տեղ կրկնուող պատկերները, քերթուածի զարգացման նոյն միջոցները:

Եթէ «Նտեւէս եկո՛ւր» ի վերուստ ուղղուած հրաւեր մը ունէր, ապա այստեղ անհրաւեր պաշտումի մը գովքը կայ. «Ոչ անիրաւ էին եւ ոչ ալ անմիտ/Անոնք որ գեթ կը պաշտէին անիրաւեր»: Վրդովումի մը գոյութեան մասին խօսք եղաւ վերը: Անտառի ծառերուն

ուղղեալ ու անցեալ-անկատարով արտայայտուած նախադասութիւններով («Թէ եղեւին ըլլայիք դուք կամ նոնի...», «Տերեւաշարժ թէ ըլլայիք դուք կաղնին...», «Թէ ըլլայիք հովանաւոր դրախտն Հացեաց...», «Թէ ըլլայիք դուք բարձրաբերձ բարտիներ...», «Թէ ըլլայիք նոյն իսկ ցածուկ մորեմին...») ըլլալիք, բայց թէրաւորո մնացած պաշտումի մը ափսոսանքը կը զգացուի անդ: Մարդու ու բնութեան պաշտումի տարրերութիւնը կարելի է մղում կու տայ: Մոնազնին եւ կամ բնութեան արտացոլման մարդու հոգեխառնութեան մէջ յառաջացուցած պաշտումի ու թոխչքի զգացողութիւնը, որուն ազնուութիւնը՝ «Կիտի իսթանէր մարդ-Աստուած յարաբերութիւնը.

Թէ ըլլայիք նոյն իսկ ցածուկ մորեմին  
Խոր տեսիլքի կրակներով հրդեհուած,  
Ձեռ թաւուտքին մօտ՝ ուր բոցեր կ'արիւնին  
Պիտի գիրար տեսնէին մարդ ու Աստուած:

Մոնազնի այս բանաստեղծութիւնը կրնայ ամբողջացնել «Խաչը»ի, «Նտեւէս եկո՛ւր»ի շրջանակը՝ թէ՛ ձեւով եւ թէ՛ խորքով, չըսելու համար՝ կը կազմէ եռագրութիւն մը անոնց հետ: «Խաչը»ին հետ ունեցած միջգրութենական ակնյայտ յարաբերութիւնը աւելի զգալի կը դառնայ առաջին քառեակին մէջ.

Թէ ըլլայիք դուք բարձրաբերձ բարտիներ՝  
Արձանացած պաշտումներու սլացք անհուն,  
Արեւորդին ձեր կողին մէջ կը տեսնէր  
Խաչ մը խոկում մահուան ձորին վրայ կանգուն:

«Խաչը»ին մէջ ածականներու ու երբեմն ալ մակբայներու օգնութեամբ տրուած ընորոշումներն ու ընթացքի մը վերջակէտը ըլլալու ընկալչութիւնը հոս կը գտնէ իր բացատրութիւնը՝ «Խաչ մը՝ խոկում մահուան, ձորին վրայ կանգուն» ձեւին մէջ: Խաչը, փարականին միւս կողմէ, է՛րբ Հոգեվիճակի Հասնում ու աւարտ, ուր «պիտի գիրար տեսնէին մարդն ու Աստուած», կամ արդիւնքը «արձանացած պաշտումներու» անբուն սլացքին:

«Խաչը» բանաստեղծութիւնը Եղիշէ Արք. Դուրեանի միւս քերթուածներու համապատկերին վրայ դիտելի ու քննելի, անշուշտ, խորքին պեղումը աւելի կը դիւրացնէ կամ այնտեղի պատկերներու յատակը կ'ընդլայնէ. այնուամենայնիւ. ըլլալով աւարտուն բանաստեղծութիւն մը, ունի կարողունակութիւնը ինքզինք բացայայտելու:

ՄԵՒԱՆ ՏԷՅԻՐՄԷՆՃԵԱՆ

# ԽԱՉԸ

Թե պաշտումի թափն ունենաս՝  
Տերն զոյգ մը թե քեզի կու տայ,  
Որպեսզի իր ուժը անհաս  
Սաւառնացնես երկրի վրայ:

Թե տեսիլներ ունենաս դուն՝  
Յայտնութիւն մ'ալ քեզի կու տայ,  
Որպեսզի իր կամքը արթուն  
Յանդիսացնես երկրի վրայ:

Թե բարձունքէ մ'իսօսիս իր հետ՝  
Ինքը քեզի շէշտ մը կու տայ,  
Որպեսզի իր խօսքը յաւետ  
Արձագանգես երկրի վրայ:

Իսկ իր լոյսին թէ երթաս մօտ՝  
Ինքը քեզի ջահ մը կու տայ,  
Որպեսզի իր փառքն անաղօտ  
Վարդավառես երկրի վրայ:

Թե համբարօրիս հետ իր վերջին՝  
Ինքը քեզի կեանք մը կու տայ,  
Որպեսզի իր շունչը անգին  
Ոգետորես երկրի վրայ:

Իսկ թէ թաղուիս իր շուքին տակ՝  
Ինքը քեզի շող մը կու տայ,  
Ոչինչին դեմ յոյսն անփակ  
Ճառագայթը երկրի վրայ:

Ու այդ ուժը այդ կամքն ու խօսք  
Այդ կայծն ու վրեժ, այդ փառքը սոսկ,  
Այդ ճնորհն ու ճունչ այդ Յոյսն համայն,  
Քեզի տրուած խաչն է միայն:

ԵՂԻԾԷ ԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ

# ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ

«...Եւ սուրբ խաչուածի արիւնը շիթ-շիթ  
Կաթում, ներկում էր իողը գողգոթալ,  
Յիսուսի կողքին կանգնած էր Մարիամ՝  
Աստուածածինը Մեծն Տիրամայր...»:

Դիմացի էջին տրուած եղիշէ  
Եպս. Դուրեանի «խաչը» բանաս-  
տեղծութեան հետ պիտի ուզէինք,  
ո՞ր ընթերցողը կարդայ նաեւ հայ-  
րենի «Նորք» հանդէսէն արտադրու-  
ած Յռիփսիմէ Աւետիսեանի «խա-  
չելութիւն»ը: Նազովրեցիիով սրբա-  
գործուած ու սուրբ գրոց բառա-  
րաններուն անցած խաչելութիւնը  
թէեւ ինքն ընթերցողին խորք մը  
չունի, բայց գոհաբերական իր բնոյ-  
թով ընթերցողին հոգիին մէջ կը  
յուզէ մեր ժողովուրդին վերջին ուխ-  
տատեղիին ու ուխտեալներու թա-  
փօրին հանդէպ երկիւղածութեան  
ու աղօթքի սրտառուչ ապրումներ:

Լուռ խաչակնքէք Ձեր երեսները՝  
Սուրբ վայրեր ենք մտնում  
երկիւղածութեամբ,  
«...Աստուած ուղարկեց միածին որդուն  
Աշխարհի մեղքը քաւելու համար,  
Նա գոհաբերեց իր միևնուճարին  
Փրկութեան համար մարդկային հոգու»:  
Արդ մեծ է Աստուած, օրհնեալ,  
պաշտելի,  
Երկրպագութեան փառքի արժանի,  
Որ մեզ փրկելով խաչեց իր որդուն...  
Իսկ դուք եղէ՛լ էք Եռաբլուրում:

Խաչուած քարերին, յիսուսուած,  
խոնարհ  
Քանի միևնուճար գոհեր են ննջում  
Եւ քաջ ծնողաց պատգամին հլու  
Աստուածամայրեր անքէն, անտրտունք,  
Լուռ ու անխռով, սգաւոր մայրեր՝  
Խաչուածի վերջի արիւնը սրբող:

Ազգային ոգու գոհասեղանը  
Չոհ է պահանջում կրկին ու նորից,  
Թմբուկ են զարկում, շեփոր են փչում,  
Վիշապն է զարթնել լեթարգեան քնից:  
Եւ մատաղացու հայրորդիք մատղաշ,  
Դեռ նորամօրուս, դեռ տղայական,

Զինուած օրհնանքով մայրական, բարի  
Լեզքներին պրկած գօտին հայրերի,  
Փրկայոյս երգով ինքնագոհ ու յաղթ  
Գնում են, ահա, դէպ՝ կառափնարան...:

Քայլում են խրոխտ, սթափ,  
գիտակցում՝  
Իսկ ահտի հանուէն հեկց լուսաբացին,  
Մահապարտներ են ճակատները բաց՝  
Գնում են ազգը փրկեն մեղքերից:  
Զոհաբերումից յոյսը պիտ՝ յառնի,  
Շքեղ ու ազնիւ, բոլորանուէր  
Գիտակցում մահուամբ թափուած  
արիւնը

Մի վեհ հաւատ է միշտ որդեգրել:  
- Յէյ, դուք՝ նորելուկ հաւատագետներ,  
Այն չշփոթէք կոյր հաւատի հետ:

Փառք, մարտիրոսուած  
Նահատակներին,  
Երկինք համբառնած նրանց ջիւղ  
հոգուն,

Որ խնկարկուելով սերնդէ-սերունդ  
Կը դառնայ լեզենդ, ասք ու  
պատմութիւն:

Ազուր ծնողաց փառք ու խոնարհում,  
Որ մեր այսօրուայ ու վաղուայ համար  
Չխնայեցին իրենց թանկ որդուն:  
... Եւ ո՛վ է ասում, թէ միայն Աստուած  
Կը գոհաբերէր իր միակ որդուն...  
- Իսկ դուք եղէ՛լ էք Եռաբլուրում...:

ՀՌԻՓՍԻՄԷ ԱՒԵՏԻՍԵԱՆ



Եւ որովհետեւ իրենց հարկերը չեն վճարում: Բայց  
 այսինքն իրենց հարկերը չեն վճարում: Այսինքն  
 իրենց հարկերը չեն վճարում: Բայց այսինքն իրենց  
 հարկերը չեն վճարում: Բայց այսինքն իրենց հարկերը  
 չեն վճարում: Բայց այսինքն իրենց հարկերը չեն  
 վճարում: Բայց այսինքն իրենց հարկերը չեն վճարում:

### ՅԵՏԱԴԱՐՁ

Ինքնաշարժի արկածով Ղամասկոսի ճամբուն մե-  
 ռած Միքայել Թաւրիզեան, որ բանաստեղծութիւններ  
 ու արձակ էջեր կը ստորագրէր ու «Բագին»-ի երի-  
 տասարդ բարեկամներէն մէկը կը հանդիսանար: Մեր  
 տրամադրութեան տակ դրած էր Գուրգէն Մահարիէն  
 ստացած մէկ նամակին նախորդ էջերուն տրուած  
 հատուածին սլատճենը, որ կը շօշափէ այն օրերուն  
 մեր մամուլին մէջ քննութեան հրատապ նիւթ դար-  
 ձած Կոստան Զարեանի «Նաւ»-ուն երեւալեան այլա-  
 սերումը:

Այս տարի հայրենի թերթերը խանդավառութեամբ  
 կը նշեն Մահարիի ծննդեան 100ամեակը եւ կը խօսին  
 նաեւ անոր ձգած անտիպ ժառանգութեան մասին:  
 Այդ առիթով՝ մտածեցինք ուշադրութեան յանձնել  
 նաեւ անտիպ այս էջը, մաղթելով, որ յայտնաբերուի  
 անոր ամբողջութիւնը, ու ամբողջին հետ՝ նաեւ այլ  
 էջեր, որոնք ենթադրաբար կը գտնուին Թաւրիզեանի  
 թուղթերուն մէջ:

**Միքայել Թաւրիզեանի ուղղած իր նամակին մէջ, Մահարի ի  
 միջի այլոց կը գրէ.-**

«Ինչո՞ւ Եղուարդ Պոյաճեանը իր կրֆոտ բաց նամակն ուղղած է  
 Խորհրդային իշխանութեանը, փոխանակ գրքի խմբագրին, Հրաչեայ  
 Գրիգորեանին: Ո՞ր օրուանից Հր. Գրիգորեանը դարձաւ Խորհրդային  
 իշխանութիւն»:

**Թափանցանիտ, մահաւանդ սրամիտ գրողի արդար Համբա-  
 շի մը տէր էր Գուրգէն Մահարի եւ ճիշդ այդ պատճառով դժուար  
 է իր գրչին տակ կարդալ նման միտքեր:**

**Կոստան Զարեանի «Նաւ»-ուն խորտակման մէջ, Մահարի  
 կտրականապէս մեղաւոր կը նկատէ անոր երեւանեան խմբագրի-  
 ըր եւ ոչ թէ Համայնավարութիւնը, որ, ըստ Պոյաճեանի «Բաց  
 նամակ»ին, մեղաւորներէն գլխաւորը նոյնինքն Համայնավարու-  
 թիւնն էր:**

**Մենք կը կարծենք, թէ Մահարի կը սխալի երբ Հարցին ետին  
 չորրորդական անձի մը ստուերը միայն կը տեսնէ եւ ոչ թէ  
 կարմիր վարդապետութիւնը: Ճիշդը Եղուարդ Պոյաճեանն էր,  
 որովհետեւ եթէ Համայնավարութիւնը չլլայր եւ Համայնավա-  
 րութեան մօտ ի պատուի չըլլային սրբապետներն ու սրբապաշտու-  
 թիւնները, Հրաչեայ Գրիգորեանները կը յանդգնէին նման անյա-  
 թիւնները, Հրաչեայ Գրիգորեանները կը յանդգնէին նման անյա-**



բիր ձեռնարկներու դիմել: Աւելի պարզ՝ եթէ Համայնավարութիւնը չըլլար՝ Հրաչեայ Գրիգորեանները իրենք ի՞նչ գործ ունէին գրականութեան սրբազան մարզէն ներս: Ազատ աշխարհի մէջ ապրած ամէն մարդու պէս, նաեւ Եգուարզ Պոյաճեան քաջ գիտէր, որ Համայնավարութեան օրօք ու ձեռքերուն մէջ մարզը, ինչպէս բնորոշած է իրենցմէ մէկը, «պտուտակ էր, մեխենայի կցորդ», անկախ գոյութիւն չէր եւ Համայնավարները լաւ կը ճանչնային կոյրզկուրայն պատուէր կատարելու ընդունակ անողնայար Հրաչեայ Գրիգորեանները եւ գիտէին, թէ որուն պէտք է յանձնէին նման պղծութիւններ կատարելու պաշտօնը, իսկ պատուէր կատարելու պաշտօնով դիրքերու վրայ բարձրացուած գրածոները լաւ կը ճանչնային պատուիրատուին անողոք պահանջները: Գոնէ Մահարին լաւ պէտք է ճանչցած ըլլար այս փոխյարաբերութիւնը, այնպէս չձեռնարկէր, թէ Համայնավար ամբողջատիրութեան տակ մարդը անկախ միաւոր մըն էր եւ կրնար ուզածը գրել եւ չուզածը չգրել, կամ՝ գրուածքի մը մէջ ուզածը պահել եւ չուզածը ջնջել-«մաքրաջրել», բայց կրկնութեան գնով ըսենք, որ դրուածքը այդպէս չէր նոյնիսկ Խրուչեան ձեռնարկի տասնամեակին, մինչեւ իսկ Բրեժնեւեան «փափուկ» ճնշման տարիներուն, մինչեւ անգամ կարմիր կայսրութեան փլուզման նախօրէին:

«Այստեղ մենք գործ ունենք», - կը շարունակէ Մահարի, - գերագնացապէս գրական, աւելի շուտ խմբագրական մի քան քաղաքական, քան իրենց հետ. չիմէր Հրաչեայ Գրիգորեանը եւ նրա փոխարէն «Նաւը» լեռան վրայ բարձրացնէր մի ուրիշ խմբագիր, ուրիշ կը լինէր պատկերը»:

Երբեք ալ «ուրիշ չէր լիներ» պատկերը, որովհետեւ ո՛չ այս եւ ո՛չ ալ «մի ուրիշը» իրենք չէ, որ ճշգրտին «Նաւ»ուն վերապահուած մոայլ ճակատագիրը, այլ նորէն ինքն էր, Համայնավարութիւնը, այդ նախաձեռնութեան հեղինակը, որ Հրաչեայ Գրիգորեան ծառայամիտին յար եւ նման ուրիշ ծառայամիտի մը պիտի յանձնէր այդ պաշտօնը, եւ հետեւանքը պիտի ըլլար նոյնը, ա՛յն՝ որ եղաւ ու կը մնայ հայ գրականութեան մէջ արձանագրուած մեծագոյն ամօթներէն մէկը...

Խմբագիրներու սարքած դաւերէն գերծ չմնացին նոյնիսկ վաստակած ու անուանի դէմքեր:

Թուելու համար շատ ծանօթներէն երկուքը, տանք անունները Աւետիք Իսահակեանի եւ Ստեփան Զօրեանի, որոնց խօսքե-

րուն մէջ չարամտօրէն մուծուած անյարիր մասերուն առիթով ապրեցան կոտտացող վիրաւորանքներ եւ, ինչպէս սպասելի էր, հանդէս եկան բարձրաձայն կամ լուռ ընդվզումներով:

Բարձրաձայն ընդվզած Աւետիք Իսահակեանի պատմութիւնը մէկ-երկու էջով մատնանշուած է «Բագին»ի 1996 թուականի թիւ 4 համարին մէջ, մինչ, Ստալինէ Հայաստանեան գործակալներուն կողմէ չարամտացուած էր ճառին առիթով՝ մտերմակալներուն կողմէ չարամտացուած էր ճառին առիթով՝ մտերմակալներուն շրջանակներուն մէջ արտայայտած Ստեփան Զօրեանի տրտունջը ընդհանրապէս անծանօթ կը մնայ գրական լայն հասարակութեան:

Հետեւեալը.-

Վերջերս կատարուած յայտնաբերումներուն շնորհիւ, «Գրողների միութեան կուսակցական կազմակերպութեան 1936 թ. նոյեմբեր 16ի առեւտրաբիւրոյից մէկը» կ'ըսէ.

«Յանձնարարել ընկ. Արովից եւ Սիրասին, որ Կենտկոմին յայտնեն այն մասին, որ Ստեփան Զօրեանը Դաշնակցական կառավարութեան ժամանակ եղել է սպեցիֆիկական Կենտկոմին անդամ եւ կոչ է ստորագրել բոլշեւիկեան իշխանութեան դէմ: Իսկ վերջին շրջանում նա պատիւ եւ մասնաւոր խօսակցութեան ժամանակ դժգոհել է այն բանի դէմ, որ տրոցկիստ-նացիոնալիստների դէմ արտասանած իր հատուկ անուններ չի յիշատակել, մինչդեռ «Խորհրդային Հայաստան»ը նրա հատուկ անուններ է դրել» («Փակ դռների գաղտնիքը», Դ. Գասպարեան, Երեւան, 1994, էջ 674):

Դարձեալ կարդանք. «Մինչդեռ «Խորհրդային Հայաստան»ը նրա հատուկ անուններ է դրել»:

Սեփական հեղինակութեան պահպանման համար գրողի մը տրտունջը մեղք էր ուրեմն, իսկ անոր գրութեան մէջ մուծուած խմբագրական յաւելումները օրհնութիւն:

Տեղին է անգամ մը եւս յիշել Խաչիկ Դաշտենցի հանրածանօթ ոտանաւորին սա տունը.

Եթէ որոշ տեղերում  
Մի քիչ տաք հարպ է ծորել,  
Այդ էլ ես չեմ յանցաւոր,  
Խմբագիրներս եմ արել...

Գուրգէն Մահարի չի կրնար անծանօթ մնացած ըլլալ այս կամ այն գրողին գրութեանց մէջ խմբագիրներուն հասցուցած «տաք ճարպ»երուն: Աւելորդ պիտի ըլլար ըսել, որ այս մարզին մէջ ինք քիչ վէրքեր չէ կրած, որուն լուրջայն խոստովանութիւնը կատարած է չափաբերական տաղով մը, խորագիրը՝ «Զմրան

ապրգ գիշեր»՝ որուն քնարական հերոսուհին արդէն մեռած մայրն է, որ որդւոյն բանտային ու սիպերիական ցաւերէն ետք նաեւ տպարանական տառապանքներուն լաւածանօթ, զայն կը հրաւիրէ երկինք, յիշեցնելով, որ հոն կը գտնուին Չարենցն ու Բակունցը եւ ինք, անոնց հետ՝

Երկնային տպարանում  
Գիրքդ կը տպենք:  
Դարեր կ'անցնեն, կ'ապրի ոգիդ,  
Կեանքով խնդագին,  
Եւ չի դպչի մէկ իսկ տողիդ  
Ոչ մի խմբագիր...

**Անշուշտ:**

Որովհետեւ Մահարիի ապրած տարիներուն՝ նոյնիսկ իր մայրը գիտէր, որ երեւանեան տպարանում տպուած գիրքերը «խնդագին» ապրումներ չէին յուզեր, այլ անոնց անխուսափելիօրէն կ'ընկերանային տխրագին պատճառներ, վասնզի ո'չ միայն մէկ տողին չէին դպչեր հոն, այլեւ էջեր ու էջեր կ'աւելցնէին կամ կը յապաւէին խմբագիրները, որոնք արդէն դասակարգ դարձած էին գրաքննիչներ անունին տակ, ու եթէ ներկայացած բոլոր գիրքերուն վրայ չէին կրնար արգոսեան աչքերով հսկել, մթնոլորտային ճնշումին տակ շնչահեղձ անոնց հոգիներուն կը հսկէր ներքին գրաքննիչը, որ տարրեր չէր բացայայտէ: Խառնուածքային յարմարութիւններ ներկայացնող, նոյն դասը առած եւ միեւնոյն պաշտօնը կիրարկելու կոչուած վարձկաններ՝ ասոնք, որոնց ջարդարարութենէն ոչ ոք զերծ մնաց:

Հետեւաբար, զուր ու բոլորովին պարագայական է Մահարիի այն պնդումը, որ՝ եթէ («նման գրութիւններ կեղծելու գիտաւոր վարպետ Հրաչեայ Գրիգորեանը»- Վարագ Առաքելեան) չըլլար «նաւը» լեռ բարձրացնողը, բոլորովին տարբեր կ'ըլլար անոր ճակատագիրը: Երանի՛ թէ...

# ՅԵՏԱԶՕՏԵԼԻ ՎԱՐԿԱԾՆԵՐ...

«Յայկական գաղութներ» ընդհանուր խորագիրին տակ, հնարաւոր մանրամասնութիւններով մեր գաղութները ներկայացնող Ասպետ Սանճիկեան, «Ազդակ»ի Չորեքշաբթի, 24 Սեպտեմբեր 2003ին համարին մէջ, իբրեւ հերթական նիւթ պատկերացուցած է Յոլանտան, որուն շարք մը կողմերուն հետ, «Յոլանտացի աշխարհահռչակ Ռեմպրանտի հայկական ծագման մասին» ենթախորագրի մը տակ, կենսագրած է հռչակաւոր գեղանկարիչը, ի միջի այլոց տեղեկագրելով.

«Յարմենտոն վան Ռեյթ Ռեմպրանտ ծնած է 15 Յուլիս 1806ին, Լէյտեն: Յարմենտոն հոլանտերէն կը նշանակէ հայու որդի (Յարմենտ՝ հայու. «տոն»՝ որդի, տղայ): Յայրը՝ Յարմեն Կիրիթստոն Վան Ռեյն քաղաքացի էր, մայրը՝ Նիելիթիէ Վան Զոյպրեք՝ հացթուփ: Աստուծոյ համաձայն, Վան Ռեյնները բնիկ քուղայեցիներ էին, որոնք հաւանաբար շահ Աբասի բռնագաղթին ժամանակ փախուտ տալով՝ Եւրոպա մտան եւ, Յոլանտա հասնելով՝ Լէյտեն՝ Յոլանտի ափերուն բնակութիւն հաստատեցին, ստանալով Վան Ռեյն ազգանունը»:



Ռեյթ Ռեմպրանտ

Եւ այլն: Բաւական հեռուներէն եկող ծագման այս տուեալները անյարդիք չեն մեր պատմութեան եւ հաւանաբար անոնք ընթերցողին յիշեցուցին Նոյնանման ուրիշ վարկածներ, որոնց երկուքը, մեր ծանօթութեան սահմաններուն մէջ, կը գտնուին Եւրոպական գրականութեան ու արուեստներու պատմութեան լաւածանօթ Կոստան Զարեանի էջերուն:

Առաջինը «Ֆաուսթ»ի աշխարհահռչակ հեղինակ Կեթթի մասին: Կարդանք.-  
«Երբ ծերունի Գեօտէն հասաւ Սիկիլիա եւ կանգ առաւ Զերջենտիի մօտ, նա արձանագրեց. «Այստեղ է բանալին ամենայն բանի»: Այդ ամենայն բանը՝ Յելլադան էր եւ իր մշակոյթը: Բայց Գեօտէն, որի մայրը, ըստ արդի գերմանացի գիտնականներին, իր երակների մէջ հայկական արիւն էր կրում, Գեօտէն մոռանում էր, որ բանալին բաց էր արել միայն Թիրենեան ծովի մութ կապոյտ դուռը» («Յայրենիք» ամսագիր, Ռեկտեմբեր 1927, էջ 35):  
Կոստան Զարեան այս մասին անկի հաւաստի մանրամասնու-

թիւներ չի հաղորդեր, ոչ ալ գերմանացի արդի գիտնականներուն կատարած արեան քննութեան վրայ որեւէ լոյս կը սփռէ, բայց վարկածը ըստ ինքեան զուրկ չէ շահեկանութենէ եւ կրնայ օր մը Կեօթի մանրակրկիտ կենսագրութեան ծանօթ հետաքրքիր մտաւորական մը մղել յուզուած հարցը առանձին քննութեան մը ենթարկելու:

Կոստան Ջարեանի կատարած նման փորձերէն երկրորդը կը վերաբերի գեղանկարիչի մը, նոյնպէս աշխարհահռչակ էլ Կրեգոյին, որուն մասին իր արձանագրութիւնը աւելի հաւանական կը թուի:



Կեօթ

«Չմոռանալ,- կը գրէ Կոստան Ջարեան,- Բիւզանդական կայսրը Նիկիֆոր Ֆոկասն էր՝ հայ, որ հայկական լեզուների օգնութիւնով արաբներին քշեց Կրետէից եւ նրանց տեղը լեցրեց հայ գաղթականներով: Ոչ մի դիւրին ենթադրութիւն չեմ ուզում անել: Ուզում եմ յիշել փաստը. էլ Կրեգոյի ծննդավայրը դարեր առաջ լեցուած էր հայ գաղթականներով»... («Յայրենիք» ամսագիր, Յուլիս 1936, էջ 42):

Ծագումով հայ օտարալեզու մտաւորականներ շատ ունինք, հրապարակագիրներ, արձակագիրներ, բանաստեղծներ, ոմանք հին ու հանրածանօթ, ուրիշներ նորայայտ:



Էլ Կրեգօ

Յետուն չերթանք: «Բագին»ի ներկայ թիւին մէջ ընթերցողը հանդիպեցաւ հարկաւ նորայայտներէն երկուքին՝ Լիգա Ասլանեանին եւ Դայանա Պրաունին: Անոնց հետ՝ մշակոյթի մարդերը իրենց մտքն ունին կամ թերթերու էջերուն հանդիպած են ուրիշներու: Իրենց աւագանի անուններով կամ ծածկանուններու տակ շատեր ներկայացուած են նոյնիսկ առանձին հատորներու մէջ: Սակայն անոնց շարքին դժուար է յիշել մօրենական գծով իրենց երակներուն մէջ հայու արիւն կրող Կեօթին, աւելի հեռուներէ եկող Ռեմպրանտին ու էլ Կրեկոյին վաստակին ծոցէն բխած ու տարուէ տարի, քիչ է ըսել տարուէ տարի, դարէ դար աճող հռչակի տէր դէմքերու:

Ինչպէս ըսել ուզեցինք, այս երեքին ծագումները վարկածներու կալուածին կը պատկանին, բայց ո՞վ ըսաւ, թէ վարկածները զուրկ են արժէքներու տոմարին մէջ...

# ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

## «ՖՐԱՆՑ ՎԵՐՖԷԼ» ՄՐՑԱՆԱԿԸ ՄԻՀՐԱՆ ՏԱՊԱԳԻՆ



29 Յունիս 2003ին, Գերմանիոյ Ֆրանքֆորթ քաղաքի Պօղոսի անուան տաճարին մէջ, յանուն իրաւունքներուն հիմնուած «Ֆրանց Վերֆել» մրցանակը շնորհուեցաւ Պոխումի «Սփիւռք եւ ցեղասպանութիւն» հիմնարկի հիմնադիր Միհրան Տապաղին:

«Կեղրոն՝ ընդդէմ հալածանքներու» գերմանական հիմնադրամի դատական կազմը այս պարգեւատրումը կատարած է անոր համար, որ մրցանակակիրը Ֆրանց Վերֆելի պէս ինքզինք նուիրած է Հայոց ցեղասպանութեան հարցին արծարծման:

Պոխումի Ռուր համալսարանին կից՝ Միհրան Տապաղի կողմէ ստեղծուած հիմնարկին մէջ կը վերլուծուին Հայոց ցեղասպանութեան հարցը, Երիտասարդ թուրքերու գաղափարաբանութիւնը եւ սփիւռքեան հարցեր:

«Ֆրանց Վերֆել» մրցանակին արժանացած Միհրան Տապաղ իր

գործունէութիւնը կը ծառայէ Պոխումի համալսարանի կից:

Մրցանակին տուչութիւնը տեղի ունեցած է 600 հանդիսականներու ներկայութեան: Դասակազմին նախագահած են Գերմանիոյ խորհրդարանի երեսփոխան Էրիքա Շթայնպախ եւ Փիթըր Կլոց: Իսկ նոյն մրցանակին անդամները հանդիսացած են Եւրոպական խորհրդարանէն Գլաուս Հէնչ, Պերլինի գեղարուեստից ակադեմիայի նախագահ Կ. Գոնրատ, Էստոնիոյ նախկին նախագահ Լ. Մերի եւ ուրիշ նշանաւոր դէմքեր:

Մարդու իրաւունքներու «Ֆրանց Վերֆել» մրցանակին առաջին տուչութիւնը եւ անոր արժանացած հայ գիտնական Միհրան Տապաղի անձնատրութիւնն ու գործունէութիւնը լայն արձագանգի արժանացած են գերմանական մամուլին մէջ:

Միհրան Տապաղ ծնած է Տիարպէքի, յարկին տակը վերապրողի մը, որ զակին վրայ բարերար ազդեցութիւն ունեցած է, քաջալերելով անոր ուսման հակումը: Պատանեկութիւնը անցուցած է Պոլսոյ Սուրբ Խաչ դպրեվանքին մէջ, դաստիարակուելով Գարեգին Տրապիգոնի եւ Շնորիք պատրիարքներու շունչին տակ: Յետագային, իր ուսումը շարունակելու եւ կատարելագործելու համար ան մեկնած է Պոխում եւ տեղոյն համալսարանէն վկայուած է բարձրագոյն գնահատականով:

Միհրան Տապաղ հեղինակ է

գերմաներէնով գրուած բազմաթիւ յօդուածներու եւ մասնակցած է միջազգային շատ մը սեմինարներու:

«Ֆրանց Վերֆել» մրցանակին տուչութեան արարողութիւնը սփռուած է «Ֆէնիքս» պատկերասփիւռի կայանէն:

### «ԵՐԿԻՐԸ ՊԷՏՔ Է ՉԱՐԳԱՆԱՅ ՀԱՄԱՉԱՓ»

*Հայաստանի վերանուանած ակախութեան 12րդ փարէդարձին առիթով, Հանրապետութեան նախագահ Ռուզնիկ Քոչարեան, 1 Հոկտեմբեր 2003ին շքանշաններ, մեդալներ ու պատուատր կոչումներ շնորհեց «փարքեր բնագաւառների մի խումբ աշխատողների եւ իրենց ոլորտում աչքի ընկած մշակոյթի, արուեստի գործիչների»:*

*«Արմէնփրէս»ի թղթակիցը, Արմէն Լուսեան, նոյն օրը մամուլին յանձնած է նախագահական պալատին մէջ տեղի ունեցած հանդիսութեան նկարագրութիւնը, գոր ամբողջութեամբ կը յանձնենք նաեւ մեր ընթերցողներուն:*

Չինուորական առաջադրանքների հմուտ կատարման համար պաշտպանութեան նախարարի տեղակալի վարչական ապարատի պետ, գնդապետ Մուրատ Իշխանեանը պարգևատրուեց «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով:

Հայ մշակոյթի, արուեստի, գրականութեան բնագաւառում ունեցած ստեղծագործական ակնառու

նուաճումների համար «*Մովսէս Խորենացու*» մետալով պարգևատրուեցին Վանաձորի Յովի. Աբէլեանի անուան պետական տրամաթիկական թատրոնի դերասանուհի Էլինա Աղամեանը, Յակոբ Պարոնեանի անուան երաժշտական կոմետիայի պետական թատրոնի դերասանուհի Մարիամ Ղազարեանը, Ստանիսլաւսկու անուան պետական ռուսական տրամաթիկական թատրոնի դերասան Մերգէյ Մաղալեանը, Հայաստանի Էստրատային ջազ նուագախմբի գեղարուեստական ղեկավար Արմէն Մարտիրոսեանը, սփիւռքահայ գրող Պօղոս Սնայեանը, Գիւմրիի Վարդան Աճէմեանի անուան պետական տրամաթիկական թատրոնի դերասան Պօղոս Սուքիասեանը:

Հ. Հ. առողջապահութեան զարգացմանը մատուցած ծառայութիւնների համար «*Մխիթար Հեռացու*» մետալով պարգևատրուեցին Հ. Հ. առողջապահութեան ազգային ինստիտուտի ամբիոնի վարիչ, բժշկական գիտութիւնների դոկտոր-պրոֆեսոր Ալեքսանդր Ալավերդեանը, նոյն ինստիտուտի տնօրէնի խորհրդական բժշկական գիտութիւնների դոկտոր-պրոֆեսոր Սուրէն Չոհրապեանը, պաշտպանութեան նախարարութեան ռազմաբժշկական վարչութեան պետ, բժշկական ծառայութեան գնդապետ Գրիգոր Աղայեանը, պաշտպանութեան նախարարութեան կենտրոնական ռազմաբժշկական յանձնաժողովի նախագահ, բժշկական ծառայութեան փոխգնդապետ Արա Մինասեանը:



Շքանշանակիրները նախագահ Ռուզնիկ Քոչարեանի հետ

Առողջապահութեան բնագաւառում մասնագիտական բարձր կարողութիւններ դրսևորելու համար Հ. Հ. *վաստակաւոր բժիշկի կոչում* շնորհուեց Վաղարշապատի հակատուբերկուլեոզային դիսպանսերի բժշկուհի Պելլա Պաղտասարովային:

Թատրոնի եւ կինոյի ոլորտում բացառիկ վաստակ ունենալու համար Հ. Հ. *ժողովրդական արտիստի պատուատր կոչում* շնորհուեց Երեւանի Հրաչեայ Ղափլանեանի անուան տրամաթիկական թատրոնի դերասան Դաֆայէլ Քոթանջեանին:

Արուեստի զարգացմանը նրպաստող գործունէութեան եւ բարձր վարպետութեան համար Հ. Հ. *վաստակաւոր արտիստի պատուատր կոչման* արժանացաւ երգչուհի Սիւզան Մարգարեանը:

*Վաստակաւոր արտիստի կոչման* արժանացան Գաբրիէլ Սուն-

դուկեանի անուան ազգային ակադեմիական թատրոնի դերասան Արմէն Մարութեանը, Սպենդիարեանի անուան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի մեներգչուհի Յասմիկ Հացագործեանը:

Ստեղծագործող սերնդի դաստիարակութեան գործում ունեցած մեծ վաստակի, ինչպէս նաեւ արուեստի ասպարէզում արժէքատր գործեր ստեղծելու համար Հ. Հ. *արուեստի վաստակաւոր գործչի կոչում* շնորհուեց Երեւանի գեղարուեստի պետական ակադեմիայի ռեկտոր, նկարիչ Արամ Իսաբեկեանին, Համօ Բեկնազարեանի անուան «Հայֆիլմ» կինոստուդիայի բեմադրող, ռեժիսոր Յարութիւն Խաչատրեանին, «Ագուլիս» տրիկինկային թատրոնի գեղարուեստական ղեկավար Երուանդ Մանարեանին:

Մշակոյթի զարգացման բնա-



Նախագահ Ռոպերթ Բոչարեան «Մովսես Խորենացի»ի մետալով կը պարգևատրէ Պողոս Սնապեանը

գաւառում ակնառու վաստակի համար Հ. Հ. մշակոյթի վաստակաւոր գործչի պատուաւոր կոչում շնորհանք Հայաստանի պետական ֆիլիարմոնիայի տնօրէն Լայլերտ Մովսիսեանին:

Բարձրարժէք գործեր ստեղծելու եւ իրենց գործունէութեամբ արուեստի զարգացմանը նպաստելու համար Հ. Հ. վաստակաւոր կոչում շնորհուեց Արկաղի Պաղտասարեանին եւ Վարուժան Վարդանեանին:

Հ. Հ. նախագահ Ռոպերթ Բոչարեանը, շնորհատրելով պետական բարձր պարգեւների եւ կոչումների արժանացած անձանց, նշեց, որ

«Բարի աւանդոյք է ճեւարողի երկրում, երբ անկախութեան փօնի առքիւ փոխ է արում գոյքագրել, թէ ով ինչ աւանդ ունի, եւ

հանրապետութեան նախագահն ու այլ կառոյցներն ինչպիսի վերաբերմունք կարող են ցուցաբերել՝ զնահապելու կարարուած աշխատանքը: Դաբելով դրական արշագանգից, կարող ենք սսել, որ կոչումների վերականգնման որոշումը ճիշտ էր: Կարծում եմ այս աւանդոյքը կը շարունակենք՝ փարին մէկ-երկու անգամ լաւ ուսումնասիրելով ասպարէզները»:

Անդրադառնալով երկրի առաջխաղացման խնդրին, Ռոպերթ Բոչարեանը նկատեց, որ բոլոր ոլորտները պէտք է զարգանան համաչափ: Ըստ նրա, ուշադրութեան կենտրոնում պէտք է լինեն միաժամանակ եւ բանակը, եւ տնտեսութիւնը, եւ մշակոյթը, եւ սոցիալական ոլորտը:

«Մենք չենք կարող բանակի հարցերը չհամարել առաջնային,

քանի որ սպրում ենք մի փարածաշրջանում, որպէս մարտունակ բանակը մեր անվրանգութեան երաշխիքն է: Եթէ բանակի հարցերը առաջնահերթ չլինեն, սպա մենք ամէն ինչ կը կորցնենք: Մենք չենք կարող սսել, որ փնտրութիւնը կը սպասի, մինչեւ որ կը զբաղուենք բանակի կամ այլ խնդիրներով: Այդ դէպքում ուղղակի շահադուած երկիր կը դառնանք փարածաշրջանում, քանի որ փնտրութիւնն ամէն ինչի հիմքն է: Մենք չենք կարող նսել մշակոյթի առնչութեամբ սսել սպասենք լաւագոյն ժամանակների, երբ կը յայրահարենք դժուարութիւնները, այդ ժամանակ էլ կը զբաղուենք մշակոյթի հարցերով: Այս դէպքում քերես կը կորցնենք մեր ինքնութիւնը, քանի որ այն արտայայտուած է մեր մշակոյթի մէջ»:



Հարաւային Ափրիկէի այլախոհ կարգ մը ուրիշ մտատրականներու պէս Բոթցի իր ծննդավայր Քէյփիէն երիտասարդ տարիքին անցած է Անգլիա ու աշխատած է համակարգչային ծրագիրներ պատրաստող հաստատութեան մը մէջ: Չորս տարի ետք, տեղափոխուած է Ամերիկա, ուր աստե՛ն մը անգլերէն լեզու դասաւանդած է, նոյս աստե՛ն շարունակելով իր ուսումը Թեքսասի համալսարանին մէջ, ուրկէ ստացած է անգլիական գրականութեան դոկտորայի տիտղոսը, առանձին ուսումնասիրութիւն մը նուիրելով իր ընդունած վարպետներէն Սամուէլ Պեքթփի:

### ԱՅՍ ՏԱՐՈՒԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՊԵԼԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐԸ

Անգլիասեր ու անգլիախօս ընտանիքի մը մէջ 1940ին ծնած այս տարուան Նոպէլեան գրական մրցանակին արժանացած Հարաւային Ափրիկէի գրագէտներէն Ճոն Մաքսուէլ Բոթցի իր գրական ասպարէզը սկսած է 1974ին, լոյս ընծայելով վիպակոսն իր առաջին գործը՝ «Վերջալոյսի երկիրներ» խորագրով:

1968ին, իբրեւ գրականութեան դասախօս՝ Քէթցի պաշտօնավարած է Նիւ Եորքի համալսարանին մէջ, իսկ հինգ տարի ետք, վերադառնալով իր ծննդավայրը, անգլիական գրականութիւն դասաւանդած է Քէյփի Թաուն համալսարանին մէջ:

2002ին Բոթցի անցած է Աստրալիա, ուր Աստրալիի համալսարանին կողմէ ստացած ուսումնասիրութեան պատուոյ տիտղոս մը:

Սամուէլ Պեքթփի հետ՝ Քէթցի իրեն իբրեւ գրական վարպետ կ'ընդունի Տոսթոնսկին ու Բաֆթան:

Նուպելեան այս պսակաւորին գործը կը բաղկանայ գրականութեան մասին ստորագրած անհամար յօդուածներէ, յուշագրական երկու հատորներէ եւ, մանաւանդ հիւսած ութ վէպերէ, որոնց մէջ ամէնէն լայն ճանաչում գտածները կը նկատուին **«Մայքըլ Բ. Ի կեանքը եւ ժամանակը»**, որ 1985ին արժանացաւ Անգլիոյ նշանաւոր **«Պոքըր»** մրցանակին, եւ **«Ապաշնորհները»**, որ նոյնպէս արժանացաւ նոյն մրցանակին:

Քոթցիի գործը կը յատկանշուի մասնաւորաբար իշխանութիւններու եւ ընդդիմութեան առնչուող թեմայով, որ կը հակադրէ Կեդրոնը իր ծայրամասերուն, տէրերը՝ գերիներուն, բարբարոսութիւնը՝ քաղաքակրթեալներուն:

Հակադրաբար Հարաւային Աֆրիկէի իր սերունդի գրողներուն, Քոթցի երբեք չէ ուզած իր վիպական գործը ծառայեցնել քաղաքական ու ընկերային որեւէ դասի, մերժելով իր երեւակայութիւնը եւ ստեղծագործական ոգին սահմանափակել առօրեայ ու տեղական հարցերու շրջանակին մէջ: Ըստ իրեն, ամբողջատիրական երկիրներու մէջ ապրողին համար ճշմարիտ մարտահրաւերը պետութեան կողմէ պարտադրուած խաղի օրէնքներուն ճանաչումն է, նաեւ ճանաչումը իր սեփական հեղինակութիւնը հաստատելու ոճին եւ, ի հարկին, գիտնալ մեռնիլ սեփական սկզբունքներուն համար: Մարտահրաւեր մը, որ Քոթցի վիպական իր գործերուն ընդմէջէն գիտցած է յաջողապէս իրագործել, հարցապնդելով յաճախ դժուարին վերաբերումներ, հաշուի առած մարդ-

կային կացութեան ամբողջութիւնը: Ընն Մաքսուէլ Բոթցի 10 Դեկտեմբեր 2003ին, Շուէտի քաղաւոր Շարլ Կիստաւի ձեռամբ պիտի ստանայ իր մրցանակը, որ կը գնահատուի շուրջ 30 միլիոն ամերիկեան տոլարի:

**ԱՄԵՐԻԿԱՀԱՅ  
ԲԵՄԱԳՐԻՉ ՄԱՅՔԸԼ  
ԹՈՒԱՃԵԱՆԻ  
«ՊՈԹ ԷՆՏ ՍՈՒՏ»Ը՝  
«ԹՐԵՊԻՔԱ ՖԻԼՄ  
ՖԵՍԹԻՎԸԸ»ԻՆ**

Ամերիկահայ երիտասարդ բեմադրիչ Մայքըլ Թուլաճեանի առաջին երկար ժապաւէնին՝ **«Պոթ էնթ սոլթ»**ի առաջին ցուցադրութիւնը տեղի ունեցած է Մայիսի սկիզբը, երբ ժապաւէնը ներկայացուցաւ Նիւ Եորքի «Թրեպիքա ֆիլմ ֆեսթիվը»ին ընթացքին:

2003ի արտադրութիւն եղող եւ 93 վայրկեան տևողութեամբ **«Պոթ էնթ սոլթ»**ը, որուն դէպքերը տեղի կ'ունենան Նիւ Եորքի մէջ, կը ներկայացնէ պատմութիւնը երիտասարդութեան սեմին գտնուող փորթօռիքոցի գաղթական Ռէյ



Մորալէսի, որուն ամբողջ երազը եղած է հաւաքել ձայնի հաղորդավարութեան անհրաժեշտ գործիքներ գնելու չափ դրամ: Ծարախատան կը դառնայ օգնականը շրջապատը իր ճիրաններուն մէջ առած վաշխառուի մը: Մորալէսի գլխաւոր առաքելութիւնը եղած է հետեւի վաշխառուին մօտ մեծագումար պարտք ունեցող ծեր հայու մը՝ Անքըլ Բաթթի Նազարեանին, որպէսզի ապահովէ անոր պարտքին վճարումը: Սակայն երիտասարդ ու ծեր հերոսներուն միջեւ ծայր կու տայ սերտ բարեկամութիւն մը, որ բարոյական երկուութեան տակ կը դնէ Մորալէսը:

**«Պոթ էնթ սոլթ»**ի բեմադրութիւնը կը պատկանի Մայքըլ Թուլաճեանի, որ ունեցած է գաւառներու թէ կեդրոններու մօտ ապրելու եւ անոնց կենցաղը ուսումնասիրելու փորձառութիւնը: Իսկ **«Ուոքըրքսուն Թէյ էնթ Փրէս»** օրաթերթին մէջ լոյս տեսած **«Չոյսը ին փոնչափ»** խորագրեալ յօդուածին մէջ բեմադրիչը կը յայտնէ, թէ Անքըլ Բաթթիի տիպարը կերտած է թուօրէն հիմնուելով իր ազգականներու կերպարներուն, ինչպէս նաեւ՝ իր տարեց ազգականներէն լսած Հայկական Յեղասպանութեան պատմութիւններուն, Համաշխարհային Առաջին պատերազմին եւ հայկական փորձառութեան այլ երեսօթներուն վրայ:

Մայքըլ Թուլաճեան, որ 1997ին վկայուած է «Եունիվըրսիթի աֆ Մաութըռն Գալիֆոռնիազ Սքոլ ուֆ Սինեմա-թելիվիժըն»էն, ատիլի քան տասը տարիէ ի վեր կ'աշխատի պատկերասփիւռի ու շարժա-

պատկերի մարզերուն մէջ: Անոր աւարտական ժապաւէնը՝ 20 վայրկեան տևողութեամբ **«Տէր կոզ փը նէյպրիուլթ»**, ցուցադրուած է տարբեր երկիրներու մէջ ատիլի քան տասնհինգ շարժապատկերի փառատօներու ընթացքին եւ արժանացած գնահատանքի: Ամերիկեան պատկերասփիւռի TNT կայանին համար անոր բեմադրած **«Ուսթելլըր հէփընթ քու Մայքըլ Ռէյ»** վաւերագրական ժապաւէնը 2000 թուականին բեմադրիչին ապահոված է «Էմի» մրցանակ մը:

Ժապաւէնին դերասանական կազմը կ'ընդգրկէ ամերիկեան բեմերու եւ պատկերասփիւռի յայտագիրներու մէջ հանդէս եկած դերասաններ Ռաֆայէլ Մարտինա, Ֆրէնք Հարց, Տէյվիտ Մարկուլիզ եւ ուրիշներ:

**ՄԱՀ՝  
ԽԱՉԻԿ  
ԱՐԱՐԱՏԵԱՆԻ**

Երկու շաբաթ Հոլիվուտի Փրէսպաթըրիան հիւանդանոցին մէջ բժշկական խնամքներու ենթարկուելէ ետք, Երկուշաբթի 1 Ապրիլ 2003ին իր մահկանացուն կնքեց Սփիւռքի հայաշատ համարեալ բոլոր գաղութները ճանչցած ու իբրեւ դերասան ու ասմունքող անոնցմէ ճանչցուած Խաչիկ Արարատեան:

Ծնած էր Այնթապ, 14 Յուլիս 1912ին ու յաճախած տեղույն



ընկերներու հետ, բազմարդիւն յեղափոխական Հրաչ Փափազեանի հովանաւորութեամբ հիմը կը դնեն «Զրիստափոր» պատանեկան միութեան, որուն գրադարանի պաշտօնը կը յանձնուի իրեն: Օգտուելով ստեղծուած այդ նպաստաւոր առիթէն, Խաչիկ Արարատեան շարունակ կը կարդայ եւ նոյն ընկերներուն հետ կը սկսին իրենց մատչելի թատերական փորձեր ընել ու խիստ դժուար բեմեր սարքելով ներկայանալ նաեւ ժողովուրդին:

Պատանութեան այդ տարիքին, իբրեւ ասմունքող ու ստանձնած դերերով շատերուն ուշադրութիւնը իր վրայ կը կեդրոնացնէ, եւ երբ 1939ին ընտանիքին հետ Պէյրութ կը փոխադրուի, ուր, դերուստյց ու դերասան կարգ մը դէմքերու կազմած խումբերուն մէջ բաւական ճամբայ կտրած, կը դառնայ հիմնադիրներէն մէկը «Համազգային»ի «Թատերասերներու միութեան», որ յիսունական թուականներուն կոչուեցաւ «Գասպար Իփեկեան» թատերախումբ: Թատերասերներու այս գոյգ ընկերութեանց մէջ, Խաչիկ Արարատեան իր ստանձնած բոլոր դերերուն մէջ կը փայլի մեծ ձեռնհասութեամբ, անջնջելի տեղ մը գրաւելով հանդիսատեսներու յիշողութեանց մէջ:

70ական թուականներու կէսերուն, լուսանկարչական իր անձնական գործին հետ, Խաչիկ Արարատեան կը ստանձնէ «**Բագին**»ի վարչական պատասխանատուութիւնը եւ նոյն պաշտօնով կ'անցնի Հալէպ եւ անգամ մըն ալ չի վերադառնար Պէյրութ: Հալէպի մէջ շուրջ տարի մը ազգային մեր վար-

Աթենական վարժարանի մանկապարտէզը: Զենալական հալածանքներուն, հայրը՝ Յովհաննէս Արարատեան, որ ենթակայ էր հալածանքներու, կը յաջողի կնոջ եւ զաւակներուն հետ անցնիլ Այնթապէն Հալէպ: Արարատեաններուն աւագ որդին՝ Խաչիկ, ուր տարեկանին կը յաճախէ Հալէպի ազգային «Հայկազեան» վարժարանը, գոր կ'աւարտէ յաջողութեամբ, ցոյց տալով հայ գրականութեան եւ մասնաւորաբար բանաստեղծութեան հանդէպ ուժեղ հակում մը:

Նախակրթարանի ընթացքը հազիւ աւարտած, դժուարին պայմաններու մէջ ապրող ընտանիքին օգնելու համար, Խաչիկ Արարատեան կը նետուի կեանքի ասպարէզ, սակայն դպրոցին մէջ ստացած պատմական ու գրական սնունդները հանգիստ չեն ձգեր զինք, եւ իր հակումներուն յագորդ տալու մտքով փոքր տարիքին կ'անդամագրուի Հ.Յ.Դաշնակցութեան ու իր տարիքին մէջ գտնուող եւ իրեն պէս ուսումը կէս ձգած

ժարաններու աշակերտներուն ասմունքի դասեր տալէ ետք, կը մեկնի Միացեալ Նահանգներ, Լոս Անճելըս, ուր ասմունքի անհատական իր ելոյթներուն առընթեր, իբրեւ ասմունքի ուսուցիչ կը պաշտօնավարէ «Մեսրոպեան», «Ռոզ եւ Ալեք Փիլիպոս», «Ֆերահեան» եւ «Շամլեան» ազգային ամէնօրեայ վարժարաններուն մէջ:

Խաչիկ Արարատեան մէկն էր թրքական ջարդերուն ու հալածանքներուն ենթարկուած ծնողներու զաւակներուն, որոնք հակառակ իրենց որբութեան կամ որբի պէս ապրած ըլլալու հարկադրանքներուն, հաւատքի ու կամքի զօրութեամբ անջնջելի հետքեր ձգեցին հայ գրականութեան ու արուեստի տարբեր ճիւղերու ոգին ու հրապոյրները տարածելու աշխատանքին մէջ:



Ֆեսթիվը»ին, 29 վայրկեան տեւողութեամբ ժապաւեն մըն է:

Փրակայի մէջ նկարահանուած «**Մոսթ**»ի դերասանական կազմին մաս կը կազմեն մեծ թիով չէիս դերասաններ: «**Մոսթ**»ի բեմադրութիւնը կը պատկանի Պոպի Կարապետեանի եւ Ռիլերմ Չապրայի: Այս վերջինը նաեւ մէկն է ժապաւենին արտադրիչներէն:

«**Մոսթ**» բանաստեղծական ոճով ներկայացուած պատմութիւնն է հայրական սիրոյ եւ աշխատանքի միջեւ կորսուած հոր մը: Դիպաշարը ցոյց կու տայ, թէ շոգեկառքի կամուրջներ նորոգող հերոսը ինչպէ՛ս կ'անդրադառնայ, որ իր նորոգած կամուրջը ամէնէն մեծն ու կարեւորն է:

Գեղեցիկ եւ պարզ կառոյցով օժտուած «**Մոսթ**» վերոյիշեալ մրցանակներուն արժանացած է շնորհիւ ժապաւենին արտայայտչականութեան, խորք ունեցող նիւթին եւ գեղարուեստական արժեքին:

### ՊՈՊԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ «MOST» ԺԱՊԱՒԷՆԸ՝ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

Յունիսին Հաուայի մէջ տեղի ունեցած Մաուիի շարժապատկերի փառատօնին լաւագոյն կարճ ժապաւենի եւ լաւագոյն նոր բեմադրիչի մրցանակներուն տիրացած է ամերիկահայ բեմադրիչ Պոպի Կարապետեան: Անոր առաջին գործը՝ «**Մոսթ**», որ առաջին անգամ ցուցադրուած էր 2003ի Յունուարին տեղի ունեցած ամերիկեան «Սանտրնս ֆիլմ

## ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

2003 թուականը կը զուգադիպի «Համազգային»ի հիմնադրութեան 75ամեակին:

Այս առթիւ «Համազգային»ի Արեւմտեան Ամրեիկայի Շրջ. վարչութիւնը լծուած է լուրջ աշխատանքի: Արդէն իսկ կեանքի կոչած է չորս ենթայանձնախումբերով բոլորուած կորիզ-յանձնախումբ մը, որ մինչեւ տարեվերջ, հրապարակային զանազան նախաձեռնութիւններով պաշտօնապէս պիտի նշէ սոյն թուականը:

### *Յարգելի մշակութասէր հայրենակիցներ,*

Այսօր մեր ժողովուրդը կ'ապրի ամենօրեայ մաշումի լուրջ սպառնալիքին տակ:

Ու այս հոսանքին իբրեւ հակազդեցութիւն՝ «Համազգային»ի մեծ ընտանիքը, որ իր ծնունդէն ի վեր հաւատարիմ մնացած է իր հիմնադիրներու առաքելութեան, դարձեալ ճակատաբաց պիտի շարունակէ իր ուղին՝ մեր ժողովուրդը հայ մշակոյթով ներշնչելու, խանդավառելու եւ անոր հաղորդակից դարձնելու սրբազան եւ մեծ աշխատանքին:

Ան է, որ աշխարհացրիւ իր մասնաճիւղերով եւ միաւորներով հայ մարդու հոգիին եւ մտքին մէջ

կը ստեղծէ ոգեկան հայրենիք մը, միշտ վառ պահելով իր ժողովուրդի բազմերանգ բնագաւառներով հարուստ, դարաւոր մշակոյթը:

Նոյն, այս մեծ ընտանիքի հիմնադրութեան 75ամեակի պատմական յիշատակումին առթիւ, «Համազգային»ի Արեւմտեան Ամրեիկայի շրջանը արժանավայել կերպով հանրութեան պիտի ներկայանայ եւ ներկայացնէ անոր պատմականը, ինչպէս նաեւ Խաղաղականի այս ամիսուն՝ անոր կատարած աշխատանքներն ու իրագործումները:

Այս առթիւ, պիտի հրատարակուի շրջանի պատմականը նշող յատուկ գրքոյկ մը, ինչպէս նաեւ պիտի կազմակերպուին հրապարակային տօնակատարութիւն, ճաշկերոյթ եւ սեմինար-կլոր սեղան, որոնց գլխաւոր նպատակը պիտի ըլլայ հայ թէ օտար մշակութասէր հասարակութեան մօտէն ծանօթացնել «Համազգային»ի հին ու նոր առաքելութիւնը եւ հայ մշակոյթի տենդով խանդավառել այս շրջանը:

Արդ, մեր ջերմագին խնդրանքն է, որ հայու ոգի եւ միտք ջամբող այս ընտանիքին հրապարակային յիշեալ բոլոր նախաձեռնութիւններուն թեւ ու թիկունք կանգնինք եւ դրական կերպով քաջալեր հանդիսանանք:





ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

digitised by

A.R.A.R.@

**ՄԱՏԵՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՅ**

- մատենագրական -

Հայկական մատենաշար Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութիւն-  
Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն  
Ա. հատոր, Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 1288 էջ:  
Բ. հատոր, Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2601 էջ:



**ՀԱՅ ԳՈՂԳՈԹԱՆ**

- պատմական -

Գրիգորիս Վրդ. Պալաքեան, Անթիլիաս, 2003,  
Ա. հատոր, 494 էջ, Բ. հատոր, 319 էջ:



**ՅԻՇԱՏԱԿԻ ԽՆԿԱՄԱՆ**

- յուշեր-ոգեկոչումներ -

Յ. Գեղարդի, Պէյրուք, «Համագգային»ի Վահէ Սէթեան տպարան,  
2003, 374 էջ:



**ԴԷՊԻ ՊԻԹԼԻՍ ՈՒԻԼԵԼՄ ՍԱՐՈՅԵԱՆԻ ՀԵՏ**

- յուշեր -

Պետրոս Զօպեան, Իսթամպուլ, 2003, տպագրութիւն Սէնա Օֆսէթ,  
380 էջ:



**ԴԱՐՉ ԴԷՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ**

- յուշեր-տպարութիւններ -

Մարգար Շարապխանեան, Երեւան, 2003, 331 էջ:



**ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԷՆՔՈՎ**

- քննադատական տպարութիւններ -

Պ. Սնապեան, Անթիլիաս-Լիբանան, 2003, 280 էջ:

**باکین**

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية  
 المدير المسؤول  
 السيد ارتين كارنيك قزانجيان

•

**PAKINE**  
 REVUE MENSUELLE  
 LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire  
 Dr. A. KAZANDJIAN

◆

**Բ Ա Գ Ի Ն**

**ԱՄՍԱԳԻՐ  
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
 ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ**

**Խմբագիր  
 ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ**

**Խմբագրական խորհուրդ  
 ԱԹԹԱՐԵԱՆ ԺԻՐԱՅՐ  
 ԱՐՄԱՆՏ  
 ԱՐԱԷՆԵԱՆ ԿԱՐՕ  
 ԿԻՐԱԿՈՍԵԱՆ ՍԱՐԳԻՍ  
 ՄԱՐԳԱՐԵԱՆ ՀՐԱՆԴ  
 ՄԱՏԹԵՈՍԵԱՆ ՎԱՐԴԱՆ  
 ՆՇԱՆԵԱՆ ՄԱՐԿ  
 ՉԱՐԽՈՒՏԵԱՆ ՆՈՒՊԱՐ  
 ՊԷՐՊԷՐԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՆ  
 ՎԱՐԱՆԴ  
 ԶԻՒՐԶԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՆ**

**ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ**

Լիբանան	40.000լ.ո.
Արտասահման	40 ամ. տոլար
Հատավաճառ	10.000լ.ո.



Հասցե՝

Centre Culturel SHAGHZOYAN  
 Bourdj Hammoud - Liban